Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository

Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial 3.0 Unported (CC BY-NC 3.0) **license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով

ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

1913
1914

1915
1916

Zw-9-12

84
7-60

2011

84
Հ-60

Ա. ՏԻՄԱ

ՊՐԱԺԼՕՆ ԴԵՐԿՈՄՍ

ԹԱՐԳՄԱՆԵՑ

Մ. ՄԱՄՈՒՐԵԱՆ

ՀԱՏՈՐ ՏԱՍՆԵՐՈՐԴ

ՏԻՐ ԷՒ ՀՐԱՏԱՐԱԿԻՉ

ՏԻԳՐԱՆ ՑԱՐՈՒԹԻՒՆ ՏԷՏԷԵԱՆ

ՋՄԻՒՌՆԻԱ.
ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ ՏԷՏԷԵԱՆ
— 1874 —

435
գ

ՊՐԱՖԼՕՆ ԳԵՐԿՈՄՍ

Ա.

Պ. ՊԷԶՄՕԻ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆԸ

Ընթերցողը չմոռցած է անշուշտ որ ս՝Արդանեան Պասդիլլէն մեկնելու առեն Լա Գէր կոմսին հետ՝ Արամիան առանձին ձգեր էր Պէզմօի հետ։

Պէզմօ բնաւ չգիտեց՝ իր երկու կոչնականներուն մեկնելէն ետև՝ որ խօսակցութիւնը հետզհետէ կ՝թուլնար։ Կարծէր թէ աղանդերի պինին, ինչպէս նաև Պասդիլլէնը պատուական էին. կարծէր թէ, կ՝ըսենք, աղանդերի գինին բաւական գրգռիչ զօրութիւն ունէր բարերարող մարդ մը խօսել տալու համար։ Լաւ չէր ճանչեր Նորին Գերապատուութիւնը, որ ամենէն աւելի աղանդերին ժամանակ անթափանցելի կ՝մնար։ Բայց Նորին Գերապատուութիւնը քաջ կ՝ճանչէր Պ. Պէզմօն, և յոյս ունէր կառավարիչը խօսել տալ ասոր զօրաւոր կարծած միջոցաւ։

Հետևապէս՝ խօսակցութիւնը՝ առանց արտաքուստ թուլնալու, իրօք կ՝թուլնար. վասն զի՝ ոչ միայն Պ. Պէզմօ գրեթէ առանձին կ՝խօսէր, այլ և միայն Աթոսի բանտարկութեան եղական դէպքին վրայ կ՝խօսէր, բանտարկութիւն մ՝որու ետևէն անմիջապէս աղատութեան հրաման եկեր էր։

Սակայն Պէզմօ՝ լաւ գիտեր էր որ երկու հրամանագիրները, այսինքն ձերբակալութեան և արձակման հրամանագիրը թագաւորին ձեռօք գրուած էին։ Արդ՝ թագաւորը՝ միայն ծանր պարագաներու առեն՝ այսպիսի հրամաններ գրելու կ՝զիջանէր։ Այս ամենը շատ հետաքրքրական էր, նա մանաւանդ Պէզմօի համար

շատ մութ կ'երևէր. բայց որովհետև այս ամենն Արամիսի աչքին պայծառ կ'երևէր, այս վերջինը բարի կառավարչին պէս մեծ կարևորութիւն չէր տար այս դէպքին։

Այս ևս ըսենք որ Արամիս ոչ ինչ բանի համար ճամբայ չէր ելներ, և տակաւին Պ. Պէզմոի չէր յայտնած թէ ի՞նչ պատճառաւ ելեր Պասդիյլ եկեր էր։

Ուստի՝ այն միջոցին որ Պէզմո իր խօսակցութեան ամենէն տաք տեղն էր, Արամիս յանկարծ անոր խօսքն ընդհատեց.

— Ըսէ ինձ, սիրելիդ իմ Պ. Պէզմո — ըսաւ նա — միթէ Պասդիյլի մէջ ուրիշ սփոփանք չունիս քան ինչ որ աչքովս տեսայ մէկ քանի անգամ քեզի այցելութեան գալու պատիւ ունենալովս։

Այս յանդիմանութիւնն այնքան անակնկալ էր՝ որ կառավարիչը՝ յանկարծ հովէն ներհակ մղում մ'ընդունող աղօրիի մը պէս՝ ըսլորովին շուարեցաւ։

— Սփոփանք — ըսաւ նա։ — Բայց սփոփանքս պակաս չէր տէր իմ։

— Ո՛հ, քաջ է։ Եւ ի՞նչ են այդ սփոփանքը։

— Տեսակ տեսակ։

— Անտարակոյս, այցելութիւններ են։

— Այցելութիւնները. ո՛չ։ Պասդիյլի մէջ այցելութիւններն անծանօթ բաներ են։

— Ինչպէս, միթէ այցելութիւնները յաճախակի չե՞ն։

— Ո՛չ։

— Նոյն իսկ քու ընկերութեան կողմէ։

— Ի՞նչ բան նշանակել կ'ուզես ընկերութիւն ըսելով... Իմ բանտաւորնե՞րս։

— Ո՛հ, ո՛չ, բանտաւորներդ.... Գիտեմ որ դու անոնց այցելութիւններ կ'ընես, և չէ թէ անոնք քեզի։ Ընկերութիւն ըսելով՝ կ'իմանամ այն ընկերութիւնն որու անդամն ես, սիրելի Պէզմո։

Պէզմո՝ Արամիսին երեսը նայեցաւ ակնապիշ, ապա՝ որպէս թէ պահ մ'իր մտքէն անցածն անկարելի էր նշմարել.

— Ո՛հ — ըսաւ նա — այժմ շատ քիչ ընկերներ ունիմ։ Եթէ կ'ուզես որ ճիշտը խոստովանիմ, սիրելի Պ. Հէրպլէյ, ընդհանրապէս Պասդիյլի բնակութիւնը վայրենի և փարթամ կ'թուի աշխարհի մարդոյ։ Իսկ կանանց գալով՝ միշտ տեսակ մ'երկիւղով զոր մեծ գժուարութեամբ փարատելու կ'յաջողիմ, հազիւ ուրեմն ինձի այցելութեան կ'գան։ Իրաւի, ի՞նչպէս քիչ մը չզոլան այս խեղճ կանայք, այս տխուր զնդանները տեսնելով, և մոռնալով որ թշուառ բանտաւորներ անդ կ'բնակին, որ....։

Եւ Պէզմոի աչերը քանի Արամիսի աչաց վրայ կ'սևեռէին, բարեսիրտ կառավարչին լեզուն հետզհետէ կ'շփոթէր, այնպէս որ 'ի վերջ բոլորովին ջլատեցաւ։

— Ո՛չ, դու չես հասկընար խնդիրս, սիրելիդ իմ Պ. Պէզմո ըսաւ Արամիս — չես հասկընար....։ Իմ խօսքս առ հասարակ բոլոր ընկերութեան վրայ չէ, այլ մասնաւոր ընկերութեան մը վրայ, որու անդամ ես, վերջապէս։

Պէզմոի ձեռքէն գրեթէ գինիի բաժակը՝ զոր բերանը պիտի տանէր, ընկաւ։

— Անդամ — ըսաւ նա — անդամ։

— Անշուշտ անդամ ես — կրկնեց Արամիս խիստ մեծ պաղութեամբ։ — Սիրելիդ իմ Պ. Պէզմո, դաղտնի ընկերութեան մը անդամ չե՞ս։

— Դաղտնի։

— Դաղտնի կամ խորհրդաւոր։

— Ո՛հ, Պ. Հէրպլէյ....։

— Նայինք, բացէ 'ի բաց խոստովանէ։

— Բայց հաւատա ինձ....։

— Իմ գիտցածիս կ'հաւատամ։

— Կ'երդնո՞ւմ....։

— Մոռիկ ըրէ ինձ, սիրելիդ իմ Պէզմո, ես այն կ'ըսեմ, դու ո՛չ կ'ըսես. մեղնէ մին 'ի հարկէ ճշմարիտը կ'խօսի, ի կ միւսն անվրէպ կ'սխալի։

— Լա՛ւ, ապա։

— Լա՛ւ, հիմակ իսկոյն գիրար պիտի ճանչենք։

— Նայինք — ըսաւ Պէզմօ — նայինք։

— Սա մոռացէ գինիդ խմէ նայիմ, սիրելի Պ. Պէզմօ — ըսաւ Արամիս։ — Կրո՛ղ, բոլորովին շուարած կ'երևիս։

— Բայց ո՛չ, ամենևին բան մը չունիմ։

— Ուրեմն, բաժակդ պարպէ։

Պէզմօ խմեց, բայց ծուռ կլլեց։

— Լաւ ուրեմն — վրայ բերաւ Արամիս — եթէ, կ'ըսէի, դաղտնի կամ խորհրդաւոր, ինչպէս որ կ'ուզես անուանէ, անունը տարբերութիւն մը չըներ, ընկերութեան մը մասնակից չես, եթէ, կ'ըսեմ, իմ ակնարկած ընկերութեան մէջ չես, այն ատեն իմ խօսելիք բաներս ոչ ինչ չպիտի հասկընաս։

— Ո՛հ, ստոյգ եղիր կանխաւ որ բան մը չպիտի հասկընամ։

— Ուրեմն, պանչելի՛է։

— Փորձէ նայինք։

— Ես ալ այդ պիտի ընեմ։ Եթէ, ընդ հակառակն՝ այս ընկերութեան անդամակից ես, շատ մը պիտի պատասխանես ինձ այո՛ կամ ո՛չ։

— Հարցո՛ւր — շարունակեց Պէզմօ գողդողալով։

— Վասն զի պիտի խոստովանիս անշուշտ, սիրելիդ իմ Պ. Պէզմօ — շարունակեց Արամիս նոյն անդրդուելի կերպով — որ բացայայտ է թէ մէկն ընկերութեան աւանդութիւնները չկրնար վայելել՝ թէ ինքն ալ քանի մը մանր մունր ծառայութիւններ չհատուցանէ։

— Արդարև — կմկմաց Պէզմօ — այդ գիւրին էր ըմբռնել եթէ . . . ։

— Լաւ ուրեմն — վրայ բերաւ Արամիս — իմ ըսած ընկերութեանս մէջ, որու անդամակից չես, ինչպէս որ կ'երևի, կամ բան մը . . . ։

— Ներէ — ըսաւ Պէզմօ — չէի ուզեր ըսել թէ բոլորովին . . . ։

— Ուխտին անդամ գտնուող ամէն բերդի կառավարիչ և հաբիւրապետ իրենց վրայ պարտաւորութիւն առած են։

Պէզմօի գոյնը նետեց։

— Անհատասիկ այս պարտաւորութիւնը — շարունակեց Արամիս հատատուն ձայնով մը։

Պէզմօ ոտք եկաւ, անպատում այլայլութեամբ մը։

— Նայինք ինչ է, սիրելի Պ. Հէրպլէյ — ըսաւ նա։

Արամիս այն ատեն ըսաւ կամ լաւ ևս արտասանեց հետևեալ յօդուածն այնպէս ձայնով որպէս թէ գրքի մէջ կարդար.

« Վերոյիշեալ բերդի կառավարիչը կամ հրամանատարը՝ 'ի հարկին պիտի ներս ընդունի, և կալանաւորին խնդրանօք, ուխտին անդամակից խոստովանահայր մը »։

Արամիս լռեց։ Պէզմօ 'ի գութ կ'շարժէր, այնքան գեղեր էր և կ'դողար։

— Մի՞թէ այս չէ՞ պարտաւորութեան բնագիրը — հարցուց Արամիս։

— Գերապատիւ տէր իմ — ըսաւ Պէզմօ։

— Ա՛հ, լա՛ւ, կարծեմ թէ սկսար հասկընալու։

— Տէր իմ — գոչեց Պէզմօ — այդպէս մի՛ բռներ իմ խեղճ դլուխս, ես քու քովդ բան մը չեմ արժեր, եթէ իմ վարչութեանս ներքին դաղտնիքն իմանէ՝ քաղելու նենդամիտ փափաքն ունիս։

— Ո՛հ, ո՛չ ամենևին, այդ սխալմունքդ փարատէ, սիրելի Պ. Պէզմօ, իմ միտքս քու տեսչութեանդ ներքին դաղտնիքն իմանալ չէ, այլ քու խղճիդ։

— Լա՛ւ, թո՛ղ իմ խղճիս լինի, սիրելիդ իմ Հէրպլէյ։ Բայց քիչ մ'իմ կացութիւնս նկատէ, սովորական կացութիւն մը չէ իմն։

— Սովորական չէ՞, սիրելի պարոն — շարունակեց անողոքելին Արամիս — եթէ այս ընկերութեան գործակից ես, բայց լիովին բնական է, եթէ՝ ամէն խոստումէ ազատ՝ միայն թագաւորին պատասխանատու ես։

— Լաւ ուրեմն, պարոն, լա՛ւ, ահա կ'ըսեմ թէ միայն թագաւորին կ'հնազանդիմ։ Աստուած իմ, որո՞ւ կ'ուզես որ ազատրդի մը հնազանդի եթէ ոչ թագաւորին։

Արամիս անշարժ կեցաւ, բայց իր քաղցր ձայնովն ըսաւ.

— Դաղղիացի ազատորդիի մը, Գրանսայի մէկ եպիսկոպոսի մը

համար շատ անսորժելի է լսել քու արժանիքդ ունեցող մարդու մ'այդ խօսքը, սիրելիդ իմ Պ. Պէզմօ, և քեզ լսելով, միայն քեզի կ'հաւատամ։

— Մի թէ կասկածի՞ դայիր, պարոն։

— Ե՞ս, ո՛հ, բնա՛ւ։

— Այդպէս այլ ես կասկած չունիմ։

— Պարոն, այլ ես չեմ տարակուսիր — ըսաւ Արամիս ծանրութեամբ — որ քեզի պէս մարդ մ'իր յօժար կամքը ընտրած մեծաւորներուն չծառայէ։

— Մեծաւորնե՞ը — դոչեց Պէզմօ։

— Այո՛, մեծաւորներ, ըսի։

— Պ. Հէրպլէյ, նորէն կատակ կ'ընես, այնպէս չէ՞։

— Այո՛, կ'հասկընամ որ աւելի գժուարին վիճակ մ'է շատ մեծաւորներ ունենալ քան թէ հատ մը միայն. բայց այդ շփոթութեան պատճառը դու ես, Պ. Պէզմօ, ես չեմ։

— Ո՛չ, անշուշտ — պատասխանեց խեղճ բերդակալն աւելի ևս շփոթելով։ — Բայց ի՞նչ կ'ընես, ո՞նք կ'ելնես։

— Ի հարկէ։

— Պիտի մեկնի՞ս։

— Այո՛, պիտի մեկնիմ։

— Բայց ի՞նչ տարօրինակ կերպով կ'վարուիս ինձի հետ, տէր իմ։

— Ե՞ս, տարօրինակ լինիմ, և ո՞ր դտար այդ բանը։

— Նայինք, խօսէ՛, մի թէ երդո՞ւմ ըրիր զիս չարչարելու։

— Ո՛չ, սաստիկ պիտի ցաւիմ եթէ այդպիսի բան մ'ընեմ։

— Ուրեմն, կեցի՛ր։

— Չեմ կարող։

— Եւ ինչո՞ւ համար։

— Վասն զի ուրիշ բան մը չունիմ ընելու այս տեղ, մինչդեռ ուրիշ տեղ պարտաւորութիւններ կան կատարելու։

— Պարտաւորութիւնները, այսպէս ո՞ւշ։

— Այո՛, ուրեմն լա՛ւ հասկցիր խնդիրը, սիրելի Պ. Պէզմօ. ըսին ինձ թէ ուսկից կ'դամ. «Վերոյիշեալ կառավարիչը կամ

հրամանատարը՝ երբ հարկ լինի, կալանաւորին խնդրոյն վրայ, պիտի թողու որ ներս մտնէ ուխտին անդամակից խոստովանահայր մը»։ Աւասիկ ես ալ եկայ. դու չգիտես թէ ի՞նչ ըսել կ'ուզեմ, ես ալ կ'դառնամ ըսելու այն մարդոց որ սխալեր են և թէ պէտք է որ զիս ուրիշ տեղ զրկեն։

— Ինչպէ՞ս, դո՞ւ ես . . . — դոչեց Պէզմօ՝ Արամիսին նայելով դրեթէ զարհուրանօք։

— Ուխտին անդամակից խոստովանահայր մը — ըսաւ Արամիս առանց ձայնը փոխելու։

Բայց որչափ որ անուշ էին այս խօսքերը, խեղճ կառավարչին վրայ կայծակի ներգործութիւն ունեցան։ Պէզմօի գոյնը կապոյտ դարձաւ, և իրեն այնպէս երևցաւ որ Արամիսի աղօր աչունքն երկու հրաշէկ սուրեր էին որ իր սրտին մինչև խորը կ'թափանցէին։

— Խոստովանահա՛յրը — մրմնաց նա — դո՛ւ դերապատիւ տէր, դո՞ւ ես ուխտին խոստովանահայրը։

— Այո՛, ես, բայց իրարու հետ գործ չունինք, քանի որ անդամակից չես։

— Տէր իմ. . . ։

— Եւ չեմ զարմանար որ, անդամակից լինելով՝ պատուիրանները հետևելու կ'մերժէիր։

— Տէր իմ, կ'պաղատիմ, շնորհ ըրէ զիս մտիկ ընելու։

— Ինչո՞ւ համար։

— Տէր իմ, չեմ ըսեր թէ ուխտին անդամակից չեմ. . . ։

— Հա՛, հա՛։

— Չեմ ըսեր թէ հնազանդելու կ'մերժեմ։

— Բայց քիչ մ'աջ բռնած ընթացքդ դիմադրութեան կ'նմանէր կարծեմ, Պ. Պէզմօ։

— Ո՛հ, ո՛չ, տէր իմ, ո՛չ, միայն կ'ուզէի ապահով լինիլ. . . ։

— Ի՞նչ բանի վրայ ապահով լինիլ կ'ուզէիր — ըսաւ Արամիս յետին ծայր արհամարհական դէմքով մը։

— Եւ ո՛չ բանի մը վրայ, տէր իմ։

Պէզմօ ձայնը մեղմեց և եպիսկոպոսին առջև գլուխը ծռեց։

— Ամէն ժամանակ ու ամէն տեղ իմ մեծատուներուս հրամանին պատրաստ եմ — ըսաւ նա — բայց . . . :

— Շատ լաւ, հիմակ քեզ այդպէս աւելի կ'սիրեմ, պարոն :

Արամիս իր աթոռը նստաւ և բաժակը Պէզմի երկնցուց, որ չկրցաւ զանի լեցնել այնքան ձեռքը կ'դողար :

— Բայց կ'ըսէիր — վրայ բերաւ Արամիս :

— Բայց — պատասխանեց խեղճ մարդը — կանխաւ աղաչարարութիւն չունենալով, բնաւ չէի յուսար որ . . . :

— Միթէ Աւետարանը չը՞սեր . « Արթուն կացէք, վասն զի Աստուծոյ միայն յայտնի է ժամանակը » : Միթէ ուխտին կանոնները չե՞ն ըսեր . « Արթուն կացէք, վասն զի ինչ որ ուզեմ, պէտք է որ գոք ալ ուզէք » : Եւ ինչ պատրուակաւ չէիր սպասեր խոստովանահօր, Պ. Պէզմ :

— Վասն զի այս պահուս հիւանդ բանտաւոր մը չկայ Պասդիլլի մէջ, տէր իմ :

Արամիս ուսերը բարձրացուց :

— Ուստի՞ գիտես — ըսաւ նա :

— Բայց կ'երևի ինձ որ . . . :

— Պ. Պէզմ — ըսաւ Արամիս իր թիկնաթոռին կոթնելով — աւասիկ սպասաւորդ որ քեզի խօսիլ կ'ուզէ :

Իրաւի նոյն պահուն Պէզմի սպասաւորը դրան սեմին վրայ երևցաւ :

— Ի՞նչ կայ — հարցուց Պէզմ աշխուժիւ :

— Պարոն կառավարիչ — ըսաւ սպասաւորը — բերդիս բժշկին տեղեկագիրը կ'բերեմ ձեզի :

Արամիս Պէզմի նայեցաւ իր պայծառ և ապահով աչքով :

— Լաւ ուրեմն, ներս կանչէ գրաբերն — ըսաւ նա :

Գրաբերը ներս մտաւ, բարևեց և տեղեկագիրը յանձնեց :

Պէզմ իր աչքը թղթին վրայ նետեց, և գլուխը բառնալով.

— Երկրորդ Պերդօսիէրը հիւանդ է — ըսաւ նա զարմանօք :

— Ուրեմն ինչպէս կ'ըսէիր, սիրելի Պ. Պէզմ, թէ ամէն մարդ ողջ առողջ է քու պանդոկիդ մէջ — ըսաւ Արամիս անհոգաբ :

Եւ ումպ մը գինի խմեց, առանց աչքը Պէզմին վրայէն վերցնելու : Այն առեն՝ կառավարիչը՝ գրաբերին նշան մ'ըրաւ իր գլխովը, և երբ այս գուրս ելաւ,

— Կարծեմ թէ — ըսաւ միշտ զողահար — տունին մէջ « բանտաւորին խնդրոյն վրայ » խօսքը կայ :

— Այո՛, այդ կայ — պատասխանեց Արամիս . — բայց նայէ մի անգամ նորէն քեզ կ'ուզեն, սիրելի Պ. Պէզմ :

Արդարև՝ յիսնապետ մ'իր գլուխը կ'անցընէր կիսաբաց դռնէն :

— Նորէն ինչ կայ — գոչեց Պէզմ : — Միթէ տասն վայրկեան հանգիստ չէ՞ք ուզեր թողուլ զիս :

— Պարոն կառավարիչ — ըսաւ յիսնապետը — երկրորդ Պերդօսիէրի հիւանդն ապստրեց իր բանտապահին որ ձեզնէ խոստովանահայր մը խնդրէ :

Քիչ մնաց որ Պէզմ կոնակի վրայ պիտի ընկնէր :

Արամիս արհամարհանօք զանի հանդարտեցնել չուզեց, ինչպէս որ զարհուրեցնել չուզեր էր :

— Ի՞նչ պէտք է պատասխանել — հարցուց Պէզմ :

— Բայց ինչ որ կ'ուզես — պատասխանեց Արամիս շրթերը սղղելով — քու գիտնալիք բանդ է այդ, ես, Պաստիլլի կառավարիչ չեմ :

— Ըսէ՛ — գոչեց Պէզմ աշխուժիւ — ըսէ բանտաւորին որ խնդրածը քիչ առենէն պիտի ունենայ :

Յիսնապետը դուրս ելաւ :

— Ո՛հ, տէր իմ, տէր իմ — մրմնաց Պէզմ — ինչպէս կըրնայի մոքէս անցընել . . . ինչպէս կարող էի գուշակել . . . :

— Ոչ կ'ըսէր թէ մոքդ անցընես, ոչ կ'ըսէր թէ գուշակես — պատասխան տուաւ Արամիս արհամարհութեամբ : — Ուխտը կ'դիտէ, ուխտը գիտէ, ուխտը կ'գուշակէ . միթէ այս բաւական չէ՞ :

— Ի՞նչ կ'հրամայես — հարցուց Պէզմ :

— Ես, ոչ ինչ : Ես միայն խեղճ քահանայ մ'եմ, պարզ խոստովանահայր մը : Միթէ կ'հրամայես ինձ որ երթամ հիւանդը տեսնեմ :

— Ո՛Հ, տէր իմ, չեմ հրամայեր, այլ կ՚աղաչեմ որ երթաս։
— Լաւ ուրեմն, առաջնորդս եղիր։

Բ

ԲԱՆՏԱՒՈՐԸ

Ա.բրամիս այսպէս տարօրինակ կերպով ուխտին խոստովանահայրը դառնալէն 'ի վեր՝ Պէզմօ ուրիշ մարդ մ՚եղեր էր։

Մինչ ցարդ՝ Արամիս՝ բարեմիտ կառավարչին համար եպիսկոպոս մ՚էր որու յարգ կ՚պարտաւորէր, բարեկամ մ՚որու երախտապէտ էր, բայց այն յայտնութենէն 'ի վեր որ իր բոլոր գաղտնիքները վեր 'ի վայր շրջեց, արբանեակն էր, և Արամիս մեծաւորն էր։

Պէզմօ անձամբ լապտեր մը վառեց, փականակիր մը կոչեց, և Արամիսին կողմը դառնալով,

— Պատրաստ եմ ձեր հրամանին, տէր իմ— ըսաւ նա։

Արամիս բաւական սեպեց գլխի նշան մ՚ընել որ ըսել կ՚ուզէր. «Լաւ է». և ձեռքի նշան մ՚որ ըսել կ՚ուզէր. «Ընդ առաջ քալէ»։ Պէզմօ ճամբայ ելաւ. Արամիս ետևէն գնաց։

Աստեղափայլ գիշեր մ՚էր. այս երեք մարդոց քայլերը դաւիթներուն սալարկներուն վրայ կ՚հնչէին, և փականակրին գօտիէն կախուած բանալիներուն շաչիւնը, մինչև աշտարակներուն դստիկոնը կ՚հասնէր, որպէս թէ կալանաւորաց յիշեցնէ որ ազատութիւնն իրենց մատչելի չէր։

Եւ կարծես թէ Պէզմօի վրայ եղած փոփոխութիւնը մինչև կալանաւորին հասած էր։ Այս փականակիրը՝ մի և նոյն մարդն որ Արամիսի առաջին այցելութեան ատեն՝ այնքան հետաքրքիր և հարցասէր երևցեր էր, ոչ միայն համր դարձեր էր, այլ և անդրդուելի։ Գլուխը կ՚ծռէր ու ականջները և կ՚թուէր թէ ականջները բանալու կ՚երկնչէր։

Այսպէս Պէրգօսիէրի ոտքը հասան, որու երկու դստիկոններէն լուիկ և կամաց կամաց ելան. վասն զի Պէզմօ՝ հնաձանգելով հանդերձ, հնաձանգելու մեծ եռանդ չէր ուզեր ցոյց տալ։

Վերջապէս դուռը հասան. փականակիրը բանալին փնտռելու պէտք չունեցաւ. արդէն պատրաստեր էր զայն։ Դուռը բացուեցաւ։

Պէզմօ կ՚պատրաստուէր բանտաւորին սենեակը մտնելու, բայց Արամիս սեմին վրայ կեցնելով զանի, ըսաւ.

— Դրուած չէ որ կառավարիչ մը բանտաւորին խոստովանանքը լսէ։

Պէզմօ խոնարհեցաւ և թողուց որ Արամիս անցնի, որ փականակրին ձեռքէն լապտերն առաւ ու ներս մտաւ. ապա՝ նշմայր մը ընելով հասկրցուց որ իր ետևէն դուռը գոցեն։

Պահ մը կայ առաւ, ականջը անկեց և մտիկ ըրաւ թէ արդեօք Պէզմօ և փականակիրը կ՚հեռանային. ապա՝ երբ ապահով եղաւ ամրուկին նուազելովը՝ որ աշտարակէն վար իջեր են, լապտերը սեղանին վրայ դրաւ ու չորս դին նայեցաւ։

Կանաչ ատոի անկողնոյ մը վրայ, Պասքիյլի միւս անկողիններուն յար և նման, միայն թէ այս աւելի նոր էր, լայն և կէս գոց աւազատի մը ներքև՝ պատանի մը կ՚հանգչէր, որու մօտ՝ անգամ մ՚ևս՝ տարեր էինք Արամիսը։

Բանտին սովորութեան համեմատ՝ կալանաւորն առանց Ճրագի էր։ Կրակապահի ժամանակ՝ իր մոմը մարելու պարտաւորեր էր։ Կ՚տեսնուէր որ բանտաւորին մեծ յարգ կար, վասն զի լոյսը պահելու արտօնութիւնն ունէր մինչև կրակապահի ժամը։

Այս մահճակալին մօտ՝ կաշեայ և ոլորած ոտքով մեծ թեւաթոռի մը վրայ, խիստ մաքուր զգեստներ կային։ Փոքրիկ սեղան մ՚որու վրայ ոչ գրիչ, ոչ գիրք, ոչ թուղթ, ոչ մելան կ՚երևէին, պատուհանին մօտ նետուած էր տրամօրէն։ Շատ մը պնակներ՝ որ դեռ ևս լի էին, կ՚ցուցնէին որ բանտաւորը հաղիւ ուրեմն Ճաշակեր էր իր վերջին ընթրիքը։

Արամիս տեսաւ պատանին անկողնին վրայ տարածուած, և իր գէմքը կիսովին ծածկած իր երկու թեւերուն տակ։

Այցելուին գալստեան վրայ իր դիրքը չփոխեց բնաւ. կ'սպասէր կամ կ'ննջէր։ Արամիս լապտերին միջոցաւ մոմը վառեց, թեւաթոռը մեղմիկ հրեց, և անկողնին մօտեցաւ այնպէս որ հետաքրքրութիւնն ու յարգանքը կ'երևէր։

Պատանին գլուխը վերցուց։

— Ո՞վ է այն — հարցուց նա։

— Միթէ խոստովանահայր մը չմնդրեցիք։

— Այո՛։

— Վասն զի հիւա՞նդ էք։

— Այո՛։

— Շա՞տ հիւանդ։

Պատանին թափանցիկ աչեր սևեռեց Արամիսի վրայ և ըսաւ.

— Շնորհակալ եմ ձեզի։

Ապա՝ պահ մը լուռ կենալէն ետև,

— Ես ձեզ արդէն տեսեր եմ — շարունակեց նա։

Արամիս խոնարհութիւն ըրաւ։ Անտարակոյս՝ բանտարկին այն ինչ ըրած քննութիւնը, պաղ, խորամանկ և տիրական քնարութեան մը նշանն որ Վանի եպիսկոպոսին կերպարանին վրայ դրոշմեալ էր, շատ վստահացուցիչ չէր պատանւոյն նոյն վիճակին մէջ, վասն զի նա յաւելցուց.

— Հիմակ աւելի աղէկ եմ։

— Ուրեմն — հարցուց Արամիս։

— Ուրեմն, աւելի աղէկ լինելով, կարծեմ թէ այժմ նոյն պէտքը չունիմ խոստովանահօր մը։

— Եւ ոչ իսկ խուրձի զոր ձեր հայրն մէջ գտնուած տոմակը կ'յայտնէր ձեզի։

Պատանին գող ելաւ. բայց պատասխան տալէն կամ ուրանալէն առաջ, Արամիս շարունակեց.

— Զէր ուզեր նաև այն եկեղեցականն որու բերնէն կարևոր յայտնութիւն մ'ունիք իմանալու։

— Եթէ այդպէս է — ըսաւ պատանին իր բարձին վրայ ընկնելով — խնդիրը կ'փոխուի, և ես մտիկ պիտի ընեմ։

Այն ատեն Արամիս անոր երեսը նայեցաւ աւելի ուշադրութեամբ, և զարմացաւ տեսնելով այն պարզ և հեշտ վեհափառութեան վրայ որ չստացուիր, եթէ Աստուած՝ մարդուս արեան կամ սրտին մէջ դրած չէ։

— Նստեցէք, պարոն — ըսաւ բանտարկեալը։

Արամիս հնազանդեցաւ խոնարհելով։

— Ի՞նչպէս էք Պասդիլլի մէջ — հարցուց եպիսկոպոսը։

— Շատ աղէկ։

— Միթէ չէք տառապիր։

— Ո՛չ։

— Միթէ բանի մը կարօտութիւն չէք քաշեր։

— Ամենևին։

— Եւ ո՞չ իսկ ազատութեան։

— Ի՞նչ ըսել է ազատութիւն, պարոն — հարցուց բանտարկեալն այնպիսի մարդու մը շեշտով որ պայքարի մը կ'պատրաստուի։

— Ազատութիւն կ'անուանեմ՝ ծաղիկները, օդը, լոյսը, աստղերը, և այն երջանկութիւնն որ է վազել ամէն տեղ ուր կ'տանին քսանամեայ երիտասարդի մը ջլատ ոտքը։

Երիտասարդը ժպտեցաւ. դժուարին էր ըսել թէ այս ժպիտն արհամարհանք թէ ոչ երկայնմտութիւն կ'յայտնէր։

— Նայեցէք — ըսաւ նա — ճաբանի սա թաղարին մէջ երկու, երկու աղուոր վարդեր ունիմ, որ երէկ կոկոններ էին երբ կառավարչին պարտէզէն քաղեցի. այս առտու ծլան և իրենց կարմրագոյն բաժակը բացին. իրենց թերթիկներուն իւրաքանչիւր ծալքով՝ իրենց անուշահոտ բուրմանց գանձը կ'բանային. իմ սենեակս ասպիկ բոլորովին այս հոտով բռնած է։ Այս երկու վարդերը, ահա տեսէք, վարդից մէջ դեղանի են, և վարդերն ալ ծաղկանց մէջ ամենէն դեղեցիկներն են։ Ինչո՞ւ համար ուրեմն կ'ուզէք որ ուրիշ ծաղիկներ փափաքիմ, քանի որ ամենէն դեղեցիկներն ունիմ։

Արամիս պատանւոյն նայեցաւ զարմանօք։

— Եթէ ծաղիկներն ազատութիւնն են — վրայ բերաւ դերին մելամաղձիկ — ուրեմն ազատութիւն կ'վայելեմ, քանի որ ծաղիկներ ունիմ։

— Ո՛հ, բայց օդը — գոչեց Արամիս — օդն որ այնքան կարևոր է կենաց։

— Լաւ ուրեմն, պարոն, մօտեցէք պատուհանին — շարունակեց բանտաւորը — բաց է այն։ Երկնի և երկրի մէջ, հովն իր սառոյցի, կրակի, գաղջ շողիներու կամ անուշ քամիներու մրրիկը կ'թաւալէ։ Այս պատուհանէն եկող օդն իմ երեսս կ'դպուէ, երբ՝ այս թևաթռուին վրայ կանգուն՝ յենակին վրայ նստած՝ թևս երկաթէ ձողէն անցընելով որ ղես կ'բռնէ, կ'երևակայեմ որ դատարկութեան մէջ կ'լողամ։

Արամիսի ճակատը կ'մթագնէր քանի պատանին կ'խօսէր։

— Լոյսը — շարունակեց բանտաւորը։ — Լոյսէն լաւագոյն բան մ'ունիմ, արևն ունիմ, բարեկամ մ'որ ամէն օր ինձ այցելութեան կ'գայ առանց կառավարչին հրամանին, առանց փականակրին ընկերութեան։ Պատուհանէն ներս կ'մտնէ, սենեկիս մէջ երկայն քառակուսի մը կ'ձգէ, որ պատուհանէս կ'ելնէ և մինչև անկողնիս սրահակին ծոսերը կ'շոյէ։ Այս լուսափայլ քառակուսին՝ ժամը տասնէն սկսելով մինչև կէսօր կ'մեծնայ, և ժամը մէկէն մինչև երեք կ'նուազի ծանր ծանր, այնպէս որ՝ գալու մեծ փոյթ ցոյց տալէն ետև՝ իրենէ հեռանալու կ'դժկամակի։ Երբ իր յետին շառաւիղը կ'անհետի, իր ներկայութիւնը չորս ժամ վայելած կը լինիմ։ Միթէ այս բաւական չէ։ Ասին ինձ թէ կան ողորմելի մարդիկ որ քարահատներն են, գործաւորներ որ հանքերը կ'բանին, և որ երբէք արևուն լոյսը չեն տեսներ։

Արամիս ճակատը սրբեց։

— Իսկ աստղերուն գալով՝ որոց տեսքն անուշ է — շարունակեց պատանին — ամենքն իրարու կ'նմանին, և միայն պայծառութեան կողմէ իրարմէ կ'տարբերին։ Ես այս շնորհն ալ ունիմ, վասն զի թէ որ մոմը չվառէիք, պիտի կարենայիք տեսնել աղոր աստղը զոր գալէդ առաջ անկողնիս մէջէն կ'տեսնէի, և որու շառաւիղն իմ աչքս կ'դպուէր։

Արամիս գլուխը ծռեց. այս չարաղոյժ փիլիսոփայութեան դառն զգացման ներքև կարծես թէ կ'ընկճէր, փիլիսոփայութիւն որ գերիներու կրօնն է։

— Ահա ես այսպէս կ'իմանամ ծաղիկները, օդը, լոյսն և աստղերը — ըսաւ պատանին մի և նոյն հանդարտութեամբ։ —

Միթէ բոլոր օրը կառավարչին պարտէզը չեմ պտըտիր երբ օդն աղուոր է, այս տեղս չեմ շրջիր, երբ անձրևէ, զով օդին՝ երբ տաք ընէ, տաքին՝ երբ ցուրտ է, իմ կրակարանիս շնորհիւ ձմեռուան ժամանակ։ Ա՛հ, հաւատա՛ ինձ, պարոն — յարեց բանտաւորն այնպիսի ձայնով որ դառնութենէ աղատ չէր — մարդիկ ըրին ինձի համար ինչ որ կարող է յուսալ, ինչ որ կարող է փափաքիլ մարդ մը։

— Մարդիկ այդպէս, քա՛ջ է — ըսաւ Արամիս գլուխը բառնալով — բայց կ'երևի ինձ որ զԱստուած կ'մոռնաք։

— Արդարև՝ մոռցայ զԱստուած՝ — պատասխանեց բանտաւորն առանց այլայլելու։ — բայց ինչու համար կ'խօսիք ինձ այդ բանը։ Ի՞նչ օգուտ ունի Աստուծոյ վրայ խօսիլ բանտաւորներուն։

Արամիս այս եղական պատանւոյն երեսը պինդ նայեցաւ, այս պատանին որ մարտիրոսի մ'երկայնմտութեամբն անաստուածի մը ժպիտն ունէր։

— Միթէ Աստուած ամէն բանի մէջ չէ — մրմռաց նա՝ յանդիմանական ձայնով մը։

— Ամէն բանի ծայրն ըսէ — պատասխանեց բանտաւորը հաստատամտութեամբ։

— Թող այդպէս լինի — ըսաւ Արամիս — բայց մեր սկսած խնդրոյն դառնանք։

— Ես ես այդ կ'ուզեմ — ըսաւ պատանին։

— Ես ձեր խոստովանահայրն եմ։

— Այո։

— Լաւ ուրեմն, իրրև իմ ծուխս, պարտաւոր էք ինձ ճշմարտութիւնն ըսել։

— Ես ես կ'փափաքիմ յայտնել։

— Ամէն բանտաւոր գործած է յանցանք մ'որու պատճառաւ բանտ մտած է։ Դուք, ի՞նչ յանցանք ըրիք, դուք։

— Երբ առաջին անգամ տեսաք զիս, այդ հարցումն արդէն ըրիք — ըսաւ բանտաւորը։

— Եւ այն ատեն ինձ պատասխան տալէն խոյս տուիք, ինչպէս այսօր։

— Եւ ինչո՞ւ համար կ'յուսաք որ այսօր պիտի պատասխանեմ։

— Վասն զի այսօր ձեր խոստովանահայրն եմ։

— Ուրեմն, եթէ կամիք որ ըսեմ ձեզի գործած յանցանքս, բացատրեցէք ինձ թէ ի՞նչ է յանցանք մը։ Արդ՝ որովհետև իմ ներսի դիս յանդիմանող բան մը չունիմ, կ'ըսեմ թէ յանցաւոր չեմ։

— Մարդ երբեմն աշխարհիս մեծամեծներու աչքին յանցաւոր է, ոչ միայն յանցանք գործելուն, այլ անոր համար որ դիտեն թէ յանցանքներ գործուած են։

Բանտաւորը յետին ծայր ուշադրութեամբ մտիկ կ'ընէր։

— Այո՛ — ըսաւ պահ մը լռութիւն պահելէն ետև — կ'իմանամ, այո՛, իրաւունք ունիք, պարոն. կարելի է որ այդ կերպով մեծամեծներու աչքին յանցաւոր լինիմ։

— Ա՛հ, ուրեմն, բան մը դիտէք — ըսաւ Արամիս որ կարծեց տեսնել չէ թէ զրուցին պակասութիւնն այլ անոր յօդուածը։

— Ո՛չ, բան մը չգիտեմ — պատասխանեց պատանին — բայց երբեմն կ'խորհիմ, և այն միջոցներուն կ'ըսեմ. . . ։

— Ի՞նչ կ'ըսէք։

— Կ'ըսեմ որ եթէ աւելի խորհիլ ուզեմ, կամ պիտի խենթանամ, կամ շատ բաներ պիտի գուշակեմ։

— Լաւ ուրեմն, այն ատեն — հարցուց Արամիս անհամբերութեամբ։

— Այն ատեն կանչ կ'առնում։

— Կանչ կ'առնո՞ւք։

— Այո՛, ղլուխս ծանր է, իմ գաղափարներս տխուր կ'դառնան, կ'զգամ զիս պաշարող ձանձրոյթը, կ'փափաքիմ. . . ։

— Ի՞նչ։

— Չգիտեմ, վասն զի չեմ ուզեր չունեցած բաներուս փափաքով հրապուրուիլ, ես որ ունեցածէս այնքան գոհ եմ։

— Մահէ կ'վախնաք — ըսաւ Արամիս թեթև անհանգստութեամբ մը։

— Այո՛ — ըսաւ պատանին ժպտելով։

Արամիս այս ժպտին սառնութիւնն զգաց և գող ելաւ։

— Ո՛հ, քանի որ մահուանէ կ'երկնչիք, ուրեմն ձեր դիտցածն այս մասին աւելի շատ է քան թէ ըսածը — զոչեց նա։

— Բայց դուք — պատասխանեց բանտաւորը — դուք որ իմաց տուիք ինձ որ ձեզ կանչել տամ, երբոր ահա ձեզ խնդրեցի, դուք որ այժմ այս տեղ մնաք անբաւ յայտնութիւններ ընելու խոստանալով, ուստի՞ է որ դուք այժմ կ'լռէք և ես կ'խօսիմ։ Քանի որ մեզնէ իւրաքանչիւրը դիմակ մը կ'ելլէ, կամ երկուքնիս ալ այդ դիմակը պահենք, կամ միասին վար առնունք։

Արամիս այս բանադատութեան ոյժն ու միանգամայն ճշդութիւնն զգաց։

— Հասարակ կարգի մարդու մը հետ չէ գործս — մտածեց նա։ — Նայինք, միթէ փառասիրութիւն ունի՞ — ըսաւ նա բարձրաձայն՝ առանց բանտաւորն այս անյումին պատրաստելու։

— Ի՞նչ է այդ փառասիրութիւն ըսածնիդ — հարցուց պատանին։

— Փառասիրութիւնն այն զգացումն է — պատասխանեց Արամիս — որ մարդս կ'դրդէ ունեցածէն աւելի փափաքելու։

— Ձեզի ըսի որ գոհ եմ, պարոն, բայց կարելի է որ կ'սխալիմ։ Չգիտեմ թէ ի՞նչ է փառասէրութիւնը, բայց կարելի է որ ունենամ։ Արդ՝ բացէք իմ միտքս, իմ ուզածս ալ այդ է։

— Փառասէր մը — պատասխանեց Արամիս — իր վիճակէն աւելի բարձր բանի աչք ունեցողն է։

— Ես իմ վիճակէս բարձր բանի մը տենչ չունիմ — ըսաւ պատանին այնպիսի վստահութեամբ որ՝ վերստին կ'ըսենք, Վանի եպիսկոպոսը դող հանեց։

Ուստի լռեց։ Բայց բանտաւորին հրափայլ աչերը, խորշոմած ճակատը, անոր խոհուն գիրքը տեսնելով՝ դիւրին է գիտել որ լռութենէ տարբեր բանի մը կ'սպասէր։ Այս լռութիւնն Արամիս խզեց։

— Առաջին անգամ որ զիս տեսաք սուտ խօսեցաք — ըսաւ նա։

— Սո՛ւտ խօսեցայ — պոռաց երիտասարդն իր անկողնին մէջ վեր ելլելով այնպիսի ձայնի շեշտով, այնպէս աչքէն կայծակներ արձակելով որ Արամիս ակամայ ընկրկեց։

— Ըսել կ'ուզեմ — վրայ բերաւ Արամիս խոնարհելով — որ ձեր մանկութեան վրայ գիտցածն իրնէ պահեցիք։

— Մարդու մը դաղտնիքն իրն են, պարոն — ըսաւ բանտաւորը — և չէ թէ իր առջևն եկնող որ և է մարդու մը։

— Ճշմարիտ է — ըսաւ Արամիս առաջին անդամն աւելի վար խոնարհելով — իրաւ է, ներեցէք. բայց միթէ այսօր ես ձեզի անծանօթ մարդ մ'եմ, կ'աղերսեմ, պատասխան տուէք, դէր ի՞մ։

Այս տիտղոսը թեթև վրդով մը պատճառեց բանտաւորին, բայց չզարմացաւ ամենևին այս տիտղոսն իրեն տրուելուն համար։

— Ես ձեզ չեմ ճանչեր, պարոն — ըսաւ նա։

— Ո՛հ, թէ որ համարձակէի, ձեռքդ պիտի բռնէի համբուրէի։

Պատանին շարժում մ'ըրաւ որպէս թէ իր ձեռքն Արամիսի տալ կ'ուզէր, բայց աչերէն ցայտած կայծակն իր արտաքինն ծայրը մարեցաւ և իր ձեռքը քաշեց պաղ և կասկածոտ կերպով մը։

— Բանտաւորի մը ձեռքը համբուրե՛լ — ըսաւ նա դլուխն օրելով — ի՞նչ օգուտ ունի։

— Ինչո՞ւ համար ըսիք ինձ որ այս տեղ հանդիստ էք, ինչո՞ւ համար ըսիք թէ բանի մը չէք տենչար, ինչո՞ւ համար, վերջապէս՝ այսպէս խօսելով՝ կ'արդիլէք որ ես ալ ըստ կարդի ձեզի հետ համարձակ խօսիմ։

Նոյն կայծակն երրորդ անդամ երևցաւ պատանւոյն աչաց մէջ, բայց միւս երկու անդամուն պէս՝ մարեցաւ առանց բան մ'արտադրելու։

— Իմ վրայ վստահութիւն չունիք, այնպէս չէ՞ — ըսաւ Արամիս։

— Ի՞նչ պատճառաւ, պարոն։

— Ո՛հ, շատ պարզ պատճառ մը կայ. թէ որ գիտնայիք ինչ որ պարտիք գիտնալ, և ոչ մարդու մը վստահութիւն պիտի ունենայիք։

— Ուրեմն մի՛ զարմանաք եթէ վստահութիւն չունիմ, քանի որ կ'կասկածիք թէ չգիտցածս գիտեմ։

Արամիս հիացմամբ կ'գիտէր այս ազդու գիմադրութիւնը։

— Ո՛հ, զիս կ'յուսահատեցնէք, տէր իմ — գոչեց նա թիկնաթոռին վրայ զարնելով իր ձեռաք։

— Եւ ես ձեր ըսածը չեմ հասկընար, պարոն։

— Լաւ ուրեմն, գուն գործեցէք հասկընալու։

Բանտաւորն ակնապիշ նայեցաւ Արամիսին։

— Կ'երևի ինձ երբեմն — շարունակեց այս վերջինը — որ իմ առջևս ունիմ իմ փնտռած մարդս . . . և ապա . . .։

— Եւ ապա . . . այս մարդն աներևոյթ կ'լինի, այնպէս չէ՞ — ըսաւ բանտաւորը ժպտելով։ — Աւելի՛ աղէկ։

Արամիս ոտք ելաւ։

— Ճշմարիտը, բան մը չունիմ ըսելու այնպիսի մարդու մ'որ այդ աստիճան կասկածներ ունի իմ վրայ։

— Եւ ես — յարեց բանտաւորը նոյն ձայնով — բան մը չունիմ ըսելու մարդու մ'որ չուզեր հասկընալ որ բանտաւոր մը պարտաւոր է ամէն բանէ կասկածիլ։

— Մինչև անդամ իր վաղեմի բարեկամներէն — ըսաւ Արամիս։ — Ո՛հ, խոհեմութեան չափը կ'անցընէք, տէր իմ։

— Իմ վաղեմի բարեկամներէս, դուք, դուք իմ վաղեմի բարեկամներէս էք։

— Նայինք — ըսաւ Արամիս — միթէ այլ ևս չէ՞ք յիշեր այն գիւղն ուր ձեր մանկութիւնն անցուցիք։

— Այդ գեղին անունը գիտէ՞ք — պատասխանեց բանտաւորը։

— Նուազի-լը-Սէք, տէր իմ — պատասխանեց Արամիս անյողդողդ։

— Շարունակեցէք — ըսաւ պատանին առանց իր դէմքին վրայ հաստատութեան կամ ուրացութեան նշան մ'երևելու։

— Ճշմարիտը, տէր իմ — ըսաւ Արամիս — եթէ այս խաղը կ'ուզէք անպատճառ շարունակել, խօսքը վերջացնենք այս տեղ։ Եկայ որ ձեզի շատ բաներ ըսեմ, իրաւ է. բայց պէտք է քիչ մը ցոյց տաք որ այս բաներն իմանալու փափաք ունիք։ Խօսեցէն, և իմ սրտիս մէջ պահած կարևոր բաները յայտնելէն առաջ, խոստովանեցէք որ քիչ մը պէտք ունէի եթէ ոչ անկեղ-

ծութեան՝ դէթ օգնութեան, թէ ոչ վստահութեան՝ քիչ մը համակրութեան։ Լաւ, դուք կարծեցեալ տգիտութիւն մը կ'ցուցընէք որ զիս կ'ջլատէ . . . ։ Ո՛հ, չէ թէ ձեր կարծածին համար, վասն զի որչափ որ շատ տգէտ լինիք, կամ որչափ անտարբերութիւն կեղծէք, գարձեալ ինչ որ էք այն էք, տէր իմ, և ոչ բան մը, քաջ կ'իմանաք, և ոչ բան մը չպիտի կարենայ արգիլել որ այսպէս չլինիք։

— Կ'խոստանամ — պատասխանեց բանտաւորը — համբերութեամբ ձեզ մոիկ ընելու։ Միայն կարծեմ թէ իրաւունք ունիմ ձեզի սա հարցումը կրկնել զոր արդէն ձեզի ըրի. դուք ո՞վ էք։

— Կ'յիշէք արդեօք որ ասկից տասն հինգ կամ տասն ութ տարի առաջ՝ Նուազի-լը-Սէք ձիաւոր մը տեսաք որ տիկնոջ մը հետ կ'գար, որ սովորաբար սև մետաքսէ զգեստ կ'հագնէր, և մազերուն մէջ հրագոյն ժապաւէններ կ'դնէր։

— Այո՛ — ըսաւ երիտասարդը — անգամ մ'այս ձիաւորին անունը հարցուցի, և ըսին ինձ որ Հէրպլէյ աբբայ կ'կոչուի։ Այն ատեն զարմացայ որ այն աբբան այնպիսի պատերազմական դէմք մ'ունենայ, և պատասխան տուին ինձ որ այս բանիս մէջ զարմանալի բան մը չկայ, քանի որ Լուի ԺԳի մէկ հրացանակիրն էր։

— Լաւ ուրեմն — ըսաւ Արամիս — այն երբեմն հրացանակիր, այն ատեն աբբայ, այնուհետև Վանի եպիսկոպոս, այսօր ձեր խոստովանահայրն եղողը, ես եմ։

— Գիտեմ այդ։ Ձեզ ճանչեր էի։

— Լաւ ուրեմն, տէր իմ, եթէ այդ գիտէք, պէտք է յաւելում բան մը զոր չգիտէք, այս է որ՝ եթէ այս հրացանակիրին, այս աբբային, այս եպիսկոպոսին, այս խոստովանահօր ներկայութենէ այս տեղ թագաւորը տեղեկութիւն ունենար, այս իրկուն, վաղն՝ այն որ ամէն բան աչքն առաւ ձեզ գալու, դահճին տապարին շողալը պիտի տեսնէր ձեր վնդանէն աւելի մութ և հեռաւոր վնդանի մը խորը։

Երիտասարդն այսպէս ուժգին արտասանուած խօսքերը լսելով՝ իր անկողնին մէջ ելեր նստեր էր և Արամիսին նայուածքին մէջ հետզհետէ հետաքննին ակնարկ մը կ'ձգէր։

Այս քննութեան արդիւնքը սա եղաւ որ բանտաւորը կարծեց թէ դոյն ինչ վստահութիւն առաւ։

— Այո՛ — ըսաւ նա — այս կատարելապէս կ'յիշեմ։ Ձեր ըսած կինը մի անգամ ձեզի և ուրիշ երկու անգամ եկաւ այն կնկան հետ . . . ։

Եւ լռեց։

— Այն կնկան հետ որ ամէն ամիս ձեզ տեսնելու կ'գար, այնպէս չէ՞, տէր իմ։

— Այո՛։

— Գիտէք թէ ո՞վ էր այն կինը։

Այնպէս երևցաւ որ կալանաւորին աչքէն փայլակ մը պատրաստ էր դուրս ցայտելու։

— Գիտեմ որ արքունեաց տիկին մ'էր — ըսաւ նա։

— Մի՞թէ քաջ կ'յիշէք այն տիկինը։

— Ո՛հ, իմ յիշատակներս այս մասին չեն կրնար շատ շփոթ լինիլ — ըսաւ նորատի կալանաւորը. — մի անգամ այս տիկինը տեսայ շուրջ քառասնամենի մարդու մը հետ. այս տիկինն ուրիշ անգամ մ'ևս ձեզի հետ տեսայ և սև շրջազգեստով ու հրագոյն ժապաւէններ ունեցող կնկան հետ. այնուհետև նոյն անձին հետ երկու անգամ ևս տեսայ։ Այս չորս անձերը, իմ խնամակալս և պառաւ Բէրոնէզը, իմ բանտապահս և բերդակալը միայն ճանչցած և որոց հետ խօսած եմ կենացս մէջ։

— Ուրեմն բա՞նտն էիք։

— Եթէ այս տեղ բանտն էի, անդ համեմատաբար ազատ էի, թէև շատ սեղմեալ էր իմ ազատութիւնս. տուն մ'ուստի դուրս չէի ելներ, մեծ պարտէզ մ'որու պատերէն անկարող էի անցնիլ. այս էր ահա իմ բնակարանս. դուք գիտէք զայն քանի որ անդ եկած էք։ Սակայն՝ այն պատերուն և տան սահմանին մէջ ապրելու վարժած լինելով, երբէք անկից դուրս ելնելու չէի փափաքած։ Ուրեմն, կ'ըմբռնէք, պարոն, որ այս աշխարհէս բան մը տեսած չլինելով, չեմ կրնար բան մը փափաքիլ, և եթէ ինձ բան մը պատմել ուզէք պարտաւոր պիտի լինիք ամէն ինչ բացատրելու։

— Այդպէս պիտի ընեմ, տէր իմ — ըսաւ Արամիս խոնարհելով — վասն զի այդ է իմ պարտաւորութիւնս։

— Ուրեմն, սկսէք ինձ յայտնելու թէ ի՞նչ էր իմ խնամակալս։

— Բարի աղատորդի մ'էր, տէր իմ, մանաւանդ պարկեշտ աղատորդի մը, մարմնոյդ և միանգամայն հոգւոյդ համար դաստիարակ մը։ Միթէ երբէք անորմէ գանգատելու պատճառ մ'ունեցա՞ք։

— Ո՛հ, ո՛չ, պարոն, ընդ հակառակն, բայց այդ աղատորդին ստէպ ըսած է ինձ որ հայրս ու մայրս մեռած էին, այդ աղատորդին սուտ թէ ոչ ճշմարիտ կ'խօսէր։

— Պարտաւորուած էր իրեն տրուած հրամանին համեմատ վարուիլ։

— Ուրեմն սուտ կ'խօսէր։

— Մէկ կիտի վրայ, ձեր հայրը մեռած է։

— Հապա մայրս։

— Ձեզի համար մեռած է։

— Բայց ուրիշներու համար կ'ապրի, այնպէս չէ՞։

— Այո՛։

— Եւ ես (պատանին Արամիսի նայեցաւ) ես մութ բանտի մը մէջ ապրելու դատապարտուած եմ։

— Աւա՜ղ, այդպէս կարծեմ։

— Եւ ինչո՞ւ — շարունակեց պատանին — արդեօք աշխարհիս մէջ իմ ներկայութիւնս մեծ դաղտնիք մ'երևան պիտի հանէր։

— Այո՛, մեծ դաղտնիք մը։

— Անշուշտ իմ թշնամիս շատ զօրաւոր պիտի լինի որ ինձի պէս տղայ մը Պաստիլի մէջ փակել տուեր է։

— Զօրաւոր է։

— Ուրեմն, քան մայրս աւելի՞ զօրաւոր է։

— Ինչո՞ւ այդպէս կ'ըսէք։

— Վասն զի մայրս զիս պիտի պաշտպանէր։

Արամիս պատասխան տալու վարանեցաւ։

— Այո՛, տէր իմ, քան ձեր մայրն աւելի զօրաւոր։

— Քանի որ դայեակս և խնամակալս յափշտակեցին և այսպէս զիս անոնցմէ բաժնեցին, ուրեմն ես կամ անոնք շատ վտանգաւոր ենք մեր թշնամիին համար։

— Այո՛, վտանգ մ'որմէ ձեր թշնամին աղատեցաւ խնամակալդ և դայեակդ անհետ ընել տալով — պատասխանեց Արամիս հանդարտութեամբ։

— Անհետ ըրին — հարցուց բանտաւորը։ — Բայց ի՞նչ կերպով անհետ եղան։

— Խիստ ապահով միջոցաւ — պատասխանեց Արամիս։ — Մեռած են։

Պատանին թեթև մը գունատեցաւ և իր դողդոջուն ձեռքն երեսին տարաւ։

— Թոյնո՞վ — հարցուց նա։

— Թոյնով։

Բանտաւորը պահ մը մտածեց։

— Քանի որ այս երկու անմեղ արարածները, իմ միակ նեցուկներս, մի և նոյն օրը սպաննուեր են դաղտնապէս — վրայ բերաւ պատանին — ըսել է թէ իմ թշնամիս շատ անզութ էր կամ 'ի հարկէ բռնադատեալ էր, վասն զի այն ազնիւ աղատորդին և խեղճ կինն երբէք ուրիշի չարիք մը չէին ըրած։

— Հարկն անպարտ է ձեր դերդաստանին մէջ, տէր իմ։ Ուստի հարկ մ'է որ՝ ցաւ 'ի սիրտ ըսել կ'տայ ինձ որ այս աղատորդին և սանտուդ սպաննուեցան։

— Ո՛հ, նոր բան մը չէք յայտներ ինձ — ըսաւ բանտաւորն ունքը պռստելով։

— Ինչպէ՞ս։

— Արդէն այդ կասկածն ունեցեր էի։

— Ինչո՞ւ համար։

— Հիմակ պիտի պատմեմ ձեզի։

Նոյն պահուն՝ երիտասարդը՝ իր երկու արմկաց վրայ յենլով՝ Արամիսի դէմքին մօտեցաւ այնպիսի ազնիւ, անձնուրաց և նոյն իսկ անվեհեր կերպով մ'որ եպիսկոպոսն զգաց ելէկտրական խանդալի և կիզիչ կայծերու իր անպպայ սրտէն պողովատի պէս կարծր գանկին զարնելը։

— Խօսեցէք, տէր իմ։ Արդէն ձեզի ըսի որ կեանքս վտանգի մէջ կ'դնեմ ձեզի խօսելով։ Կեանքս թէև մեծ արժէք չունի, կ'ապրեսեմ ձեզ ընդունիլ զայն իբրև ձերինին փրկանքը։

— Լաւ ուրեմն — վրայ բերաւ պատանին — ահա ըսեմ ձեզի թէ ինչու համար կ'կասկածէի որ սանտուս և խնամակալը սպանուած լինին։

— Այն խնամակալը զոր հայրդ կ'անուանէիք։

— Այո՛, հայը կ'անուանէի զանի, թէև գիտէի որ իր որդին չեմ։

— Ի՞նչպէս կարծիք ըրիք թէ նա ձեր հայրը չէ . . . ։

— Ինչպէս որ դուք չափազանց յարգանքք կ'վարուիք բարեկամի մը հետ, նոյնպէս նա՝ թէև հայր, չափէն աւելի կ'յարգէր զիս։

— Ես — ըսաւ Արամիս — ինքզինքս ծպտելու միտք չունիմ։ Պատանին գլխով նշան մ'ըրաւ և շարունակեց.

— Անտարակոյս՝ յաւիտեան փակուած մնալու սահմանուած չէի — ըսաւ կալանաւորը — և այս կարծիքն ինձ տուողը, մանաւանդ հիմակ, սա էր թէ զիս հնար եղածին չափ կատարեալ ասպետ մ'ընելու հոգ կ'տանէին։ Իմ քովս գտնուող ազատորդին իր-բոլոր գիտցածն ինձ սորվեցուցեր էր. չափագիտութիւն, քիչ մը երկրաչափութիւն, աստղաբաշխութիւն, սրավարժութիւն, ձիավարութիւն։ Ամէն առտու՝ զինավարժութեան կ'պարապէի ստորին սրահի մը մէջ, և պարտէզը ձի կ'հեծնէի։ Լաւ, առտու մը, ամառ էր, վասն զի սաստիկ տաք կ'ընէր, նոյն ստորին սրահը նստեր էի։ Մինչ ցայն վայր՝ բան մ'ինձ կասկածներ չէր տուած կամ աչքս չէր բացած՝ խնամակալիս յարգանքէն զատ։ Տղոց պէս, թռչուններու պէս, բոյսերու պէս կ'ապրէի օդով և արևով. նոյն միջոցին տան հինգ տարուան հասակս մտեր էի։

— Ուրեմն, ութ տարուան խօսք է ձեր ըրածը։

— Այո՛, շուրջ այդչափ. ժամանակին չափը կորուսի։

— Ներեցէք, բայց ի՞նչ կ'ըսէր ձեր խնամակալը ձեզ աշխատութեան յորդորելու համար։

— Կ'ըսէր ինձ որ մարդ պարտի երկրիս վրայ բաղդը շինել քանի որ Աստուած զլացած է անոր զայն ծնելու ատեն. կ'յաւելուր թէ աղքատ, որբ, աննշան լինելով միայն յոյս իմ վրայ դնել պէտք էի, և թէ ոչ ոք հոգ կ'տանէր կամ պիտի տանէր

իմ անձիս համար։ Ուստի այն ստորին սրահը կ'գտնուէի, և սրաւարժութեան դասէս յոգնելով՝ քունս տարեր էր։ Խնամակալս իր սենեակն էր, առաջին գտակինը. Ճիշտ իմ սենեկիս վրայ։ Յանկարծ իրիր խնամակալիս բերանէն ելած մրմունջ մը լսեցի։ Ապա կոչեց. «Բէրտանէդ, Բէրտանէդ»։ Այս կոչած անձն իմ ստնտուս էր։

— Այո՛, գիտեմ — ըսաւ Արամիս — շարունակեցէք, տէր իմ, շարունակեցէք։

— Անտարակոյս Բէրտանէդ պարտէզն էր, վասն զի խնամակալս արտորնաք վար իջաւ սանդղէն։ Արթնցայ, մտայոյզ տեսնելով որ ինքն ալ մտայոյզ էր։ Դուռը բացաւ, որ գաղթէն պարտէզը կ'տանէր, միշտ գոռալով. «Բէրտանէդ, Բէրտանէդ»։ Ստորին սրահի պատուհանները բակին վրայ կ'նայէին, անոնց փեղկերը դոց էին, բայց փեղկին մէկ ճեղքէն, իմ խնամակալս տեսայ որ կ'մօտենար լայն հորի մ'որ գրեթէ իր գրասենեկին ներքև կը գտնուէր։ Շրջանակին վրայ ծռեցաւ, հորին մէջ նայեցաւ, և նոր աղաղակ մ'արձակեց շուարած մեծ շարժումներ ընելով. իմ եղած տեղէս ոչ միայն կարող էի տեսնելու, այլ և լսելու։ Ուստի տեսայ և լսեցի։

— Շարունակեցէք, տէր իմ, կ'աղաչեմ — ըսաւ Արամիս։

— Բէրտանէդ խաթունն իմ խնամակալիս ձայնին կ'վազէր։ Խնամակալս գիմաւորեց զանի, անոր թևէն բռնեց և աշխուժով հորին շրջանակին մօտ բերաւ. ապա ջրհորին վրայ ծռելով անոր հետ, անոր ըսաւ. «Նայէ, նայէ, ինչ աղէտ։

— «Նայինք, նայինք, հանգարտէ, կ'ըսէր Բէրտանէդ խաթունը, ի՞նչ կայ։

— «Այս նամակը, կ'գոչէր խնամակալս, կ'տեսնե՞ս սա նամակը։

«Եւ ձեռքը ջրհորին խորը կ'ձգէր։

— «Ի՞նչ նամակ, հարցուց դայեակը։

— «Այս նամակը զոր վարը կ'տեսնես, թագուհւոյն յետին գիրն է։

«Այս խօսքին վրայ դող ելայ։ Իմ խնամակալս՝ այն որ հօրս

տեղը կ'անցնէր, այն որ անդադար համեստութեան և խոնարհութեան կ'յորդորէր զիս, թաղուհւոյն հետ թղթակցութիւն ունենար։

— «Թաղուհւոյն յետին գիրը, գոչեց Բէրօնէդ խաթունը զարմանօք երբ այն նամակը ջրհորին խորը տեսաւ։ Եւ ի՞նչպէս ընկաւ այն տեղ։

— «Դիպուածով մը, Բէրօնէդ խաթուն, այլանդակ դիպուածով մը։ Բնակարանս կ'դառնայի, դառնալու ատենս, դուռը բացի, պատուհանը կողմնակի բացուած էր, հովի յորձանք մը սկսաւ, թուղթ մը տեսայ որ կ'թռէր, կ'նայիմ որ այս թուղթը թագուհւոյն գրածն է. պատուհանին կ'վազեմ աղաղակ մ'արձակելով. թուղթը օդին մէջ պահ մը կ'տատանի և ջրհորը կ'ընկնի։

— «Լաւ ուրեմն, ըսաւ Բէրօնէդ խաթունը, եթէ նամակը ջրհորն ընկաւ, բունէ թէ այրած է, և որովհետև թագուհին ինքն իր բոլոր գիրերը կ'այրէ, ամէն անգամուն որ ինք կ'գայ . . .»։

«Ամէն անգամուն որ ինք կ'գայ։ Այսպէս ուրեմն ամէն ամիս եկողը թագուհի՞ն էր — ընդմիջեց բանտաւորը։

— Այո՛ — ըսաւ Արամիս գլուխը ծռելով։

— «Անտարակոյս, անտարակոյս, շարայարեց ծեր խնամակալը, բայց այդ նամակը հրահանգներ կ'պարունակէր։ Ի՞նչ ընելու է անոնց հետևելու համար։

— «Շուտ մը թագուհւոյն գրէ, պատմէ անոր գործն ինչպէս որ պատահեցաւ, և թագուհին այս նամակին տեղ քեզի ուրիշ մը պիտի գրէ։

— «Ո՛հ, թագուհին չպիտի ուզէ հաւատալ այս դիպուածին, ըսաւ բարեմիտ մարդն իր գլուխը տատանելով, պիտի կարծէ թէ նոյն գիրը պահել ուզեցի, փոխանակ միւսներուն պէս զայն ետ տալու, որպէս զի զայն իբրև զէնք գործածեմ։ Նա ո՛րչափ կասկածոտ է, և Պ. Մազարէն այնչափ . . .։ Այն սադայէլ իտալացին կարող է ամենաթեթև կասկածի մը վրայ մեզ բանտարկել»։

Արամիս ժպտեցաւ գլխի աննշմարելի շարժում մ'ընելով։

— «Գիտես, Բէրօնէդ խաթուն, որ երկուքնին ալ որչափ կասկածոտ են Գիլլիպի մասին»։

«Գիլլիպ էր ինձ տրուած անունը — ընդհատեց բանտաւորը։

— «Լաւ ուրեմն, վարանելու ատեն չկայ, ըսաւ Բէրօնէդ խաթունը, պէտք է մէկը հորն իջեցնել։

— «Այո՛, որպէս զի թուղթն առնողը զայն կարդայ վեր ելնելու ատենը։

— «Գեղէն մէկը կանչենք որ կարդալ չգիտնայ. այսպէս ապահով կ'լինիս։

— «Այո՛, բայց ջրհորն իջնողը չ'պիտի դուշակէ թղթի մը կարևորութիւնն որու համար մարդու մը կեանքը վտանգի կ'ենթարկենք։ Սակայն, խաթուն Բէրօնէդ, միտքս բան մը ձգեցիր. մէկը պիտի իջնէ ջրհորն և այս մէկն ես պիտի լինիմ։

«Բայց այս առաջարկութեան վրայ Բէրօնէդ խաթունն այնպէս պոռալ ու ողբալ սկսաւ, ծերունի խնամակալիս այնչափ աղաչանք ըրաւ լալով, որ այս ալ խոստացաւ բաւական մեծ ելնարան մը գտնել որպէս զի ջրհորն իջնէ, մինչդեռ դայեակը մինչև աղարակը պիտի երթար անվախ տղայ մը գտնելու, որու պիտի հաստատնէին թէ ջրհորին մէջ գոհար մ'ինկած էր, և թէ այս գոհարը թղթով փաթթուած էր, և որովհետև թուղթը — ըսաւ խնամակալը — ջրին մէջ կ'տարածուի, զարմանալի չպիտի երևի որ նամակը բոլորովին բաց գտնուի։

— «Կարելի է արդէն ջրէն աւրուած է, ըսաւ Բէրօնէդ խաթունը։

— «Փոյթ չէ, բաւական է որ նամակը ձեռք ձգենք։ Գիրը թագուհւոյն տալով՝ պիտի տեսնէ որ զինքը չմատնեցինք, և հետևապէս Մազարէնի կասկածը չդրդռելով՝ անորմէ վախնալիք տեղ մը չպիտի ունենանք»։

«Այս որոշումն ընելով՝ իրարմէ բաժնուեցան։ Փեղկը հրեցի, և տեսնելով որ խնամակալս ներս մտնելու վրայ էր՝ բարձրուն վրայ ընկայ գլխի բզզումով մը, որու առիթ տուած էին բոլոր լսածներս։

«Խնամակալս քանի մը մանբերկրորդ դուռը կէս մը բացած

մնայ բարձին վրայ ընկնելէն ետև՝ և կարծելով թէ թմրեր քնա-
յեր եմ, դուռը վերստին դոցեց կամացուկ մը։

« Հապա թէ դոցեց, որ ես ոտք ելայ, և ոկանջ դնելով՝ քայ-
լերու ձայնը լսեցի որ կ՚հեռանային։ Այն ատեն փեղկին վերա-
դարձայ, և իմ խնամակալիս ու Բէրօնէդ խաթունին դուրս ել-
նելը տեսայ։

« Տան մէջ մինակ էի։

« Այն ինչ դուռը դոցեցին, որ դաւթէն անցնելու ծանրու-
թիւն չառնելով՝ պատուհանէն վար ցատկեցի և ջրհորին վազեցի։

« Այն ատեն՝ ինչպէս որ խնամակալս ծուռը էր անոր վրայ, ես
ալ ծռեցայ նայելու համար։

« Զգիտեմ թէ ինչ սպիտակ և լուսաւոր բան էր այն որ կա-
նաչկեկ ջրին դողդոջուն շրջաններուն մէջ կ՚փալփլէր։ Այս փայ-
լուն սկաւառակը կ՚գիթէր ցիս և հրապուրէր. անքթիթ էին ա-
չերս, շունչս ողեսպառ. ջրհորը ցիս կ՚քաշէր իր լայն բերնով
և սառ շնչով. կարծէի կարդալ ջրին խորը հրայրն տառեր թա-
գուհւոյն գլած թղթին վրայ գրուած։

« Այն ատեն՝ առանց ըրածս գիտնալու, և բնազդական շարժ-
մամբ մը վառուած որ զմարդ դժնդակ զառ 'ի թափի կ՚մղէ, չուա-
նին մէկ ծայրը ջրհորին գերանին ստորոտը կապեցի, գոյլը մինչև
ջուրը կախեցի, գրեթէ երեք ոտք խորութեամբ, և այս ամենն
ըրի մեծ նեղութիւն քաշելով որպէս զի թանկագին թուղթը չաւ-
րեմ, վասն զի սկսեր էր այն իր ձերմակ գոյնը փոխել կանաչ-
կեկ գոյն մ՚առնելով, որմէ յայտնի է թէ կ՚յուղէր. ապա՝ թաց
ձտաւ մ՚առնելով ձեռքս՝ անդունդին մէջ սահեցայ։

« Երբոր այն մութ ջրաշեղջին վրայ ինքզինքս կախուած տե-
սայ, երբ տեսայ որ երկին կ՚նուազէր իմ գլխս վերևը, ցրտու-
թիւնը մարմնոս պատեց, թալուկը ցիս առաւ և գլխս մաղերը
քստմնել տուաւ. բայց կամքս ամէն բանի յաղթեց, թէ սար-
սափի և թէ նեղութեան։ Ջրին հասայ, և խկոյն ջուրը սուզայ,
մէկ ձեռնով չուանը բռնած, մինչդեռ միսը կ՚երկարէի և թան-
կագին թուղթը կ՚առնէի, որ ձեռքիս մէջ երկու կտոր եղաւ։

« Այս երկու կտորներն իմ կրկնոցիս մէջ պահեցի, և ոտքս

ջրհորին երկու կողմը յենլով, ձեռօքս կախուելով, ուժեղ, ա-
բագոտն և մանաւանդ շտապելով հորին շրջանակը հասայ, և զայն
ողողեցի իմ մարմնոյս ստորին մասէն վազած ջրով։

« Երբ մի անգամ այս որսն ընելով ինքզինքս հորէն դուրս
դտայ, արևուն վազել սկսայ և պարտիզին խորը հասայ, ուր
տեսակ մ՚անտառակ կ՚գտնուէր։ Ահա անդ ապաւէն մը փնտռեցի։

« Այն միջոցին որ ոտքս այս թագստոցս կ՚դնէի, զանգակն որ
դուռը բացուելուն կ՚զարնէր, հնչեց։ Խնամակալս էր եկողը, և
յապաղելու ատեն չէր։

« Հաշիւ ըրի որ մինչև ինձ գալը տասն վայրկեան պէտք էր,
եթէ ուր գտնուիս դուշակելով, շիտակ ինձի գար, քսան վայր-
կեան պիտի անցնէր, եթէ զիս փնտռելու ելնէր։

« Այս ժամանակը բաւական էր թանկագին գիրը կարդալու
համար, որու երկու կտորները շուտ մ՚իրարու կցեցի։ Տառերն
սկսեր էին ջնջուելու։

« Սակայն՝ դարձեալ յաջողեցայ նամակը կարդալու։

— Եւ ինչ գտաք անոր մէջ, տէր իմ — հարցուց Արամիս
հետաքրքրութենէ տաստիկ շարժած։

— Բաւական բան գտայ, պարոն, հաստատելու համար, որ սպա-
սաւորն ազատորդի մ՚էր, և թէ Բէրօնէդ, առանց մեծ տիկին
մը լինելու, աւելի էր քան սպասուհի մը, թէ վերջապէս ես ալ
տոհմիկ ծնունդ մ՚ունիմ, քանի որ Աննա թագուհին և Մազա-
բէն առաջին պաշտօնեայն զիս խնամքով կ՚յանձնարարէին։

Երիտասարդը լռեց տաստիկ վրդոված։

— Եւ ինչ եղաւ վերջը — հարցուց Արամիս։

— Սա եղաւ, պարոն — պատասխանեց պատանին — որ խնա-
մակալիս կոչած գործաւորը ջրհորին մէջ բան մը չգտաւ, ամէն
կողմը փնտռելէն ետև. սա եղաւ որ խնամակալս դիտեց որ հորին
շրջանակը բոլորովին թրջած էր. սա եղաւ որ արևուն լաւ մը
չորցած չլինելով զգեստս, Բէրօնէդ խաթունը դիտեց որ տա-
կաւին թրջած էի. վերջապէս սա եղաւ որ ջրին պաղութենէ և
զգացած այլայլութենէս ծանր տենդով մը բռնուեցայ, և այս
տենդին վրայ բանդագուշանայ մէջ ընկնելով ամէն բան պատմեցի։

այնպէս որ իմ յատուկ խոստովանութեանս միա դնելով խնամակալս թագուհւոյն կողմէ գրուած թղթին երկու կտորները գտաւ։

— Ա՛հ — ըրաւ Արամիս — հիմակ գործը կ՚հասկընամ։

— Այնուհետև ստոյգ բան մը չգիտեմ։ Անտարակոյս խեղճ ազատորդին և կինն անցած գացած բաները գաղտնի պահելու չիշխելով՝ ամէն բան թագուհւոյն գրեցին և պատուած նամակն անոր ղրկեցին։

— Այնուհետև — ըսաւ Արամիս — ձեզ ձերբակալ ըրին և Պաստիլ բերին։

— Այդպէս կ՚երևի։

— Ապա ձեր երկու ծառաներն անհետ եղան։

— Աւաղ։

— Մեռելոց վրայ չխօսինք — վրայ բերաւ Արամիս — նայինք թէ ի՞նչ կարող ենք ընել կենդանեաց հետ։ Ըսիք ինձ որ համբերատար էք։

— Նոյնը կ՚կրկնեմ։

— Ազատութեան փափաք չունի՞ք։

— Արդէն ըսի ձեզի։

— Փառասիրութիւն, վիշտ, խորհուրդ մը չունի՞ք։

Պատանին պատասխան մը չտուաւ։

— Լա՛ւ, ինչո՞ւ լուռ կ՚կենաք — հարցուց Արամիս։

— Կարծեմ թէ բաւական խօսեցայ — պատասխանեց կալանաւորը — և այժմ խօսելու կարգը ձերն է։ Ես յոգնեցայ։

— Ձեզի պիտի հնազանդիմ — ըսաւ Արամիս։

Արամիս միտքն ամփոփեց, և խորին հանդիսաւորութեան ներքևոյթ մ՚իր բոլոր անձին վրայ երևցաւ։ Դիւրին էր դիտել որ բանտին մէջ բռնելիք դերին ամենէն կարևոր մասին հասեր էր։

— Առաջին հարցում մ՚ունիմ — ըսաւ Արամիս։

— Ի՞նչ է, խօսեցէք։

— Ձեր բնակած տան մէջ հայլի չկար, այնպէս չէ՞։

— Ի՞նչ կ՚նշանակէ այդ — հարցուց պատանին։ — Ես այդպիսի բան մը չեմ ճանչեր։

— Հայլի կ՚անուանի այն կարասին որ առարկաները կ՚ցոլանայ,

որով, օրինակի համար, մարդ կարող կ՚լինի իր յատուկ դէմքը տեսնել պատրաստեալ ապակիի մը վրայ, ինչպէս որ իմ մերկ աչքով կ՚տեսնէք։

— Ո՛չ, տան մէջ հայլի չկար — պատասխանեց պատանին։

Արամիս իր բոլորտիքը նայեցաւ։

— Այս տեղ ես չկայ — ըսաւ նա — աստ ես մի և նոյն կղուշութիւններն առեր են, ինչպէս անդ։

— Ի՞նչ նպատակաւ։

— Հիմակ պիտի իմանաք։ Այժմ, ներեցէք ինձ. ըսէք ինձ որ չափական գիտութիւնները, աստղաբաշխութիւնը, սրամարժութիւնը, ձիավարութիւնը ձեզի սորվեցուցեր են, պատմութեան մասին բան մը չըսիք։

— Երբեմն իմ խնամակալս Սուրբ Լուիի, Ա Ֆրանսուայի և Հանրի Դի քաջագործութիւնները կ՚պատմէր։

— Միայն այդչափ։

— Գրեթէ այդչափ։

— Լա՛ւ, ես կ՚հասկընամ այժմ, այդ հաշիւ մ՚էր. ինչպէս որ հայլիները բարձեր են, որոնք ներկան կ՚բեկբեկեն, նոյնպէս պատմութեան մասին տգէտ ձգեր են ձեզ, վասն զի այն անցեալը կ՚բեկբեկէ։ Ձեր բանտարկութենէ՝ ի վեր, գիրքեր արգիլուած են ձեզի, այնպէս որ շատ խրոնիկներ ձեզի անծանօթ են, որոց միջոցաւ պիտի կարենայիք կազմել ձեր յիշատակներու և շահուց կործանեալ շինքը։

— Իրաւ է — պատասխանեց պատանին։

— Մտիկ ըրէք, քանի մը խօսքով պիտի պատմեմ ձեզի քսան երեք կամ քսան չորս տարիէ՝ ի վեր Ֆրանսայի մէջ անցած դէպքը, այսինքն ձեր ծննդեան հաւանական թուականէն՝ ի վեր, այսինքն՝ մէկ խօսքով, այն տարիէն՝ ի վեր որ ձեզի կ՚վերաբերի։

— Պատմեցէք։

Եւ պատանին իր ծանրակայ և դժոն դիրքը բռնեց։

— Գիտէք Հանրի Դի որդին ո՞վ էր։

— Գէթ անոր յաջորդն ո՞վ եղաւ գիտեմ։

— Ի՞նչպէս գիտէք այդ բանը։

— 1610 թուականը կրող դրամէ մ՚որ Հանրի Դը կ՚ներկայացնէր. 1612 թուականը կրող դրամէ մ՚որ Լուի ԺԳը կ՚ներկայացնէր։ Ասկից հետեւցուցի, քանի որ այս երկու դրամներու մէջ եղած միջոցն երկու տարի էր, որ Լուի ԺԳ Հանրի Դի յաջորդը պիտի լինէր։

— Այն ատեն — ըսաւ Արամիս — պիտէք որ վերջին տիրող թագաւորն եղաւ Լուի ԺԳ։

— Գիտեմ — ըսաւ պատանին թեթեւ մը կարմրելով։

— Լաւ, այդ իշխանն ընտիր դաղափարներու, մեծ խորհրդոց տէր մարդ մ՚էր, խորհուրդներ որոց գործադրութիւնը միշտ կը յապաղէր ժամանակաց դժբաղդութենէ և իր Ռիշլիէօ պաշտօնէին աղնուականաց դէմ մղած պայքարին պատճառաւ։ Ինքը թագաւորը (Լուի ԺԳը ըսել կ՚ուզեմ) բնութեամբ տկար էր։ Դեռահասակ և արտմութեամբ մեռաւ։

— Գիտեմ այդ բանը։

— Երկար ատեն իր սերնդին հոգն ունեցաւ։ Իշխանաց համար ցաւալի հոգ մ՚է այս, որ պէտք ունին յիշատակէ աւելի բան մը ձգել երկրիս վրայ, որպէս զի իրենց գործը շարունակուի։

— Լուի ԺԳ թագաւորն անզաւակ մեռաւ — հարցուց բանտաւորը ժպտելով։

— Ո՛չ, բայց ընդ երկար այդ երջանկութենէ զուրկ մնաց, ո՛չ, բայց ընդ երկար կարծեց թէ դլխովին պիտի մեռնէր։ Եւ այս մտմտուքը զինքը խորին յուսահատութեան տարեր էր երբ յանկարծ իր կինը, Աւստրիոյ տան Աննա թագուհին . . .։

Բանտաւորը զոռ եկաւ։

— Գիտէք արդեօք — շարունակեց Արամիս — որ Լուի ԺԳի կինն Աւստրիոյ տան Աննա կ՚կոչուէր։

— Շարունակեցէք — ըսաւ պատանին առանց պատասխան տալու։

— Երբ յանկարծ Աննա թագուհին իմացուց թէ յղի է — վրայ բերաւ Արամիս։ — Այս լուրը մեծ ուրախութիւն բերաւ, և ամենուն բաղձանքն էր որ թագուհին անվտանգ ազատի։ Վերջապէս 1638 սեպտեմբերի 3ին թագուհին արու զաւակ մը ծնաւ։

Այս տեղ Արամիս իր խօսակցին նայեցաւ, և այնպէս կարծեց գիտել որ նա կ՚գուշակէր։

— Այժմ պատմութիւն մը պիտի լսէք — ըսաւ Արամիս — պատմութիւն մ՚որուն շատ քիչ մարդիկ տեղեակ են այս պահուս. վասն զի այս պատմութիւնը գաղտնիք մ՚է զոր կարծեն թէ մեռելոց հետ մեռած կամ խոստովանութեան անգունդը թաղուած է։

— Եւ միթէ այդ գաղտնիքը պիտի ըսէք ինձ — հարցուց պատանին։

— Ո՛հ — ըսաւ Արամիս այնպիսի ձայնով մ՚որու իմաստը յայտնի էր — այս գաղտնիքը չպիտի համարձակիմ հաղորդել բանտաւորի մ՚որ Պաստիլլէն դուրս ելնելու բնաւ փափաք մը չունի։

— Մտիկ կ՚ընեմ, պարոն։

— Ուստի թագուհին տղայ մը ծնաւ իրկունը։ Բայց երբ բոլոր արքունիքն ուրախութեան աղաղակներ կ՚արձակէր այս լուրին վրայ, երբ թագաւորն իր ժողովրդեան և աղնուականաց ցոյց նորածին մանուկը, երբ ուրախ զուարթ սեղան նստաւ այս երջանիկ ծնունդը տօնելու համար, այն ատեն՝ թագուհին՝ իր սենեկին մէջ առանձին մնալով՝ ծննդաբերութեան ցաւեր զգաց երկրորդ անգամ, և երկրորդ որդի մ՚ալ ծնաւ։

— Ո՛հ — ըսաւ կալանաւորն իր խոստովանած տեղեկութենէ աւելին մտանելով — կարծէի թէ (Պարոնը) թագաւորին եղբայրը ծնած էր միայն . . .։

Արամիս մնաց բարձրայուց։

— Սպասեցէք որ շարունակեմ — ըսաւ նա։

Կալանաւորը հառաչ մը հանեց անհամբեր և սպասեց։

— Այո՛ — ըսաւ Արամիս — թագուհին երկրորդ որդի մ՚ունեցաւ, երկրորդ որդի մը զոր Բէրտնէդ խաթունը, դայեակն իր գիրկն առաւ։

— Բէրտնէդ խաթո՛ւնը — մրմնաց պատանին։

— Շուտ մը թագաւորին ճաշած սենեակը վազեցին, անոր իմաց տուին դաղտնի պատահածը, թագաւորը սեղանէն ելաւ գնաց։ Բայց այս անգամ դեմքը զուարթութիւն չէր յայտներ, այլ զգա-

ցում մ՚որ սարսափի կ՚նմանէր։ Երկուորեակ երկու որդիք, դառնութեան կ՚փոխէին միոյն ծննդեամբ զգայած խնդութիւնը, վասն զի (և այս ըսելիքս անտարակոյս չգիտէք) վասն զի Ֆրանսայի մէջ անդրանիկը կ՚յաջորդէ հօրը։

— Գիտեմ այդ։

— Եւ թէ բժիշկներն ու իրաւագէտները կ՚կարծն թէ կասկածելի է որ մօրը ծոցէն ամենէն առաջ ելնող որդին՝ Աստուծոյ և բնութեան օրինօք անդրանիկը լինի։

Կալանաւորը խեղդուկ աղաղակ մ՚արձակեց, և աւելի սպիտակ դարձաւ քան թէ սաւանն որու ներքև պահուած էր։

— Կ՚իմանաք այժմ — շարայարեց Արամիս — թագաւորը՝ որ ժառանգորդի մը մէջ յաջորդ մը տեսնելուն այնքան ուրախացեր էր, անշուշտ յուսահատութեան մէջ ընկաւ մտածելով որ այժմ երկու ժառանգորդ ունէր, և թէ, կարելի է որ նորածին և անծանօթ եղող որդին, երկու ժամ առաջ ծնող և թագաժառանգ հռչակուող եղբօրը դէմ պիտի վիճէր անդրանկութեան իրաւունք պահանջելու։ Այսպէս՝ այս երկրորդ որդին կուսակցութեան մը շահուց կամ քմահաճ խորհրդոյ պաշտպան կանգնելով, օր մը կարող պիտի լինէր՝ թագաւորութեան մէջ երկպառակութիւն կամ պատերազմ դրդռելու, և այս ընթացքով՝ թերևս կործանէր ամբոյնելու պարտաւոր եղած թագաւորական իշխանութիւնը։

— Ո՛հ, կ՚հասկընամ, կ՚հասկընամ. . . — մրմնաց պատանին։

— Լաւ ուրեմն — շարունակեց Արամիս — ահա ինչ որ կ՚խօսին, ահա ինչ որ կ՚հաւատան, ահա ինչ պատճառաւ Աննա թագուհւոյն որդիներէն մին, իր եղբօրմէն անարժանապէս բաժնուելով, անարժանապէս բանտարկուելով, յետին ծայր մթութեան դատապարտուած, ահա ինչ պատճառաւ այս երկրորդ որդին անբերեայթ եղաւ, և այնպէս աղէկ անբերեայթ եղած է, որ Ֆրանսայի մէջ ոչ ոք անոր գոյութեան տեղեակ է, իր մօրմէն զատ։

— Այո՛, իր մայրն որ զինքն երեսի վրայ ձգեց — դոչեց բանտաւորը յուսահատութեան ձայնով մը։

— Նաև ՚ի բաց առեալ — շարունակեց Արամիս — այն սև

շրջազգեստով, և հրագոյն ժապաւէններով տիկինը, նոյնպէս ՚ի բաց առեալ. . . ։

— Եւ դուք, այնպէս չէ՞։ Դուք որ այս ամենն ինձ պատմեցիք, դուք որ իմ հոգւոյս մէջ հեռաքրքրութիւն, ատելութիւն, փառասիրութիւն զրդռեցիք, և ո՛ դիտէ, թերևս վրէժխնդրութեան ոգին, ՚ի բաց առեալ դուք, պարոն, որ, եթէ դուք էք իմ սպասած մարդը, այն մարդն որ ինձ կ՚խոստանայ ազատակը, վերջապէս այն մարդը զոր Աստուած ինձի պիտի ուղարկէր, պարտաւոր էք ձեր վրայ ունենալ. . . ։

— Ի՞նչ բան — հարցուց Արամիս։

— Լուի ԺԴ թագաւորին մէկ պատկերը, որ այս պահուս Ֆրանսայի պահուն վրայ կ՚տիրէ։

— Աւասիկ պատկերը — պատասխանեց եպիսկոպոսը բանտաւորին տալով խիստ գողտրիկ այծնեալ ապակի մ՚որու վրայ Լուի ԺԴ կ՚երևէր հպարտ, գեղեցիկ և կերպով մը կենդանի։

Բանտաւորը անենչանօք պատկերն առաւ, և իր աչերն անոր վրայ սևեռեց որպէս թէ զայն պիտի կլանէր։

— Եւ այժմ, տէր իմ — ըսաւ Արամիս — աւասիկ հայելի մը։

Արամիս թողուց որ բանտաւորն իր գաղափարները զօդէ։

— Ա՛յսչափ բարձր, այսչափ բարձր — մրմնաց պատանին և ակնարկովը կ՚լափէր Լուի ԺԴի կենդանագիրն և իր դէմքն հայելիին մէջ բեկբեկեալ։

— Ի՞նչ կ՚մտածէք — հարցուց Արամիս։

— Կ՚մտածեմ որ կսրսուած եմ — պատասխանեց բանտաւորը — որ թագաւորն երբէք չպիտի ներէ ինձ։

— Եւ ես, ինքզինքիս կ՚հարցնեմ — յարեց եպիսկոպոսը բանտաւորին վրայ յառելով իմաստով փայլուն նայուածք մը — կը հարցնեմ ինքզինքիս երկուքէն ո՞րն է թագաւորը, այն որ այս կենդանագիրը կ՚ներկայացնէ, թէ ոչ այն որ այս հայելին կ՚բեկբեկէ։

— Թագաւորը դահին վրայ եղողն է — պատասխանեց պատանին տրամութեամբ — այն է որ բանտը չգտնուիր, և որ ընդհակառակն, ուրիշները բանտ կ՚դնէ։ Թագաւորութիւնը, զօրութիւնն է, և քաջ կ՚տեսնէք որ անզօր եմ։

— Տէր իմ — պատասխանեց Արամիս այնպէս յարպանօք զոր դեռ ևս չէր յայտնած — Թագաւորը, միա դրէք ըսածիս, եթէ կամիք այն պիտի լինի, որ բանտէն ելնելով պիտի կարենայ այն աթոռն ելնել ուր բարեկամներ զինքը պիտի բաղմեցնեն։

— Պարոն, մի՛ փորձէք զիս — ըսաւ բանտաւորը դառնութեամբ։

— Տէր իմ, մի՛ վհատիք — կրկնեց ինդելով Արամիս ուժգնութեամբ։ — Ես ձեր ծննդեան բոլոր ապացոյցները ձեզի ներկայացուցի, քննեցէք զանոնք, համոզուեցէք որ Թագաւորի մ'որդին էք, և ապա՝ պիտի գործենք։

— Ո՛չ, ո՛չ, անկարելի է։

— Միայն թէ — վրայ բերաւ հեղնաբար եպիսկոպոսը — ձեր ցեղին ճակատագիրն եղած լինի որ գտնէն արտաքսեալ եղբայրներ անարժան և անպատիւ իշխաններ գտնան, ինչպէս Օրլէանեան Կասդօն իշխանը, ձեր հօրեղբայրը, որ տասն անգամ Լուի ԺԳի իր եղբօրը դէմ դաւադրեց։

— Իմ հօրեղբայրս Օրլէանի Կասդօնն իր եղբօրը դէմ դաւադրեց — դոչեց զարհուրանօք բանտաւորը — դաւադրեց որ զանի աթոռէն վար ձգէ։

— Անտարակոյս, տէր իմ, այդ էր իր բուն նպատակը։

— Ի՞նչ կ'ըսէք ինձ, պարոն։

— Ճշմարտութիւնը։

— Եւ միթէ . . . անձնուէր բարեկամներ ունեցա՞ւ։

— Ինչպէս ես ձեզի համար։

— Լաւ ուրեմն, ինչ ըրաւ, չյաջողեցաւ, այնպէս չէ՞։

— Չյաջողեցաւ, և յանցանքն իրն էր, և իր, չէ թէ կեանքը, վասն զի Թագաւորին եղբօրը կեանքը նուիրական, անբռնաբարելի է, այլ իր աղատութիւնը վերադնելու համար, ձեր հօրեղբայրն իր բոլոր բարեկամաց կեանքն իրարմէ եան զոհեց։ Ուստի այսօր պատմութեան նախատինք է, և Թագաւորութեան հարիւրաւոր աղնուական գերդաստաններու քամահրանքը։

— Կ'հասկընամ, պարոն — ըսաւ իշխանը — և միթէ տկարութենէ՞ թէ ոչ մատնութենէ սպաննեց իմ հօրեղբայրս իր բարեկամները։

— Տկարութենէ, և այս ալ իշխանաց համար մատնութիւն մ'է։

— Միթէ տգիտութենէ, ապիկարութենէ ալ մարդ իր նպատակէն չվրիպիր։ Միթէ կարծէք թէ կարելի լինի ինձի պէս խեղճ կալանաւորի մ'որ ոչ միայն արքունիքէն հեռու, այլ աշխարհէ հեռու մեծցած է, միթէ կարծէք թէ հնարին լինի իրեն օգնելու այն բարեկամներն որ իրեն ծառայելու համար փորձ պիտի փորձեն։

Եւ որովհետև Արամիս պատասխան պիտի տար, պատանին զոչեց յանկարծ այնպիսի ուժգնութեամբ որ արեան զօրութիւնը կը յայտնէր։

— Այս տեղ բարեկամներու վրայ կ'խօսինք, բայց ինչ դիպուածով բարեկամներ պիտի ունենամ ես, ես որ մարդու մը ծանօթ չեմ, և մարդ շահելու համար ալ ոչ ազատութիւն, ոչ դրամ, ոչ իշխանութիւն ունիմ։

— Կարծեմ թէ պատիւ ունեցայ Ձեր արքայական Վսեմութեան ինքզինքս նուիրելու։

— Ո՛հ, այդպէս մի՛ անուանէք զիս, պարոն, հեղնութիւն մ'է այդ կամ բարբարոսութիւն։ Մի՛ յորդորէք զիս մտածելու ուրիշ բանի մը այս բանտիս պատերէն զատ, թոյլ տուէք որ դարձեալ սիրեմ կամ գէթ կրեմ իմ դերութիւնս և աննշան վիճակս։

— Տէ՛ր իմ, տէ՛ր իմ, եթէ նորէն այդ վհատեալ խօսքերը կրկնէք, եթէ՝ ծննդեանդ ապացոյցները տեսնելէն ետև՝ դարձեալ մտօք, շնչով և կամօք ապիկար մնաք ձեր ուխտը պիտի ընդունիմ, պիտի անհանդուրժ լինիմ, պիտի հրաժարիմ ծառայելու այն տիրոջ, որու եկեր էի այսչափ եռանդով իմ կեանքս և օգնութիւնս նուիրելու։

— Պարոն — դոչեց իշխանը — այդ ամէն բաներն ինձ ըսելէն առաջ, պէտք չէ՞ր կանխաւ խորհիլ որ սիրտս 'ի սպառ խորտակեցիք։

— Այդպէս ուզեցի ընել, տէր իմ։

— Պարոն, ինձ մեծութեան, իշխանութեան և Թագաւորութեան վրայ խօսելու համար, միթէ բա՞նտ մ'ընտրել պէտք էիք։ Փա-

ռաւորութեան հաւատալ կ'յորդորէք զիս, և մենք մութ զնդանի մէջ պահուած ենք, դուք կ'դովէք փառքը, և մեր խօսքն այս խշտեկին վարագոյրներուն ներքև կ'խեղդենք, դուք ամենազօրութիւն մ'ընդնշմարել կ'տաք ինձ, և այս նրբաղատթին մէջ բանտապահին քայլը կ'լսեմ, այս քայլն որ աւելի դող կ'աղդէ ձեզի քան թէ ինձի։ Որպէս զի այսչափ թերահաւատ չլինիմ Պասդիլլէն հանեցէք զիս, իմ թռքերուս օդ տուէք, մարակներ ոտիցս, իմ թեւիս սուր մը, և այն ատեն իրարու միտք հասկընալու պիտի սկսինք։

— Այս ամենը ձեզի տալու միտք ունիմ, և ասկից աւելին, տէր իմ։ Միայն կ'ուզէք։

— Եւ դարձեալ մտիկ ըրէք, պարոն — ընդմիջեց իշխանը։

— Դիտեմ որ ամէն դաւթի մէջ պահակներ կան, պարդունակներ ամէն դրան վրայ, թնդանօթներ և զինուորներ ամէն պատնէշի առջև։ Ի՞նչ բանով պիտի յաղթէք պահակներուն, ինչով պիտի դամէք թնդանօթները, ինչով պիտի խորտակէք կղպակն ու պատնէշները։

— Տէր իմ, ի՞նչպէս հասաւ ձեր ձեռքն այն տոմսակը զոր կարդացիք և որ իմ դալուստս կ'իմացներ։

— Տոմսակի մը համար դիւրին է բանտապահ մ'որսալ։

— Եթէ բանտապահ մը շահիլ դիւրին է, կարելի նաև տասն հատ որսալ։

— Լաւ ուրեմն, կ'ընդունիմ որ խեղճ բանտաւոր մը Պասդիլլէն քաշել կարելի լինի, կարելի լինի աղէկ պահել զանի որպէս զի Թագաւորին մարդիկը չբռնեն, կարելի լինի նաև այդ դժբաղդ մարդն անծանօթ պատսպարանի մը մէջ վայելուչ կերպով սնուցանել։

— Տէր իմ — ըսաւ Արամիս ժպտելով։

— Կ'ընդունիմ որ ինձի համար այս բաներս ընող արդէն մարդ մը վեր է, բայց քանի որ կ'ըսէք թէ իշխան մ'եմ, Թագաւորին մէկ եղբայրն եմ, ի՞նչպէս պիտի տայիք ինձ մօրս և եղբօրս յանձնուած աստիճանն և զօրութիւնը։ Բայց քանի որ պարտաւոր եմ կեանքս կռիւներու և ատելութեան մէջ անցընել, այս կռիւներուն մէջ ի՞նչպէս յաղթական պիտի ընէք ինձ և իմ թշնամեացս առջև անվիրաւորելի։ Ա՛հ, պարոն, լաւ մտածեցէք. վաղը սև քարայրի մը մէջ լեռի մը խորը նետեցէք զիս, թոյլ տուէք ինձ որ աղատօրէն լսեմ դետին և դաշտին ձայնը, աղատօրէն տեսնեմ կապոյտ արևն և վոթորկալի երկինքը, և այսչափն ինձ բաւական է։ Աւելի բան մի խոստանաք ինձ, վասն զի արդարև՝ չէք կարող աւելի բան մը տալ ինձ, և յանցանք մը պիտի լիներ զիս խաբելը, քանի որ դուք կ'ըսէք թէ իմ բարեկամն էք։

Արամիս լռութեամբ մտիկ ընելու շարունակեց։

— Տէր իմ — վրայ բերաւ նա պահ մը խորհելէ ետև — կ'ըզմայլիմ այդ ձեր ուղիղ և հաստատուն դատողութեան վրայ որ այդ խօսքերը ձեզի կ'թելադրէ. երջանիկ եմ որ իմ թագաւորս դուշակեցի։

— Դարձեա՛լ, դարձեա՛լ. . . : Ա՛հ, զլթացէք — դոչեց իշխանն իր սառած ձեռօք հրատապ քիրտով ծածկուած ճակատը ճնշելով — և զիս մի՛ փորձէք. պէտք չունիմ թագաւոր մը լինելու, պարոն, որպէս զի ամներջանիկ մարդ մը լինիմ։

— Եւ ես, տէր իմ, պէտք ունիմ որ թագաւոր լինիք մարդկութեան երջանկութեան համար։

— Ա՛հ — ըրաւ իշխանն այս խօսքին ներշնչած նոր կասկածով մը — ա՛հ, մարդիկ ի՞նչ յանցանք կ'գտնեն ուրեմն եղբօրս վրայ։

— Կ'մտնայի ըսելու, տէր իմ, որ եթէ թոյլ տաք որ ձեզ առաջնորդեմ, և եթէ հաւանիք երկրիս վրայ՝ ամենէն զօրաւոր իշխանը դառնալու, նպաստած պիտի լինիք այն ամէն բարեկամաց շահերուն, զորս մեր դատին յաջողութեան համար ձեզի կը նուիրեմ, և այս բարեկամները բազմաթիւ են։

— Բազմաթիւ։

— Ասկից զատ՝ զօրաւոր են, տէր իմ։

— Բացատրեցէք ձեր միտքը։

— Անկարելի բան։ Պիտի բացատրեմ միտքս, ահա կ'երդնում Աստուծոյ առջև որ զիս կ'լսէ, այն բարեպատեհ օրն երբ ձեզ Ֆրանսայի գահուն վրայ նստած պիտի տեսնեմ։

— Բայց իմ եղբայրս։

— Անոր Ճակատագրին վրայ դուք պիտի վճռէք։ Միթէ կը ցաւիք վրան։

— Այն որ ընդանի մը մէջ ցնս մեռցնել կ'ուզէ։ Ո՛չ, չեմ ցաւիր վրան։

— Շա՛տ աղէկ։

— Կրնար դալ անձամբ այս բանտս, իմ ձեռքս բռնել և ինձ ըսել. « Եղբայր իմ, Աստուած ստեղծեց մեզ որ սիրուինք և չէ թէ իրարու դէմ պատերազմինք։ Ես ահա քեզի կ'դամ։ Վայրենի նախապաշարում մը կ'դատապարտէր քեզ մարդիկներէ հեռու մթութեան մէջ կորնչիլ, ամէն տեսակ ուրախութենէ զուրկ։ Կ'ուզեմ քեզ իմ քովս նստեցնել, կ'ուզեմ մեր հօր սուրը մէջքդ կապել։ Այս հաշտութենէ առիթ պիտի դտնես զիս խեղդելու կամ բռնադատելու։ Այս սուրն իմ արիւնս թափելու պիտի դործածես . . . ։ — Ո՛հ, ո՛չ, պիտի պատասխան տայի անոր, քեզ իբրև ազատարար կ'նկատեմ և իբրև տէրս քեզ պիտի յարդեմ։ Դու ինձ Աստուծոյ տուածէն աւելի կ'տաս։ Քեզմով ստացայ ազատութիւն, քեզմով սիրելու և սիրուելու իրաւունք ունիմ այս աշխարհիս վրայ »։

— Եւ միթէ ձեր խոստումը պիտի բռնէ՞ք, տէր իմ։

— Ո՛հ, կենացս վրայ կ'երդնում որ պիտի բռնէի։

— Մինչդեռ այժմ . . . ։

— Մինչդեռ այժմ կ'դիտեմ որ յանցաւորներ ունիմ պատժելու . . . ։

— Ի՞նչ կերպով, տէր իմ,

— Ի՞նչ կ'ըսէք այն նմանութեան որով Աստուած նմանցուցեր է զիս եղբօրս հետ։

— Կ'ըսեմ թէ այս նմանութեան մէջ Նախախնամական դաս մը կար որու թաղաւորը մտադիր լինիլ պէտք էր. կ'ըսեմ թէ ձեր մայրն յանցանք մը դործեց երջանկութեան և բաղդի մասին, զանազանելով ինչ որ բնութիւնն այնքան համանման ըրած էր իր արդանդին մէջ, և ես կ'հետևցնեմ որ պատիժն ուրիշ բան չպիտի լինի բայց եթէ հաւասարակշռութիւն մը զոր պիտի հաստատենք։

— Եւ այդ ի՞նչ կ'նշանակէ . . . ։

— Կ'նշանակէ որ եթէ ձեր եղբօրը դահին վրայ ձեզ բազմեցնեմ, ձեր եղբայրը բանտին մէջ ձեր տեղը պիտի բռնէ։

— Ափսո՛ս, մարդ շատ կ'տառապի բանտի մէջ, մանաւանդ երբոր կենաց բաժակն առատութեամբ ըմպած է մարդ մը։

— Ձեր արքայական Վսեմութիւնը միշտ աղատ պիտի լինի ընելու ինչ որ կամի, պիտի ներէ՝ եթէ արժան դատի, պատժելէն ետև։

— Լա՛ւ, հիմակ բան մը կայ դիտէ՞ք, պարոն։

— Ըսէք, իշխանդ իմ։

— Այս է որ մինակ Պասդիլլէն դուրս ինչ որ ըսէք, պիտի մտիկ ընեմ։

— Ես ալ Ձեր արքայական Վսեմութեան պիտի ըսէի որ այսուհետև անդամ մը միայն զինքը տեսնելու պատիւը պիտի ունենամ։

— Ե՞րբ։

— Այն օրն որ իմ իշխանս այս մութ բանտէն դուրս պիտի ելնէ։

— Աստուած լսէ ձեր ձայնը։ Ի՞նչպէս պիտի կանխաւ իմացնէք ինձ։

— Ձեզ առնելու համար այս տեղ դալով։

— Դո՞ք անձամբ։

— Իշխանդ իմ, այս սենեկէն դուրս միայն ինձի հետ ելէք, իսկ եթէ իմ բայակայութեանս ատեն ձեզ բռնադատեն դուրս ելնելու, յիշեցէք որ այդ բանն իմ կողմէս չպիտի կատարուի։

— Այսպէս որ և է մէկու մը բաւ մը չպիտի ըսեմ այս մասին, ձեզնէ զատ։

— Իզնէ զատ։

Արամիս խորին խոնարհութիւն մ'ըրաւ։ Իշխանն անոր կարկառեց ձեռքը։

— Պարոն — ըսաւ ձայնով մ'որ սրտէ կ'բղխէր — վերջին խօսք մ'ունիմ ձեզի ըսելու։ Եթէ դուք եկաք զիս 'ի կորուստ մատնելու համար, եթէ իմ թշնամեացս ձեռքը դործիք մ'եղաք, եթէ մեր խօսակցութենէ, որով իմ սրտիս խորը տեսաք, դերու-

թենէ յոռագոյն բան մը պիտի ծագի, այսինքն մահը, լաւ ուրեմն, օրհնեալ եղիք, վասն զի իմ նեղութեանցս վերջ տուած պիտի լինիք, և ութ տարիէ 'ի վեր քաշած տենդային տառապանացս անդորրութիւն ինձ շնորհած պիտի լինիք։

— Տէր իմ, սպասեցէք զիս դատելու համար — ըսաւ Արամիս։

— Ըսի որ ձեզ կ'օրհնեմ և կ'ներեմ։ Իսկ եթէ՝ ընդ հակառակն՝ եկաք ինձ տալու այն վայրն որու Աստուած զիս սահմանած էր բաղդին և փառայ արևուն, եթէ՝ ձեր շնորհիւ՝ պիտի կարենամ ապրիլ մարդկան յիշողութեան մէջ, և իմ տոհմիս պատիւ բերել՝ քանի մը նշանաւոր գործերով կամ ժողովրդոցս մատուցած ծառայութիւններովս, եթէ այս յետին աստիճանիս մէջ ուր կ'տառապիմ, պարծանայ կատարը հասնիմ, ձեր վերհանձն ձեռօք պաշտպանուելով, լաւ, ձեզի, զոր կ'օրհնեմ և որու շնորհապարտ եմ, ձեզի պիտի շնորհեմ իմ իշխանութեան և փառայ կէսը։ Դարձեալ շատ քիչ վարձատրած պիտի լինիմ ձեզ, ձեր բաժինը միշտ անկատար պիտի լինի, վասն զի երբէք չպիտի յաջողիմ ինձ տալիք երջանկութիւնդ ձեզի հետ բաժնելու։

— Տէր իմ — ըսաւ Արամիս պատանւոյն գունատութենէ և խանդէն յուզուելով — ձեր սրտի ազնուութիւնը զիս ուրախութեամբ և հիացմամբ կ'լեցնէ։ Ձեզի չընկնիր ինձ շնորհակալ լինելու, այլ այն ժողովրդոց զոր երջանիկ, ձեր սերնդոց զոր հուչակաւոր պիտի ընէք։ Այո՛, կեանքէն աւելի տուած պիտի լինիմ ձեզի, պիտի տամ անմահութիւնը։

Պատանին իր ձեռքն Արամիսի կարկառեց, Արամիս ալ զայն համբուրեց ծունր դնելով։

— Ո՛հ — գոչեց իշխանը չքնաղ համեստութեամբ մը։

— Մեր ապագայ թագաւորին այս առաջին յարգական նուէրն է — ըսաւ Արամիս։ — Երբոր ձեզ վերստին տեսնեմ, պիտի ըսեմ. « Բարի լոյս, Վեհափառ »։

— Մինչև այն ատեն — գոչեց պատանին իր սպիտակ և նիհար ձեռքը սրտին վրայ յենելով — մինչև այն ատեն չեմ ուզեր երազներ, և կենաց բաղխումներ, անտարակոյս պիտի խորտակի այն։ Ո՛հ, պարոն, ո՛րչափ փոքր է իմ բանտս և ո՛րչափ ցած է այս

պատուհանս, ո՛րչափ նեղ են այս դռները։ Ի՛նչպէս այսքան գոռոզութիւն, այսքան շքեղութիւն, այսքան երանութիւն ասկից անցան և այն տեղ մնացին։

— Ձեր արքայական Վսեմութիւնը զիս հպարտ կ'ընէ — ըսաւ Արամիս — քանի որ կ'կարծէ թէ այս ամենն ես բերի իրեն։

Անմիջապէս դուռը զարկաւ։

Բանալու համար բանտապահը Պէզմօի հետ եկաւ, Պէզմօ՝ որ մտատանջութեամբ և ահուդողով պաշարեալ ակամայ սկսեր էր մտիկ ընել սենեկին դռնէն։

Բարեբաղդօրէն խոսակիցներն իրենց ձայնը մեղմելու չէին մոռացած նոյն իսկ կրից ամենէն յանդուգն յուզման ժամանակ։

— Ի՛նչ խոստովանանք — ըսաւ կառավարիչը ծիծաղելու փորձ փորձելով — միթէ կարելի՞ էր հաւատալ որ մենակեաց մը, գրեթէ մեռած մարդ մ'այդչափ շատ և երկար մեղքեր գործած լինի։

Արամիս լուռ կեցաւ։ Մեծ փոյթ ունէր դուրս ելնելու Պասդիլէն, ուր զինքը ճնշող գաղտնիքը պատերուն ծանրութիւնը կ'կրկնապատկէր։

Երբոր Պէզմօի սենեակը հասան,

— Դործի վրայ խօսինք, սիրելի՛ իմ կառավարիչ — ըսաւ Արամիս։

— Ափսո՛ս — պատասխանեց Պէզմօ։

— Իմ ընկալարիս ունիս խնդրելու հարիւր յիսուն հազար ֆրանքի համար, այնպէս չէ՞ — ըսաւ եպիսկոպոսը։

— Եւ այս գումարին առաջին երրորդ մասը վճարելու — յարեց խելք կառավարիչը հառաչելով, որ դէպ իր երկաթէ գլխոյն երեք քայլ առաւ։

— Աւասիկ անդորրագիրդ — ըսաւ Արամիս։

— Եւ աւասիկ ստակը — վրայ բերաւ Պ. Պէզմօ եռապատիկ հառաչով մը։

— Ուխտն ինձ ապսպրեց միայն յիսուն հազար ֆրանքի ընկալագիր մը տալ — ըսաւ Արամիս — չըսաւ ինձ որ ստակ ընդունիմ։ Մնաս բարեաւ, պարոն կառավարիչ։

Եւ ձգեց գնաց՝ Պէզմօն թողլով զարմանքէն և ուրախութենէ

հեղձամղձուկ եղած, այն արքայական պարգևին առջև, պարզև մը զոր այնչափ առատաձեռնութեամբ ըրեր էր Պասգիլլի կարգ դուրս խոստովանահայրը։

Գ

ՄՈՒՍՊՕՆ Ի՛ՆՉՊԷՍ ԳԻՐՑԵՐ ԷՐ ԱՌԱՆՑ ԻՐ ՏԻՐՈՋ ԻՄԱՑ ՏԱԼՈՒ, ԵՒ ԹԷ Ի՛ՆՉ ԱՆՊԱՏԵՀՈՒԹԻՒՆՆԵՐ ԾԱԳԵՐ ԷԻՆ ԱՅՍ ԱՐԺԱՆԻ ԱԶԱՏՈՐԴՈՒՈՅՆ ՀԱՄԱՐ

Ալթոսին մեկնելէն 'ի վեր գէպ 'ի Պլուա, Բորթոս և տ'Արդանեան շատ քիչ անգամ միասին գտնուեր էին։ Մին՝ թագաւորին համար տաժանելի ծառայութիւն մը կատարեր էր, միւսը շատ մը կարասիներ ծախու առեր էր, իր երկիրը տանելու մտօք, և այս կարասիներով՝ իր զանազան բնակութեան վայրերը կ'յուսար հաստատել փոքր ինչ այն արքունական պերճանքէն որու շլացուցիչ պայծառութիւնը տեսեր էր Նորին Վեհափառութեան ընկերութեան մէջ։

Տ'Արդանեան՝ միշտ հաւատարիմ, օր մ'որ իր ծառայութենէ քանի մը պարապոյ ժամեր գտեր էր, Բորթոսին վրայ մտածեց, և անոր վրայ տասն հինգ օրէ 'ի վեր լուր մ'առած չլինելուն համար անհանգիստ գտնուելով՝ գէպ անոր ապարանը գնաց և Բորթոսը գտաւ այն միջոցին որ անկողնէն կ'ելնէր։

Արժանի սեպուհը խոհուն կ'երևէր, ոչ միայն խոհուն այլ և մելամաղձոտ։ Իր անկողնին վրայ նստեր էր՝ կէս մերկ, սրունքը կախած, շատ մը զգեստներ նկատելով որ սփիւռ տարածեր էին գետնին վրայ իրենց ծոպերը, իրենց ժապաւէնները, բանուածներն և ներդաշնակ գոյներու փայլունը։

Բորթոս՝ Լա Ֆոնդէնի նապաստակին պէս տխուր և մտախոհ՝ չտեսաւ տ'Արդանեանի ներս մտնելը, զոր նոյն պահուն իր աչքէն կ'ծածկէր Պ. Մուսպօնը, որու մարմնական գիրութիւնը,

թէև որ և է պարագայի մէջ բաւական էր մարդ մ'ուրիշ մարդէ մը ծածկել, նոյն ժամն կրկնապատկուեր էր կարմրագոյն զգեստ մը բանալուն, զոր մատակարարն իր տիրոջ կ'ներկայացնէր թևերէն բռնելով, որպէս զի անոր ամէն կողմն երևան գայ։

Տ'Արդանեան սեղմն վրայ կեցաւ և Բորթոսը քննեց որ կ'խորհէր, ապա՝ որովհետև այս անթիւ զգեստներու տեսքն որոնք գետինը փռուած էին՝ արժանի ազատորդւոյն սրտէն անթիւ հառաչներ կ'հանէին, տ'Արդանեան մտածեց որ ժամ էր իր բարեկամն ազատել այս վշտալի հայեցողութենէ, և հազայ որ գալը յայտնէ։

— Ա՛հ — ըրաւ Բորթոս, որու դէմքն ուրախութեամբ փայլեցաւ — ա՛հ, ա՛հ, ատասիկ տ'Արդանեանը։ Վերջապէս այժմ գաղափար մը պիտի ունենամ։

Այս խօսքին վրայ՝ Մուսպօն՝ իր ետևն անցածը դուշակելով՝ մէկդի քաշուեցաւ, և Բորթոս այսպէս ազատուած եղաւ նիւթական արգելքէն որ մինչև իր բարեկամին երթալու չէր թողուր։

Բորթոս իր հուժկու ծունկերը կրճատեց կանգնելով, երկու քայլ առնելով՝ սենեկէն անցաւ և տ'Արդանեանի դիմացը գտնուեցաւ։ Տ'Արդանեան զանի իր սրտին վրայ սեղմեց այնպէս սիրով որ կարծես թէ նոր ոյժ մը կ'ստանար օր ըստ օրէ։

— Ա՛հ — կրկնեց նա — միշտ բարի է գալուստդ, բարեկամ, բայց այսօր ամէն անգամէն շատ աւելի է։

— Նայինք, նայինք, տխուր կ'տեսնեմ քեզ — ըսաւ տ'Արդանեան։

Բորթոս այնպիսի ակնարկով մը պատասխանեց որ վհատութիւն կ'յայտնէր։

— Լաւ, պատմէ ինձ գործը նայիմ, Բորթոս, բարեկամդ իմ, եթէ գաղտնիք մը չէ։

— Նախ, բարեկամդ իմ — ըսաւ Բորթոս — գիտես որ քեզի համար գաղտնիք չունիմ։ Ատասիկ ըսեմ թէ ինչ բան իմ տրտմութեան պատճառ է։

— Սպասէ, Բորթոս, թող որ սա ասուիներու, սնդուներու և թաւիշներու կոյտը վերցնեն։

— Ո՛չ, քալէ, քալէ — ըսաւ Բորթոս խեղճ կերպով մը — այս ամէնը ջնջան են։

— Կրկղ, ջնջան են, Բորթոս, կանդունը քսան ֆրանքի չուխան, շքե՛ղ սնդուսը, արքայական թաւիշը։

— Ուրեմն այս զգեստներն ի՞նչպէս կ'գտնես։

— Շքե՛ղ, շքեղ կ'գտնեմ, Բորթոս։ Գրաւ կ'դնեմ որ Ֆրանսայի մէջ դու միայն այդչափ զգեստներ ունիս, և ենթադրելով որ ուրիշ հագուստ մը չընէիր և հարիւր տարի ապրէիր, և այս ալ զբաղմանք չպիտի պատճառէր ինձ, դարձեալ մահուան օրդ նոր հագուստներ պիտի հագնէիր, առանց դերձակի մը քիթը տեսնելու, այսօրուանէ մինչև այն ատեն։

Բորթոս գլուխը ցնցեց։

— Նայինք, բարեկամդ իմ — ըսաւ տ'Արգանեան — այդ մելամաղձութիւնն որ բնաւորութենէդ դուրս է, ելս կ'զարհուրեցնէ։ Սիրելի Բորթոս, փարատէ այդ տխրութիւնդ, որչափ շուտ փարատես այնքան լաւ է։

— Այո՛, բարեկամ — ըսաւ Բորթոս — փարատենք, եթէ այդ կարելի բան է։

— Արդեօք գէշ լուրեր առիր Պրասլէօէն, բարեկամ։

— Ո՛չ, անտառները կարեր են, և իրենց պայմանեալ արժէքէն երրորդ մասով աւելի վաստակ ձգեր են։

— Մինթ Բիէրֆօնի լճակներու մէջ ձկները փախան։

— Ո՛չ, բարեկամ, զանոնք որսացեր են, և վաճառմանէ մնացածով կարելի է բոլոր շրջակայ լճակները ձկներով լնուլ։

— Արդեօք Վալլօնը դեսնաշարժէ մը փլա՞։

— Ո՛չ, ընդ հակառակն, բարեկամ, կայծակը դղեկէն հարիւր քայլ հեռու ընկաւ, և աղբերակ մը բացաւ տեղ մ'ուր բոլորովին ջրէ զուրկ էր։

— Լաւ ուրեմն, ի՞նչ կայ։

— Սա կայ որ Վօի հանդիսին համար հրաւէն մ'ընդունեցայ — ըսաւ Բորթոս սգալի դէմքով։

— Լաւ ուրեմն, ցաւելու ի՞նչ կայ։ Թագաւորն արքունեաց ընտիկներուն մէջ հարիւրաւոր անհաշտ կուիներ գրգռեց հրաւէր-

ներ մերժելով։ Ա՛հ, իրաւ, բարեկամ, միթէ դու ալ Վօի ուղևորութեան մասնակցիլ պիտի լինիս։ Հէ՛, հէ՛, հէ՛։

— Աստուած իմ, այո՛։

— Սքանչելի տեսարանի մը ներկայ պիտի գտնուիս, բարեկամ։

— Ափսո՛ս, կ'երկբայիմ։

— Ֆրանսայի ամենէն երևելի ազատներն անդ պիտի գումարուին։

— Ա՛հ — ըրաւ Բորթոս յուսահատութեամբ մազերէն մէկ քանին փետելով։

— Հէ՛, հէ՛, Աստուած իմ — ըսաւ տ'Արգանեան — միթէ հիւանդ ես, բարեկամդ իմ։

— Բան-նէօթի պէս քաջառողջ եմ, անիծիլ արմատ։ Այդ չէ իմ վիշտս։

— Ուրեմն ի՞նչ է։

— Սա է որ զգեստ չունիմ։

Տ'Արգանեան քար կարեցաւ։

— Բորթոս, զգեստ չունիս, չունիս զգեստ — գոչեց նա — երբոր գեսինը յիսունէն աւելի զգեստներ կ'ունենամ։

— Յիսուն հատ, այո՛, բայց չկայ հատ մ'որ ինձ յարմարի։

— Ի՞նչպէս, հատ մը չկայ որ քեզի յարմարի։ Ուրեմն երբ լաթ կարես չափդ չե՞ն առնուր։

— Անտարակոյս — պատասխանեց Մուսքոն — բայց դժբաղդաբար գիրցայ։

— Ի՞նչպէս գիրցար։

— Այնպէս որ խոշորցայ, պարոն սեպուհէն շատ աւելի խոշորցայ։ Միթէ հաւատալի է այս, պարոն։

— Անօրէն, կ'երեսի ինձ որ այդ գիրին է տեսնել։

— Կ'լսենս, տխմար — ըսաւ Բորթոս — այդ յայտնի բան մ'է։

— Բայց վերջապէս, սիրելիդ իմ Բորթոս — վրայ բերաւ տ'Արգանեան թեթև անհամբերութեամբ մը — չեմ կրնար հասկնալ թէ ինչու համար զգեստներդ վրադ չեն լիներ Մուսքոնին գիրնալովը։

— Այդ պիտի բացատրեմ քեզի հիմակ, բարեկամ — ըսաւ

Բորթոս։ — Անշուշտ կ'յիշես որ ինձ հռոմայեցի զօրապետի մը պատմութիւնն ըսած ես, Անտոնիոս անուամբ, որ միշտ իր շամփուրին եօթ հատ վարազ ունէր անցուցած, զանազան ժամանակի մէջ խորոված, որպէս զի սիրան ուզած ժամուն իր ճաշը խնդրէ։ Լաւ, ես ալ որոշեցի, քանի որ ժամէ 'ի ժամ արքունիքը կանչուելու և շաբաթ մ'անգ մնալու հրաւէր մը կրնայի ընդունիլ, որոշեցի որ այսպիսի պարագայի մը համար եօթը հատ պատրաստ զգեստ ունենամ իմ ձեռքիս տակ։

— Շատ զօրաւոր կերպով դատեր ես գործը, Բորթոս, միայն մարդ քու հարստութիւնդ ունենալ պէտք է որպէս զի այդպիսի քմահաճոյք վայելէ. ուր մնայ որ չափ առնուլ տալու համար ժամանակի կորուստ կ'լինի. նորաձեւութիւններն ո՛րչափ սատկ կը փոխուին։

— Ճիշտ այդ մասին կ'յուսայի որ շատ ճարտար հնարք մը գտած էի — ըսաւ Բորթոս։

— Նայինք, ըսէ նայիմ այդ հնարքը։ Տէր վկայ, հանճարիդ վրայ կասկած մը չունիմ։

— Կ'յիշեն որ Մուսդօն ատեն մը նիհար էր։

— Այո՛, Մուսդօն անունն ունեցած ժամանակը։

— Բայց կ'յիշեն արդեօք այն ժամանակն երբ գիրնալու սկսաւ։

— Ճիշտ ժամանակը չեմ յիշեր։ Ներում կ'խնդրեմ այս մասին, սիրելի՛ իմ Մուսդօն։

— Ո՛հ, Պ. տ'Արլանեսանը հեռատես չէ — ըսաւ Մուսդօն սիրալիր դէմքով մը — նա Բարիզ էր, մինչդեռ մենք Բիէրֆօն կ'գտնուէինք։

— Վերջապէս, սիրելի՛ իմ Բորթոս, եկաւ ատեն մ'երբ Մուսդօն սկսաւ գիրնալ։ Այս ըսել կ'ուզես, այնպէս չէ՞։

— Այո՛, բարեկամ, և այն ատեն շատ ուրախացայ։

— Կրկի՛ն, անշուշտ ուրախացար — ըսաւ տ'Արդանեան։

— Խելամուտ ես այժմ թէ ասով ո՛րչափ նեղութենէ ազատ կը մնայի — շարունակեց Բորթոս։

— Ո՛չ, ո՛չ, դեռ ևս չեմ հասկընար, բայց գործը քանի՞ թացատրես . . .։

— Ասասիկ բացատրութիւնս, բարեկամ։ Դախ՝ ինչպէս որ ըսիր, ժամանակի կորուստ է չափ առնուլ տալը, եթէ տասն հինգ օրն անգամ մ'իսկ լինի։ Ասկէ զատ կարելի է ուղղորութիւնն ընէի, և երբ միշտ եօթ ձեռք հագուստ պատրաստ ունենալ ուզէի . . .։ Վերջապէս, բարեկամ, կ'սոսկամ, երբ մէկուն չափս տալու պէտք լինի։ Մարդ ազատորդի է կամ չէ, ինչ ընեմ . . .։ Ի՛նչ նուաստ բան է երբ անպիտան մարդ մ'ոտնով, բթամատով և գծով քեզ վերէն վար կ'չափէ։ Այս մարդիկ մէկ տեղդ խոռոչաւոր, միւս կողմդ ցից կ'գտնեն, քու տկար ու զօրաւոր կողմդ կ'իմանան. Ճշմարիտը, երբ չափողի մը քովէն ելնէ մարդ այն բերդերուն կ'նմանի որու անկիւններն ու թանձրութիւնը չափած կ'լինի լրտես մը։

— Իրաւի, սիրելի՛ իմ Բորթոս, այնպիսի գաղափարներ ունիս որ մինակ քու գլխէդ կ'ծնին։

— Ա՛հ, կ'իմանաս որ երբ մարդ ճարտարապետ է . . .։

— Եւ Պէլ-Իսլն ամրացուցած լինի, Ճիշտ է, բարեկամդ իմ։

— Ուստի գաղափար մ'ունեցայ, և անտարակոյս, շատ լաւ գաղափար մը պիտի լինէր եթէ Պ. Մուսդօն անհոգութիւն չընէր։

Տ'Արդանեան աչք մը նետեց Մուսդօնին վրայ, որ այս նայուածքին մարմնոյ թեթև շարժմամբ մը պատասխանեց, որ ըսել կ'ուզէր. «Պիտի տեսնես թէ ես յանցանք ունիմ այդ բանին մէջ»։

— Ուստի մեծ ուրախութիւն զգացի — վրայ բերաւ Բորթոս — Մուսդօնին գիրնալը տեսնելով, և իմ բոլոր զօրութեամբս օգնեցի նաև որ պարարտի սննդարար կերակուրի մը միջոցաւ, միշտ յուսալով որ իմ բոլորակիս պիտի հաւասարէր, և թէ այն ատեն իմ տեղս չափ պիտի առնուր։

— Ա՛հ, անդգամ — գոչեց տ'Արդանեան — կ'իմանամ միտքդ . . .։ Ասով թէ ժամանակի կորուստ և թէ նուաստութենէ կ'ազատէիր։

— Տէր վկայ, իմ ուրախութիւնս կրնաս երևակայել, երբ մէկ ու կէս տարի լաւ սնունդ տալէն ետև, վասն զի ես ինքս զանի կերակրելու ծանրութիւնն ատեր էի, այս անպիտանը . . .։

— Ո՛հ, ես ալ իմ կողմէս ճիշտ ըրի, պարոն — ըսաւ Մուսդօն համբերութեամբ։

— Այդ իրաւ է։ Ուստի դատէ իմ տրախտիմինս երբ առ-տու մը գիտեցի որ Մուսդօն պարտաւորած էր քովընտի մնանելու, ինչպէս ես կ՚մնանի, այն ծածուկ փոքր դռնէն զոր այն անպատմելի Ճարտարապետները հանդուցեալ տիկին Վալլօնի սենեկին մէջ շիներ էին, Բիերքֆօնի գղեակը։ Եւ այս դրան առթիւ պիտի հարցնեմ քեզի, բարեկամ, որ ամէն բան գիտես, թէ ինչպէս այն ապուշ Ճարտարապետները՝ որ՝ իրենց արհեստին բերմամբ՝ իրենց աչաց մէջ կարիին պիտի ունենային, այնպիսի դռներ երեւակայեր են շինելու, որոցմէ միայն նիհար մարդիկ կարող են անցնելու։

— Այս դռները տարփածուներու համար են — պատասխանեց տ՚Արդանեան — աբգ՝ տարփածու մը սովորաբար բարակ և փափուկ մարմին մը կ՚ունենայ։

— Վալլօն տիկինը տարփածու չունէր — ընդմիջեց Բորթոս վերհափառութեամբ։

— Բոլորովին Ճիշտ է, բարեկամ իմ — պատասխանեց տ՚Արդանեան — բայց Ճարտարապետները մտածած են այն պարագային որ թերեւս կարդուելու կ՚երթայ։

— Ա՛հ, այդ կարելի է — ըսաւ Բորթոս։ — Եւ այժմ որ շատ նեղ դռներու բայաարութիւնն ինձ տուիր, դառնանք Մուսդօնին դիրութեան, բայց դիտէ մի անգամ, որ այս երկու բաներն իրարու յարակից են, բարեկամ։ Միշտ դիտած եմ ես որ գաղափարներն իրարու նմանելու վրայ են։ Ուստի՝ այս երեւոյթին վրայ սքանչացիր, տ՚Արդանեան, ես քեզի Մուսդօնի վրայ կ՚խօսէի, որ դէր էր, և անկից խօսքը տիկին Վալլօնի վրայ դարձաւ . . . ։

— Որ նիհար էր։

— Հէյ, միթէ հրաշալի չէ՞ այս։

— Սիրելի, իմ մէկ գիտուն բարեկամս, Պ. Գօսդար, քու ըրած գիտողութիւնդ ըրաւ, և այս բանս յունական անուանը կը յիշէ որ մարէս ելեր է։

— Ա՛հ, ուրեմն իմ գիտողութիւնս նոր չէ՞ — գոչեց Բորթոս ապշած։ — Կարծէի թէ ես հնարեցի զայն։

— Բարեկամ, Արիստոտէլն առաջ ծանուցեալ իրողութիւն մ՚է, այսինքն՝ գրեթէ երկու հազար տարի առաջ։

— Լաւ, բայց գարձեալ Ճշմարիտ է — ըսաւ Բորթոս, հին ֆիլասոֆներու համակարծիք գտնուելուն վրայ հիանալով։

— Անտարակոյս։ Բայց Մուսդօնին գառնանք թ՚ինչպէս կ՚լինի։ Կարծեմ թէ փոքր առ փոքր գիրնալու վրայ թողուցինք զանի։

— Այո՛, պարոն — ըսաւ Մուսդօն։

— Ահա կ՚գառնամ — ըսաւ Բորթոս։ — Արդ՝ Մուսդօն այնպէս լաւ գիրցաւ որ բոլոր յոյսերս լցան, իմ չափիս հասնելով, և ասոր վրայ համոզուեցայ օր մ՚երբ այս անպգամն կունակն իմ բառկոնակովս շինած զգեստը առնելովս, բառկոնակ մ՚որ յիսուն ոսկի կ՚արժէր մի միայն իր բանուածքին համար։

— Փորձելու համար հագեր էի, պարոն — ըսաւ Մուսդօն։

— Այն օրէն սկսեալ — վրայ բերաւ Բորթոս — որոշեցի ուշեմն որ Մուսդօն իմ գերձակներուս հետ յարաբերութիւն հաստատէ և իմ տեղս չափ առնուլ տայ։

— Շատ զօրեղ երեւակայութեան հնարք մ՚է այդ, Բորթոս. բայց Մուսդօն մէկ ու կէս ոսք քեզմէ կարճ է։

— Ճիշտ է։ Զափը մինչև գետինը կ՚առնուր գերձակը, և զգեստին ծայրը Ճիշտ ծունկիս վերեւը կ՚հասնէր։

— Ի՞նչ բազդաւոր ես, Բորթոս, այդ բաները միայն քեզի կ՚պատահին։

— Ա՛հ, այո՛, դու բաղդս գովէ, և ո՞րչափ կ՚արժէ։ Ճիշտ այն միջոցին էր, այսինքն՝ գրեթէ երկուք ու կէս տարի առաջ, որ Պէլ-Իլ գացի, և ապստրեցի Մուսդօնին որ ամէն ամիս զգեստ մը կտրել տայ, որպէս զի միշտ և՝ի հարկին ամէն նորաձեւութեան մէկ առգինն ունենամ։

— Եւ արդեօք Մուսդօն հրամանդ կատարելու զմ՚նոյ ըրաւ։ Ա՛հ, շատ գէշ ըրած է Մուսդօն։

— Ընդ հակառակն, պարոն, ընդ հակառակն։

— Ո՛չ, չմոռցաւ զգեստները կտրել տալ, այլ մոռցաւ իմոց տալու ինձ որ երթալով կ՚գէրնար։

— Իրաւ որ, իմ յանցանքս չէ, պարոն, ձեր գերձակը չըսաւ ինձ այդ բանը։

— Այնպէս որ — շարունակեց Բորթոս — այս անպիտանը՝ եր-

կու տարիէ 'ի վեր, տասն ութ բթամատ աւելի լայնցեր է, և թէ իմ վերջին տասն երկու զգեստներս համեմատաբար շատ լայն կ'գան վրաս, մէկ ոտքէն մինչև մէկ ու կէս ոտք։

— Բայց մուտները, անոնք որ քու հասակդ նոյնն եղած ատենները կարուած են, չէ՞ն յարմարիր։

— Սիրելի բարեկամ, այլ ևս նորաձև չեն, և եթէ զանոնք հագնէի, պիտի կարծէին թէ Սիամէն կ'գաւնամ, և արքունիքէն երկու տարիէ 'ի վեր հեռացած եմ։

— Կ'իմանամ այդ շփոթութիւնդ։ Քանի՞ հատ նոր զգեստ ունիս, երսունը վեցը. և սակայն հատ մ'ալ չունիս։ Լաւ, երսունն եօթերորդ մ'ալ շինել տալ պէտք է, միս երսունը վեցը Մուսդօնին տալու է։

— Ա՛հ, պարոն — ըսաւ Մուսդօն դոհ դէմքով մը — այս իրաւ է որ պարոնն ինձ միշտ բարիք ըրած է։

— Անօրէն, միթէ կարծես թէ այդ միտքը չունեցայ, կամ թէ ծախքը զիս վախցուց։ Բայց մինչև Վօր հանդէպ այս օրէն միայն երկու օր մնաց. երէկ ընդունեցայ հրաւէրը, Մուսդօնին գրեցի որ զգեստներս առնու գայ, այս առտու միայն իմացայ գլուխս եկած փորձանքը, և նորաձև դերձակ մը չկայ որ մէկ երկու օրուան մէջ ինձի զգեստ մը շինելու յանձն առնու։

— Այսինքն ոսկեզարդ զգեստ, այնպէս չէ՞։

— Այո՛, կ'ուզեմ որ ամէն կողմն ոսկի ունենայ։

— Այդ կէտը կարգի կրնայ մտնել։ Երեք օրէն պիտի Ճամբայ ելնես։ Հրաւէրները չորեքշաբթի օրուան համար է, և այսօր կիրակի առտու է։

— Իրաւ է, բայց Արամիս ապսպրեց ինձ որ քսան չորս ժամ առաջ գտնուիմ։

— Ինչպէ՞ս, Արամիս։

— Այո՛, Արամիսն է որ բերաւ ինձ հրաւիրագիրը։

— Ա՛հ, շատ լաւ, կ'իմանամ։ Պ. Փուքէի կողմէ հրաւիրուած ես ուրեմն։

— Ամենևին։ Թագաւորին կողմէ, սիրելի բարեկամ։ Տոմսակին մէջ բացորոշ գրուած է. «Պ. Վալլօնի իմաց կ'տրուի որ

Թագաւորը հաճեցաւ զինքն իր հրաւիրելոց ցուցակին մէջ անցունել»։

— Շատ լաւ. բայց Պ. Փուքէի հետ է որ Ճամբայ պիտի ելնես։

— Եւ երբ կ'մտածեմ — գոչեց Բորթոս գլխոնը խորտակելով ոտքի հարուածով մը — երբ կ'մտածեմ որ զգեստ չպիտի ունենամ, բարկութենէս կ'Ճաթիմ։ Կ'ուզէի մէկը խեղդել կամ բան մը պատռել։

— Ո՛չ մէկը խեղդէ և ոչ բան մը պատռէ, Բորթոս. այս ամենը կարգի պիտի դնեմ. երսունը վեց զգեստէդ մին հագիր և ինձի հետ եկուր դերձակի մը խանութը։

— Վա՜հ, իմ սպասաւորս ամէն դերձակի գնայ այս առտու։

— Մինչև անգամ Պ. Բէրսրէնի։

— Ո՞վ է այդ Պ. Բէրսրէնը։

— Զգիտէս, Թագաւորին դերձակն է։

— Ա՛հ, այո՛, այո՛ — ըսաւ Բորթոս որ Թագաւորին դերձակը Ճանչելու կերպ մը կ'ցուցնէր թէև անոր անունն առաջին անգամ կ'լսէր — Պ. Բէրսրէնի կրպակը, Թագաւորին դերձակը, ի՞նչպէս չգիտեմ։ Մտածեցի որ շատ զբաղած պիտի լինէր։

— Անտարակոյս շատ զբաղած է. բայց, Բորթոս, անհոգ եղիր. ինչ որ ուրիշն մը համար չպիտի ընէ, ինձի համար պիտի ընէ։ Միայն պէտք է թողուս որ չափդ առնու, բարեկամ։

— Ա՛հ — ըրաւ Բորթոս հառաչով մը — ցաւալի բան է այդ, բայց, վերջապէս պէտք է գնիջանիլ։

— Իրաւ է, ուրիշներու պէս պիտի վարուիս, սիրելի բարեկամ, Թագաւորին ըրածը պիտի ընես։

— Ինչպէ՞ս, միթէ Թագաւորն ալ կ'չափեն, և ի՞նչպէս կը հանդուրժէ։

— Թագաւորը պչրասէր է, բարեկամ, և դու ալ պչրասէր ես, թէև հակառակը պնդես։

Բորթոս յաղթական դէմքով մը ժպտեցաւ։

— Ուրեմն Թագաւորին դերձակին երթանք — ըսաւ նա — և քանի որ Թագաւորին չափը կ'առնու, Ճշմարիտը, կրնամ թողուլ որ իմ չափս ալ առնու։

Գ.

ՈՎ ԷՐ Պ. ԺԱՆ ՐԷՐՍԸԷՆԸ

Պարոն Ժան Ռէրսրէն թագաւորին դերձակը՝ Սէնդ-Օնորէ Ճամբան՝ Արպը-Սէք փողոցին մէջ բաւական մեծկակ տուն մը կը բնակէր։ Այս մարդն աղուոր կերպասներու, աղուոր բանուածներու, աղուոր թաւիշներու Ճաշակն ունէր և թագաւորին դերձակն եղեր էր յորդւոյ որդի։ Այս ժառանգական արուեստութիւնը մինչև Շարլ Թի կ'հասնէր, որու, ինչպէս յայտնի էր, այլանդակ հագուստի ձևերը սիրելի էին, թէև կարելը դժուարին։

Այն տեսնի Ռէրսրէնը հէ-Լիս մ'էր, (բողոքական) Ամպրուազ Բարէի պէս, և Նավարայի թագուհի՝ դեղանի Մարկօն անոր խնայեր էր, ինչպէս որ այն ժամանակ կ'ըսէին և կ'գրէին, և սոր պատճառն այն էր որ դերձակը միայն կ'յաջողէր թագուհւոյն հագած սքանչելի ձիու զգեստները անոր վայլեցնել, վասն զի Նավարայի թագուհւոյն քանի մը մարմնական թերութիւնները Ճարպիկութեամբ կ'ծածկէին։

Ռէրսրէն վասնզի աղատելուն՝ առ երախտապիտութիւն, աղուոր սև շինական վերարկուներ, խիստ խնայական կերպով շիներ էր կատերինէ թագուհւոյն համար, որ վերջապէս գոհ եղաւ հիւկնօին պահպանութեան վրայ, թէև երկար ժամանակ անոր երես կ'ընէր։ Բայց Ռէրսրէն խոհեմ մարդ մ'էր, լսեր էր թէ հիւկնօի մը համար չկար աւելի վտանգաւոր բան մը քան թէ Կատերինէ թագուհւոյն ժպիտները. և գիտելով որ սովորականէն աւելի կ'ժպտէր իրեն, փութաց կանխիկ դատնալ իր բոլոր ընտանեօք, և այս կրօնափոխութեամբ անպատանելի լինելով՝ Ֆրանսայի թագին վարպետ դերձակի բարձր աստիճանին հասաւ։

Հանրի Գի օրով, թագաւոր մ'որ շափազանց պճնասէր էր, այս աստիճանը Քօրտիլիէրի վսեմագոյն ապարաժին բարձրութիւնը ստացաւ։ Ռէրսրէն իր բոլոր կենաց մէջ Ճարպիկ մարդ մ'եղած էր, և այս համբաւը մահուանէ ետքն ալ պահելու համար, զգուշացաւ իր մահը չվրիպիլ. ուստի Ճարպիկութեամբ վախճանեցաւ, Ճիշտ այն ժամուն որ իր երևակայութիւնը տկարանալու սկսեր էր։ Որդի մ'ու աղջիկ մը կ'թողուր. երկուքն ալ արժանի էին իրենց սահմանուած անունը կրելու. որդին՝ քաջարուեստ ձեռք մ'էր և ուղղաչափի մը պէս Ճշգրիտ. աղջիկը՝ զարդերու ասեղնագործ և գծագրիչ։

Հանրի Գի և Մարի Մէտիսիի հարսնիքը, սոյն թագուհւոյն խիստ դեղեցիկ սգոյ հագուստները, Պ. Պասօնբիէրի բերնէն ելած քանի մը բառերն, Պասօնբիէր՝ որ ժամանակին վայելչաղարդ մարդոյ թագաւորն էր, Ռէրսրէնց երկրորդ սերունդին հարստութիւնը շինեցին։

Պ. Գօնսինօ Գօնսինի և իր կինը Կալիկաի, որ վերջէն Ֆրանսայի արքունիքը փայլեցան, զգեստներն խաղալցնել ուզեցին և Գլօրանսէն դերձակներ բերել տուին. բայց Ռէրսրէն՝ այս յաւէն իր հայրենասիրութիւնն ու ինքնասիրութիւնը վիրաւորուելով, այս օտարականները չբաղցոց իր դիպակային փափուկ ծրագիրներով և իր անօրինակելի նկարակերտ բանուածներով. այնպէս որ Գօնսինօ ամենէն առաջ իր հայրենակից դերձակներէն հեռացաւ, և դաղլիացի դերձակին այնչափ յարգ ցցուց որ միայն անոր ձեռքը իր զգեստները կարել կ'տար, այնպէս որ անոր շինած մէկ բաճկոնակը հագեր էր այն օրն որ Վիլլրի հրաչանակի հարուածով անոր գլուխը պատուեց Լուվրի փաբրիկ կամրջին վրայ։

Ահա՝ վարպետ Ռէրսրէնի գործարանէն ելնող այս բաճկոնակն էր որ Բարիզցիք կտոր կտոր ընելու հաճոյքն ունեցան՝ անոր պարունակած մարդկային մնով։

Թէև Ռէրսրէն՝ Գօնսինօ Գօնսինիին կողմէն մեծ շնորհ կ'տեսնէր, Լուի ԺԳ թագաւորը վեհանձնաբար ոխ չպահեց իր դերձակին և իր ծառայութեան մէջ պահեց։ Այն միջոցին որ Արդարն Լուի արդարասիրութեան այս օրինակը կ'ընծայէր, Ռէրսրէն երկու որդի մեծցուցեր էր, որոց մին իր առաջին փորձն ըրաւ Աննա թագուհւոյն հարսանեաց ժամանակ, կարտինալ Ռի-

շիլլօի համար հնարեց այն սպանիական ազնիւ հագուստն որով պարեց սարաբանդա մը. Մէրամ ողբերգին վերաբերեալ զգեստները շինեց, և Պրքինկհէմի վերարկուին վրայ կարեց այն նշանաւոր մարգարիտներն որ Լուվրի յատակին վրայ թափելու սահմանուած էին։

Մարդ հեշտիւ անուանի կ'դառնայ երբ Պ. Պրքինկհէմի, Պ. Սէն-Մարսի, օրիորդ Նինոնի, Պ. Պօֆորի և Մարիոն տը Լորմի պէս անձերու հագուստներ կ'կտրէ։ Հետևապէս Բէրսրէն երրորդ իր փառաց կատարը հասեր էր երբ հայրը մեռաւ։

Այս մի և նոյն Բէրսրէն գը ծեր, փառաւոր և հարուստ, դեռ ևս Լուի ԺԳի դերձակն էր, և որդի չունենալով, և այս ալ մեծ ցաւ մ'էր իրեն, վասն զի իրեն հետ պիտի հասնէր իր ցեղը, որդի չունենալով ըսինք, յոյս տուող շատ մ'աշակերտներ պատրաստեր էր։ Կաւք մը, հող, սպասաւորներ, Բարիզի աւագանին ունէր, և թագաւորին յատուկ արտօնութեամբն որսորդական կազմած ունէր։ Պ. Լիոնի և Լըտէլիէին զգեստներ կը կարէր կերպ մը պաշտպանութեամբ. բայց՝ թէև քաղաքագէտ մարդ, պետութեան գաղտնեաց հաղորդ, չէր կրցեր յաջողիլ երբէք Պ. Գօլպէրի զգեստ մը յարմարելու։ Այս գիւրին չէ մեկնել այլ գուշակել։ Ամէն տեսակ մեծ խելքի տէր մարդիկ՝ անտեսանելի, անիմանալի ըմբռնումներով կ'ապրին, կ'գործեն ասանց գիտնալու թէ ինչո՞ւ համար։ Մեծն Բէրսրէն, վասն զի, հարստութեանց սովորութեան հակառակ, մանաւանդ վերջին Բէրսրէնն էր որ Մեծ մականուան արժանի եղեր էր, Մեծն Բէրսրէն, ըսինք, ներշնչութեամբ կ'ձևէր թագուհւոյն համար կոճկէն մը, և թագաւորին համար անդրավարտիք մը, իշխանին համար վերարկու մը, և իշխանուհւոյն համար ծակոտէն գուլպայ մը կ'հնարէր. բայց իր գերազոյն հանճարով անգամ չէր կարող Պ. Գօլպէրի չափը պահել։

— Այս մարդը — կ'ըսէր նա ստէպ — իմ տաղանդէս դուրս է, և չեմ կարող զանի տեսնել իմ ասեղներուս ծրագրին մէջ։

Աւելորդ է ըսել որ Բէրսրէն Պ. Գուքէի դերձակն էր, և թէ վերատեսչն անոր մեծ արժէք կ'տար։

Պ. Բէրսրէն՝ թէև շուրջ ութսուն տարու՝ դեռ ևս թարմ էր և միանգամայն այնչափ շոր՝ կ'ըսէին պալատականներն որ կորաքամակ էր։ Իր համբաւն ու հարստութիւնն այնչափ մեծ էին որ իշխանը, նորելուկ երիտասարդայ թագաւորը, անոր թևը կ'տար հագուստի և կապուտի վրայ խօսելով անոր հետ. և վճարելու շատ փոյթ չտանող պալատականներն իսկ չէին համարձակեր երկար ատեն հաշիւներն անվճար թողուլ. վասն զի վարպետ Բէրսրէն մի անգամ միայն ապառիկ զգեստ կ'կարէր, բայց երկրորդ անգամ երբէք եթէ առաջինն անվճար մնար։

Դիւրին է մտաբերել որ այսպիսի դերձակ մը փոխանակ ծուխերուն ետևէն վազելու, նոր գնորդներ ստանալու ցմկամակութիւն ունէր։ Ուստի Բէրսրէն քաղաքաւորներ և նոր ազնուացած մարդիկը հագուեցնելու կ'մերժէր։ Զայն ելեր էր իսկ որ Պ. Մաղարէն, գերձակին ձրիապէս շինած կարտինալական հանդիսաւոր ամբողջ զգեստի փոխարէն, օրին մէկն անոր գրպանին մէջ աղնուականութեան արտօնագիր սահեցուցեր էր։

Բէրսրէն խելք ունէր և նենգութիւն։ Կ'ըսէին թէ շատ թեթևաշարժ էր։ Ութսուն տարուան հասակին մէջ՝ դեռ ևս հաստատուն ձեռօք կնկան չափկներու չափը կ'առնուր։

Ահա այս մեծ իշխան դերձակին տունն էր որ տ'Արդանեան վշտահար Բորթոսը կ'տանջորդէր։

Բորթոս՝ քալելու ատեն՝ իր բարեկամին կ'ըսէր.

— Զգոյշ եղիր, սիրելի տ'Արդանեան, զգոյշ եղիր ինձի պէս մարդու մ'արժանապատութիւնը վտանգելու այս Բէրսրէնի ամբարտաւանութեամբը, որ շատ անմարդավար մարդ մը պիտի եղած լինի. վասն զի կանխաւ կ'յայտնեմ, սիրելի բարեկամ, որ եթէ ինձի հետ անպատկառ վարուի, զանի պիտի պատժեմ։

— Իմ կողմս ներկայանալով — պատասխանեց տ'Արդանեան — վախնալու բան մը չունիս, սիրելի բարեկամ, եթէ լինէիր անգամ. . . ինչ որ չես։

— Ա՛հ, պատճառն այն է որ . . . ։

— Ի՞նչ կայ։ Միթէ Բէրսրէնի դէմ բան մ'ունիս։ Դայինք, խօսէ, Բորթոս։

— Կարծեմ թէ, ժամանակաւ . . . :

— Լաւ ուրեմն, ինչ եղաւ ժամանակաւ :

— Այս անուամբ անպիտանի մը ղրկած էի Մուսղօնը :

— Լաւ, ապա՞ :

— Եւ այդ անպիտանը մերժեց ինձ հագուստ կարելու :

— Ո՛հ, անտարակոյս թիւրիմացութիւն մը պիտի լինի այդ, զոր պարտ է ուղղել : Մուսղօն շփոթած պիտի լինի տարբեր անուններ :

— Կարելի է : Այս անգամ Մուսղօն երբէք անունները չեւասակ միտքը չէ կարող պահել :

— Ես այդ գործը վրաս կ'առնում :

— Շատ լաւ :

— Կաքը կեցնել տուր, Բորթոս, ահա հասանք :

— Այս տեղ է :

— Այո՛ :

— Ի՞նչպէս, այս տեղ : Հալն (վաճառանոց) ենք, և դու ըսիր ինձ որ դերձակին տունն Արպը-Սկ փողոցին ծայրն է :

— Իրաւ է, բայց դիտէ :

— Լաւ, կ'նայիմ, և կ'տեսնեմ . . . :

— Ի՞նչ բան :

— Որ Հալն ենք, թշուառական :

— Ձեզ ուղեր անշուշտ որ մեր ձիերն առջև դանուող կառքին վրայ հեծնեն :

— Ո՛չ :

— Եւ որ մեր առջև դանուող կառքը միւսին վրայ հեծնէ :

— Ի հարկէ ոչ :

— Եւ ոչ երկրորդ կառքը մեզնէ առաջ եկող երսուն ու քառասուն կառուց վրայ ելնէ :

— Ա՛հ, Ճշմարիտը, իրաւունք ունիս :

— Ա՛հ :

— Այս ո՛րչափ բաղմութիւն է, սիրելի, ո՛րչափ :

— Հրմ՛ :

— Եւ բոլոր այս մարդիկն ի՞նչ կ'ընեն :

— Շատ պարզ բան մը . ամենքը կ'սպասեն որ իրենց կարգը գայ :

— Վա՜հ, Պուրկօյի ասպարանին կառակերդուները միմեանց կ'փոխեն :

— Ո՛չ, Պ. Բէրսրէնի տունը մտնելու կ'սպասեն կարգաւ :

— Ուրեմն մենք ալ այսպէս պիտի սպասենք :

— Մենք աւելի հնարագէտ և նուազ հպարտ պիտի լինինք :

— Ուրեմն ի՞նչ պիտի ընենք :

— Պիտի վար իջնենք, սպասաւորներուն և ծառաներուն մէջէն պիտի անցնինք, և դերձակին տունը պիտի մտնենք . ես քեզ կ'ապահովեմ այս մասին, մանաւանդ եթէ առջևէն քալես :

— Իջնենք — ըսաւ Բորթոս :

Եւ երկուքնին ալ վար իջնելով հետիոտն դէպ 'ի տունը քալեցին :

Բաղմութեան այսպէս խտնելուն պատճառն այս է որ Պ. Բէրսրէնի դուռը դոց էր, և թէ սպասաւոր մը՝ նոյն գրան առջև կեցած, անուանի դերձակին անուանի յաճախորդներուն կ'բացատրէր թէ, նոյն միջոցին Պ. Բէրսրէն չէ կարող մարդ մ'ընդունիլ : Դուրսն ալ կ'կրկնէին իրարու, միշտ ինչ որ մանրամասն ըսեր էր մեծ սպասաւորը մեծ ազնուականի մ'որուն համար շատ մարդավայել կ'երևէր, կ'կրկնէին թէ Պ. Բէրսրէն թագաւորին համար հինգ հատ զգեստ ձևելու վրայ է, և այս նեղ վիճակէն ստիպեալ, իր զարգուց դահլիճը նստած կ'մտածէր՝ այս զգեստուց գոյնն ու ձևը :

Շատ մարդիկ այս պատճառն իմանալով գոհութեամբ կ'գաւնային որ նոյնն ուրիշներուն ալ պատմեն, բայց ուրիշ շատ անձեր՝ միւսներէն աւելի կամակոր՝ կ'պնդէին որ դուռը բացուի, և այս վերջիններուն մէջ՝ երեք տպեա Սուրբ-Հոգւոյ կարգին (cordon bleu) կային որ կ'ըսէին թէ պարահանդիսի մը հրաւիրուած են և այս պարահանդէսը չպիտի կարենան երթալ եթէ Մեծն Բէրսրէնի ձեռքը կտրուած զգեստներ չհագնին :

Տ'Արգանեան իր առջևէն քշելով Բորթոսն որ խումբ խումբ մարդիկը վտարեց՝ մինչև սրասլիզները հասաւ, որոց եւս դեր-

ձակ տղաքներ կարելի եղածին չափ ասոր անոր պատասխան տալու կ'ձգնէին։

Կ'մոռնանք ըսելու որ ուրիշներուն պէս Բորթոսը գունէն ներս չէին ուզեր առնուլ, բայց տ'Արդանեան երևելով՝ սա խօսքն արտասաներ էր.

— Թագաւորին հրամանա։

Եւ իր բարեկամին հետ ներս մտեր էր։

Այս խեղճ աշխատաւորները շատ կ'ձգնէին յաճախորդներուն պահանջմանց պատասխանելու վարպետին բացակայութեան ժամանակ, խօսք մը շինելու համար ասեղին գործն ընդմիջելով, և երբ հարցուփորձ ընողներուն վիրաւոր գոռոզութիւնն կամ 'ի դերև ելած յոյսը գիրենք սաստիկ կ'կշտամբէր, յարձակում կրողն ոստում մ'ընելով տրապիզին ներքև կ'անհետէր։

Դժգոհ աղնուականներու թափորը հեռաբրքաշարժ տեսարան մը կ'ընծայէր։

Մեր հրայանակրայ հրամանատարը՝ սուր և ապահով նայուածքով մարդը, այս թափորը մէկ ակնարկով ընդգրկեց։ Բայց այս խումբն աչքէ անցընելէն ետև՝ իր ակնարկը կանգ առաւ դիմացը կեցող մարդու մը վրայ։ Այս մարդը՝ ութառակի մը վրայ նստած՝ հաղիւ գլխովը կ'անցնէր գլնք պատապարող տրապիզին։ Գրեթէ քառասուն տարու մարդ մ'էր, մելամաղձիկ դէմքով, գունատ երեսով և լուսաւոր ու անուշ աչքով։ Տ'Արդանեանի և այլոց կը նայէր՝ ձեռքին մէկը ծնօտին ներքև դրած, իբրև հետաքրքիր և հանդարտ դիտող մը։ Միայն մեր հրամանատարը տեսնելով Ճանչեց անշուշտ, և գլխարկն աչերուն վրայ իջեցուց։

Կարելի է այս շարժումն էր որ տ'Արդանեանի ուշը գրաւեց։ Եթէ այսպէս էր, հետևապէս գլխարկն իջեցնող մարդն իր առաջադրած նպատակէն բոլորովին տարբեր արդիւնք մը գաւ։

Այլ սակայն՝ այս մարդուն հագուստը բաւական պարզ և մազերը բաւական լաւ զարդարուած լինելով վեր 'ի վերոյ դիտող մարդոց աչքին պարզ դերձակի աշակերտ մը պիտի համարէին զանի, որ ճշդութեամբ կ'կարէր չուխան կամ թաւիշը։

Սակայն այս մարդը ստէպ իր գլուխը վեր կ'վերցնէր, ուստի իր մատերովը չէր կրնար օգտուիլ կերպով աշխատիլ։

Տ'Արդանեան չխաբուեցաւ. քաջ տեսաւ որ եթէ այս մարդը կ'աշխատէր, անտարակոյս կերպասի վրայ չէր այս աշխատանքը։

— Էէ — ըսաւ այս մարդուն ուղղելով խօսքը — ուրեմն այդպէս դերձակի աշակերտ դարձեր ես, Պ. Մօլիէր։

— Սուս, Պ. տ'Արդանեան — պատասխանեց մարդը մեղմիկ — յանուն երկնից, սուս, հիմակ գլխս պիտի մատնես։

— Լաւ, ինչ գլէն կայ։

— Իրաւ է որ գլէն չկայ, բայց . . . ։

— Բայց ըսել կ'ուզես որ օգուտ ալ չկայ, այնպէս չէ։

— Ափսոս, ոչ. հաւատա, խիստ լաւ կերպարաններ գիտելու վրայ էի։

— Դիտէ, դիտէ, Պ. Մօլիէր։ Կ'հասկընամ թէ ուրչափ հետաքրքրական է այս տեսարանս քեզի համար, և . . . այս հետաքննութիւնդ չպիտի վրդովեմ։

— Շնորհակալ եմ։

— Բայց պայմանաւ մը. այս է թէ պիտի ատուգիս ըսես ինձ թէ ո՞ր է Պ. Բէրսրէն։

— Ո՛հ, յոժարակամ, իր դահլիճն է, միայն . . . ։

— Միայն ոչ ոք կրնայ մտնել անդ։

— Անմատչելի է։

— Ամենուն համար։

— Ամենուն համար։ Այս տեղ մոցուց գլխս որպէս գի հանդիսա իմ դիտողութիւնս լնեմ և ապա ձգեց գնաց։

— Լաւ, Պ. Մօլիէր, պիտի երթաս անոր իմաց տալու որ այս տեղն եմ, այնպէս չէ։

— Ե՞ս — գոչեց Մօլիէր քաջ շան մը ձայնով որմէ օրինաւորապէս վաստկած ոսկրը կ'կորզեն — ես տեղէս շարժիմ, ա՛հ, Պ. տ'Արդանեան, ինչպէս դէշ կ'վարուիս իմ հետ։

— Եթէ անմիջապէս Պ. Բէրսրէնի իմաց չտաս որ այս տեղն եմ, սիրելիդ իմ Պ. Մօլիէր — ըսաւ տ'Արդանեան ցած ձայնով մը — ահա կ'իմացնեմ քեզի որ իմ հետս բերած բարեկամս քեզի չպիտի ցուցնեմ։

Մօլիէր Բորթոսը ցցուց անհամարելի շարժումով մը։

— Այո՛ է, այնպէս չէ՞ — ըսաւ նա։

— Այո՛։

Մօլեէր Բորթոսի վրայ սեռեց ակնարկ մ՚որ ըղեղներն ու սրտերը կ՚հեստաղօտեն։ Այս քննութիւնն անտարակոյս շատ յուսալից երևցաւ իրեն, վասն զի շուտ մ՚ելաւ և մօտակայ սենեակն անցաւ։

Ե

ԱՌԳԻՆԵ

Նոյն միջոցին ամբոխը կ՚ցրուէր ծանրօրէն, կրպակին իրաքանչիւր անկիւնը արտունջ մը կամ սպառնալիք մը թողլով՝ ինչպէս Ովկիանոս աստղատ եղերքին վրայ ալիքները քիչ մը փրփուր կամ մամուռ կ՚ձգեն երբոր կ՚քաշուին և դէպ՚ի ծովը կ՚խաղան։

Տասն վայրկեան ետք՝ Մօլեէր երևցաւ՝ տ՚Արգանեանի նշմայը մ՚ընելով վարագուրին եռեւէն։ Տ՚Արգանեան՝ Բորթոսն եռեւէն քաշելով վազեց, և բաւական դժուարին նրբատաշիներէ անցնելով Բէրսրէնի դահլիճն առաջնորդեց։ Ծերունին թևերը սոթուած ոսկեծաղիկ գլխակի մը կտորը կ՚ընէր՝ աղօր նշոյլներ առաջ բերելու համար։ Երբ տ՚Արգանեանը տեսաւ նա, կերպասը ձեռքէն ձգեց և առոր եկաւ, չէ թէ խոնարհութիւնս, չէ թէ մարդավար, այլ քիչ շատ քաղաքավար դէմքով մը։

— Պարոն հրամանատար — ըսաւ նա — պիտի ներես ինձ որ զբաղած եմ, այնպէս չէ՞։

— Է՛հ, այո՛, թագաւորին զգեստուց համար։ Գիտեմ այդ, սիրելիդ իմ Պ. Բէրսրէն։ Ըսին ինձ որ երեք հատ կ՚պատրաստես։

— Հինգ հատ, սիրելիդ իմ պարոն, հինգ հատ։

— Երեք կամ հինգ հատ, փոյթ չէ ինձ, վարպետ Բէրսրէն, և գիտեմ շափէն աւելի լաւ պիտի շինես։

— Գիտես, այո՛։ Երբ մի անգամ շինուին շափագանց լաւ պիտի լինին, պէտք է որ նախ շինուին, և ասոր համար, պարոն հրամանատար, ժամանակի պէտք ունիմ։

— Է՛հ, վայ, դեռ երկու օր ունիս, քեզի պէտք եղածէն աւելի ժամանակ կայ, Պ. Բէրսրէն — ըսաւ տ՚Արգանեան մեծ հանդարտութեամբ մը։

Բէրսրէն գլուխը վեր վերցուց իբրև մարդ մ՚որ հակառախօսութեան վարժ չէ, նոյն իսկ իր քմահաճ խորհրդոց մէջ, բայց տ՚Արգանեան ընաւ ուշադրութիւն չընաւ գլխակի երևելի դերձակին նոր առած կերպարանին։

— Սիրելիդ իմ Պ. Բէրսրէն — շարունակեց նա — քեզի յաճախորդ մը կ՚բերեմ։

— Հա՛, հա՛ — ըսաւ Բէրսրէն խոժոռ դիմօք։

— Պ. Վալլոն տը Պրասիէօ տը Բիէրֆոնը — շարունակեց տ՚Արգանեան։

Բէրսրէն փորձեց բարև մը տալու, և ահռելի Բորթոսին վրայ համակիր բան մը չդտաւ, և Բորթոս դերձակին դահլիճը մտնելէն՝ ի վեր ծուռ աչքով կ՚նայէր անոր։

— Իմ բարի բարեկամներէս մին — ըսաւ տ՚Արգանեան խօսքը լմնցնելով։

— Պիտի ձեր հոգը տանիմ, պարոն — ըսաւ Բէրսրէն — բայց քիչ մ՚ուշ։

— Ո՛ւշ, և ե՞րբ։

— Բայց երբ ժամանակ ունենամ։

— Այդպէս խօսեր էիր արդէն իմ սպասաւորիս — ընդմիջեց Բորթոս դժգոհութեամբ մը։

— Կարելի է — ըսաւ Բէրսրէն — ես միշտ ստիպողական գործ ունիմ ձեռքս։

— Բարեկամ — ըսաւ Բորթոս վճռաբար — մարդս երբ կամի ժամանակ կ՚գտնէ։

Բէրսրէն շառագոյն դարձաւ, և այս գոյնը՝ ալևոր մարդոց վրայ, աղէտաբեր նշան մ՚է։

— Պարոն — ըսաւ — ճշմարիտ վկայ, ազատ ես ուրիշ տեղ երթալ։

— Օ՜ն, օ՜ն, Բէրսրէն — միմեայ ա՛Արդանեան — դու այսօր քաղցրաբարոյ չես։ Լաւ ուրեմն, քեզի խօսք մը պիտի ըսեմ որով իմ առջեւս ծունր պիտի դնես։ Այս պարոնն ոչ միայն իմ, այլ եւ Պ. Գոքէի բարեկամն է։

— Հա՛, հա՛ — ըրաւ դերձակը — այդ ուրիշ խօսք է։

Ապա Բորթոսին կողմը դառնալով,

— Պարոն սեղուհ, դուք վերասեսչին մարդն էք — հարցուց նա։

— Ես իմ մարդս եմ — պատաց Բորթոս, Ճիշտ այն միջոցին որ վարագոյրը կ՚բացուէր նոր խօսակցի մը մուտք տալու համար։

Մօլիէր կ՚գիտէր, ա՛Արդանեան կ՚ծիծաղէր, Բորթոս կ՚հայհոյէր։

— Սիրելիդ իմ Բէրսրէն — ըսաւ ա՛Արդանեան — պարոն սեղուհին զգեստ մը պիտի շինես, ես կ՚պահանջեմ այդ բանը քեզնէ։

— Քեզի համար խօսք չառնիմ, պարոն հրամանատար։

— Բայց այս բաւական չէ, այդ զգեստն անմիջապէս պիտի շինես։

— Անկարելի է ընել ութ օրէ առաջ։

— Բայց այդ ալ կերպով մը մերժել է, վասն զի այդ զգեստով Վօր հանդէսը պիտի երթայ։

— Նարէն կ՚ըսեմ որ անկարելի է — պատասխանեց կամակոր ծերունին։

— Մի՛ ըսեր այդպէս, սիրելիդ իմ Պ. Բէրսրէն, մանաւանդ երբ ես եմ քեզ աղաչողն այս բանիս համար — ըսաւ անուշ ձայն մը գունէն, մեղրալայ ձայն մ՚որով ա՛Արդանեան իր ականջը անկեց։ Այս ձայնն Արամիսի ձայնն էր։

— Պ. Հէրպլէյ — դոչեց դերձակը։

— Արամի՛ս — միմեայ ա՛Արդանեան։

— Ա՛հ, մեր եպիսկոպոսն է — ըսաւ Բորթոս։

— Բարի լոյս, ա՛Արդանեան, բարի լոյս, Բորթոս, բարի լոյս, սիրելի բարեկամներս — ըսաւ Արամիս։ — Ա՛ղէ, աղէ, սիրելիդ իմ Պ. Բէրսրէն, այս պարոնին զգեստ շինէ, և կ՚ապահովեմ քեզ որ զայն շինելով Պ. Գոքէի հաճելի բան մը պիտի ընես։

Եւ այս խօսքին հետ այնպիսի նշան մ՚ըրաւ որ ըսել կ՚ուզէր. «Հաւանէ և Ճամբէ»։ Կ՚երևի թէ Արամիս վարպետ Բէրսրէնի վրայ գերագոյն ներգործութիւն մ՚ունէր քան ա՛Արդանեան. վասն զի դերձակն իրը հաւանութեան նշան գլուխը ծռեց, և Բորթոսին կողմը դառնալով,

— Գնա՛ միւս սենեակը չափդ առնել տուր — ըսաւ նա խստիւ։

Բորթոս ասկալի կերպով մը կարմրեցաւ։

Ա՛Արդանեան փոխեորկին գալը տեսաւ, և Մօլիէրի ուղղելով խօսքը.

— Սիրելիդ իմ պարոն — ըսաւ անոր կիսաձայն — այդ տեսած մարդդ կարծէ թէ կ՚անպատուի երբ Աստուծոյ անոր պարգևած մարմինն ու ոսկորները կ՚չափին, այս տիպարը լաւ մը քննէ, վարպետ Արիսդոֆան, և անկիրթ օգուտ քաղէ։

Մօլիէր այս մասին քաջալերութեան պէտք չունէր, աչքը կը հետաքննէր Բորթոս սեղուհը։

— Պարոն — ըսաւ անոր — եթէ հաճիս ինձի հետ գալու, զգեստիդ չափն առնուլ պիտի տամ, չափողը քեզ չդպելով։

— Ո՛հ — ըրաւ Բորթոս — ի՞նչպէս պիտի ընես այդ բանը, բարեկամդ իմ։

— Այո՛, վրդովուն և ոչ չափ պիտի դնեն։ Ձեզ նոր եղանակ մ՚է, զոր մենք հնարեցինք, որպէս զի պատուաւոր մարդոց չափն առնունք, որ չափաքանց զիւրազգած լինելով չեն կամիր որ դեղջուկներ իրենց գպին։ Շատ զիւրազգած մարդիկ ունինք որ չափուելու չեն հանդուրժեր, և իրօք իմ կարծեօք այս արարողութիւնը մարդուս բնական վեհանձնութիւնը կ՚վիրաւորէ, և եթէ գիսպուտաթով գու ալ, պարոն, այս կարգի մարդոցմէ ես...։

— Կենդանի վկայ, ի՛ հարկէ ես ալ այդպէս եմ։

— Լաւ, այդ շատ բարեպատեհ բան մ՚է, ազնիւ պարոն։ և դու մեր գիւտին երախայրիքը պիտի ունենաս։

— Բայց ի՞նչ միջոց պիտի գործածես, թշուառականն — ըսաւ Բորթոս զմայլելով։

— Պարոն — ըսաւ Մօլիէր ծռելով — թէ որ կ՚ուզես ինձ հետեիլ, պիտի տեսնես։

Արամիս չորս աչքը կ'նայէր այս տեսարանիս։ Կարելի է թէ՞ տ'Արգանեանի վառվռուն հետաքրքրութիւնը տեսնելով Արամիս կարծէր թէ նա Բորթոսի հետ պիտի մեկնէր որպէս զի այսպէս լաւ սկսուած տեսարանի մը վախճանը չկորուսէ։ Բայց Արամիս որչափ որ խորագէտ էր կ'սխալէր։ Բորթոս ու Մօլիէր միասին մեկնեցան։ Տ'Արգանեան Բէրսրէնի հետ մնաց. ինչու համար, մի միայն հետաքրքրութենէ. թերևս՝ իր բարի բարեկամ՝ Արամիսի ներկայութիւնը քանի մը վայրկեան աւելի վայելելու համար։ Երբ Մօլիէր և Բորթոս անհետացան, տ'Արգանեան եպիսկոպոսին մօտեցաւ, և այս բանէն կարծես թէ Արամիս դժգամակութիւն մ'զգայ։

— Դու ալ զգեստ մը պիտի շինել տաս, այնպէս չէ՞, սիրելի բարեկամ։

Արամիս ժպտեցաւ։

— Ո՛չ — ըսաւ։

— Սակայն վաղ պիտի գնաս, այնպէս չէ՞։

— Պիտի երթամ, բայց առանց նոր զգեստի։ Կ'մտնաս, սիրելի տ'Արգանեան, որ վանքի խեղճ եպիսկոպոս մը բաւական հարուստ չէ ամէն հանդիսի ժամանակ զգեստներ շինել տալու համար։

— Վա՜հ — ըսաւ հրացանակիրը ծիծաղելով — և քերթուածները, միթէ այլ ևս չեն շիներ։

— Ո՛հ, տ'Արգանեան — ըսաւ Արամիս — երկար ատենէ 'ի վեր այս մտոտեաց վրայ մտածող չկայ։

— Լաւ — կրկնեց տ'Արգանեան կէս մը համոզուած։

Իսկ Բէրսրէն գիպակները վերստին գնելու սկսեր էր ուշի ուշով։

— Ձեռ նկատեր — ըսաւ Արամիս ժպտելով — որ այս բարեսիրտ մարդը շատ կ'նեղենք, սիրելիդ իմ տ'Արգանեան։

— Հա՛, հա՛ — մրմնաց հրացանակիրը կիսաձայն — այսինքն ես քեզ անհանգիստ կ'ընեմ, սիրելի բարեկամ։

Ապա բարձրաձայն.

— Լաւ ուրեմն, մեկնինք. ես այլ գործ չունիմ այս տեղ, և եթէ դու ալ ինձի պէս ազատ ես, սիրելի Արամիս . . .։

— Ո՛չ, ես կ'ուզէի . . .։

— Ա՛հ, ուրեմն մասնաւոր խօսելիք մ'ունիս Պ. Բէրսրէնի։ Ինչու համար առաջուց չիմացուցիր ինձ։

— Մասնաւոր բան մ'ունիմ — կրկնեց Արամիս — այո՛, անտարակոյս, բայց չէ թէ քեզի համար, տ'Արգանեան։ Երթէք, հաւատա՛ ինձ, կ'աղաչեմ, այնչափ մասնաւոր բան մը չպիտի ունենամ որ քեզի պէս բարեկամի մը պաղանի մնայ։

— Ո՛հ, ո՛չ, ո՛չ, ահա կ'քաշուիմ — պնդեց տ'Արգանեան, բայց իր ձայնին զգալի հետաքրքրութեան շեշտ մը տալով. վասն զի Արամիսի նեղութիւնը, թէև լաւ կ'պահէր, իր աչքէն չէր վրիպած, և գիտէր որ այս անթափանցելի հոգւոյն մէջ, ամէն ինչ, նոյն իսկ առ երևոյթս ամենէն մտոտի բաները, սովորաբար կէտ նպատակի մ'ունէին, անծանօթ նպատակ մը, բայց իր բարեկամին բնաւորութեան մասին ունեցած ծանօթութենէ, հրացանակիրը կարծէր թէ անտարակոյս այն նպատակը կարևոր նպատակ մ'էր։

Արամիս ալ իր կողմէ գիտեց որ տ'Արգանեան առանց կասկածի չէր, և հետևապէս պնդեց.

— Կեցէ՛ք, կ'աղաչեմ — ըսաւ — ահա բանին էութիւնը։

Ապա դերձակին կողմը դառնալով,

— Սիրելիդ իմ Բէրսրէն . . . — ըսաւ նա։ — Մանաւանդ թէ ներկայ գտնուելուդ շատ ուրախ եմ, տ'Արգանեան։

— Ա՛հ, իրաւ՞ — ըսաւ Կասքօնն երբորդ անգամ, այս անգամ ևս առաջիններուն պէս չլսնուելով։

Բէրսրէն չէր շարժեր։ Արամիս ուժգին զանի արթնցուց գիպակն անոր ձեռքէն քաշելով, որ իր մտածութեան առարկան էր։

— Սիրելիդ իմ Բէրսրէն — ըսաւ անոր — այս տեղն ունիմ Պ. Լը Պրէօն, Պ. Ֆուքէի մէկ պատկերհանը։

— Ա՛հ, շատ լաւ — մտածեց տ'Արգանեան — բայց ինչու համար Լը Պրէօն աստ է։

Արամիս տ'Արգանեանի կ'նայէր, որ Մարդ–Անտոնինոսի փորագրութիւններն իբրև թէ կ'գնէր։

— Եւ միթէ անոր համար ալ եպիկուրեանց նման զգեստ մը պիտի շինել տաս — հարցուց Բէրսրէն։

Եւ այս խօսքն ուշադիր խօսելու ատեն՝ արժանի դերձակը կը ջանար իր գիպակի կտորը ձեռք ձգել։

— Եպիկուրեանի զրեստ մը — հարցուց ա՛Արգանեան հարցաքննիչ ձայնով մը։

— Վերջապէս — ըսաւ Արամիս իր ամենէն չքնաղ ժպիտովը — գրուած է որ այս մեր սիրական ա՛Արգանեանն այս իրիկուն մեր բոլորը գաղտնիքն իմանայ. այո՛, բարեկամ, այո՛, Պ. Գուքէի եպիկուրեանց վրայ արդէն տեղեկութիւն ունիս, այնպէս չէ՞։

— Անտարակոյս։ Մինթ տեսակ մը բանաստեղծներու ընկերութիւն մը չէ՞, որու մէջ կ՚զանուին Լա Ֆոնդէն, Լօրէ, Բէլլեսոն, Մօլիէր, և չգիտեմ ուրիշ ոմ. և որ իր նիստն՝ի Սէն-Մանտէ կ՚ընէ։

— Ճիշտ այդպէս է։ Լաւ, մեր քերթողներուն համագրեստ մը պիտի տանք, և թագաւորին ծառայութեան համար զուռեգ մը պիտի կազմենք։

— Ո՛հ, շատ լաւ. կ՚գուշակեմ. Պ. Գուքէի մէկ խաղն է զոր թագաւորին համար կ՚պատրաստէ անշուշտ։ Ո՛հ, անհոգ եղիր, եթէ այդ է Պ. Լը Պրէսնի գաղտնիքը, ուրիշն չպիտի ըսեմ։

— Միշտ չքնաղ ես, բարեկամ։ Ո՛չ, Պ. Լը Պրէսնի այս մասին բան մը չունի, անոր վերաբերող գաղտնիքը միւսէն աւելի կարևոր է։

— Ուրեմն, եթէ աւելի կարևոր է, աւելի լաւ ունիմ՝ չտեսնել — ըսաւ ա՛Արգանեան սուտ ձև մ՚ընելով գտրս եղնելու մտօք։

— Ներս մտիր, Պ. Լը Պրէսնի, ներս մտիր — ըսաւ Արամիս աջ ձեռքով կողմնակի դուռ մը բանալով և ա՛Արգանեանը ձախովը կեցնելով։

— Ճշմարիտ վկայ, չեմ հասկընար — ըսաւ Բէրսրէն։

Արամիս պահ մը հանդարտ կեցաւ։

— Սիրելի Պ. Բէրսրէն — ըսաւ նա — թագաւորին համար հինգ հատ գրեստ կ՚ընես, այնպէս չէ՞. մէկ հատ գիպա՛է, մէկ հատ որսի չոխայէ, մէկ հատ թատրէ, հատ մը անգուսէ և հատ մը Ֆլօրանսի կերպասէ։

— Այո՛։ Բայց դու ասոնք ուսկէից գիտես, տէր իմ — հարցուց Բէրսրէն ապուշ կրթելով։

— Այդ խիստ պարզ է, սիրելիդ իմ, պարզն. որսորդութիւն

մը պիտի լինի, նոյնպէս խնջոյք, նուագախումբ, պտոյտ և ընդունելութիւն, այս հինգ կերպասներն առ հարկի պէտք են սոյն արարողութեանց համար։

— Դու ամէն բան գիտես, տէր իմ։

— Է՛հ լաւ, ուրիշ շատ բաներ ալ, հատատի եղիր — մրմնաց ա՛Արգանեան։

— Բայց — գոչեց դերձակը յաղթանակով — սա չգիտես անշուշտ, տէր իմ, թէև եկեղեցոյ իշխան մ՚ես, ինչ որ ոչ ոք պիտի գիտնայ, ինչ որ միայն թագաւորը, օրիորդ Լա Վալիէր և ես գիտենք՝, այս է կերպասներուն գոյնը, զարդերուն տեսակը, կարուածքը, վերջապէս այս ամէն զգեստներուն ամբողջ ձևը։

— Շատ լաւ — պատասխանեց Արամիս — ես ալ սհա այդ հարցնելու համար եկայ, սիրելիդ իմ Պ. Բէրսրէն։

— Ա՛հ, բա՛ — գոչեց զարհուրելով դերձակը, թէև Արամիս մեր այս առաջ բերած խօսքն իր ամենէն անուշ և ազու ձայնովն արտասանեց։

Այս պահանջումը, քանի Բէրսրէն կ՚մտածէր, այնքան չափէ դուրս, այնչափ ծիծաղելի, այնչափ ահագին երևցաւ, որ նախ կամաց մը ծիծաղեցաւ, ապա բարձրաձայն, և վերջապէս քահ քահ մը ձգեց։ Ց՚Արգանեան անոր հետևեցաւ, չէ թէ խնդիրն այդ ատոմիճան ծիծաղելի գտնելուն, այլ Արամիսը գրգռելու համար։ Արամիս թողուց որ ծիծաղը վերջացնեն, և երբոր հանդարտեցան,

— Դեռ — ըսաւ նա — այնպէս կ՚թուի թէ յիմարութիւն մ՚է ըսածս, այնպէս չէ՞։ Բայց ա՛Արգանեան, որ նոյն ինքն մարմնացեալ իմաստութիւնն է, պիտի ըսէ քեզի որ ուրիշ կերպով չէի կարող վարուիլ բայց միայն խնդիրս առաջարկել քո՛ղի։

— Նայինք — ըսաւ հրայանակիրն ուշադիր, և իր խորագիտութեամբն զրաւով որ յարդ բանակուիս մ՚էր եղածն և թէ ճակատամարտի ժամը կ՚մտնենաք։

— Նայինք — ըսաւ Բէրսրէն թերահաւատութեամբ։

— Ինչո՞ւ համար — շարունակեց Արամիս — Պ. Գուքէ հանդէս մը կ՚տայ թագաւորին, ոչ ապաքէն անոր հաճելի լինելու համար։

— Անտարակոյս — ըսաւ Բէրսրէն։

Տ՝Արդանեան գլխի նշանով մ՝իր հաւանութիւնը յայտնեց։

— Մեծանձնութեամբ մը, երևակայական հնարքով մը, շարք մը խաղերով, մեր քիչ մ՝առաջ խօսածին նման մեր եպիսկուրեանց գնդակաղմութեան նկատմամբ։

— Սքանչելի՛ է։

— Լա՛ւ, աւասիկ խաղը, բարեվիտ բարեկամդ իմ։ Պ. Լը Պրէօն որ ներկայ է, խիստ ճշդութեամբ գծագրող մարդ մ՝է։

— Այո՛ — ըսաւ Բէրսրէն — տեսեր եմ այս պարոնին պատկերները, և գիտեցի որ գլեսանները շատ խնամքի են։ Ահա այս պատճառաւ անոր գլեսա մը շինելու պատրաստ եղայ, թէ եպիսկուրեանց ձևին թէ իր ճաշակին համեմատ։

— Սիրելի պարոն, քու խօսքդ կ՝ընդունինք, վերջէն պիտի խնդրենք որ կատարես, բայց առ այժմ, Պ. Լը Պրէօն՝ չէ թէ ընելիք գլեսաներէդ, այլ թագաւորին ըրածէդ պէտք ունի։

Բէրսրէն դէպ ետին ոստում մ՝ըրաւ՝ զոր ա՝Արդանեան որ յետին ծայր հանդարտ և գնհատող մէկն էր, չափազանց չգտաւ, այնչափ այլանդակ և քսամնելի երևոյթներ ունէր Արամիսի ըրած առաջարկութիւնը։

— Թագաւորին գլեսաները, թագաւորին գլեսաներն որ և է մէկուն տամ. . . ա՛հ, ճշմարիտը, գերապատիւ հայր, յիմարական խնդիր մ՝է — գոչեց խեղճ գերձակը՝ համբերութիւնը հատնելով։

— Տ՝Արդանեան, օգնէ ինձ — ըսաւ Արամիս հեղհեղէ ծիծաղկոտ և հանդարտ կերպարան մը դասելով — օգնէ ինձ, խընդրեմ, Պ. Բէրսրէնը համոզելու, վասն զի դու կ՝իմանաս, գու՝ այնպէս չէ՞։

— Հէ՛, հէ՛, ոչ այդչափ, կ՝խոստովանիմ։

— Ի՛նչպէս, բարեկամ, չե՞ս հասկրնար որ Պ. Գուքէ կ՝ուզէ թագաւորին խաղ մ՝ընել այնպէս որ՝ի Վ.օ գալուն իր կենդանագրիը գտնէ անդ, և թէ կենդանագրիը, որու նմանութիւնն անթերի պիտի լինի, պէտք է որ այն հագուստն ունենայ որով պիտի հագուի թագաւորը կենդանագրին երևցած օրը։

— Հա՛, հա՛, այո՛ — գոչեց հրացանակիրը, գրեթէ համոզուած, այնչափ մէջ բերուած պատճառը բանաւոր էր — այո՛, այդ պատուական գաղափար մ՝է։ Գրաւ կ՝գնեմ որ գու գտած ես, Արամիս։

— Զգիտեմ — պատասխանեց եպիսկոպոսն անհոգութեամբ մը — իմ գլուս կամ Գուքէինն է . . . ։

Ապա՝ Բէրսրէնի գէմը հարցական կերպով նայելով ա՝Արդանեանի վարանական վիճակը գիտելով,

— Լաւ տրեմն, Պ. Բէրսրէն — հարցուց Արամիս — ի՞նչ կ՝ըսես ասոր, խօսէ նայիմ։

— Կ՝ըսեմ թէ . . . ։

— Թէ՝ ազատ ես մերժելու, անշուշտ, քաջ գիտեմ այդ, և բնաւ քեզ բռնադատելու միտք չունիմ, սիրելիդ իմ պարոն. կրնամ ըսել նաև, թէ կ՝ըմբռնեմ թէ որքան փափկութեամբ Պ. Գուքէի գաղափարն՝ի գործ գնելու կ՝վարանիս, որպէս զի չկարծուի թէ թագաւորը կ՝շողոմես. սրտի ազնուութի՛ւն է այդ, Պ. Բէրսրէն, սրտի ազնուութի՛ւն։

Գերձակը թոթովեց։

— Արդարև, այդ աղօր շողոքորթութիւն մը պիտի լինի թագաւորին համար — շարունակեց Արամիս։ — «Բայց, ըսաւ ինձ պարոն վերատեսուչը, եթէ Բէրսրէն մերժէ, ըսէ անոր որ այս քանիս համար ինք բան մը չկորուսեր և թէ ես միշտ զինքը կը յարգեմ, միայն . . . »։

— Միայն . . . — կրկնեց Բէրսրէն մտատանջութեամբ։

— «Միայն — շարունակեց Արամիս — պիտի ստիպուիմ թագաւորին ըսելու (սիրելիդ իմ Պ. Բէրսրէն, կ՝հասկրնաս որ Պ. Գուքէն է խօսողը) միայն պիտի ստիպուիմ թագաւորին ըսելու. «Վեհափառ, գիտաւորութիւն ունէի ձեր նկարը ձեզի ընծայել, բայց Պ. Բէրսրէն՝ թերևս չափազանց փափկութենէ դիմադրեց»։

— Դիմադրե՛ց — գոչեց գերձակն իր վրայ ծանրանալիք պատասխանատուութենէ սոսկալով — ես ի՞նչպէս կրնամ դիմադրել Պ. Գուքէի կամքին և փափաքին, երբ խնդիրը թագաւորին հաճոյք պատճառել է։ Ա՛հ, ի՞նչ անշահ խօսք ըսիր, գերապատիւ եպիս-

կոպոս, ես դիմադրեմ։ Ո՛Հ, այդ բառն ես բերնէս չհանեցի, փաք Աստուծոյ։ Պ. ա՛Արդանեան, այնպէս չէ՞, իմ կողմէս դիմադրութիւն մը չեմ ըներ։

Տ՛Արդանեան ուրացութեան նշան մ՛ըրաւ, յայտնելով որ չէզոք մնալու կ՛փափաքէր. կ՛զգար որ այս գործին տակը գաւ մը կար, կատակերգութիւն մը կամ ոգեւորութիւն մը. սատիկ կը զայրանար որ չէր կարող զայն գուշակել, բայց առ այժմ, մասնակից չէր ուզեր լինիլ։

Բայց արդէն Բէրսրէն՝ որ մնայոյզ կ՛խորհէր թէ կարելի է թագաւորին ըսեն թէ կ՛գիմադրէր իրեն հաճոյք մը արուելուն, Պ. Լը Պրէօնի աթոռ մը մօտեցուցեր էր, և պահարանէ մը չորս հատ փոզփոզուն գլեսաներ հանելու վրայ էր, հինգերորդը տակաւին գործածուներու ձեռքին եղած չլինելով, և հեղհեղուն այս հրաշակերտները Պէրկամի փայտէ մարդակերտներու վրայ կ՛աւելցուցէր, որոնք՝ Գոնսալնիի ժամանակ Ֆրանսա բերուած լինելով՝ Բէրսրէն Բին ընծայուեր էին Անքր մարաջախտին կողմէ, իտալացի գերձակներուն՝ իրարու գէմ մղած մրցումով կործանումէն ետքը։

Պատակերհանը սկսաւ նախ գծագրել և ապա նկարել գլեստները։ Բայց Արամիս որ իր աչքը պատակերհանին աշխատութեան բոլոր ասպիճանները կ՛գիտէր և մօտէն կ՛հսկէր՝ յանկարծ գոչեց.

— Կարծեմ թէ բան գոյնը չես ըմբռնած, սիրելիդ իմ Պ. Պրէօն — ըսաւ անոր — երանգներդ քեզ պիտի խաբեն և կատին վրայ պիտի կորսուի այն սկար նմանութիւնն որ մեզի անվրէպ կարեւոր է. աւելի ժամանակ պէտք է երանգներն ուշի ուշով դիտելու։

— Իրաւ է — ըսաւ Բէրսրէն — բայց ժամանակը սուղ է, և այս մասին, դուք ալ պիտի խոստովանիս, գերապատիւ եպիսկոպոս, ճար մը չեմ կարող գտնել։

— Այն ատեն գործը ձախող պիտի երթայ — ըսաւ Արամիս հանդարտութեամբ — քանի որ բան իսկ գոյները չպիտի նկարուին։

Սակայն Լը Պրէօն կերպասներն ու զարդերը մեծ հաւատարմութեամբ կ՛ընդօրինակէր, և այս բանս Արամիս կ՛գիտէր անհամբերութեամբ մը զոր չէր կարող ծածկել։

— Նայինք, նայինք ինչ կնճռոտ բաներ կ՛անցնին այս տեղ — շարունակեց ինքնիրեն հարցնել հրացանակիրը։

— Ճշմարիտն այդ չպիտի յաջողի — ըսաւ Արամիս — Պ. Լը Պրէօն, տուփերդ գոյէ և կատարեցէք փաթթիէ։

— Բայց այս ալ կայ, պարոն — գոչեց սրտմտած պատակերհանը — այս ալ կայ որ այս տեղ լոյսը շատ քիչ կ՛զարնէ։

— Միտքս բան մը կ՛գայ, Պ. Լը Պրէօն, բան մը։ Եթէ իրաքանչիւր կերպասէն առպին մ՛առնուինք, ինչպէս կ՛լինէր արդեօք. այն ատեն աւելի բայ լուսով և քիչ քիչ...։

— Ո՛Հ, այն ատեն — գոչեց Պ. Պրէօն — ձեզ ամէն բանի բանի վրայ կ՛ապահովեմ։

— Լաւ — ըսաւ ա՛Արդանեան ինքնիրեն — գործին հանգոյցն այս պիտի լինի. ամէն մէկ կերպասէն առպին մը պէտք է։ Թշուառական, արդեօք այս Բէրսրէնը պիտի ասի խնդրուած կտորները։

Բէրսրէնի ձարը հատնելով բոլորովին և միւս կողմէ Արամիսի շնչաւ միամտութենէ բռնուելով՝ հինգ առպին կարեց և եպիսկոպոսին ձեռքը տուաւ։

— Այս աւելի բանիս կ՛գայ, այնպէս չէ՞ — ըսաւ Արամիս ա՛Արդանեանի — քու կարծիքդ ալ այս չէ՞, հէյ։

— Իմ կարծիքս, սիրելիդ իմ Արամիս — ըսաւ ա՛Արդանեան — այս է որ դուք միշտ նոյնն եք։

— Եւ, հեռատեսս, միշտ քու բարեկամդ — ըսաւ եպիսկոպոսը չքնաղ ձայնով մը։

— Այո՛, այո՛ — ըսաւ ա՛Արդանեան բարձրաձայն։ Ապա ցած ձայնով. — Եթէ զիս կ՛բռնես, կրկնակի ժէզվիդ, չեմ ուզեր գոնէ դատակիցդ լինիլ, և դատակիցդ լինելու համար, ժամ է որ ասկից մեկնիմ։ — Մնաս բարեաւ, Արամիս — յարեց նոյն բարձր ձայնով — մնաս բարեաւ, երթամ պիտի Բոքթոսը գտնելու։

— Ուրեմն, լնձի սպասէ — ըսաւ Արամիս առպինները դրպանը դնելով — վատն զի գործս լմնցուցի, և փափաք ունիմ վերջին խօսք մ՛ըսել մեր բարեկամին։

Լը Պրէօն իր գործիները ծրարեց, Բէրսրէն գլեսաները պահարանը դրաւ, Արամիս ձեռքը դրպանը սեղմեց ապահով լինելու

լու համար թէ առպիտները մէջն էին, և ամենքը դերձակին դահ-ճէն դուրս ելան։

Զ

Ի՞ՆՉՊԷՍ ՄՕԼԻԷՐ ԻՐ ՔԱՂԱՔԱՒՈՐ ԱԶԱՏՈՐԴԻ ԹԱՏՐԵՐ-ԳՈՒԹԵԱՆ ԳԱՂԱՓԱՐԸ ԹԵՐԵՒՍ ՅՂԱՑԱՒ

Տ՚Արդանեան մնտակայ սրահը դատ. Բորթոսը, չէ թէ զայ-բացած, չէ թէ յուսակտուր Բորթոսը, այլ խնդուն երես, պայծա-ռափայլ, չքնաղ Բորթոսը, որ Մօլիէրի հետ կ՚խօսէր, և Մօլիէր կերպ մ՚երկրպագութեամբ անոր կ՚նայէր, իբրև մարդ մ՚որ՝ ոչ միայն անոր պէս լաւ բան մը չէր տեսած, այլ և ինքն նմանը տեսած չունէր։

Արամիս շնորհակ Բորթոսին գնաց, իր նուրբ և սպիտակ ձեռքն անոր ներկայացուց, որ իր հին բարեկամին հսկայակերտ ձեռքին մէջ ընկղմեցաւ, գործողութիւն մ՚որուն կ՚հանդուրժէր Արամիս երկչոտութեամբ մը։ Բայց բարեկամական ձեռքի սեղմումն առանց մեծ ցաւի կատարուելով, Վանի եպիսկոպոսը Մօլիէրի կողմը դարձաւ։

— Լաւ ուրեմն, պարոն — ըսաւ անոր — ինձի հետ 'ի Սէն-Ֆանտէ պիտի գամ։

— Ո՛ւր որ կամիս պիտի գամ, տէր իմ — պատասխանեց Մօ-լիէր։

— Ի Սէն-Մանտէ՛ — գոչեց Բորթոս զարմանալով որ Վանի դատող եպիսկոպոսն այսպէս ընտանեբար կ՚խօսէր դերձակ գործա-ւորի մը հետ։ — Ի՞նչ, Արամիս, այս պարոնն 'ի Սէն-Մանտէ՞ պիտի տանիս։

— Այո՛ — ըսաւ Արամիս ժպտելով — ժամանակը սուղ է։

— Այս ես գիտցիր, սիրելի Բորթոս — շարունակեց տ՚Արդա-նեան՝ — որ Պ. Մօլիէր բոլորովին ինչ որ կ՚երևի լինիլ այնպէս չէ։

— Ի՞նչպէս — հարցուց Բորթոս։

— Այո՛, այս պարոնը Պ. Բէրսրէնի առաջին գործակատար-ներէն մին է, 'ի Սէն-Մանտէ կ՚սպասուի որպէս զի Պ. Գուբէի կողմէ՝ եպիկուրեանց համար շինուած հանդիսի զգեստները փորձէ։

— Ճիշտ այդպէս է — ըսաւ Մօլիէր։ — Այո՛, պարոն։

— Եկուր ուրեմն, սիրելի իմ Պ. Մօլիէր — ըսաւ Արամիս — եթէ սակայն գործդ լմնցուցիր Պ. Վալլէնի հետ։

— Լմնցուցինք — պատասխանեց Բորթոս։

— Եւ միթէ գո՞հ ես — հարցուց տ՚Արդանեան։

— Բոլորովին գոհ եմ — պատասխանեց Բորթոս։

Մօլիէր հրաժեշտ տուաւ Բորթոսին շատ մը բարևներով և հրայանակրաց հրամանատարին ծածուկ կարկառած ձեռքը սեղմեց։

— Պարոն — ըսաւ վերջին անգամ Բորթոս ժպտելով — պա-րոն, նայէ որ ժամանակին հասցնես զգեստս։

— Սնպուհ, ձեր հագուստը վաղը պիտի ստանաք — պատաս-խանեց Մօլիէր։

Եւ Արամիսին հետ մեկնեցաւ։

Այն ատեն տ՚Արդանեան Բորթոսի թևը բռնելով,

— Ուրեմն այս դերձակն ի՞նչ ըրաւ քեզի, սիրելիդ իմ Բոր-թոս — հարցուց նա — քանի որ այդչափ գոհ ես իրմէ։

— Ի՞նչ ըրաւ, բարեկամդ իմ, ի՞նչ ըրաւ — գոչեց Բորթոս խանդաղին։

— Այո՛, կ՚հարցնեմ թէ ի՞նչ ըրաւ։

— Բարեկամ, երբէք դերձակի մը չըրածն ընելու յաջողեցաւ. առանց ինձի դպչելու չափս առաւ։

— Է՛հ, վա՛հ, բարեկամ, պատմէ նայիմ գործը։

— Բարեկամ, նախ չգիտեմ ո՞ր տեղէն գայլին ամէն հոտակի փայտէ մարդակերտներ բերին, յուսալով որ իմ հոտակիս յար-մար հատ մը կ՚գտնուի, բայց ամենէն մեծը, որ զուիցերցւոց թմբկասպետինն էր, երկու բթամատ կարճ, և մէկ ու կէս ոտք բարակ եկաւ։

— Ա՛հ, իրա՞ւ։

— Սիրելիդ իմ տ՚Արդանեան, ճիշտ այսպէս անցաւ, ինչպէս

որ պատիւ ունիմ քեզի ըսելու։ Բայց մեծ մարդ մը կամ դէթ մեծ դերձակ մ'է այս Մօլիէրը. ասոր համար բնաւ շփոթութիւն մը չցցուց։

— Եւ ի՞նչ բրաւ։

— Ո՛հ, շատ պարզ բան մը։ Ճշմարիտ վկայ, անլուր բան մը։ Ի՞նչ բթամիտ են մարդիկ որ այս պիտաս շուտ մը չեն ըրեր։ Ի՞նչ նեղութիւններէ և նուաստութիւններէ ազատած պիտի լինէի։

— Ի բայ առեալ զդեսանելը, սիրելիդ իմ Բորթոս։

— Այո՛, երբեմն զդեսա։

— Լաւ ուրեմն, սիրելիդ իմ Բորթոս, ըսէ նայիմ ինձ զ. Մօլիէրի մեթոդը։

— Մօլիէրը, միթէ այս է անունը. այս անունը մոռցա՛ս չեմ ուզեր հանել։

— Այո՛, կամ եթէ կ'ուզես Բօբլէն անուանէ։

— Ո՛չ, աւելի լաւ ունիմ Մօլիէրը։ Երբ իր անունը յիշել ուզեմ՝ Ժլիէրը (աղաւնոյ) միտքս պիտի բերեմ, որովհետև 'ի Բիբլիոֆօն աղաւնոյ մ'ունիմ։

— Սքանչելի՛ է, բարեկամ. բայց այս Մօլիէրին մեթոդն ի՞նչ է։

— Ահա պատմեմ։ Փոխանակ զիս անդամատելու՝ ինչպէս որ կ'ընեն շատ մը սատակները, փոխանակ երիկամունքս ծռելու, յօդուածքս ծալելու, և այս ամենն անպատիւ և նուաստ գործողութիւններ են . . .։

Տ'Արզանեան հաւանութեան նշան մ'ըրաւ իր գլխով։

— «Պարոն, ըսաւ նա, ազնուականի մը վայել է որ ինք չափէ իր անձը։ Շնորհ ըրէք սա հայլիին մօտենալու»։ Այն ատեն հայլիին մօտեցայ։ Պարտիմ խոստովանիլ որ շատ չէի հաւատար թէ այս ազնուասիրտ Վօլիէրն ի՞նչ պիտի ընէր զիս։

— Մօլիէր։

— Ա՛հ, ճիշտ է, Մօլիէր, Մօլիէր։ Եւ որովհետև միշտ կը վախնայի որ չչափեն զիս. «Զգոյշ եղիր, ըսի անոր, և մոռանէ ընելիքդ, առաջուց կ'խնայեմ որ շատ գիւրաւ կ'խաղամ»։ Բայց նա, իր անուշ ձայնովը (վասն զի մարդավար ապայ մ'է,

բարեկամ, չեմ կրնար ուրանալ այս բանս) բայց նա իր անուշ ձայնով. «Պարոն, ըսաւ, որպէս զի զդեսաը քեզի յարմարի, պէտք է որ քու պատկերիդ համաձայն լինի։ Քու պատկերդ հայլիին մէջ ճշգիւ ցոլացած է։ Ուրեմն հիմակ պատկերիդ վրայ պիտի առնուանք չափը»։

— Արդարև — ըսաւ տ'Արզանեան — հայլիին մէջ պատկերդ կ'տեսնէիր. բայց ուսկից պատն հայլի մ'որու մէջ բոլոր անձդ տեսնելու կարող լինիր։

— Սիրելիդ իմ, թագաւորին նայած բուն հայլին է։

— Այո՛, բայց թագաւորը քեզնէ մէկ ու կէս ոտք կարճ է։

— Լա՛ւ, ես ալ չ'խոսիմ թէ ինչպէս եղաւ. անտարակոյս թագաւորը շողոքորթելու կերպ մ'էր, բայց հայլին շատ մեծ էր ինձի համար։ Իրաւ է որ անոր բարձրութիւնը Վենետիկի երեք հայլիներ էին իրարու վրայ դրուած և իր լայնքը նոյն հայլիներով իրարու կցուած։

— Ո՛հ, ի՞նչ սքանչելի բաներ կ'գործածես դու. ուսկից ժողովեցիր զանոնք։

— Ի Պէլ-Իսլ։ Արամիս ճարտարապետին կ'բացատրէր զանոնք։

— Ա՛հ, շատ աղէկ։ Գտանոնք հայլիին, սիրելի բարեկամ։

— Այն ատեն այն ազնուասիրտ զ. Վօլիէր . . .։

— Մօլիէր։

— Այո՛, Մօլի՛ր, ճիշտ է։ Հիմակ պիտի տեսնես, սիրելի բարեկամ, որ այդ անունը ասէ՛ պիտի յիշեմ։ Ուստի այն ազնուասիրտ զ. Մօլիէրն սպիտակատեղով հայլիին վրայ գծեր քաշելու սկսաւ, միշտ իմ թեւերուս և ուսերուս նկարը նշանակելով, և այս գործողութիւնը շարունակեց սա առածը դատանելով զոր սքանչելի գտայ. «Պէտք չէ որ զդեսա մը նեղէ զայն հագնողը»։

— Արդարև — ըսաւ տ'Արզանեան — սաստիկ աղուոր առած մ'որ միշտ չեն գործադրեր մարդիկ։

— Ասոր համար աւելի զարմանալի գտայ, մանաւանդ երբ զայն ընդլայնեց։

— Ա՛հ, միթէ այդ առածն ընդլայնե՞ց։

— Ի՞նչպէս չէ։

— Նայինք ընդլայնումը։

— «Որովհետև, շարունակեց նա, մարդ թերևս դժուարին պարագայի մը մէջ, կամ նեղացուցիչ կացութեան մէջ՝ իր զգեստն ուսին վրայ ունենայ, և փափաքի իր զգեստը չհանել»։

— Իրաւ է — ըսաւ տ՝Արդանեան։

— «Այսպէս», շարունակեց Վօլիէր...։

— Մօլիէր։

— Այո՛, Մօլիէր։ «Այսպէս, շարունակեց Պ. Մօլիէր, պէտք ունիս սուրդ քաշելու, պարոն, և զգեստդ կոնակիդ վրայ ունիս։ Ի՞նչ կ՝ընես այն ատեն։

— «Կ՝հանեմ զայն, պատասխան տուի։

— «Լաւ ուրեմն ո՛չ, պատասխանեց նա ըստ կարգի։

— «Ի՞նչպէս չէ։

— «Կ՝ըսեմ թէ զգեստն այնպէս լաւ շինուած պէտք է լինի, որ բնաւ քեզ չնեղէ, մինչև անդամ սուր քաշելու ատենդ։

— «Հա՛, հա՛։

— «Մարտական գիրք բռնէ», շարունակեց նա։ Իսկոյն այնպիսի սքանչելի գիւրաշարժութեամբ ըսածն ըրի որ պատուհանին երկու ապակիները վար ընկան։ «Իսկ մը չէ, բան մը չէ, ըսաւ նա, այդպէս կեցիր»։ Զախ թեւս վեր վերուցի, բազուկս շնորհալի կերպով ծալելով, թեզանիքս դարձած և դաստակս կորաձև, մինչդեռ աջ թեւս կէս մը տարածած՝ արմիկս մէջքս կ՝պահպանէի և կուրծքս դաստակովս։

— Այո՛ — ըսաւ տ՝Արդանեան — մարտական Ճշմարիտ գիրք մ՝է, Ճեմարանական գիրքը։

— Ճիշտ բառն ըսիր, սիրելի բարեկամ։ Նոյն միջոցին, Վօլիէր...։

— Մօլիէր։

— Ցիրաւ, սիրելի բարեկամ, աւելի լաւ անեմ զանի կոչելու... ինչպէս ըսիր միւս անունը։

— Բօքլէն։

— Աւելի աղէկ անեմ Բօքլէն կոչելու դանի։

— Եւ ինչպէս այդ անունն աւելի լաւ պիտի յիշես քան թէ միւսը։

— Կ՝հասկընաս... անունը Բօքլէն է, այնպէս չէ։

— Այո՛։

— Ես ալ տիկին Գօքնարը միտս պիտի բերեմ։

— Լաւ։

— Գօքը, ջօքի պիտի փոխեմ, նաչը ընի և Գօքնարի տեղ, Բօքլէն պիտի ունենամ։

— Հրաշալի գիւտ մը — գոչեց տ՝Արդանեան տաղտկանալով... — բարեկամ, շարունակէ նայիմ, քեզ մոռիկ կ՝ընեմ սքանչանալով։

— Արդ այս Քօքլէնն իմ թեւս հայլեին մէջ ուրուագրեց։

— Ներէ՛, Բօքլէն պիտի ըսէիր։

— Բայց ես ի՞նչպէս ըսի։

— Քօքլէն ըսիր։

— Ա՛հ, իրաւ է։ Արդ այս Բօքլէնն իմ թեւս ուրուագրեց հայլեին վրայ. բայց ժամանակ անցաւ. ինձի շատ կ՝նայէր. այս իրաւ է որ շատ ազնիւ էր։ «Միթէ այդպէս կենալով կ՝յոգնիս, հարցուց նա։ — Քիչ մը, պատասխանեցի ես. ծնկացս վրայ ծռելով. սակայն կրնամ ժամ մ՝ևս դիմանալ։ — Ո՛չ, ո՛չ, չպիտի հանդուրժեմ։ Այս տեղ բարեսիրտ մանչեր ունինք որոնք պատրաստ պիտի համարին թեւդ բռնելու, ինչպէս երբեմն մարդաբէիցը կը բռնէին երբոր Տէրը կ՝կոչէին։ — Շատ լաւ, պատասխանեցի։ — Միթէ այս քեղն փաքրկութիւն կ՝սեպես։ — Բարեկամդ իմ, ըսի անոր, կարծեմ թէ մեծ տարբերութիւն կայ վերցնելու և չափուելու մէջ»։

— Այդ զանազանութեան մէջ լեցուն միտք կայ — ընդհատեց տ՝Արդանեան։

— Այն ատեն — շարունակեց Բօրթոս — նշան մ՝ըրաւ, երկու մանչ մօտեցան. մին իմ ձախ թեւս վերցուց, մինչդեռ միւսը, շատ մեծ Ճարպկութեամբ մը, աջ թեւս կ՝վերցնէր։

— «Երբոբդ մանչ մ՝ալ դայ, ըսաւ նա։

«Երբոբդ մանչ մը մօտեցաւ։

— «Գարմանին ապդրը բռնէ», ըսաւ նա։

«Մանչն ապդրս բռնեց։

— Այնպէս որ աղուոր գիրք մ՚ունէիր, այնպէս չէ՞ — հարցուց տ՚Արդանեան։

— Բոլորովին, և Բօքնար հայլիին վրայ ինչ կ՚նկարէր։

— Բարեկամ, Բօքլէն ըսէ։

— Բօքլէն, իրաւունք ունիս։ Քեզի բան մ՚ըսեմ, աւելի աղէկ ունիմ դարձեալ Վ.օլիէր կոչել զանի։

— Շատ աղէկ. բայց այս վերջինը լինի, խնդրեմ։

— Նոյն միջոցին, Վ.օլիէր հայլիին վրայ կ՚գծագրէր։

— Շատ ընտիր բան էր։

— Ես շատ կ՚սիրեմ այս մեթոդը. յարգական է, և ամէն մարդու ասպիճանը կ՚ցոյցնէ։

— Եւ վերջապէս, լմնցաւ . . . ։

— Եւ մարդ մը վրաս ձեռք չդպցուց, բարեկամ։

— Բայ՚ի երեք մանչերէն որ քեզ կ՚բռնէին։

— Անտարակոյս. բայց կարծեմ թէ արդէն բացատրեցի թէ ինչ տարբերութիւն կար բռնելու և չափելու մէջ։

— Իրաւ է — պատասխանեց տ՚Արդանեան, որ ապա իրովին ըսաւ. — ճշմարիտ վէյ, կամ շատ կ՚սխալիմ, կամ այն անգամ Մ.օլիէրին աղուոր կտոր մը տուած եմ, և անշուշտ քիչ ատենէն այս տեսարանս բնականին համեմատ նկարուած գիրքի տեսնենք կատակերգի մը մէջ։

Բորթոս կ՚ժպտէր։

— Ի՞նչ բան ծիծաղդ կ՚շարժէ — հարցուց անոր տ՚Արդանեան։

— Պէտք է քեզ խոստովանիլ։ Լաւ, կ՚ծիծաղիմ վասն զի շատ երջանիկ եմ։

— Ո՛հ, այդ իրաւ է. քեզնէ աւելի երջանիկ մարդ չեմ ճանչեր։ Բայց քեզի հասած նոր երջանկութիւնն ինչ է։

— Լաւ ուրեմն, սիրելիդ իմ, շնորհաւորէ զիս։

— Պատրաստ եմ շնորհաւորելու։

— Կ՚երևի թէ իմ վրաս է որ առաջին անգամ այսպէս չափ աւին։

— Միթէ ստոյգ ես։

— Դրեթէ։ Վ.օլիէրի և միւս մանչերուն մէջ փոխադարձ

արուած միաձայնութեան նշանները այսպէս զուշակել տալն ինձ։

— Լաւ, բարեկամ, Մ.օլիէրի կողմէ այդպիսի բան մը զարմանքս չգրգռեր։

— Վ.օլիէր, բարեկամ։

— Ո՛հ, ո՛չ, ո՛չ, այդ չեմ ըներ։ Ես կ՚թողում քեզի որ Վ.օլիէր ըսես, բայց ես Մ.օլիէր ըսելու պիտի շարունակեմ։

— Լաւ, կ՚ըսէի թէ չեմ զարմանար որ Մ.օլիէր այդ ընթացքը բռներ է, վասն զի հնարագէտ տղայ մ՚է, և դու այս աղուոր պաղատիարը ներշնչած ես։

— Ստոյգ եմ որ ապագային մէջ անկիւ օգուտ պիտի քաղէ։

— Ի՞նչպէս ուրեմն օգուտ պիտի քաղէ։ Տարակոյս չկայ որ անկիւ պիտի օգտի, և մանաւանդ շատ։ Վասն զի, գիտցիր, բարեկամ, որ Մ.օլիէր մեզի ծանօթ դերձակներուն մէջ մեր սեղուտները, մեր կոմսերն և մեր մարքիզներն ամենէն աղէկ հագուեցնողն է . . . ըստ իրենց չափու։

Այս խօսքին վրայ՝ որու պատեհութեան և խորիմաստութեան վրայ բան մը չպիտի ըսենք, տ՚Արդանեան և Բորթոս վարպետ Բէրսրէնի տունէն ելան և իրենց կառքը դտնելու գացին։ Եթէ ընթերցողը կ՚հաճի, զանոնք անոր մէջ պիտի թողունք որպէս զի՚ի Սէն-Մանտէ դառնանք Մ.օլիէրի և Արամիսի մօտ։

Է

ՓԵԹԱԿ, ՄԵՂՈՒՆԵՐ ԵՒ ՄԵՂՐ

Վանի եպիսկոպոսը՝ տ՚Արդանեանը վարպետ Բէրսրէնի մօտ դտնելուն վրայ սաստիկ գժգոհելով Սէն-Մանտէ դարձաւ բաւական սրտնեղութեամբ։

Ընդ հակառակն՝ Մ.օլիէր որ մեծ խնդութեամբ ներս մտաւ, վասն զի կ՚զմայլէր որ ուրուագրելու համար այնպէս աղուոր նիւթ գտեր էր, և պիտի կարենար բնագիրը վերստին տեսնել երբոր իր ուրուագիրը պատկեր մը շինելու փափաքէր։

Զախ կողմի առաջին դասիկոնը Բարիզի ամենէն նշանաւոր և տան ամենէն ընտանի եպիկուրեանց խմբով լեցուեր էր, իրարքանչիւրն իր յատուկ վայրն աշխատելու վրայ լինելով, իբրև մեղուներ իրենց բջիջներու մէջ, որպէս զի մեղր արտադրեն այն կարիանգակին համար զոր Պ. Ֆուքէ Նորին Վեհափառութեան մեծարելու կ'պատրաստուէր Վօի հանդիսին ժամանակ։

Բէլիսօն գլուխը ձեռքին մէջ դրած, Գաշէ Թատրերգին նախաբանին խոր հիմունքը կ'փորէր, երեք արարուածով կատակերգ մ'էր զոր պիտի ներկայացնել տար Բօքլէն տը Մօլիէր, ինչպէս կ'ըսէր ա՝Արգանեան, և Ֆօքլէն տը Վօլիէր ինչպէս կ'ըսէր Բոբթոս։

Լօրէ, իր լրագրապետի բոլոր միամտութեամբը, ամէն ատեն լրագրապետները միավոր եղած են, Լօրէ Վօի հանդէսներուն նկարագիրը կ'յօրինէր այս հանդէսները տեղի ունենալէն առաջ։

Լա Ֆոնդէն ատոնց մէջ կ'թափառէր, իբրև մոլորակին, ուշաթափ, նեղլիչ, անտանելի տուներ մը, որ կ'բզկար և ամէն միկոն կոնակին ետևէն հաղար սեռակ քերթողական սնոտիք կ'փոխար։ Այնպէս շատ նեղեց Բէլիսօնը՝ որ նա իր գլուխը բառնալով սրանեղութեամբ.

— Գոնէ, Լա Ֆոնդէն — ըսաւ նա — ինձ յանդ մը քաղէ, քանի որ կ'ըսես թէ Պարնասի պարտէզները կ'պտրտիս։

— Ի՞նչ յանդ կ'ուզես — հարցուց առակագանը (fabliier) ինչպէս Սէվինյէ կ'անուանէր։

— Յանդ մը կ'ուզեմ lumiere (լոյս) բառին։

— Ornière (շաւիղ) — պատասխանեց Լա Ֆոնդէն։

— Է՛հ, սիրելիդ իմ, անկարելի է շաւիղներու վրայ խօսիլ երբ որ Վօի բերկրանքը կ'գովենք — ըսաւ Լօրէ։

— Ասկից զատ՝ այդ ուղիղ յանդ չէ — պատասխանեց Բէլիսօն։

— Ի՞նչպէս ուղիղ յանդ չէ — գոչեց Լա Ֆոնդէն զարմանօք։

— Այո՛, գարշելի սովորութիւն մ'ունիս, սիրելիդ իմ, սովորութիւն մ'որ պիտի արգիլէ քեզ առաջին կարգի բանահիւս մը լինելու։ Շատ վատ կ'յանդես։

— Հօ, հօ, այդպէս կարծես, Բէլիսօն։

— Է՛հ, այո՛, սիրելիդ իմ, այդպէս կարծեմ։ Քաջ գիտցիր որ յանդ մը լաւ չգոյութիւն քանի որ անկից լաւագոյնը կրնայ գտնուիլ։

— Այն ատեն միայն աբձակ պիտի գրեմ — ըսաւ Լա Ֆոնդէն, որ Բէլիսօնի յանդխմանութիւնն իրրև ստոյգ ընդուներ էր։

— Ա՛հ, ստէպ մտքէս անցեր էր որ խեղճուկ քերթող մ'եմ։ Այո՛, զուտ ճշմարտութիւն մ'է այդ։

— Այդ մի ըսեր, սիրելիդ իմ, չափազանց ինքնամիտ կ'դառնաս, և առակներուդ մէջ լաւ բաներ ալ կան։

— Եւ սիսեռու համար — շարունակեց Լա Ֆոնդէն իր գաղափարին յարելով — նոր յօրինած հարիւրի չափ տոմնաւորս պիտի հիմակ այրեմ։

— Ո՞ւր են այդ ուռանաւորներդ։

— Գլխուս մէջ։

— Լաւ, եթէ գլխուդ մէջն են, չես կարող զանոնք այրել։

— Իրաւ է — ըսաւ Լա Ֆոնդէն։ — Եթէ չայրեմ, սակայն . . . ։

— Լաւ, ի՞նչ պիտի պատահի, եթէ չայրես։

— Այս պիտի պատահի որ մտքիս մէջ պիտի մնան, և երբէք չպիտի մոռնամ։

— ԿրոՀ — ըսաւ Լօրէ — ահա այդ վտանգաւոր է, մարդս խենդ կրնայ դառնալ։

— ԿրոՀ, կրոՀ, կրոՀ, ի՞նչ ընեմ — կրկնեց Լա Ֆոնդէն։

— Հնար մը գտայ, ես — ըսաւ Մօլիէր, որ այս վերջին խօսքին վրայ նոր ներս մտեր էր։

— Ի՞նչ հնար։

— Նախ զանոնք գրէ, և ապա այրէ։

— Ի՞նչպէս պարզ հնար մ'է։ Լաւ, երբէք չպիտի կարենայի գտնել։ Ի՞նչչափ խելք ունի այս ատտանայ Մօլիէրը — ըսաւ Լա Ֆոնդէն։

Ապա ճակտին զարնելով,

— Ա՛հ, գու միշտ տրմուդ պիտի մնաս, Ֆան տը Լա Ֆոնդէն — յարեց նա։

— Ի՞նչ կ՚ըսես այդ տեղ, բարեկամդ իմ — ընդմիջեց Մօլիէր քերթողին մտանալով, որու պատասխանը լսեր էր։

— Կ՚ըսեմ թէ ես միշտ տրմուղ պիտի մնամ, սիրելի եղբայրակից իմ — պատասխանեց Լա Ֆոնդէն խոշոր հառաչով և աչերը տրամուլթեամբ լեցուն։ — Այո՛, բարեկամդ իմ — շարունակեց նա առնչեցուն տրամուլթեամբ մը — կ՚երևի թէ վատօրէն կ՚յանդեմ։

— Պակաստ թիւն մ՚է։

— Կ՚նայինս, ստահակ մ՚եմ։

— Ո՞վ կ՚ըսէ այդ։

— Ճշմարիտ վկայ, Ռէլիսօնն է։ Միթէ Ռէլիսօնը չէ։

Ռէլիսօն իր շարադրուլթեամբը հանակուած՝ ղլուշայաւ պատասխան տալու։

— Բայց եթէ Ռէլիսօն իրօք ըսաւ թէ ստահակ մ՚ես — դոչեց Մօլիէր — Ռէլիսօն քեզ շատ ծանր նախատեց։

— Կ՚կարծես . . . ։

— Ա՛հ, սիրելիդ իմ, քեզի կ՚խրատեմ, քանի որ ազատորդի ես, անպատիժ չմոռնալ այդպիսի նախատինք մը։

— Բա՛ր — ըսաւ Լա Ֆոնդէն։

— Միթէ երբէք մենամարտած ես։

— Անգամ մը միայն, բարեկամ, թեթեւաղէն ձիաւորայ տեղակալի մը հետ։

— Ի՞նչ ըրեր էր քեզի։

— Կ՚երևի թէ կինս հրապուրեր էր։

— Հա՛, հա՛ — ըսաւ Մօլիէր թեթև մը դունատելով։

Բայց որովհետև՝ Լա Ֆոնդէնի ըրած խոստովանուլթեան վրայ միտները դարձեր էին որ մտիկ ընեն, Մօլիէր իր շրթերու վրայ պահեց հեգնալի ժպիտն որ քիչ մնայ պիտի անցնէր, և Լա Ֆոնդէնը խօսել տալը շարունակելով.

— Եւ այս մենամարտուլթեան արդիւնքն ի՞նչ եղաւ։

— Այս պատահեցաւ որ պայքարին մէջ իմ հակառակորդս զիս զինաթափ ըրաւ, ապա ներողուլթիւն խնդրեց, խոստանալով տունս առը չկոխել այնուհետև։

— Եւ միթէ ասով գոհ եղար — հարցուց Մօլիէր։

— Ո՛չ, ընդհակառակն։ Ստուրս կեանքն առի. «Ներէ ինձ, ազարան, ըսի անոր, քեզի հետ մենամարտ ըրի չէ թէ անոր համար որ կնկանս սիրողն էիր, այլ սա պատճառաւ որ ըսին ինձ թէ պարտաւոր էի մենամարտիլ։ Արդ՝ որովհետև այն առենէն՝ ի վեր միայն շատ երջանիկ կ՚զգանեմ ինքզինքս, շնորհ ըրէ իմ տունս երթալը շարունակել, ուրախանան պէս, թէ ոչ, կենդանի է Տէր, նորէն կուիւը պիտի սկսինք»։ Այնպէս որ — շարունակեց Լա Ֆոնդէն — ստիպուեցաւ կնկանս սիրողը մնալու, և ես ալ կ՚շարունակեմ աշխարհիս ամենէն երջանիկ ամուսինը լինելու։

Ամենքը քահ քահ մ՚ի ձգեցին։ Մօլիէր միայն ձեռքն աչերուն վրայ դրաւ։ Ինչո՞ւ համար, կարելի է արտօսր մը սրբելու։ Ու�ղ, արդէն յայտնի է, Մօլիէր բարոյախօս մ՚էր, բայց Մօլիէր փիլիսոփայ չէր։

— Ի՞նչ և է — ըսաւ նա վիճաբանուլթեան ձգած կիսին դառնալով — Ռէլիսօն քեզ նախատեց։

— Ա՛հ, իրաւ է, ես արդէն մոռցեր էի։

— Եւ քու կողմդ երթամ պիտի կոչելու։

— Այդ կարելի բան է, եթէ անհրաժեշտ դատես։

— Անհրաժեշտ կ՚համարիմ, և ահա կ՚երթամ։

— Գեցիր — ըսաւ Լա Ֆոնդէն։ — Կ՚ուզեմ կարծիքդ գիտնալ։

— Ի՞նչ բանի վրայ . . . միթէ այս նախատինքին վրայ։

— Ո՛չ, ըսէ ինձ եթէ իրօք lumière չյանգիր ornière-ի հետ։

— Եթէ պէտք լինի ես կ՚յանգեմ։

— Կենդանի է Տէր, ես ալ այդպէս գիտէի։

— Եւ հարիւր հազար նմանօրինակ ոտանաւորներ ըրած եմ կենացս մէջ։

— Հարիւր հազար — դոչեց Լա Ֆոնդէն։ — Պ. Շաբլէնի մտածած Բէ-սէլին քառապատիկը։ Միթէ այս նիւթին վրայ հարիւր հազար ոտանաւոր շինեցիր, բարեկամ։

— Բայց մտիկ ըրէ, յատխտենական ցնոցած — ըսաւ Մօլիէր։

— Սառոյց է — շարունակեց Լա Ֆոնդէն — որ legume (բանջարեղէն) օրինակի համար posthume-ի (ապամահ) հետ կ՚յանգի։

— Մանուանդ յոգնակին։

— Այո՛, մանաւանդ յոգնակին, վասն զի այն ատեն, չէ թէ երեք այլ չորս տառով կ'յանգի. ինչպէս ornière, lumière։ Այս երկու բառերը յոգնակի ընելով գրե, սիրելի Բէլիսօն — ըսաւ Լա Փօնդէն իր պաշտօնակցին ուսին զարնելով — և այն ատեն նոյնայանգ կ'լինի։

— Էյ — ըսաւ Բէլիսօն։

— Ճշմարիտը, Մօլիէրն է ըսողը, և Մօլիէր վարպետ է այս մասին, ինք կ'խոստովանի որ հարիւր հազար ոտանաւոր յօրինած է։

— Օ՛ն — ըսաւ Մօլիէր — առասիկ մեկնեցաւ։

— Ճիշտ rivage֊ի (եզր) պէս է որ herbage֊ի (խոտ) հետ սքանչելի կերպով կ'յանգի, գրաւ կ'գնեմ ասոր համար։

— Բայց . . . — ըսաւ Մօլիէր։

— Այսպէս քեզի կ'ըսեմ — շարունակեց Լա Փօնդէն — վասն զի Վօլ համար զուարճալի խաղ մը կ'պատրաստես, այնպէս չէ՞։

— Այո՛, Փաշէօն։

— Ա՛հ, Փաշէօն, Ճիշտ այդպէս, այո՛, կ'յիշեմ։ Լաւ ուրեմն, մտածեր էի որ յառաջաբան մը շատ պիտի յարմարէր այդ խաղին։

— Անտարակոյս, սքանչելի կերպով պիտի յարմարէր։

— Ա՛հ, դու ալ ինձ համամիտ ես։

— Այնչափ համամիտ եմ որ քեզ ապաչեցի որ այդ յառաջաբանը շինես։

— Դու զիս ապաչեցիր որ ընեմ։

— Այո՛, քեզ, և մինչև անգամ, մերժումիդ վրայ, ապաչեցի քեզ որ Բէլիսօնին ըսես, և այն ալ հիմակ կ'շինե։

— Ա՛հ, միթէ այդ է Բէլիսօնին ըրածը։ Հաստատ վկայ, սիրելիդ իմ Մօլիէր, երբեմն իրաւունք ունիս թերևս։

— Ե՞րբ։

— Երբ կ'ըսես թէ ջնդամիտ եմ։ Անհնար պակասութիւն մ'է այս պիտի ուզեմ զայն, և երթամ պիտի յառաջաբանդ ընելու։

— Ի՞նչ հարկ, քանի որ Բէլիսօն կ'յօրինէ զայն։

— Ճիշտ է։ Ա՛հ, կրկնապատիկ անբան մ'եմ։ Լօրէ, իրաւունք ունիր ըսելու որ ստահակ մ'եմ։

— Այդ ըսողը Լօրէն չէր, բարեկամդ իմ։

— Լաւ, ո՞վ որ է ըսողը, փոյթս չէ։ Այսպէս քու թատերգդ Փաշէօ կ'անուանի։ Լաւ ուրեմն, միթէ heureux (երջանիկ) հաշուած (նեղիչ) հետ չէ՞ իր յանգեր։

— Ի հարկին, կ'յանգէի։

— Եւ նոյն իսկ capricieux֊ի (քմահաճ) հետ։

— Ո՛հ, ո՛չ, այդ չլինիր, ո՛չ։

— Քիչ մը յանդուգն պիտի լինէր, այնպէս չէ՞։ Բայց վերջապէս, ինչու յանդգնութիւն պիտի լինէր։

— Վասն զի յանդգը խիստ տարբեր է։

— Ես կարծէի թէ — ըսաւ Լա Փօնդէն՝ Լօրէի մօտ դնալու համար Մօլիէրը թողլով — ես կարծէի թէ . . . ։

— Ի՞նչ կարծէիր — ըսաւ Լօրէ խօսքի մը մէջ ուրդը։ — Նայիմ, շուտ ըսէ։

— Դու կ'շինես Փաշէօի յառաջաբանը, այնպէս չէ՞։

— Ի՛հ, ո՛չ, Տէր վկայ, Բէլիսօնն է։

— Ա՛հ, Բէլիսօնն է — գոչեց Լա Փօնդէն, որ գնաց Բէլիսօնին քովը։ — Կ'կարծէի — շարունակեց նա — որ Վօլ յաւերժհարսը . . . ։

— Ա՛հ, սիրուն է — գոչեց Լօրէ — Վօլ յաւերժհարսը։ Շնորհակալ եմ, Լա Փօնդէն. իմ լրագրիս վերջին երկու ոտանաւորներն ինձ տուիր։

Եւ Վօլ յաւերժհարսը գեղեցիկ
Ոչ տար անանց գինն ալիւտրոնեան։

— Սքանչելի՛, ահա ասոր կ'ըսեն յանդգել — ըսաւ Բէլիսօն — եթէ այսպէս քերթեիր, Լա Փօնդէն, ըսելիք չէր մնար։

— Բայց կ'երևի թէ այսպէս կ'քերթեմ, քանի որ Լօրէ կ'ըսէ թէ ես տուի անոր այն ինչ շինած երկու ոտանաւորները։

— Լաւ ուրեմն, եթէ այդպէս կ'յանդգես, ըսէ նայիմ, ի՞նչ կերպով պիտի սկսէիր իմ յառաջաբանս։

— Օրինակի համար, պիտի ըսէի. Ո՛ յաւերժհարս . . . որ . . . բէն եղբը բայ մը պիտի գրէի սահմանական ներկային յոգնակի

երկրորդ զէմքով, և այստէս պիտի շարունակէի. Ա՛ս տարբերը Խորին :

— Բայց բա՞ն, բա՞ն — հարցուց Բէլլեսոն :

— Գո՜ւլ ըմպելը՝ վերայ ռեձոքոյն արտային :

— Բայց բա՞ն, բա՞ն — պնդեց Բէլլեսոն յամառութեամբ : — Սահմանական ներկայեն այն յոգնակի երկրորդ զէմքն ո՞ր է :

— Լա՛ւ, այս է. կ՚Ընոլը՝ :

Ո՛յ՝ երբեմնապէս, որ կ՚Ընոլը՝ այս տարբերը Խորին
Գո՜ւլ ըմպելը՝ վերայ ռեձոքոյն արտային :

— Ոչ կ՚Ընոլը՝ պիտի գրէիր, գոնէ :

— Ինչո՞ւ չէ :

— Ո՛չ . . . ոչ :

— Ա՛հ, սիրելի իմ — ըսաւ Լա Գոնդէն — չափէն աւելի խմաստակ մ՚ես :

— Առանց գիտելու — ըսաւ Մօլիէր — որ երկրորդ ոտանաւորին մէջ, գո՜ւլ ըմպելը՝ սկսար է, սիրելիդ իմ Լա Գոնդէն :

— Ուրեմն կ՚ուզես որ վատատիպ, ստահակ մէկն եմ, ինչպէս որ կ՚ըսէիր :

— Ես երբէք այդպէս բան չըսի :

— Ուրեմն, Լօրէ՛ի ըսածին պէս :

— Լօրէն ալ չըսաւ այդ, այլ Բէլլեսոն :

— Էյ ալէկ, Բէլլեսոն շատ իրաւունք ունէր : Բայց, սիրելիդ իմ Մօլիէր, ինձ ամենէն աւելի վիշտ պատճառող բանը սա է որ մեր եպիսկոպոսան զգեստները չպիտի ունենանք :

— Միթէ հանդիսին համար կ՚յուսայիր որ քու զգեստներդ կ՚ունենաս :

— Այս հանդիսին համար, և հանդիսէն ետքին համար : Տանս սպասուհին ինձ խմացուց որ իմս մաշած է :

— Կրո՛ղ, քու սպասուհիդ իրաւունք ունի. ոչ միայն մաշած այլ հատած է :

— Ա՛հ, կ՚նայիս — վրայ բերաւ Լա Գոնդէն — դահլիճիս մէջ գետինը մուգեր էի, և իմ կատուս . . . :

— Լա՛ւ, ինչ որ կատուդ :

— Կատուս անոր վրայ ձիգնեց, որով քիչ մը գոյնը փախաւ : Մօլիէր քրքիջ մը ձգեց : Բէլլեսոն ու Լօրէ անոր օրինակին հետևեցան :

Նոյն պահուն Վանի եպիսկոպոսն երևցաւ, իր թեին տակ ոսնենալով ծրար մը յատակագծեր և մագաղաթներ :

Որպէս թէ մահուան հրեշտակն ամէն յիմարական և ծիծաղկոտ երևակայութիւնները սատեցնէր, որպէս թէ այս գոնասակերպարանն ահարեկէր այն շնորհքն որոյ Քսենոկրատ կ՚զոհէր, գործարանին մէջ իսկոյն լռութիւնը տիրեց, և ամէն ոք իր տառնութեան հետ գրիչն առաւ :

Արամիս ներկայ գտնուողներուն հրաւիրագրեր բաժնեց, և Պ. Ֆոքէի կողմէ անոնց շնորհակալութիւններ ուղղեց : Վերատեսուչը, կ՚ըսէր նա, գրաղման պատճառաւ իր դահլիճը գտնուելուն չէր կարող գիրենք տեսնել, բայց կ՚ազաչէր որ օրուան աշխատութենէ քիչ մը բան իրեն ղրկեն որպէս զի իր գիշերուան գրաղմանէ զլացած յոգնութիւնը մոռնայ :

Այս խօսքին վրայ ամէն ճակատները խոնարհեցան : Նոյն ինք Լա Գոնդէն սեղանի մ՚առջև նստաւ և իր գրիչը թղթի մը վրայ վազցուց. Բէլլեսոն իր յատաջարանին մաքուրն առաւ. Մօլիէր մատիտով նոր գծած յիսուն հատ ոտանաւորները առաւ, զորս Բէրսարէնի ըրած այցելութիւնն իրեն ներշնչեր էր, Լօրէ՝ իր մարդարէացած հրաշալի հանդէսներու վրայ գրած յօդուածը առաւ. և Արամիս մեղուներու թագաւորին պէս աւարով բեռնաւորեալ՝ այս ծիրանի և ոսկի զարդերով սեթեւեթած խոշոր սև բոռն, իր սենեակը մտաւ լռութեամբ և շտապեալ. բայց մտնելէն առաջ.

— Պատծեցէ՛ք, սիրելի պարոններ, որ վաղն իրկուն ամենքնիս ալ պիտի մեկնինք :

— Ուրեմն, պէտք է որ խօսք ձգեմ տունս — ըսաւ Մօլիէր :

— Ա՛հ, այո՛, խնդա՛ Մօլիէր — ըսաւ Լօրէ ժպտելով — սիրելիներ ունի իր տունը :

— Այո՛, սիրելիներ ունի — պատասխանեց Մօլիէր իր անուշ և տխուր ժպիտովը — սիրելիներ ունի, բայց ասկից չհետևիր որ ինքն՝ սիրելի է :

— Լա — ըսաւ Լա Գոնդէն — ես կ'սիրուիմ 'ի Շապօ-Թիէ-բի, սոսկալի եմ այս մասին։

Դոյն միջոցին, Արամիս ներս մտաւ՝ պահ մ'անհանգիստ լինելէն ետև։

— Մինթէ իմ հետս եկող կայ — հարցուց նա։ — Բարիզէն պիտի անցնիմ, քառորդ մը Պ. Գուքէի հետ տեսակցելէն ետև։ Իմ կառքս պատրաստ է եկողին համար։

— Լաւ, ես կ'գամ — ըսաւ Մօլիէր։ — Կ'ընդունիմ, ստիպողական գործ ունիմ։

— Ես այս տեղ պիտի ճաշեմ — բսաւ Լօրէ։ — Պ. Կուրմիլ ինձ խոստացաւ խեցգետին։

Ինչ խոսքացաւ խեցգետին։

Փնտռէ յանդը, Լա Գոնդէն։

Արամիս ծիծաղելով դուրս ելաւ, այն կերպով որ ինք ծիծաղել գիտէր։ Մօլիէր անոր ետևէն գնաց։ Սանդղին ստորոտն էին երբ Լա Գոնդէն դուռը կէս մը բացաւ և պրուաց.

Իշխ պայման ջրաձիգ ջին,
Քեզ խոսքացաւ նա խեցգետին։

Եպիկուրեանց քրքիջները ստստկացան և մինչև Գուքէի ականջը հասան, այն միջոցին որ Արամիս անոր դահլիճն դուռը կը բանար։

Իսկ Մօլիէր իրեն տրուած պատուէրին համաձայն՝ ձիերը պատրաստել տալու գնաց, մինչդեռ Արամիս մեծ պաշտօնէին դացեր էր որ խօսելիքը յայտնէ։

— Ո՛հ, ինչպէս կ'ծիծաղին վերը — ըսաւ Գուքէ հառաչով մը։

— Մինթէ դու չես ծիծաղիր, տէր իմ։

— Այլ ես չեմ ծիծաղիր, Պ. Հէրպլէյ։

— Հանդիսին օրը կ'մտածենայ։

— Ոտակը կ'հեռանայ։

— Մինթէ չըսի՞ քեզի որ սոսկալի գործն իմն է։

— Ինձ միլիոններ խոստացար։

— Թագաւորը Ալ մտնելուն երկրորդ օրը միլիոնները պիտի ստանաս։

Գուքէ խորաղնին աչք Արամիսի նայեցաւ, և իր սաւ ձեռքը տամուկ ձակատին տարաւ։ Արամիս հասկրցաւ որ վերատեսուչն իր վրայ կ'կասկածէր, կամ սոսկալ ճարելու անկարողութիւն կ'զգար։ Ի՞նչպէս Գուքէ կրնար երևակայել որ խեղճ եպիսկոպոս մը, նախկին-աբբայ, նախկին-հրացանակիր, սոսկալ պիտի ճարէր։

— Ինչո՞ւ կ'տարակուսիս — ըսաւ Արամիս։

Գուքէ ժպտեցաւ և գլուխը ցնցեց։

— Թերահաւատ մարդ — յարեց եպիսկոպոսը։

— Սիրելիդ իմ Պ. Հէրպլէյ — պատասխանեց Գուքէ — ելմէ ընկնիմ. . . :

— Լաւ, ելմէ ընկնիս . . . :

— Գոնէ այնչափ բարձրէն պիտի ընկնիմ որ ընկնելու ատեն պիտի խորտակիմ։

Ապա, որպէս թէ ինքզինքը մոռնալու համար գլուխը ցնցելով,

— Ցատի կ'գաս, սիրելի բարեկամ — ըսաւ անոր։

— Բարիզէն։

— Բարիզէն։ Ա՛հ։

— Այո՛, Բէրսրէնի քովէն։

— Եւ ինչ գործ ունէիր Բէրսրէնի մօտ, վասն զի չեմ կարծեր թէ մեր բանտասեղծներուն գլեստին այնքան կաբևորութիւն տաս։

— Ո՛չ, խաղ մը սրատրաստել տալու գացի։

— Խաղ մը։

— Այո՛, դու պիտի ընես թագաւորին։

— Մինթէ տուղ պիտի նստի։

— Ո՛հ, յիստուն ոսկի, զոր Լը Գրէօնին պիտի տաս։

— Գծագրութիւն մը, ո՛հ, տեսլի աղէկ։ Եւ այս գծագրութիւնն ինչ պիտի ներկայացնէ։

— Քեզի պիտի պատմեմ եաքը. տսկէ զատ՝ նոյն ատենի՝ մեր բանտհիներուն գլեստները քննեցի։

— Բա՛, և վայելուչ, պերճ պիտի լինի :

— Փառաւո՛ր. շատ մեծ իշխաններ կան որ անունց նմանը չպիտի ունենան : Պիտի տեսնուի թէ ինչ տարբերութիւն կայ հարստութեան և բարեկամութեան պալատականներու մէջ :

— Միշտ նրբամիտ և վեհանձն ես, սիրելի եպիսկոպոս :

— Քու դպրոցդ եմ :

Գուքէ անոր ձեռքը սեղմեց :

— Եւ հիմակ ո՞ր կ'երթաս — ըսաւ անոր :

— Բարիկ պիտի երթամ՝ եթէ ինձ նամակ մը տաս :

— Նամակ մ'որո՞ւ համար :

— Նամակ մը Պ. Լիսնի համար :

— Եւ ի՞նչ պիտի ուզես Լիսնէն :

— Կ'ուզեմ՝ անոր հրամանագիր մը ստորագրել տալ :

— Հրամանագիր մը : Մի՞թէ մէկը Պասպիյլ գնել տալու միտք ունիս :

— Ո՛չ, ընդհակառակն, կ'ուզեմ մէկը բանտէն հանել :

— Ա՛հ, և զո՞վ կ'ուզես հանել :

— Խեղճ երիտասարդ մը, տղայ մը, որ Պասպիյլ նետուեր է, զրեթէ տասն տարիէ 'ի վեր, երկու լատիներէն ոտանաւորի համար, զոր ժէզվիդներու դէմ շինած էր :

— Երկու լատիներէն ոտանաւորի համար, և երկու լատիներէն ոտանաւորի համար տասն տարիէ 'ի վեր բանտն է, ողորմելին :

— Այո՛ :

— Մի՞թէ ուրիշ յանցանք գործած չէ՞ :

— Այս երկու ոտանաւորէն զատ՝ քեզի և ինձի պէս անպարտ է :

— Խօսք կ'առնս :

— Պատրաստ վրայ :

— Եւ ի՞նչ է անունը . . . :

— Սէլտոն :

— Ա՛հ, այդ չափը կ'անցնի, ճշմարիտը. և դու գիտնալով այդ բանն ինձի չըսիր :

— Պարոն, դեռ երէկ իր մայրն ինձի գիմեց :

— Եւ միթէ այդ կինն աղքատ է :

— Յեռին թշուառութեան մէջ է :

— Աստուած իմ — ըսաւ Գուքէ — այդպիսի անիրաւութիւններու թոյլ կ'տաս երբեմն այնպէս որ կ'երևակայեմ թէ դժբաղդներ կան որ արդարութեանդ վրայ կ'կասկածին : Ա՛ռ. Պ. Հէրպլէյ :

Եւ Գուքէ՝ գրիչ մ'առնլով՝ արտորնօք քանի մը տող գրեց իր Լիսն պաշտօնակցին :

Արամիս նամակն առաւ և դուրս ելնելու պատրաստուեցաւ :

— Սպասէ — ըսաւ Գուքէ :

Իր գրագրը բացաւ և անոր մէջ գտնուած տասն հատ գրամատոմսն անոր տուաւ : Իւրաքանչիւր գրամատոմսը հազար ֆրանքնոց էր :

— Աւասիկ առ — ըսաւ. — որպէսզի բանտէն հանել տուր, և այս գումարը մօրը տուր, բայց նայէ որ չըսես անոր . . . :

— Ի՞նչ բան, տէր իմ :

— Թէ տասն հազար ֆրանքով տեղի հարուստ է քան զիս. այն ատեն պիտի կարծէ թէ ողորմելի վերատեսուչ մ'եմ : Գնա, և յուսամ որ Աստուած պիտի օրհնէ իր աղքատներուն մոռացողները :

— Ես ալ այդպէս կ'յուսամ — պատասխանեց Արամիս Գուքէի ձեռքը համբուրելով :

Եւ արագ դուրս ելաւ, Լիսնին ուղղեալ նամակը տանելով, նոյնպէս Սէլտոնի մօրը համար գրամատոմսերը, և միասին առնլով Մօլիէրն որ սիսեր էր անհամբերութեամբ սպասել :

Ը

ԳԱՐՁԵՑԱԼ ԸՆԹՐԻՒՔ ՄԻ ՊԱՍՊԻՅԻ

Պասպիյլի մեծ ժամացոյցը ժամը եօթ կ'զարնէր, այն նշանա-

ւոր ժամացոյցը՝ որ Պետութեան բանտի մը բոլոր զարդերուն նման, որու կիրառութիւնը տանջանք մ՚է, բանտարկեալներուն ուշը կ՚ածէր իրենց տանջանաց մէն մի ժամուն ուղղութիւնը։ Պասդիլլի ժամացոյցը՝ նոյն ժամանակին շատ ժամացոյցներուն պէս նկարներով զարդարուած, կաշկանդեալ Սուրբ Պետրոսը կ՚ներկայացնէր։

Խեղճ բանտարկեալներուն ընթրիքի ժամն էր։ Դռները՝ իրենց սահմանեալ ծխնիներուն վրայ դռալով՝ կերակուրներով լի սնակներու և սապատներուն համար կ՚բանային, կերակուրներ՝ որու փափկութիւնը կալանաւորին ասոյնանին կ՚յարմարէր, ինչպէս որ նոյն ինք Պ. Պէզմօ մեզի բացատրեր էր։

Այս մասին Պ. Պէզմօի թռիչը գիտենք, նա որ համադամներու բարձր բաշխողը, արքայական բերդին խոհարարապետն էր, որու լիուլի սապատները ձիգ սանդուղներէն վեր կ՚ելնէին՝ կալանաւորներուն քիչ մը մխիթարութիւն տանելու, չափաւորութեամբ լեցուած շիշերով։

Նոյն ժամն իսկ պարոն կառավարչին ընթրելու ժամն էր։ Այն օրը սեղանակից մ՚ունէր, և շամփուրը սովորականէ աւելի ծանր կ՚դառնար։

Խորովեալ կաքաւներ՝ լոբերով շրջապատուած՝ և համեմուած նապաստակի ձաղ մը կողմնակի դրուած, արդանակի մէջ վառեակներ, տապկած և սպիտակ գինիով սրսկեալ երշիկը, Կիբոդքայի եկեքանիկներն և խնցկեանի միսը, ահա ասոնք էին, թանկէն և չոր կերակուրներէն զատ՝ պարոն կառավարչին սեղանին համադամը։

Պէզմօ սեղան նստած՝ ձեռները կ՚շփէր Վանի եպիսկոպոսին նայելով, որ ձիաւորի մը պէս կօշիկ հագած, մոխրագոյն զգեստ և սուրը կողին դրած, չէր դադրեր իր անօթութեան վրայ խօսելէն և մեծ անհամբերութիւն մը կ՚ցուցնէր։

Պ. Պէզմօ ալ Մօնպէլիէն վարժած չէր Նորին Գերապատուութեան Վանի եպիսկոպոսին ընտանի կերպերուն, և Նոյն իրիկուն՝ Արամիս զուարթ գառնալով վրայէ վրայ սրտակցական խօսքեր դուրս կ՚թափէր։ Աւաջնորդը քիչ շատ հրաշտանակիր եղեր էր։

Եպիսկոպոսը կատակաբանութեան կ՚մօտենար։ Իսկ Պ. Պէզմօի գալով՝ դռեհիկ մարդկան գիրութեամբ՝ իր կոշնականին այս կէս մ՚ընտանեկան վարմունքին կ՚համապատասխանէր մեծ համարձակութեամբ։

— Պարոն — ըսաւ — վատն ղի այս իրիկուն, ճշմարիտը՝ չեմ իշխեր քեզ տէր իմ՝ կոչելու։

— Շատ լաւ — պատասխանեց Արամիս — ղիս պարոն կոչէ։ Կօշիկներ ունիմ։

— Լաւ ուրեմն, պարոն, գիտես այս իրիկուն ղմ միտքս կը քերես։

— ճշմարիտը, չգիտեմ — ըսաւ Արամիս բաժակը ընելով — բայց յուսամ որ լաւ կոշնականի մը պատկերը կ՚ներկայեմ։

— Երկու պատկեր կ՚յիշեցնես ինձ։ Պ. Ֆրանսուա, բարեկամդիմ, գոյէ սա պատուհանը, կարելի է հովը Նորին Գերապատուութեան ելասէ։

— Եւ թող դուրս ելնէ — յարեց Արամիս։ — Ընթրիքն ամբողջ սեղանին վրայ է, կարող ենք առանց սպասաւորի ուտել։ Երբ այսպէս փոքր ակմբի, բարեկամի մը հետ եմ, շատ կ՚ախորժիմ...։

Պէզմօ գլուխը ծռեց յարգանօք։

— Շատ կ՚ախորժիմ ես ինքս կերակուրս առնուլ — շարունակեց Արամիս։

— Ֆրանսուա, դուրս ելիր — պոռաց Պէզմօ։ — Արդ կ՚ըսէի թէ Զեր Գերապատուութիւնն ինձ երկու մարդ կ՚յիշեցնէր. մէն շատ անուանի, այս է հանդուցեալ պարոն կարտինալը, մեծ կարտինալը, Լա Ռոշէլի կարտինալը, այն որ քեզի պէս կօշիկներ կ՚հագնէր։ Միթէ իրաւ է։

— ճշմարիտը, ճիշտ է — ըսաւ Արամիս։ — Հապա միւսը։

— Միւսը հրայանակիր մ՚է, շատ սիրուն, շատ արի, շատ յանդուգն, շատ բաղդաւոր, որ աբեղայէ հրայանակիր դարձաւ, և հրայանակիրէ աբեղայ։

Արամիս ժպտելու ղինջաւ։

— Աբեղայէ — շարունակեց Պէզմօ այս ժպիտէն սիրտ առնելով — եպիսկոպոս, և եպիսկոպոսէ...։

— Ա՛հ, լմնցուր, կ՚աղաչեմ — ըսաւ Արամիս։

— Պարոն, քեզի կ՚ըսեմ որ ինձի համար կարտինալի հոգի մ՚ունիս։

— Կարձ կացէ, սիրելիդ իմ Պ. Պէզմօ։ Արդէն ըսիր, ձիաւորի մը կօշիկներն ունիմ, բայց՝ այս իրիկունն անդամ, չեմ ուզեր եկեղեցւոյ հետ աւրուիլ։

— Սակայն գէշ միտքեր ունիս, տէր իմ։

— Ո՛հ, կ՚խոստովանիմ գէշ, աշխարհային եղած ամէն գէշ բանի պէս։

— Քաղաքը, փողոցները կ՚պտըտիս դիմակով։

— Ինչպէս որ կ՚ըսես դիմակով։

— Եւ միթէ միշտ սրով կ՚խաղաս։

— Կարծեմ թէ կ՚խաղամ, Բայց միայն երբոր զիս ստիպեն։ Ուրեմն բարեհաճէ Ֆրանսուան կոչելու։

— Դինի ունիս ահա։

— Խնդրելիքս դինի չէ, վասն զի տաք կ՚ընէ ասա և պատուհանն ալ դոց է։

— Պատուհանները կ՚դոցեմ ընթրելու ատենս որպէս զի դիշերապահ զօրաց շրջանները և սուրհանդակներու դալուստը չլսեմ։

— Ա՛հ, այո՛ . . . կ՚լսուին երբ պատուհանը բաց է։

— Շատ լաւ, և գիտես որ ասոնք անհանդիստ կ՚ընեն մարդս։ Կ՚ինանաս անշուշտ։

— Բայց այս տեղ տաքէն կ՚խղդուի մարդ, Ֆրանսուա։

Ֆրանսուա ներս մտաւ։

— Բայց սա պատուհանները, կ՚աղաչեմ, վարպետ Ֆրանսուա — ըսաւ Արամիս։ — Միթէ կ՚ներեն, սիրելի Պ. Պէզմօ։

— Տէր իմ, տունդ ես — պատասխանեց կառավարիչը։

Պատուհանը բացուեցաւ։

— Գիտես — ըսաւ Պ. Պէզմօ — որ այժմ բոլորովին մինակ պիտի մնաս քանի որ Պ. Լա Ֆէր իր Պլուայի թերափներուն դարձաւ։ Այն շատ հին բարեկամ մ՚է, այնպէս չէ՞։

— Դու ալ ինձի պէս գիտես, Պէզմօ, քանի որ դու ալ մեզի հետ հրայանակրաց դունդը զանուեր ես։

— Բա՛, ես ոչ շիշերն և ոչ տարիները կ՚համրեմ բարեկամներու հետ եղած ատենս։

— Եւ իրաւունք ունիս։ Բայց ես Պ. Լա Ֆէրն ոչ միայն կ՚սիրեմ, սիրելիդ իմ Պէզմօ, այլ և կ՚պաշտեմ։

— Լաւ, ես, զարմանալի բան է, անորմէ նախադաս կ՚բռնեմ Պ. ս՚Արդանեանը։ Ահա մարդ մ՚որ լաւ կ՚խմէ և երկար ատեն կ՚խմէ։ Գէթ այս մարդիկ իրենց միտքը կերպով մը կ՚յայտնեն։

— Պէզմօ, այս իրիկուն զիս գինովցուր, ինչպէս երբեմն անառակութիւն ընենք, և եթէ սրտիս մէջ ցաւ մ՚ունիմ, կ՚հաւաստեմ քեզ որ զայն պիտի տեսնես ինչպէս պիտի տեսնէիր աղամանդ մը բաժակիդ յատակը։

— Կեցցէ — ըսաւ Պէզմօ։

Եւ մեծ բաժակ մը գինի լեցուց և ուրախութենէ սարսռելով խմեց մտածելով որ եպիսկոպոսին մահացու մէկ մեղքին հաղորդ պիտի գտնուի։

Մինչդեռ կ՚քաշէր նա՝ չէր տեսներ թէ Արամիս ինչ մտադրութեամբ մեծ բակին շշուկները մտիկ կ՚ընէր։

Ժամն ութին մօտ սուրհանդակ մը ներս մտաւ, երբ Ֆրանսուա հինգերորդ շիշը սեղանը կ՚դնէր, և թէև այս սուրհանդակը մեծ աղմուկ կ՚հանէր, Պէզմօ բան մը չլսեց։

— Կրոնը տանի գինքը — ըսաւ Արամիս։

— Ի՞նչ, զմ՚ամ տանի — հարցուց Պէզմօ։ — Ցուսամ որ խմած գինիդ չէ, և ոչ զայն քեզի խմցնողը։

— Ո՛չ, ձի մ՚է որ այնչափ աղմուկ կ՚հանէ մինակն որչափ որ պիտի հանէր հեծելազօր գումարտակ մը։

— Ահա, սուրհանդակ մը պիտի լինի — պատասխանեց կառավարիչը գաւաթներ պարպելով։ — Այո՛, կրոնը տանի գինքը, և այնչափ շուտ, որ վերջին անոր խօսքը չլսէինք։ Կեցցէ, կեցցէ։

— Զիս կ՚մոռնաս, Պէզմօ։ Իմ բաժակս պարապ է — ըսաւ Արամիս փալփլուն բիւրեղեայ բաժակ մը ցոյց տալով։

— Պատուոյս վրայ կ՚ըսեմ, զիս կ՚զմայլեցնես . . . Ֆրանսուա՝ գինի։

Ֆրանսուա ներս մտաւ։

— Անօրէն, գինի, և ընտիր տեսակէն կ'ուզենք։

— Այո՛, պարոն, բայց . . . սուրհանդակ մ'է։

— Սատանան տանի գինիը, չըսի՞։

— Բայց, պարոն . . .։

— Թող դիւանատունը ձգէ թուղթը, վաղը կ'նայիմ, Վաղն ատեն կայ, վաղը, ըսաւ Պէզմօ այս վերջին երկու խօսքը դեղդեղելով։

— Ա՛հ, պարոն — քրթմնջեց Ֆրանսուա գինուորը — յանցանքն իրը չէ, պարոն . . .։

— Աչքդ բաց — ըսաւ Արամիս — աչքդ բաց։

— Ի՞նչ բանի, սիրելիդ իմ Հէրպլէյ — ըսաւ Պէզմօ կէս մը գինով։

— Սուրհանդակով եկած գիր մը, որ քաղաքաբերդի մը կառավարչին կ'հատնի, երբեմն հրաման մը կրնայ լինիլ։

— Գրեթէ միշտ։

— Միթէ հրամանները պաշտօնէին կողմէն չե՞ն հատնիր։

— Այո՛, անտարակոյս, բայց . . .։

— Եւ միթէ այս պաշտօնեաները թագաւորին ստորագրութիւնը միայն գիտցը գրել չե՞ն տար։

— Կարելի է իրաւունք ունիս։ Սակայն շատ տաղտկալի է, երբ լաւ սեղանի մ'առջև, բարեկամի մը հետ կ'զտնուի մարդս։ Ա՛հ, ներէ, պարոն, մոռցայ որ սեղանը տուողն ես եմ, և ապաղայ կարտինալի մը կ'խօսիմ։

— Այդ ամենը թողունք, սիրելի Պէզմօ, և քու գինուորիդ, Ֆրանսուային դառնանք։

— Լա՛ւ, ի՞նչ ըրաւ Ֆրանսուան։

— Մրմռաց։

— Անիրաւ է։

— Սակայն մրմռաց, կ'իմանաս. վասն զի արտաքոյ կարգի բան մը կ'անցնի. կարելի է Ֆրանսուան մրմռալուն անիրաւ չէ, բայց դու որ անիրաւ պիտի լինիս մտիկ ընելու մերժելդ։

— Անիրաւ, ենս, ես Ֆրանսուային առջև անիրաւ լինիմ։ Այդ ծանր կ'թուի ինձ։

— Կանոնազանցութեան պակասութիւն մը։ Ներէ՛, կարծեցի թէ կարևոր գատած մէկ դիտողութիւնս պարտաւոր էի ընել։

— Ո՛հ, կարելի է իրաւունք ունիս — կմկմաց Պէզմօ։ — Թագաւորին հրամանը նուիրական է։ Բայց ընթերցու ատեն երբ հրամաններ կ'գան, վերստին կ'ըսեմ, ստատնային . . .։

— Եթէ այդպիսի բան մ'ընէիր մեծ կարտինալին, հէյ, սիրելիդ իմ Պէզմօ, և եթէ այս հրամանը կարևորութիւն մ'ունենար։

— Այսպէս կ'վարուիմ եպիսկոպոս մ'անհանգիստ չընելու համար. միթէ ներելի չէ՞, Տէր կենդանի։

— Մի՛ մոռնար, Պէզմօ, որ ես ալ տառատոկ կրած եմ, և սովոր եմ զինուորական կարգապահութիւն տեսնել ամենուրեք։

— Ուրեմն կ'ուզես որ . . .։

— Կ'ուզեմ որ պարտքդ կատարես, բարեկամդ իմ։ Այո՛, կ'աղաչեմ կատարէ, գոնէ այս զինուորին առջև։

— Մաթեմաթիքական է — ըսաւ Պէզմօ։

Ֆրանսուա միշտ կ'սպասէր։

— Բերէք նայիմ թագաւորին սա հրամանագիրն — ըսաւ Պէզմօ բարձրանալով։ Եւ ցած ձայնով մը յաւելցուց. — գիտես ինչ է, հիմակ պիտի ըսեմ քեզի. ասոր նման կարևոր բան մը։ «Հոգ տար վառօդարանին մօտ կրակին», և կամ, «Հոկէ այս ինչ մարդուն վրայ, որ Ճարպիկ փախստեայ մ'է»։ Ա՛հ, թէ որ գիտնայիր, տէր իմ, քանի՞ քանի անգամ ընդոստ արթնցեր եմ՝ խոր քուն եղած ատենս, սրարշաւ հասնող հրամանագիրներէ որպէս զի լսեն ըսեն, կամ սա խօսքը պարունակող թուղթը բերեն. «Պ. Պէզմօ, ինչ նոր լուր կայ»։ Դիւրին է հասկընալ որ այսպիսի հրամաններ գրելով իրենց ժամանակը կորուսնող մարդիկ երբէք Պաստիլի մէջ պառկած չեն, թէ ոչ աւելի լաւ պիտի Ճանչէին իմ պատերուս թանձրութիւնը, իմ սպաներուս արթնութիւնը, իմ գիշերապահ շրջաններուս շատութիւնը։ Վերջապէս, ինչ ըսեմ, տէր իմ, իրենց արհեստն է գրել որպէս զի ինս կանչեն երբ հանգարտ եմ, գիս վրդովեն երբ երջանիկ եմ — յարեց Պէզմօ Արամիսի առջև ծռելով։ — Ուրեմն թողունք որ իրենց արհեստը բանին։

— Եւ դու քուկդ ըրէ — յարեց ժպտելով եպիսկոպոսն որու պինդ ակնարկը կ՚հրամայէր այս գոյանքին հակառակ։

Ֆրանսուա ներս մտաւ։ Պէզմօ պաշտօնէութենէ ուղղեալ հրամանագիրներն անոր ձեռքէն առաւ։ Ծանրութեամբ զմուռը քակեց և նոյնպէս ծանր կարդայ։ Արամիս խմել կեղծեց որպէս զի բիւրեղին մէջէն իր հիւրընկալը դիտէ։ Ապա երբ Պէզմօ գիրը կարդայ լմնցուց.

— Քիչ մ՚առաջ ինչ կ՚ըսէի — ըսաւ նա։

— Ի՞նչ կ՚ըսէիր — հարցուց եպիսկոպոսը։

— Արձակման հրաման մը։ Հիմակ նայէ՛, կ՚արժէ՞ որ այս գեղեցիկ լուրին համար տեղէս շարժիմ։

— Բայց գեղեցիկ լուր մ՚է այն անձին համար որու կ՚վերաբերի այս հրամանը, գոնէ կ՚հաւանիս և դու այս ըսածիս, սիրելի՛ իմ կառավարիչ։

— Երեկոյեան ժամն ութին։

— Գթասիրութիւն է։

— Գթասիրութիւն թող լինի. բայց այն խեղճ մարդուն համար է որ կ՚ձանձրանայ, և չէ թէ ինձի համար որ կ՚զուարճանամ — ըսաւ Պէզմօ զայրացած։

— Մի թէ կորուստ մը կ՚ընէս, և մի թէ ձեռքէդ առնուած կալանաւորը մեծ թոշակի կարդէն էր։

— Է՛հ, ճշմարիտը, ողորմելի մը, մուկ մը, հինգ ֆրանքնոց։

— Ցցուր ինձ այդ թուղթը — հարցուց Պ. Հէրպլէյ — միթէ անխոհեմութիւն է։

— Ո՛չ բնաւ, կարդա՛։

— Թղթին վրայ ոստիկանական գրուած է։ Անշուշտ տեսար։

— Սքանչելի՛ է, այդ ոստիկանական բառը... մարդու մը համար որ տասն տարիէ 'ի վեր ասա է։ Կ՚արտորան այդ մարդը դուրս հանելու, այսօր, այս իրկուն իսկ՝ ժամն ութին։

Եւ Պէզմօ վէս արհամարհանօք ուսերը բարձրացնելով՝ հրամանագիրը սեղանին վրայ նետեց և վերստին կերակուր ուտելու սկսաւ։

— Այդ տեսակ գայթումներ ունին — ըսաւ նա լեցուն բերնով

— օրին մէկը մարդ մը կ՚բռնեն, տասն տարի զանի կ՚տուչանեն և ասա քեզի կ՚գրեն. Այս Ֆլորէանին վրայ լա՜ հոգէ, և կամ, զանի խոպ՜ պահէ։ Եւ յետոյ երբ վարժին այդ մարդն իրրև վտանգաւոր մէկը նկատելու, յանկարծ, առանց պատճառի, առանց նախընթաց օրինակի, քեզի կ՚գրեն. Ազա՛ յիշէ։ Եւ իրենց գրոյն վրայ կ՚յաւելուն. Ոստիկանական։ Կ՚խոստովանիս անշուշտ, տէր իմ, որ մարդ կ՚սարսափի ուսերը վեր առնելու։

— Ի՞նչ օգուտ, այդպէս կ՚պոռայ մարդ — ըսաւ Արամիս — բայց 'ի վերջէ հրամանը կ՚կատարէ։

— Լաւ, լաւ, կ՚կատարէ... ո՛հ, համբերութի՛ւն... պէտք չէ կարծես որ ես դերի մ՚եմ։

— Աստուած իմ, ո՞վ կ՚ըսէ քեզի այդ բանը, սիրելիդ իմ, Պ. Պէզմօ։ գիտենք քու անկախութիւնդ։

— Փառք Աստուծոյ։

— Բայց բարի սիրտդ ալ կ՚ճանչենք։

— Ա՛հ, խօսինք այդ մասին։

— Եւ մեծատորներուն համար հնազանդութիւնդ։ Երբ մարդ զինուոր եղած է, գիտես, Պէզմօ, որ ցկեանս է զինուոր։

— Ուստի ես ալ ճշդապէս պիտի հնազանդիմ, և վասն առաջ՝ այդուն, կալանաւորն արձակ պիտի ձգուի։

— Վա՞ղը։

— Այդուն։

— Ինչո՞ւ համար այս իրկուն չես արձակեր, քանի որ հրամանագիրը հասցէին և ներսի դին, ոստիկանական գրուած է։

— Վասն զի այս իրկուն կ՚ընթրենք և մենք ալ ստիպողական գործ ունինք։

— Սիրելի Պէզմօ, որչափ որ կօշիկներ հագած եմ, կ՚զգամ որ քահանայ եմ, և գթասիրութիւնն ինձի համար աւելի անհրաժեշտ պարտ մ՚է քան թէ անօթութիւնն ու ծարաւը։ Այդ գժբաղդը բաւական երկար ժամանակ տառապած է, քանի որ հիմակ ըսիր թէ տասն տարիէ 'ի վեր քու թոշակաւորդ է։ Արդ տառապանքը կարճեցուր։ Գեղեցիկ աւետարեր վայրկեան մ՚ունի, շուտ մը տուր անոր այդ վայրկեանը. և Աստուած անոր փոխարէնը պիտի

տի հատուցանէ քեզի երկար երանելի տարիներ իր արքայութեան մէջ։

— Միթէ այդպէս կ'ուզես։

— Կ'աղաչեմ նաև։

— Այսպէս, ընթրիքի մէջ տեղը։

— Կ'պաղատիմ քեզ, այդ գործը տան տնտեսուհիին կ'արժէ։

— Թող փափաքդ կատարուի։ Միայն պաղ պիտի ուտենք կերակուրը։

— Ո՛հ, փոյթ չէ ամենևին։

Պէզմօ եաևի կողմը ծռեցաւ Ֆրանսուան կոչելու համար հընչակը զարնելով, և բոլորովին բնական շարժումով մը դէպ 'ի դուռը դարձաւ։

Հրամանագիրը սեղանին վրայ կեցած էր։ Արամիս պատեհ առիթ մը բռնելով այն վայրկեանն երբ Պէզմօ ուրիշ տեղ կ'նայէր նոյն թուղթն առաւ և ուրիշ թուղթ մը տեղը դրաւ, մի և նոյն կերպով ծալլուած, և զայն գրպանէն հանեց։

— Ֆրանսուա — ըսաւ կառավարիչը — ըսէ հաղարապետին որ վեր դայ Պէրդօտիէրի փականակիններով։

Ֆրանսուա դուրս ելաւ խոնարհութիւն ընելով, և երկու կոչնականները մնակ մնացին։

Թ

ՈՒԽՏԻՆ ՋՕՐԱՊԵՏԸ

Երկու սեղանակիցներու մէջ պահ մը լռութիւն տիրեց, և նոյն պահուն Արամիս կառավարիչն աչքէն չհեռացուց։ Կառավարիչն այնքան յօժարամիտ չէր իր ընթրիքին ատեն սեղանէն ելնելու, և ակն յայտնի էր որ հիմնաւոր կամ անհիմն պատճառ մը կ'փընտռէր որպէս զի գործը մինչև աղանդերին ուշացնէ։ Յանկարծ կարծեաց թէ այս պատճառը գտաւ։

— Է՛հ, բայց — գոչեց նա — անկարելի է։

— Ի՞նչպէս անկարելի — ըսաւ Արամիս։ — Խօսէ նայինք, տիրելի բարեկամ, ի՞նչ բան անկարելի է։

— Անկարելի է բանտաւորն ազատ ձգել այս ժամուս։ Ո՞ր պիտի երթայ այն որ Բարիզը չճանչեր։

— Ո՛ւր որ կ'ուզէ թող երթայ։

— Բայց դիտէ՞ մի անգամ, կոյր մ'արձակելու կ'նմանի։

— Կառք մ'ունիմ և ուզած տեղը կրնամ տանիլ զանի։

— Ամէն բանի պատասխան մ'ունիս . . . : Ֆրանսուա, ըսէ հաղարապետին որ երթայ Սէլուօնի բանտը բանայ, թիւ 3, Պէրդօտիէր։

— Սէլուօն — ըսաւ Արամիս շատ պարզմտութեամբ։ — Կարծեմ թէ Սէլուօն ըսիր։

— Այո՛, Սէլուօն ըսի, այն անձին անունն է որու ազատութիւն կ'տրուի։

— Ո՛հ, Մարքիալին ըսել կ'ուզես — յարեց Արամիս։

— Մարքիալի։ Աղբոր բան։ Ո՛չ, ո՛չ, Սէլուօն։

— Կարծեմ թէ կ'սխալիս, պ. Պէզմօ։

— Հրամանագիրը կարդացի։

— Ես ալ նոյնպէս։

— Սապէս խոշոր տառերով գրուած Սէլուօն կարդացի։

Եւ պ. Պէզմօ իր մատը կ'ցուցնէր։

— Ես Մարքիալի կարդացի սապէս խոշոր տառերով։

Եւ Արամիս երկու մատերը կ'ցուցնէր։

— Լաւ, խնդիրը լուսաբանենք — ըսաւ Պէզմօ իր խօսքին վերայ վստահ։ — Թուղթն ահա այս տեղն է և բաւական է միայն զայն կարդալ։

— Ես կ'կարդամ «Մարքիալի» — վրայ բերաւ Արամիս, թուղթը պարզելով — աւասիկ նայէ։

Պէզմօ նայեցաւ և իր թեւերը վար ընկան։

— Այո՛, այո՛ — ըսաւ նա դեմին անցած — այո՛, Մարքիալի։ Ստուգիւ Մարքիալի գրուած է, շատ իրաւ է։

— Ա՛հ։

— Ի՞նչպէս, այն մարդն որու վրայ այնչափ կ'խօսինք։ Ա՞յն մարդը զոր ամէն օր ինձ կ'յանձնարարեն։

— Մարքիալի գրուած է — կրկնեց վերստին անողոքելին Ա-բրամիս։

— Պէտք է խոստովանիմ, տէր իմ, Ճշմարիտը բան մը չեմ հասկընար բնաւին։

— Սակայն աչերո՞ւդ ալ չես հաւատար։

— Ճշմարիտ վկայ, իրօք Մարքիալի գրուած է։

— Եւ գրուած գիրն ալ աղտոր է։

— Այդ նորանշան բան մ'է։ Տակաւին կ'տեսնեմ այն հրամանագիրն և Սէլտոն իրլանտացւոյն անունը։ Այո՛, կ'տեսնեմ, մինչև անգամ կ'յիշեմ որ նոյն անուան ներքև մելանի աղտ մը կար։

— Ո՛չ, մելանի արատ չկայ, ո՛չ, աղտ չկայ։

— Ո՛հ, զարմանք, բայց կար։ Եւ ըսածիս ապացոյցը սա է որ աղտը քերթեցի, վրան աւազ կար։

— Վերջապէս՝ ինչ որ լինի, սիրելիդ իմ Պ. Պէզմօ — ըսաւ Արամիս — և ինչ որ տեսած լինիս, հրամանագիրը ստորագրուած է և կ'պատուիրէ որ Մարքիալին ազատ ձգես, բիծով կամ ոչ։

— Հրամանագիրը կ'պատուիրէ Մարքիալին ազատ թողլու — կրկնեց մեքենապէս Պէզմօ, որ իր խելքը բերելու համար բոլոր Ճիգը կ'թափէր։

— Եւ այդ բանտաւորին ազատութիւն պիտի տաս։ Եթէ սիրդդ կ'ըսէ քեզ որ Սէլտոն ալ արձակես, ահա կ'յայտարարեմ որ քեզի բնաւ դէմ չպիտի կենամ։

Արամիս այս խօսքը շեշտեց ժպիտով մ'որուն հեղնութիւնը ըմբռնեցաւ Պէզմօն սթափեց և անոր արիութիւն տուաւ։

— Տէր իմ — ըսաւ — այդ Մարքիալին Ճիշտ այն բանտաւորն է որու այցի եկաւ անցածն օր մեծասաստ և զաղտնի քահանայ մը, մեր ո-Էոքին մէկ խոստովանահայրը։

— Այդ չգիտեմ, պարոն — պատասխանեց եպիսկոպոսը։

— Սակայն շատ ատեն չէ, սիրելիդ իմ Պ. Հէրպլէյ։

— Իրաւ է, բայց մեր մէջ, պարոն, վայել է որ այսօրուան մարդը չգիտնայ թէ ինչ ըրաւ երէկուանը։

— Ինչ և է — ըսաւ Պէզմօ — կ'երևի թէ ժէզվիդ խոստովանահայրը բարեբաստիկ եղաւ այն մարդուն համար։

Արամիս պատասխան չտուաւ, և նորէն սկսաւ ուսել ու խմել։

Իսկ Պէզմօ սեղանի վրայ եղած բաներուն և ոչ իսկ դպելով, վերստին հրամանագիրն առաւ և անոր ամէն կողմը քննեց։

Այս հետաքննութիւնը՝ սովորական պարագաներու մէջ՝ անհամբեր Արամիսին արիւնը պիտի տաքցնէր անշուշտ, բայց այսպէս պզտիկ բանի համար Վաննի եպիսկոպոսը չէր բարկանար, մանաւանդ ինքնիրեն ըսեր էր թէ վանդաւոր կ'լինէր եթէ բարկանար։

— Պիտի երթաս Մարքիալին ազատելու — ըսաւ նա։ — Ո՛հ, ահա Քսէրէսի ընտիր և հոտաւէտ գինի մը, սիրելիդ իմ կառավարիչ։

— Տէր իմ — պատասխանեց Պէզմօ — Մարքիալի բանտաւորը պիտի ազատ ձգեմ երբոր մի անգամ՝ հրամանագիրը բերող սուրհանդակին հետ խօսիմ, և մանաւանդ երբ հարցաքննելէն ետև՝ ապահով լինիմ...։

— Հրամանագիրները զմռսած են և սուրհանդակն անոնց բովանդակութեան անտեղեակ է։ Ի՞նչ բան ուզուզել կ'ուզես, կ'աղաչեմ։

— Թող ըսածդ Ճիշտ լինի, տէր իմ, բայց պաշտօնէին մարդ պիտի ղրկեմ և այն ատեն Պ. Լիօն հրամանը պիտի ետ առնու կամ հաստատէ։

— Ի՞նչ օգուտ ունին այս ամէն բաներն — ըսաւ Արամիս պաղութեամբ։

— Ինչ օգո՞ւտ։

— Այո՛, կ'հարցնեմ թէ ի՞նչ բանի կ'ծառայէ։

— Այս բանս կ'ծառայէ ինձ չսխալելու, տէր իմ, ամէն արբանեկի իր մեծաւորներու պարտուպատշաճ յարգը տալու, և երբէք ստանձնուած ծառայութեանց դէմ չգործելու կ'օգտէ։

— Շատ լաւ, այնպէս ճարտասանութեամբ խօսեցար որ վրադ զմայլեցայ։ Իրաւ է, արբանեակ մը պարտաւոր է յարգել իր մեծաւորները, յանցաւոր է եթէ սխալի, և կ'պատժուի եթէ իր ծառայութեան պատկանող պարտաւորութեանց դէմ գործէ։

Պէզմ եպիսկոպոսին նայեցաւ զարմանօք։

— Ուրախ կ'հետևի — շարայարեց Արամիս — որ խոշիպ գէմ քան մը չգործելու համար պիտի խորհուրդ հարցնես։

— Այո՛, տէր իմ։

— Եւ եթէ մեծաւոր մը քեզ հրամայէ, պիտի հնազանդիս։

— Տարակոյս մի՛ ունենար այդ մասին, տէր իմ։

— Մինթէ թագաւորին ստորագրութիւնը կ'ճանչնս, Պ. Պէզմ։

— Այո՛, տէր իմ։

— Մինթէ այս արձակման հրամանագրին վրայ չէ՞։

— Ստոյգ է, բայց կրնայ լինիլ...։

— Որ շինծու լինի, այնպէս չէ՞։

— Տեսնուած բան է այդ, տէր իմ։

— Իրաւունք ունիս։ Հապա Պ. Լիոնին ստորագրութիւնը։

— Հրամանագրին վրայ բացորոշ կ'տեսնեմ, բայց ինչպէս որ թագաւորին ստորագրութիւնը կեղծել կարելի է, ևս առաւել կարելի է կեղծել Պ. Լիոնինը։

— Տրամաբանութեան մէջ հսկայաքայլ յառաջ կ'երթաս; Պ. Պէզմ — ըսաւ Արամիս — և այդ պատճառաբանութիւնդ անընկճելի է։ Բայց այս ստորագրութիւնները շինծու համարելու համար ինչ պատճառներ ունիս։

— Սա պատճառը. ստորագրողներուն բացակայութիւնը։ Նորին Վեհափառութեան ստորագրութիւնը ստուգող բան մը չկայ, և Պ. Լիոնն ալ ներկայ չէ ըսելու համար ինձ որ ստորագրեց։

— Լաւ ուրեմն, Պ. Պէզմ — ըսաւ Արամիս, իր արծուի նայուածքը կառավարչին վրայ յառելով — այնչափ անկեղծութեամբ կասկածներդ կ'ընդունիմ նոյնպէս զանոնք լուսաբանելու եղանակդ, որ գրիչը ձեռքս պիտի առնում եթէ հաճիս տալու։

Պէզմ գրիչ մը տուաւ։

— Սպիտակ թուղթ մ'ալ — յարեց Արամիս։

Պէզմ թուղթն ալ տուաւ։

— Ահա ես նաև, ես ալ ներկայ եմ, ես որ անժխտելի եմ, այնպէս չէ՞, հրամանագիր մը պիտի գրեմ որ պիտի հաւատ ընծայես անշուշտ, որչափ թերահաւատ լինիս։

Պէզմ այս սառնագին վստահութեան առջև գոյնը նետեց։ Այնպէս երևցաւ իրեն որ Արամիսի ձայնը, Արամիս որ քիչ մ'առաջ այնքան ծիծաղերես և զուարթ էր, սգալի և չարագուշակ դարձեր էր, թէ աշտանակներուն մոմը գերեզմանական մատուռի մը մոմեր կ'դառնային, և թէ բաժակներուն գինին արեան կ'փոխուէր։

Արամիս գրիչն առաւ և գրեց։ Պէզմ՝ ահաբեկ անոր ուսին նայելն կ'կարդար։ «Վ. Մ. Փ. Ա.» գրեց եպիսկոպոսը, և այս չորս տառերուն ներքև խաչ մը նշանակեց, որ կ'նշանակէր Վասն Մեծապոյն Փառացն Աստուծոյ։ Ապա շարունակեց. «Մեր կամքն է որ Պ. Պէզմի, Պաստիլի կառավարչին եկած հրամանագիրն իր կողմէ ստոյգ և վաւերական համարուի և անմիջապէս 'ի գործ դրուի։

«Ստորագրեալ. ՀԵՐՊԼԷՑ

«Աստուծոյ ընտրեալ Ուխտին զբաղեցը»

Պէզմ այնքան սարսափ զգայ, որ դէմքը կարկամած, շրթունքը բաց և աչերն անթարթ մնային, ոչ շարժում մ'ըրաւ և ոչ ձայն մը հանեց։

Ընդարձակ սրահին մէջ կ'լսուէր միայն փոքրիկ ճանճի մը բզզումն որ ջահերուն բոլորտիքը կ'թռչռուէր։

Արամիս այս աղէտալի վիճակին դատապարտած անձին նայելու անդամ չզլխնելով, իր գրպանէն մոմ պարունակող փոքրիկ տուփ մը հանեց, գիրը զմռեց, բաճկոնակին ետև՝ կուրծքին վրայ կախուած կնիքն անոր վրայ կոխեց, և երբ գործողութիւնը լմնցաւ, միշտ լռութեամբ Պ. Պէզմի ներկայացուց նամակը։

Պէզմ՝ որու ձեռներն արդահատութեան շարժելու չափ կ'դողդողար, կնքոյն վրայ անշոյլ և խօլական ակնարկ մը շրջեց. իր գլխոյ վրայ յեսին այլայլութեան նշոյլ մ'երևցաւ, և աթոռին վրայ ընկաւ իբրև շանթահար։

— Աղէ, աղէ — ըսաւ Արամիս երկար լռութենէ մ'ետքը, երբոր Պաստիլի կառավարիչը փոքր առ փոքր ինքզինքն կ'դաք — սիրելի Պէզմ, կարծեցնել մի՛ տար ինձ որ Ուխտին զբաղեցին ներկայութիւնն Աստուծոյ ներկայութեան պէս սոսկալի է։

և զանի տնտողը կ՚մռնի։ Սիրտ առ, ոսք ելիր, ձեռքդ ինձի տուր և հնազանդէ։

Պէզմն եթէ ոչ գոհ՝ ապահով լինելով՝ հնազանդեցաւ։ Արամիսի ձեռքը պագաւ և ոսք ելաւ։

— Ա՛նմիջապէս — մրմռաց նա։

— Ո՛հ, մեծ շտապ պէտք չէ, հիւրընկալս, տեղդ նստիր և այս աղուր մրգանուշին պատիւ ընենք։

— Տէր իմ, այս հարուածն երբէք մոռէս չպիտի ելնէ. ես որ քեզի հետ ծիծաղեցայ և կատակ ըրի, ես որ իրրև հաւասարի հետ քեզի հետ վարուեցայ։

— Լուռ կեցիր, իմ վաղեմի ընկերս — պատասխանեց եպիսկոպոսը՝ որ ղղայ թէ որչափ ձկտած էր չուանն և որչափ վատնդաւոր պիտի լինէր զայն կտրելը — լուէ։ Մեզի յատուկ կեանքով ապրինք իւրաքանչիւրը. քեզի կ՚նուիրեմ իմ պաշտպանութիւնս և բարեկամութիւնս, դու ինձ ցոյց տուր հնազանդութիւնդ։ Այս երկու հարկերս ճշդապէս վճարելէն ետև՝ ուրախութեան մէջ ապրինք։

Պէզմն մտածեց. մէկ նայուածքով տեսաւ թէ ինչ հետևութիւններ պիտի ծագին բանտաւորի մը բուն ազատութենէ սուտ հրամանագրի մը միջոցաւ, և զօրապետին պաշտօնական երաշխաւորութեան հետ բաղդատելով՝ անոր մեծ կշիռ մը չտուաւ։

Արամիս դուշակեց այս բանս։

— Սիրելիդ իմ Պէզմն — ըսաւ նա — տպուշ մ՚ես։ Մտածելու սովորութիւնդ մոռցիր, քանի որ ես քու տեղդ խորհելու ծանրութիւնը կ՚առնում։

Եւ նոր շարժում մ՚ընելուն՝ Պէզմն նորէն խոնարհութիւն ըրաւ։

— Ի՞նչ ճամբայ բռնել պէտք է — ըսաւ նա։

— Ի՞նչ կ՚ընես բանտաւոր մ՚ազատելու համար։

— Կանոնագիրն ունիմ։

— Լաւ ուրեմն, սիրելիդ իմ, կանոնագրին հետևէ։

— Հազարապետիս հետ բանտաւորին սենեակը կ՚երթամ, և կ՚առնում զանի կ՚բերեմ եթէ կարևորութիւն ունեցող մարդ մ՚է։

— Բայց այդ Մարքիալին կարևորութիւն ունեցող մարդ մը չէ կարծեմ — ըսաւ Արամիս անհոգս։

— Զգիտեմ — պատասխանեց կառավարիչը։

Որպէս թէ ըսէր.

— Ուրեմն, եթէ չգիտես, իրաւունք ունիմ. ուստի ինչպէս փոքր մարդոց հետ՝ նոյնպէս վարուէ այս Մարքիալին հետ։

— Լաւ, կանոնագիրը կ՚ցուցնէ։

— Ա՛հ։

— Կանոնագիրը կ՚ըսէ թէ փականակիրը կամ ստորին սպաներէն մին բանտաւորը կ՚առնու և կառավարչին կ՚բերէ արձանագրութեան սենեակը։

— Լաւ ուրեմն, այս շատ օրինաւոր է։ Ապա։

— Ապա, նոյն բանտաւորին կ՚յանձնենք իր հետը բերած արժէք ունեցող առարկաները, ինչպէս զգեստները, թղթերը, եթէ պաշտօնէին հրամանն այս մասին տարբեր անօրէնութիւն մ՚ըրած չէ։

— Այս Մարքիալին նկատմամբ ինչ կ՚ըսէ հրամանագիրը։

— Ո՛չ ինչ. վասն զի այն խեղճն առանց գոհարի, առանց թղթերու, զրեթէ առանց զգեստի եկաւ այս տեղ։

— Դայէ ուրեմն ի՞նչպէս գործը պարզ է։ Ճշմարիտը, Պէզմն, ամէն բանի մէջ ճիւաղներ կ՚տեսնես։ Ուրեմն ասա կեցիր, և բանտաւորը կառավարչին պաշտօնատունը բերել տուր։

Պէզմն հնազանդեցաւ։ Իր տեղակալը կոչեց, անոր հրաման մը տուաւ, և այս ալ առանց այլայլութեան՝ առ որ անկն է հաղորդեց։

Կէս ժամ ետք՝ բակին մէջ դրան մը փակուիլը լսուեցաւ։ Ղնդանին դուռն է, որմէ իր որսն ազատ օդին կ՚հանէր։

Արամիս սենեակը լուսաւորող բոլոր մոմերը մարեց, հատ մը միայն թողուց՝ դրան ետին։ Այս դողդոջուն լոյսը չէր թողուր որ աչքն առարկաները զանազանէ, այլ անոնց տեսքն ու գոյները կ՚տատնապատկէր իր անորոշ և շարժուն նշոյլովը։

Բայլափոխները մօտեցան։

— Մարդկոյ դիմաւորէ — ըսաւ Արամիս Պէզմնին։

Կառավարիչը հնազանդեցաւ։

Յիսնապետն ու փականակիրներն անհետացան։

Պէզմ ներս մտաւ, բանտաւորին ետևէն գալով։

Արամիս ստուերին մէջ կեցեր էր. կ'նայէր առանց տեսնելու։

Պէզմ վրդովեալ ձայնով մը՝ այս երիտասարդին իմացուց իրեն աղատութիւն տուող հրամանը։

Բանտաւորը մտիկ ըրաւ առանց շարժում մ'ընելու և բառ մը արտասանելու։

— Պիտի երդում ընես, այսպէս կ'պահանջէ կանոնագիրը — յարեց կառավարիչը — Պասդիլլի մէջ ինչ որ տեսար և լսեցիր դուրսը մարդու մը չյայտնելու։

Բանտաւորը Քրիստոսի պատկեր մը տեսաւ, ձեռքը կարկաչեց, և շրթերովն երդում ըրաւ։

— Այժմ, պարոն, ազատ ես, ուր մտադիր ես երթալու։

Բանտաւորը գլուխը դարձուց, որպէս թէ իր ետևէն ակնկալած պաշտպան մը կ'փնտռէր։

Այն ատեն Արամիս ստուերէն դուրս եկաւ։

— Ատսիկ եմ — ըսաւ — որպէս զի խնդրած ծառայութիւնը մատուցանեմ այս պարոնին։

Բանտաւորը թեթև մը կարմրեցաւ, և առանց վարանման՝ գնաց իր թևն Արամիսի թևէն անցուց։

— Աստուած քեզ իր սուրբ պահպանութեան ներքև առնու — ըսաւ նա ձայնով մ'որ, հաստատութեամբը, կառավարչին դող տուաւ, ինչպէս որ այս բանաձևն իրեն զարմանք պատճառեր էր։

Արամիս Պէզմի ձեռքը սեղմելով՝ անոր ըսաւ.

— Իմ հրամանս քեզ կ'նեղէ, միթէ կ'վախնաս որ քովդ կը գտնեն եթէ երբէք պրպտեն։

— Կ'փափաքիմ պահելու զայն, տէր իմ — ըսաւ Պէզմ։ — Եթէ իմ քովս գտնէին, այս ստոյգ նշան մը պիտի լինէր որ պիտի կորստիմ, և այս պարագայիս մէջ հղօր և յետին օգնական մը պիտի լինէիր ինձի համար։

— Քու զատակիցդ լինելովս, ըսել կ'ուզես — պատասխանեց

Արամիս ուսերը բարձրացնելով։ — Մնաս բարեաւ, Պէզմ — ըսաւ անոր։

Ձիերը կ'սպասէին, իրենց անհամբերութեամբ կառքը դղրդելով։

Պէզմ մինչև դրանդին ստորոտն առաջնորդեց եպիսկոպոսը։

Արամիս՝ իր ընկերն իրմէ առաջ կառքը հեծցուց, ապա ինքն ալ հեծաւ, և առանց հրաման տալու կառապանին,

— Քշէ — ըսաւ նա։

Կառքը դաւիթներուն սալաքարին վրայ աղմկով դլորեցաւ։ Սպասի մը՝ ջահ մը կրելով՝ ձիերէն առաջ կ'երթար, և ամէն մէկ պահակայ գնդին հրաման կ'տար որ թոյլ տան անցնելու։

Դուռները բանալու համար անցած միջոցին՝ Արամիսի շունչը կտրեր էր, և կարելի էր իր սրտին բախումը լսել։

Բանտաւորն ալ՝ կառքին մէկ անկիւնն ընկղմած՝ նոյնպէս կենդանութեան նշան մը չէր տար։

Վերջապէս՝ միտներէն աւելի ուժգին ոստում մը ծանոյց որ վերջին սեմն անցան։ Կառքին ետևէն դոցուեցաւ վերջին դուռը, Սէնդ-Անդուանի փողոցինը։ Աջ ու ձախ դին այլ ևս պատ չկար. ամենուրեք երկին, ամենուրեք ազատութիւն, ամենուրեք կեանք։ Ձիերը՝ կորովի ձեռքի մը վարուելով՝ ծանր ծանր հասան մինչև արուարձանին մէջ տեղը։ Այն տեղ սկսան ընդոստ գնալ։

Փոքր առ փոքր, սեպէ թէ զանոնք կ'քշէին, սեպէ թէ կ'տաքնային՝ արագութիւնն աւելցուցին նժոյգները, այնչափ մեծ էր անոնց եռանդը։

Այս ձիերն այսպէս մինչև Վիլնէօվ-Սէն-Ժորժ վազեցին, ուր որ նոր ձիեր պատրաստեր էին։ Այն ատեն, փոխանակ երկուքի, չորս ձի կառքը քաշեցին Մրլէօնի ուղղութեամբ, և պահ մը կայ ատեն Սէնարի անտառին մէջ տեղը։ Անտարակոյս պէտք եղած հրամանը կանխաւ տրուած էր կառապանին, վասն զի Արամիս նշան մ'ընելու անգամ պէտք չունեցաւ։

— Ի՞նչ կայ — հարցուց բանտաւորը, որպէս թէ երկար երազէ մը կ'սթափէր։

— Այս կայ, տէր իմ — ըսաւ Արամիս — որ աւելի հեռուն

քշելէն առաջ, Ձեր արքայական Բարձրութիւնն ինձի հետ խօսելու պէտք ունի։

— Պատեհ առթին պիտի սպասեմ, պարոն — պատասխանեց պատանին։

— Ասկից լաւագոյն առիթ մը չկայ, տէր իմ, աւասիկ անտառին մէջն ենք, ոչ ոք կարող է մեզի մտիկ ընելու։

— Հապա կառավարը։

— Այս իջևանին կառապանը խուլ և համր է, տէր իմ։

— Քեզի մտիկ կ'ընեմ, Պ. Հէրպլէյ։

— Այս կառքին մէջ մնալ հաճելի՞ է ձեզի։

— Այո՛, այս տեղ աղէկ ենք, և այս կառքը կ'սիրեմ, վասն զի այս բերաւ ինձ աղատութեան։

— Սպասեցէք, տէր իմ. . . ուրիշ զգուշութիւն մը կայ առնելու։

— Ի՞նչ զգուշութիւն։

— Այս տեղ մեծ ճամբուն վրայ ենք, կարելի է մեզի պէս ուղևորող ձիաւորներ կամ կառքեր ասկից անցնին, և երբ մեզ այսպէս կայ առած տեսնեն, թերևս նեղութեան մէջ ընկած կարծեն։ Ուստի ծառայելու եկող մարդկանէ հեռու կենանք որ կըրնան մեզ նեղել։

— Հրաման տուր կառապանին կառքը կողմնակի անցքի մը մէջ պահելու։

— Ես ալ ճիշտ այդ պիտի պատուիրէի, տէր իմ։

Արամիս նշան մ'ըրաւ համրին անոր դպելով։ Համր կառապանը վար իջաւ, երկու առաջին ձիերը սանձէն բռնեց, և դալարաւէտ հաւամրդի մը մէջ՝ ոլորուտ ծառուղիի մը լօռուտ խոտին վրայ տարաւ, որու խորը, այս անլուսին գիշերուան մէջ, ամպերն աւելի սև վարագոյր մը կ'յօրինէին քան թէ մելանի ասրանները։

Այս ընելէն ետև՝ մարդը զառիթափի մը վրայ՝ ձիերուն մօտ երկնցաւ, որոնք աջ ու ձախ գիւղն նորարոյս կաղիններ կ'խլէին։

— Քեզի մտիկ կ'ընեմ — ըսաւ նորատի արքայազունն Արամիսին — բայց դու ի՞նչ կ'ընես այդ տեղ։

— Հրացանակիները զինաթափ կ'ընեմ քանի որ ա՛լ պէտք չունինք, տէր իմ։

Ժ

ՓՈՐՁԻՔ

— Իշխանդ իմ — ըսաւ Արամիս՝ կառքին մէջ՝ իր ընկերին կողմը դառնալով — որչափ որ տկար արարած մ'եմ, որչափ որ կարճամիտ եմ, թէև խորհող էակներու մէջ ստորին եմ, երբէք պատահած չէ ինձ որ մարդու մը հետ խօսելէն ետև՝ չթափանցեմ իր միտքը՝ մեր իմայականութիւնը քօղարկող այն կենդանի գիմակին վրայէն։ Բայց այս իրկուն այս մեր գտնուած ստուերին մէջ, այդ զգուշաւորութեան մէջ զոր կ'ցուցնես, չեմ կարող կերպարանիդ վրայ բան մը կարդալ, և բան մը կ'ըսէ ինձ որ դժուարաւ բերնէդ անկեղծ խօսք մը քաղելու պիտի յաջողիմ։ Ուրեմն կ'պաղատիմ ձեզ, չէ թէ իմ սիրոյս համար, վասն զի հպատակներն իշխանաց բռնած կշռին մէջ բան մը չեն արժեր, այլ ձեր սիրոյն համար կ'պաղատիմ որ իմ խօսքիս ամէն մէկ վանկը մտքերնիդ պահէք, ամէն մէկ ձայնի հնչումն, որոնք այս մեր գտնուած ծանրակշիռ պարագայիս մէջ իրենց իմաստն ու արժէքը պիտի ունենան, այնչափ կարևոր խօսքեր՝ զոր երբէք աշխարհիս մէջ չէ արտասանուած։

— Մտիկ կ'ընեմ — կրկնեց իշխանը հաստատամտութեամբ — առանց բան մը փառասիրելու, և առանց խօսելիքէդ երկնչելու։

Եւ աւելի խորը լարուեցաւ կառքին թանձր բարձերուն մէջ, իր ընկերէն թագուն պահելու ջանալով՝ ոչ միայն իր անձին տեսքն այլ նոյն իսկ իր ներկայութիւնը։

Ստուերը սև էր՝ և լայնօրէն ու թանձր կ'իջնէր՝ իրարու հետ հիւսուած ծառերէ։ Այս կառքը, ընդարձակ առասպելով մը ծածկուած լինելով, լուսոյ ամենաթեթև նշոյլը չպիտի ընդունէր եթէ երբէք լուսաւոր բիծ մ'անդամ սպրդեր մշուշի սիներու մէջէն որ անտառին անցքին մէջ կ'պարզուէր։

— Տէր իմ — շարայարեց Արամիս — դուք գիտէք այսօր Ֆրանսան վարող կառավարութեան պատմութիւնը։ Թագաւորն ստրկական մանկութենէ մ'ելաւ, ինչպէս որ ձերն եղած էր, խաւարին՝ ինչպէս որ եղած էր ձերինը, անձուկ՝ ինչպէս որ ձերինն եղած էր։ Միայն՝ փոխանակ ձեզի պէս բանին զերութիւնն ունենալու, առանձնութեան խաւարը, թագուն կենաց անձուկը, ստիպուեցաւ իր բոլոր թշուառութիւնները, իր բոլոր նուաստութիւնները, իր բոլոր նեղութիւնները տանիլ՝ ցերեկ առեն, թագաւորութեան անողորմ արևուն մէջ. լուսավողողուած վայր մ'ուր մէն մի բիծ ժժգոյն տիղմ մը կ'երևի, ուր ամէն փառք արատ մը կ'երևի։ Թագաւորը նեղութիւն քաշեց, ոխ ունի, պիտի վրէժ լուծէ։ Անշահ թագաւոր մը պիտի լինի։ Զեմ ըսեր թէ Լուի ԺԱի կամ Շարլ Թին պէս արիւն պիտի թափէ, վասն զի մահատու նախատանաց վրէժ չունի լուծելու, բայց իր հպատակացը գրամն ու ապրուստը պիտի լափէ, վասն զի շահու և սակի նկատմամբ նախատինք կրեց։ Ուստի նախ խիղճս հանգարտ կ'պահեմ երբ դէմ առ դէմ կ'տեսնեմ այս իշխանին արժանիքն ու զերութիւնները, և եթէ զանի դատապարտեմ, խիղճս ինձ կ'ներէ։

Արամիս կայ մ'առաւ, չէ թէ մտիկ ընելու համար թէ արդեօք անտառին մէջ մի և նոյն լուութիւնը կ'տիրէ՞, այլ իր մտաց խորէն խորհուրդը դադրելու համար էր, այս նորատի ոգւոյն ժամանակ տալ էր որ իր մտքին խորը դրոշմ ըսածները։

— Աստուած ինչ որ կ'ընէ լաւ կ'ընէ — շարունակեց Վանի եպիսկոպոսը — և ասոր վրայ այնքան համոզուած եմ որ 'ի վաղուց պարծեցած եմ որ իր կողմէ իբրև աւանդապահ կացոյց զիս այն դաղտնեաց զոր իմ օգնութեամբս երևան հանեցիք։ Արդարութեան և նախատեսութեան Աստուծոյն սուր, երկայնամիտ, համոզեալ գործի մը կարևոր էր մեծ գործ մ'ի կատար հանելու համար։ Այս գործին ես եմ։ Սրամտութիւն ունիմ, երկայնմտութիւն ունիմ, համոզումն ունիմ. խորհրդաւոր ժողովուրդ մը կը կառավարեմ որ Աստուծոյ նշանարանն ընդունեց իբրև նշանարան։ Patiens quia æternus!.

Իշխանաղունը շարժում մ'ըրաւ։

— Ի՞նչ ուզեցիք, տէր իմ — ըսաւ Արամիս — որ ձեր գլուխը կ'բառնաք և այն ժողովուրդն որու կ'հրամայեմ ձեզ զարմանք կը պատճառէ։ Զէիք գիտեր որ թագաւորի մը հետ կ'բանակցիք։ Ո՛հ, տէր իմ, խիստ խոնարհ, խիստ անժառանգ ժողովրդեան մը թագաւորն եմ. խոնարհ, վասն զի սողալով միայն այժ ունի, անժառանգ, վասն զի երբէք, գրեթէ իմ ժողովուրդս երբէք իր ցանած հունձքը չ'հնձեր, մշակած պտուղը չուտեր։ Վերացականութեան մը համար կ'աշխատի, իր զօրութեան բոլոր մասունքը կ'ժողովէ անկից մարդ մը շինելու, և այս մարդուն, իր քրտանց կաթիլներուն հետ՝ ամոլ մը կ'յօրինէ, որմէ ըստ կարգի սոյն մարդուն հանճարը լուսաճաճանչ պսակ մը պիտի շինէ, բոլոր քրիստոնեայ աշխարհին թագերուն Ճառագայթով ոսկեզօծեալ։ Ասասիկ այս մարդն է որ ձեր քոմն ունիք, տէր իմ։ Այս կ'նշանակէ որ մեծ խորհրդով մը ձեզ անդունդէ մը հանեց, և այս փառաւոր խորհրդով, կ'ուզէ ձեզ երկրի իշխանութեանց վրայ, ինքն իր վրայ բարձրացնել։

Իշխանաղունը կամացուկ մ'Արամիսի թեւն դպաւ։

— Դու ինձ կ'խօսիս այն կրօնական ուխտին վրայ, որու գլխաւորը դու ես։ Այս խօսքէդ սա կ'հետևցնեմ այն օրն որ բարձրացուցած անձդ դահավիժել ուզես, այդ փափաքդ պիտի կատարուի, և ձեռացդ ներքև պիտի պահես քու առջի աւուր արարածը։

— Փարատեցէք այդ սխալ կարծիքը, տէր իմ — պատասխանեց եպիսկոպոսը — ես այդ սոսկալի խաղը Ձեր Վեհափառութեան դէմ խաղալու ծանրութիւնը չպիտի առնում, եթէ կրկնապատիկ շահ մը չունենայի գործին յաջողութեան համար։ Ձեր բարձրացած օրն, 'ի սպառ պիտի բարձրանաք, քայլարկը պիտի տապալէք վեր ելնելով, և այնքան հեռուն պիտի գլորէք զայն, որ անոր հետքն անգամ չպիտի յիշեցնէ ձեզ իր իրաւունքը ձեր երախտապիտութեան։

— Ո՛հ, պարոն։

— Ձեր այդ զգացումը, տէր իմ, պատուական բնաւորութեան մ'արդիւնքն է։ Շնորհակալ եմ. հաւատացէք որ երախտագի-

տուԹենէ աւելի մեծ բանի կ՚բաղձամ. ապահով եմ որ երբ կատարն հանիք, այն ատեն ձեր բարեկամը լինելու աւելի արժանի պիտի դատէք զիս, և այն ատեն 'ի միասին մեծ մեծ գործեր պիտի ընենք որոց վրայ շատ դարեր պիտի խօսին։

— Ըսէ ինձ, պարոն, առանց վարանելու ըսէ ինձ Թէ ինչ եմ այսօր և ինչ կարծէք որ պիտի լինիմ վաղը։

— Դուք Լուի ԺԳ Թագաւորին որդին էք, դուք Լուի ԺԳ Թագաւորին եղբայրն էք, դուք Ֆրանսայի գահուն բնական և օրինաւոր ժառանգորդն էք։ Թագաւորը ձեզ իր մօտ պահելով, ինչպէս որ եղբայրը պահեց, այսինքն ձեր կրտսեր եղբայրը, օրինաւոր վեհապետ լինելու իրաւունքն իրեն կ՚վերապահէր։ Բժիշկներն ու Աստուած միայն կարող էին ժխտել անոր հարազատութիւնը։ Բժիշկները միշտ լաւագոյն կ՚սիրեն եղած քան լինելիք Թագաւորը։ Աստուած անիրաւ պիտի լինէր պարկեշտ Թագաւորի մը վնասելով։ Բայց Աստուած ուզեց որ ձեզ հալածեն, և այդ հալածանքը ձեզ այսօր Ֆրանսայի Թագաւոր կ՚օծէ։ Ուրեմն իշխելու իրաւունք ունէիք, քանի որ զայն վէճի ներքև կ՚դնեն, ունէիք Թագաւոր հրատարակուելու, քանի որ ձեզ կ՚կաշկանդեն. ուրեմն երկնային արիւն ունիք, քանի որ չիշխեցին արիւնդ Թափել ձեր սպասաւորներուն պէս։ Այժմ, նայեցէք Թէ ինչ ըրաւ ձեզի համար Աստուած զոր քանիցս ամբաստանեցիք այնչափ չարիք ընելուն ձեզի դէմ։ Ձեզի տուաւ ձեր եղբօրը դէմքը, հասակը, տարիքն ու ձայնը, և ձեզի դէմ եղած հալածանաց պատճառները ձեր յաղթական յարուԹեան պատճառները պիտի դառնան։ Վաղը, միւս օր, առաջին ատեն՝ Լուի ԺԳի իբրև աբքայական ճիւաղ, կենդանի ոտուեր՝ անոր ամբոխին վրայ պիտի բազմիք, այն ամբոխը՝ ուսկից Աստուծոյ կամքը՝ մարդու մը բազկին յանձնուելով՝ պիտի գահավիժէ զայն անյարիր։

— Կ՚իմանամ — ըսաւ աբքայորդին. — իմ եղբօրս արիւնը չպիտի Թափեն։

— Իմ ճակատագրիս իրաւարարը պիտի լինիք։

— Այն գաղտնիքը զոր ինձի դէմ չարաչար գործածեցին...։

— Անոր հետ պիտի գործածէք։ Զայն պահելու համար ինչ ՝ի՚ընէր. ձեզ կ՚պահէր։ Դուք անոր կենդանի նկարը լինելով՝ Մաղարէնի և Աննա Թագուհւոյն զաւակրութիւնը պիտի երևան հանէք։ Դուք, իշխանազունս, նոյն շահը պիտի ունենաք ձեզի իբրև բանտաւոր նմանողը պահելու, որչափ որ իբրև Թագաւոր անոր պիտի նմանիք։

— Իմ արդէն ըսածիս կ՚վերադառնամ։ Ո՞վ պիտի պահէ զանի։

— Ո՞վ ձեզ կ՚պահէր։

— Այս գաղտնիքը գիտես, ինձի համար գործածեցիր. ուրիշ ոչ կայ գիտցող։

— Մայր Թագուհին և տիկին Շէվրէօզ։

— Ի՞նչ պիտի ընեն անոնք։

— Թերևս, ո՛չ ինչ։

— Ինչպէս։

— Ի՞նչպէս պիտի ճանչեն ձեզ, եԹէ այն կերպով շարժիք որ ձեզ չճանչեն։

— Իրաւ է. բայց աւելի ծանր դժուարութիւններ կան։

— Ըսէք, արքայորդիս։

— Եղբայրս կարդուած է, չեմ կարող եղբօրս կիներն առնուլ։

— Այնպէս պիտի ընեմ որ արձակման մը հաւանի Սպանիան. ձեր նոր քաղաքականութիւնն այսպէս կ՚պահանջէ. այս է մարդկային բարոյականը։ Ամէն ինչ որ ճշմարտապէս ազնիւ և ճշմարտապէս օգտակար է այս աշխարհիս մէջ իր շահը պիտի գտնէ անոր մէջ։

— Երբ մի անգամ Թագաւորը բանտարկուի, պիտի խօսի։

— Որո՞ւ կ՚ուզէք որ խօսի. պատերո՞ւն։

— Պա՞տ կ՚անուանէք այն մարդիկն որոց վրայ վստահութիւն պիտի ունենաք։

— Ի հարկին, այո՛. ասկէ զատ՝ վեհափառ արքայ։ Ասկէ զատ...։

— Ասկէ զատ...։

— Կ՚ուզէի ըսել Թէ Աստուծոյ խորհուրդներն այսպէս կէս ճամբան չեն մնար։ Այս մեծ կարևորութիւն ունեցող յատակագիծն արդիւնքովը կ՚լրանայ, երկրաչափական հաշուի մը պէս։ Երբ

թագաւորը մի անգամ բանտարկուի՝ չպիտի նեղէ ձեզ ինչպէս դուք կ՚նեղէք տիրող թագաւորը։ Աստուած այս հոգին 'ի բնէ գոռող և անհամբեր ստեղծեց. ասկից զատ՝ վեհապետական իշխանութեան կիրառութեամբն և պատիւներու սովորութեամբ զանի մեղկացուց և զինաթափ ըրաւ։ Աստուած որ կ՚ուզէր՝ ձեզ արդէն իմ խօսած երկրաչափական հաշուին վախճանը լինի ձեր բարձրանալն 'ի գահն և ձեզի ամէն ճեասակար եղած բաներուն կործանումը, որոշեց որ յաղթեալն իր տառապանքը ձերինին հետ վերջացնէ։ Ուստի այս հոգին և այս մարմինն այնպէս պատրաստեց որ հոգեվարքը կարճ տևէ։ Դուք բանտ մնալով իրրև պարզ մարդ, ձեր կասկածներով ամէն հաղորդակցութենէ հեռու, ամէն բանէ զուրկ, և չարքաշ կեանք մը վարելու վարժ՝ մահուան դիմադրելու կարող եղաք։ Բայց ձեր եղբայրը, գերի, մուցուած, նեղն ընկած՝ չպիտի տոկայ այս նախատանաց, և Աստուած անոր հոգին պայմանեալ ժամանակին պիտի առնու, այսինքն քիչ առնէն։

Արամիս այս խօսքը քննութիւնն ընելու միջոցին՝ գիշերային թռչուն մը՝ անտառներուն խորէն ողբալի և երկարատև աղաղակ մը ձգեց որ ամէն արարածի գոռ կ՚աղդէ։

— Անկեալ թագաւորը պիտի աքսորեմ — ըսաւ Գիլիպ սաբառելով — այս աւելի մարդասիրական գործ մը պիտի լինի։

— Թագաւորիդ կամքը պիտի որոշէ խնդիրը — պատասխանեց Արամիս. — միթէ ինդիրը լաւ չառաջարկեցի, միթէ Ձեր արքայական Բարձրութեան վիճաբին կամ նախատեսութեան համամատ չլուծեցի։

— Այո՛, պարոն, այո՛, ոչ ինչ չմոռցար, բայց եթէ երկու բան։

— Առաջինն ինչ է։

— Խօսինք խկոյն այս կիսին վրայ այն անկեղծութեամբ զոր մեր խօսակցութեան մէջ կ՚ցուցնինք, խօսինք այն պատճառներուն վրայ որ մեր յղացած յոյսերը կրնան 'ի դերև հանել, խօսինք այն վտանգներուն վրայ որ մեր առջևը կ՚կենան։

— Արդարև այդ վտանգներն ահագին, անբաւ, սոսկալի, անընկճելի պիտի լինէին՝ եթէ՝ ինչպէս որ կ՚ըսէի, ամէն արտաքին պարագաները զանոնք բոլորովին կործանելու ընկրտէին։ Ոչ ձեզի և ոչ ինձի համար վտանգ կայ՝ եթէ Ձեր արքայական Բարձրութեան հաստատամտութիւնն և անվեհերութիւնը հաւասարին այն կատարեալ նմանութեան զոր Աստուած ձեզի շնորհեց թագաւորին հետ։ Ձեզի կ՚կրկնեմ, չկայ վտանգ, չկայ արգելք։ Այս բառը՝ զոր ամէն լեզուներու մէջ կ՚գտնեմ, միշտ քաջ ըմբռնած չեմ. եթէ թագաւոր լինէի իրրև անիմաստ և անօգուտ բառ պիտի ջնջէի։

— Ի՞նչպէս չէ, պարոն, խիստ ծանր արգելք մը կայ, անընկճելի վտանգ մը զոր կ՚մոռնաս։

— Ա՛հ — ըսաւ Արամիս։

— Խիղճը կայ որ կ՚գոչէ, խայթը կայ որ կ՚պատառէ։

— Այո՛, ճշմարիտ է — ըսաւ եպիսկոպոսը — միայն կ՚բերէք որ սրտի տկարութիւնը կայ։ Ո՛հ, իրաւունք ունիք, ահագին արգելք մ՚է, արդարև։ Փոսէն երկնչող երիվարը մէջ տեղը կը յատակէ և կ՚խորտակի։ Դողդողալով ստոր շարժողը թշնամի սուրին տեղի կ՚տայ որմէ մահը կ՚անցնի։ Իրաւ է, իրաւ է։

— Եղբայր ունիս — ըսաւ պատանին Արամիսի։

— Ես միտակ եմ աշխարհիս վրայ — պատասխանեց Արամիս շոր ու ջլուտ ձայնով մը՝ հրացանակի պայթումին պէս։

— Բայց անտարակոյս մեկը կ՚սիրես աշխարհիս վրայ — յարեց Գիլիպ։

— Ո՛չ զոր։ Բայց, այո՛, ձեզ կ՚սիրեմ։

Պատանին այնպէս խորին լռութեան մէջ ընկաւ որ իր յստուկ շնչին աղմուկն Արամիսի համար դղրդիւն դարձաւ։

— Տէր իմ — ըսաւ նա — տակաւին բոլոր ըսելիքս Ձեր արքայական Բարձրութեան չըսի. դեռ չառաջարկեցի իշխանիդ ինչ շահուէտ և օգտակար խորհուրդներ զոր ունիմ տալու։ Հարկ չկայ փայլակ մը շողացնել այն անձին աչաց որ ստուերը կ՚սիրէ. թնդանօթի շքեղութիւնները հարկ չկայ որոտացնել այն քաղցրաբարոյ մարդուն ականջին որ հանդիստ և դաշտեր կ՚սիրէ։ Տէր իմ, իմ մտքիս մէջ ձեր երջանկութիւնը պատրաստ ունիմ, այժմ

շրթերէս պիտի հանեմ զայն, հաւաքեցէք զայն իրրև անդին բան ձեզի համար, ձեզի որ այնչափ սիրած էք երկին, դալարուտ արտերն և յստակ օդը։ Թերկրալի երկիր մը, անծանօթ դրախտ մը, աշխարհիս մէկ անկիւնը կ'ճանչեմ, ուր դուք միայնակ, ազատ, անյայտ կրնաք ապրիլ՝ և անտառներու, ծաղիկներու, աղբիւրներու մէջ պիտի մոռնաք ինչ որ մարդկային յիմարութիւնը, Աստուծոյ փորձիչը, քիչ մ'առաջ ձեզի շնչին բաներ առաջարկեց, Ո՛հ, մոխիկ ըրէք ինձ, իշխանդ իմ, կատակ չեմ ըներ։ Այո՛, ես ալ հոգի մ'ունիմ, և ձեր հոգւոյն անդունդը կ'դուշակեմ։ Ձեզ չպիտի առնում անկատար և անփորձ իմ կամայս, իմ ինքնահաճութեանս կամ փառասիրութեանս բովին մէջ նետելու։ Ամէն ինչ կամ ոչ ինչ։ Հիւանդ, վատոյժ էք, գրեթէ կ'նուաղիք այս աղատութեան մէկ ժամուն համար չափէն աւելի արտաբերած շնչէդ։ Այդ ինձի համար ստոյգ նշան մ'է որ չպիտի հաճիք երկայն և բացարձակ կերպով շունչ առնուլ։ Ուրեմն աւելի հեղ, ձեր կարողութեան աւելի յարմար կենաց յարկիք։ Տէր վկայ է ինձ, անոր ամենակարողութեան վրայ կ'երդնում որ ձեր երջանկութիւնը պիտի հանեմ այս փորձանքէն ուր ձեզ նետեցի։

— Խօսէ՛, խօսէ՛ — ըսաւ իշխանն այնպիսի աշխուժութեամբ որ Արամիսի մոմնտոք տուաւ։

— Պա—Ռուատուի մէջ կ'ճանչեմ զաւառ մը — ըսաւ եպիսկոպոսը — որու գոյութիւնը Գրանսայի մէջ գրեթէ ոչ ոք գիտէ։ Երկիրը քսան չորս մղոն ընդարձակութիւն ունի, ահագին է, այնպէս չէ՞։ Քսան մղոն, տէր իմ, և ամէն կողմ ջրերով, խոտով և պրտուով ծածկուած է, տեղ տեղ անտառուտ կղզիներով։ Այս մեծ ճահիճները՝ թանձր վերարկուի պէս եղէգներով զոցուած՝ արևուն գեղածիծաղ ճառագայթին ներքև լոյն և խորունկ կ'ննջեն։ Քանի մը ձկնորսի ընտանիքներ գանդաղօրէն կը նաւարկեն անոնց մէջ իրենց կաղամախի և կաղնիի մեծ լաստերով, որոց յատակն եղէգէ շինուած է, որոց ծածկոյթը հաստատուն պրտուներով հիւսուած է։ Այս նաւակները, այս ծփուն տուները հովին շնչէն մղեալ ըստ հաճոյս կ'տահին։ Երբ եզրի

մը մօտենան, դիպուածով և այնպէս թոյլօրէն, որ քնացող ձկնորսը յիշցումն չարթնար։ Եթէ ցամաքն ելնելու կամք ընէ, պատճառն այն է որ բաղմերամ լորամարդի կամ սիրամարդ, բագեր կամ քարապը, մրտիմ կամ կայարներ տեսաւ, զորս կ'որսայ իր վարմով կամ հրայանին գնդակովը։ Արծաթափայլ ձկներ, ահագին օձաձկներ, ջլուտ գայլաձկներ, մանր մանր վարդի և մոխրի գոյն ձկներ առատ առատ իր ուռկանին մէջ կ'թափին։ Աղատ է մեծ ձկներն առնուլ և մնացածը թողուլ։ Երբէք քաղքի մարդ մը, զինուոր մը, երբէք անձ մը չէ մտած այս երկիրս։ Արևն անուշ է անդ։ Տեղ տեղ երկիրն այգեւէտ է և իր աղուոր սպիտակ ու սև ողկոյզները կ'լեցուին պատուական հիւթով մը։ Շարաթը մի անգամ՝ նաւակ մը կ'երթայ՝ հասարակաց մէկ փուռէն գաղջ ու գեղին հացը բերելու որու հոտը հեռուէն կը հրապուրէ և կ'գրգռէ։ Անդ պիտի ապրիք իրրև հինաւուրց մարդ մը։ Ձեր գանդրամաղ շներուն, ուռկաններուն, հրացաններուն և եղէգնեայ աղուոր տան մը զօրաւոր տէրն ու իշխանը դառնալով՝ ճոխ որսերու, անվրդով ապահովութեան մէջ պիտի ապրիք անդ։ Այսպէս շատ տարիներ անցընելէն ետև նոյն վայրը, անճանաչ, այլափոխեալ պիտի դառնաք, և պիտի ստիպէք զԱստուած որ ձեզի ճակատագիր մը յարգարէ։ Սա պարկին մէջ հինգ հարիւր ոսկի կայ, տէր իմ, բոլոր այն երկիրը դնելու համար այս գումարը բաւականէն աւելի է, այս գումարը շատ իսկ է ձեր ունեցած կեանքն անդ վարելու, շատ իսկ է նոյն երկրին ամենէն հարուստ, ամենէն ազատ, ամենէն երջանիկ մարդը լինելու։ Ընդունեցէք զայն ինչպէս որ կ'նուիրեմ ձեզի անկեղծութեամբ և խնդագին։ Ահա այս կառքէն երկու ձի կ'առնուք, իմ համր սպասաւորս ձեզ պիտի առաջնորդէ, գիշերայն քալելով՝ ցերեկը ննջելով, մինչև խօսած երկիրս, և գրեթէ գոհունակութիւն պիտի ունենամ ըսելով իրրովի որ իմ իշխանիս հանած ծառայութիւնը մատուցի։ Այսպէս մարդ մ'երջանիկ ըրած պիտի լինիմ։ Աստուծոյ աւելի հաճելի պիտի լինի այս գործս քան թէ զօրաւոր մարդ մ'ըրած լինէի։ Այս ալ չափազանց դժուար է։ Լա՛ւ, ինչ պատասխան ունիք, տէր իմ։ Աւասիկ դրամը։ Ո՛հ,

մի վարանիք։ Ի Բուատու վանդ չկայ բնաւ, եթէ ոչ տենդէ բռնուիլ։ Բայց գարձեալ երկրին կախարդները ստակի համար կարող պիտի լինին ձեզ բուժել։ Իսկ եթէ միւս դերն ընտրէք, կարելի է գահի մը վրայ սպաննուելու կամ բանտի մը մէջ խեղդամահ կորնչելու վտանգին հանդիպիք։ Հոգւոյս վրայ կ'երդնում, այժմ որ երկու ճամբան ալ քննեցի, իմ մտիս չպիտի վարանէի։

— Պարոն — պատասխանեց պատանին — որոշումս ընելէն առաջ, թոյլ տուր որ կառքէն վար իջնեմ, երկրիս վրայ քալեմ և խորհուրդ հարցնեմ այն ձայնին զոր Աստուած ազատ բնութեան մէջ խօսիլ կ'տայ։ Ցտան վայրկեան տուր ինձ, և ապա պատասխանս կ'իմանաս։

— Յօժարակամ, տէր իմ — ըսաւ Արամիս յարգանօք խոնարհելով, այնքան հանդիսաւոր և վեհապանծ էր այսպէս խօսող ձայնը։

ԺԱ.

ԹԱԳ ԵՒ ԽՈՅՐ

Արամիս պատանիէն առաջ իջնելով գոնակը բացեր էր առնոր։ Տեսաւ զանի որ ոտքը լօռուտ հողին վրայ կ'դնէր բոլոր մարմինը սարսռելով, և կառքին բոլորտիքը քանի մը շփոթ, գրեթէ երերուն քայլեր կ'առնուր։ Կարծես թէ հէք բանտաւորն անվարժ էր մարդկան երկրին վրայ քայլելու։

Օդոստոս ամսեան ն էր, երեկոյեան ժամը տասն մէկին. խոշոր ամպեր՝ որ փոթորիկ կ'սպառնային, երկինքը պատեր էին և իրենց ծալքերուն ներքև ամէն լոյս և հեռանկար կ'ծածկէին։ Հաղիւ թէ ծառուղիներու ծայրերն անտառներէն կ'զատուէին գիմահար սպիտակութեան կիսատուերով մ'որ՝ քիչ մ'ասեն ուշ ուշով քննելէն ետև՝ զգալի կ'դառնար այս կատարեալ մթութեան մէջ։ Բայց գալարիէն ելած անուշ հոտերը, կաղնիներուն

հիւթէն բուրած տեղի կծու և թափանցիկ անուշահոտութիւնը, գաղջ և քաղցր մթնոլորտն որ բոլորովին գինքը կ'շրջապատէր առաջին անգամ այնչափ տարիներէ 'ի վեր, բայց գաշտին մէջ զգացած անպատում խնդութիւնը՝ այնպիսի հրապուրելի լեղու մը կ'խօսէին իշխանին, որ՝ թէև զգոյշ էր յոյժ, և պիտի ըսենք որչափ որ գրեթէ կ'կեղծէր ինչպէս որ բայատրելու փորձ ըրինք, ինքզինքն ակամայ իր այլայլութեան տուաւ և ուրախութեան ճիկ մ'արձակեց։

Ապա, փոքր առ փոքր իր ծանրացած գլուխը վերցուց, և օդին զանազան խառերը շնչեց քանի իր զուարթուն դէմքին կ'զարնէին համեմուտ։ Իր թեւերը լանջին վրայ ծալելով, որպէս թէ չթողու որ պայթի այս նոր երանութեան ծանրութենէ, զմայլելով ծծեց այս անծանօթ օդն որ բարձր անտառներու գմբէթին ներքև գիշերը կ'հոսի։ Այն երկինքը զոր կ'նկատէր, այն ջրերն որոց խոխոջիւնը կ'լսէր, այն տարածներն որոց շարժումը կ'տեսնէր, միթէ իրականութիւնը չէ՞ին։ Մինթէ Արամիս յիմար չէր կարծելով որ այս աշխարհիս մէջ ուրիշ բաներ կան մտածելու։

Այս գեղջական կենաց զմայլեցուցիչ պատկերները՝ ամէն տեսակ հոգերէ, երկիւղներէ և նեղութիւններէ ազատ, այս երջանիկ օրերու ովկիանն որ ամէն նորարոյս երևակայութեան առջև կ'շողշողան, ահա ասոնք են այն ճշմարիտ խայծն որմէ կրնայ բռնուիլ դժբաղդ դերի մը, զնդանին քարէն մաշած, Պաստիլի խիստ նուազ օդէն թառամած։ Ահա այս տեսարանն էր, ինչպէս ընթերցողը կ'յիշէ, զոր Արամիս անոր նկարագրած էր, անոր ընծայելով թէ կառքին պարուհակած հինգ հարիւր ոսկին և թէ այն հմայական Եղեմն զոր մարդկան աչքէն կ'պահէին Պա-Բուատույի անապատները։

Ասոնք էին Արամիսի խորհրդածութիւններն երբոր անբացատրելի անձկութեամբ Փիլիպի լուն բերկրանայ ընթացքը կ'քննէր, և կ'նայէր որ նա հեռացեալ իր խորհրդածութեան անդունդը կ'մղուէր։

Իրաւի՝ նորատի իշխանը բոլորովին վերացած՝ միայն ոտքով երկրին կ'դպէր, մինչեւ հողին՝ Աստուծոյ ոտքը թուելով, կ'պա-

զատէր որ լուսոյ Ճառագայթ մը շնորհէ այս վարանման, ուսկից մահը կամ կեանքը պիտի ելնէր։

Վանի եպիսկոպոսին համար սոսկալի եղաւ այս վայրկեանը։ Այսպիսի մեծ դժբաղդութեան մ՚առջև դեռ ևս չէր գտնուած։ Այս պողովատէ հոգին՝ կենաց մէջ անկայուն խոչնդոտներու դէմ տոկալու վարժ՝ երբէք ստորին կամ նկուն վիճակի մէջ չգտնուելով, այժմ պիտի չյաջողէր արդեօք այնպիսի մեծ խորհուրդ մը՝ի կատար հանելու, վասն զի չէր նախատեսած թէ ինչ աղդեցութիւն կրնայ ունենալ մարդկային մարմնոյ մը վրայ ծառի քանի մը տերևներ՝ քանի մը լեռը օդով սրսկուած։

Արամիս՝ իր տարակուսանաց անձկութենէ մի և նոյն վայրը մնուած կենալով՝ Փիլիպին այս վշտալի հոգեվարքը դիտեց, որ երկու խորհրդաւոր հրեշտակներու դէմ անդուլ կ՚մաքառէր։ Այս տանջանքը տեսեց որչափ որ երիտասարդը խնդրեր էր, այս է տաս վայրկեան։ Այս յաւիտենականութեան տասն՝ Փիլիպ անդադար երկինքը կ՚նայէր աղերսաղին, տխուր և տամուկ նայուածքով մը։ Արամիս ալ անդադար Փիլիպին նայեցաւ անկուշտ, հրաւառ, լափլփող նայուածքով մը։

Յանկարծ պատանւոյն դլուխը խոնարհեցաւ։ Իր միտքը վերստին երկիր իջաւ։ Իր նայուածքը դաժան երևոյթ մը, իր Ճակատը ծալ առաւ, իր բերանը վայրագ արիութեան նշաններ ցցուցուցաց իր ակնարկը վերստին աներեսութ մնաց, բայց այս անդամ աշխարհիկ շքեղութիւններու բոցը կ՚ցոլանար, այս անդամ լեռան վրայ Սատանի նայուածքին կ՚նմանէր, երբոր երկրիս թագաւորութիւններն ու զօրութիւնները Յիսուսի աչաց կ՚պարզէր զանի հրապուրելու համար։

Արամիսի աչքն որչափ մթին էր նոյնչափ այժմ քաղցր դարձաւ։ Այն ատեն՝ Փիլիպ արագ և ջլուտ շարժումով մ՚անոր ձեռքը բռնեց ու ըսաւ.

— Օ՚ն, երթանք, երթանք այն տեղ ուր Ֆրանսայի թագը կը դտնուի։

— Այդ է ձեր որոշումը, իմ իշխանս — հարցուց Արամիս։

— Այս է իմ որոշումս։

— Անդառնալի։

Փիլիպ և ոչ իսկ պատասխան տալու զլխաւ։ Եպիսկոպոսին նայեցաւ հաստատամտութեամբ, որպէս թէ հարցնէ թէ մարդ մ՚որոշումն ընելէն ետև կ՚փոխէ։

— Այդ նայուածքը հրաւառ սլաքներ են որ բնաւորութիւնները կ՚նկարագրեն — ըսաւ Արամիս Փիլիպի ձեռքին վրայ ծռելով։ — Հաւատի եղիք որ մեծ մարդ մը պիտի լինիք, տէր իմ։

— Եթէ կ՚հաճիս, մեր խօսակցութեան թեզն առնունք։ Ասեր էի քեզի, կարծեմ, որ քեզի հետ երկու կիտի վրայ համաձայնիլ կ՚կարենք, վանդներուն և խոչնդոտներուն վրայ։ Այս կէտն արդէն որոշուած է։ Միւսն է, առաջարկելիք պայմաններդ։ Խօսելու կարգը քուկդ է, Պ. Հէրպլէյ։

— Պայմանները, իշխանդ իմ։

— Անտարակոյս։ Այդպիսի չնչին բանի մը համար զիս կէս ճամբան չպիտի թողուս, և այնչափ անմիտ չպիտի համարես զիս որ կարծեցնել տաս որ այս գործին մէջ շահ մը չունիս։ Այսպէս ուրեմն, առանց պատ՚ի պատ խօսքի և երկիւղի, քու ներքին միտքդ ինձի յայտնէ։

— Յայտնեմ ձեզի, տէր իմ։ Երբ մը անդամ թաղաւոր լինիք . . . ։

— Երբ պիտի լինիմ։

— Վաղն իրկուն։ Ասել կ՚ուզեմ դիշերը։

— Բայատրէ ինձ թէ ինչպէս։

— Նախ պէտք է որ Ձեր արքայական Բարձրութեան հարցում մ՚ընեմ։

— Ըրէ։

— Ձեր Բարձրութեան իմ մէկ հաւատարիմ մարդս զրկեցի, որ պաշտօն ունէր ձեզի յանձնելու տետրակ մը ծանօթութեանց որ նուրբ դրուած, ստուդութեամբ խմբագրուած էին, ծանօթութիւններ որով կարող պիտի լինէիք արքունեաց բոլոր մարդիկը Ճշդապէս Ճանաչելու։

— Կարդացի բոլոր այդ ծանօթութիւնները։

— Ուշադրութեամբ։

— Գոց գիտեմ։

— Եւ քաջ իմացաք։ Ներեցէք, կընամ այս հարցումն ընել Պասդիւլի ընկերցիկ բանտաւորին։ Աւելորդ է ըսել որ ութ օրուան մէջ ձեր իմացականութեան տէր մարդու մը չպիտի ունենամ հարցնելիք բան մը, քանի որ իր ամենաղօրութեանը մէջ կատարեալ աղատութիւն պիտի վայելէ։

— Ուրեմն հարցուփորձ ըրէ զիս. կ'ուզեմ աշակերտդ լինիլ, որու գիտուն դատաւորն որոշեալ դասը կրկնել կ'տայ։

— Նախ ձեր գերդաստանին վրայ, տէր իմ։

— Իմ մայրս Աննա Թագուհին. բոլոր իր յաւերը, իր աղէտալի հիւանդութիւնը։ Ո՛հ, գիտեմ, գիտեմ։

— Ձեր երկրորդ եղբայրը — ըսաւ Արամիս խոնարհելով։

— Այս ծանօթութեանց այնպէս հրաշալի կերպով գծուած, նկարուած նկարագիրներ միայն էիր՝ որ սոյն պատկերներէն Ճանչցի այն մարդիկն որոց բնաւորութիւնը քու ծանօթութիւններդ կ'յայտնէին, նոյնպէս անոնց բարքն ու պատմութիւնը։ Իմ եղբայրս թխերես աղուոր մարդ մ'է, գունատ դէմքով. իր Հանրիէդ կինը չսիրեր, թէև ես, ես Լուի ԺԴ փոքր ինչ սիրեցի զանի, ու տակաւին նաղանօք կ'սիրեմ, թէև գիս շատ լայուց օրիորդ Լա Վալիէրն արքունիքէն վռնտել ուզած օրը։

— Այս վերջնոյն աչայ ուշադիր պիտի լինիք — ըսաւ Արամիս։ — Արդի թագաւորն անկեղծօրէն կ'սիրէ նա։ Դժուարաւ կը խաբուին սիրող կնիկներ մ'աչերը։

— Խարտեաշ է նա, կապոյտ աչեր ունի որոց գորովն իր նոյնութիւնը պիտի յայտնէ ինձ։ Փոքր ինչ կ'կաղայ նա, ամէն օր գիր մը կ'գրէ, որու պատասխան կ'տամ Պ. Սէնդ-Էնյանի միջոցաւ։

— Միթէ այդ Սէնդ-Էնյանը կ'Ճանչէք։

— Այնպէս որպէս թէ տեսնէի, և գիտեմ ինձ ըրած վերջին ոտանաւորները, ինչպէս նաև 'ի պատասխան գրածներս։

— Շատ լաւ։ Հապա ձեր պաշտօնեաները կ'Ճանչէք։

— Գօլպեր ազեղ և մթին կերպարան մը, բայց խելացի. մաղեր որ Ճակատը կ'գոցեն, խոշոր, ծանր, լեցուն գլուխ, Պ. Ֆուքէի անհաշտ թշնամին։

— Այդ անձին նկատմամբ պէտք չէ հոգ տանիլ։

— Ո՛չ, վասն զի, պիտի խնդրես որ զանի 'ի հարկէ աքսորեմ, այնպէս չէ՞։

Արամիս սքանչանալով բաւական համարեց ըսելու։

— Շատ մեծ պիտի լինիք, տէր իմ։

— Ինչպէս — յարեց իշխանը — որ դասս սքանչելի կերպով գիտեմ, և նախ Աստուծոյ ապա քու օգնութեամբը՝ երբէք չպիտի սխալիմ։

— Ուրիշ երկու նեղիչ աչքեր ունիք, տէր իմ։

— Այո, հրայանակրայ հրամանատարը, Պ. ա'Արդանեանը, քու բարեկամդ։

— Այո, պէտք է ըսել, իմ բարեկամս։

— Այն որ Լա Վալիէրի ուղեկից եղաւ 'ի Շայլօ, այն որ Մօնպը Շարլ Բէն յանձնեց սնտուկի մը մէջ, այն որ այնչափ լաւ ծառայեց մեզ, այն որու չափազանց ամէն ինչ պարտաւոր է Ֆրանսայի թագը։ Արդեօք այս մարդուն աքսորն ալ պիտի խնդրես։

— Երբէք, Վեհափառ։ Տ'Արդանեան մարդ մ'է որու պարտիմ ըսել ամէն ինչ յարմար ժամանակին. բայց ղղոյշ եղիք, վասն զի եթէ այս յայտնութիւնս չընդունիք՝ գործին վերահասու լինի, գուք կամ ես, պիտի ըռնուինք և սպաննուինք։ Յանդուգն ու գործօն մարդ մ'է։

— Պէտք եղածը պիտի մտածեմ։ Պ. Ֆուքէի վրայ խօսէ ինձ։ Ի՞նչ կ'ուզես որ ընեմ։

— Կ'աղաչեմ, տէր իմ, պահ մ'ևս։ Ներեցէք ինձ, եթէ միշտ ձեզ հարցուփորձ ընելով ակնածութեան դէմ կ'գործեմ։

— Պարտքդ է հարցնել, և նոյնպէս իրաւունքդ։

— Պ. Ֆուքէի գալէն առաջ, խիղճս պիտի նեղէ զիս եթէ ուրիշ մէկ բարեկամս մոռնամ։

— Պ. Վալլօնը, Ֆրանսայի Հերակլէսը։ Անոր գալով, վստահ եղիք որ անոր բաղդն ապահովեալ է։

— Ո՛չ, խօսքս անոր վրայ չէր։

— Ուրեմն, Լա Ֆէր կոմսին վրայ պիտի լինի։

— Եւ իր որդւոյն, մեր չորսին որդին։

— Այն պատանին որ Լա Վալիէրի համար ունեցած սէրէն կը մեռնի, եղբայրս խարդախութեամբ անոր ձեռքէն կորզեց զանի։ Անհոգ եղիր, սիրուհին իրեն դարձնել տալու ճարը պիտի գտնեմ։ Այս հարցիս պատասխան տուր, Պ. Հէրպլէյ. երբ մարդ սիրէ նախատինքը կ'մոռնայ, մատնուս կնկան կ'ներէ։ Միթէ այս գաղ-ղիական սովորութիւններէն մի՞ն է, միթէ մարդկային սրտի մէջ օրէ՞նքն է։

— Խորին զղայումով սիրող մարդ մը, ինչպէս կ'սիրէ Ռաուլ Գրաժլօն, 'ի վերջէ իր սիրուհւոյն յանցանքը կրնայ մոռնալ։ բայց չգիտեմ թէ Ռաուլ պիտի մոռնայ։

— Այդ բանին հոգն ալ պիտի տանիմ։ Միթէ այս միայն ու-նէիր խօսիլ բարեկամիդ վրայ։

— Այսչափ միայն։

— Հիմակ Պ. Գուքէին դառնանք։ Ի՞նչ կ'ուզես որ ընեմ զանի։

— Ինչպէս առաջ վերատեսուչ, կ'աղաչեմ ձեզ։

— Բայց այսօր առաջին պաշտօնեայ է։

— Բոլորովին չէ։

— Ինձի պէս ապէտ և շուարեալ թագաւորի մը համար առա-ջին պաշտօնեայ մը պէտք է։

— Ձեր վեհափառութեան բարեկամ մը պէտք է։

— Մէկ հատ ունիմ, և դու ես։

— Վերջին ուրիշներ ալ պիտի ունենաք, ձեր փառայ համար լիովին անձնուէր և եռանդուն։

— Դու պիտի լինիս իմ առաջին պաշտօնեայս։

— Ոչ անմիջապէս, տէր իմ։ Այդ կերպով ամենուն մեծ զար-մանք և կասկած կընաք տալ։

— Պ. Ռիշլիէօ, իմ հանիս՝ Մարի Մէտիսիի առաջին պաշ-տօնեայն, Լիւսօնի եպիսկոպոս մ'էր միայն, ինչպէս որ դու Վա-նի եպիսկոպոս ես։

— Կ'նայիմ որ Ձեր արքայական Բարձրութիւնն իմ ծանօթու-թիւններս քաջ սերտեր է։ Այդ հրաշալի խորագիտութիւնն իմ ապրանքութեան չափը կ'ընու։

— Քաջ գիտեմ որ Պ. Ռիշլիէօ՝ թագուհւոյն պաշտպանու-թեամբ՝ քիչ առենէն կարտինալ եղաւ։

— Աւելի լաւ է — պատասխանեց Արամիս խոնարհելով — որ ձիս կարտինալ ընելէն ետք՝ առաջին պաշտօնեայ լինիմ։

— Երկու ամսէ առաջ պիտի լինիս, Պ. Հէրպլէյ։ Բայց այդ չնչին բան մ'է։ Զպիտի նախատես ձիս աւելին պահանջելով, թէև պիտի վշտացնես զիս եթէ այդչափով շատանաս։

— Ես ալ ուրիշ բան մը կ'յուսամ, տէր իմ։

— Ըսէ, ըսէ։

— Պ. Գուքէ երկար ատեն գործոյ մէջ չպիտի մնայ, շուտով պիտի ծերանայ։ Զուարճութիւնը կ'սիրէ, որ իր աշխատութեան հետ կրնայ համաձայնիլ, իր վայելած քիչ մ'երիտասարդական աշխոյժին շնորհիւ. բայց այդ երիտասարդութիւնը կախում ունի առաջին անգամ կրելիք վշտէն կամ հիւանդութենէ։ Այդ վիշտն անոր պիտի խնայենք, վասն զի վեհանձն ու ազնիւ սիրտ մ'ունի։ Բայց չենք կարող անոր հիւանդութիւնը բուժել։ Այսպէս, գործը կարգադրուած է։ Երբոր Պ. Գուքէի բոլոր պարտքը վճարենք, գանձուն վիճակը կարգի դնենք, Պ. Գուքէ կրնայ իր քերթողներու և պատկերհաններու արքունիքը թագաւոր մնալ, զինքը հարստացուցած պիտի լինինք։ Այն ատեն Ձեր արքայական Բարձրութեան առաջին պաշտօնեայն լինելով՝ պիտի կարենամ իմ և ձեր շահուց հոգը տանիլ։

Երիտասարդն իր խօսակցին նայեցաւ։

— Պ. Ռիշլիէօ, որու վրայ կ'խօսէինք — ըսաւ Արամիս — մեծ սխալմունք մ'ըրաւ մի միայն Ֆրանսան կատարելու հոգը ստանձնելով։ Երկու թագաւոր թողուց, Լուի ԺԳ թագաւորն ու ինք, որ նոյն դահուն վրայ բազմին, մինչդեռ կարող էր երկու տարբեր դահերու վրայ աւելի հանգիստ կերպով տեղաւորիլ։

— Երկու դահի վրայ — ըսաւ պատանին մտմտալով։

— Արդարև — շարունակեց Արամիս հանդարտութեամբ — Ֆրանսայի առաջին պաշտօնեայ մը, կարտինալ մը, ամենաքրիստոնեայ թագաւորի մ'օգնութեամբը, կարտինալ մ'որու իր թագաւորը զանձերը, բանակը, խորհուրդը կ'ընծայէ, այսպիսի մարդ մը

կրկնակի ձախող պաշտօն մը վարած կ'լինի եթէ միայն Ֆրանսայի համար գործածէ իր բոլոր միջոցները։ Սակայն դուք — յարեց Արամիս Ֆիլիպի աչայ խորը թափանցելով — դուք ձեր հօրը պէս փափկասուն, զանգաղ և ամէն բանէ զզուած թագաւոր մը չպիտի լինիք. դուք գլխի և սուրի տէր թագաւոր մը պիտի լինիք. ձեր պետութեան երկիրները հազիւ կ'բաւեն ձեզի, ես թերևս նեղեմ ձեզ անոնց մէջ։ Արդ՝ երբէք մեր բարեկամութիւնը՝ չեմ ըսեր չպիտի փոխուի, այլ ես չպիտի այլայլէ դաղանի խորհրդով մը։ Ձեզի Ֆրանսայի դահը տուած պիտի լինիմ, դուք ինձ պիտի տաք Սուրբ Պետրոսի դահը։ Երբ ձեր անկեղծ, ամուր և զինեալ ձեռքն ինձի պէս Պապի մը ձեռքն իրեն երկուորեակ ունենայ, ոչ Շարլ Ե որ աշխարհիս երկու երրորդ մասը ստացաւ, ոչ Մեծն Շարլ, որ անոր ամբողջ տիրացաւ, ձեր գօտին բարձրութեան չպիտի հասնին։ Ես դաշնադրութիւններ չունիմ, նախապաշարումներ չունիմ, ձեզ հերետիկոսները հալածելու չպիտի մղեմ, ընտանեկան կռիւներու մէջ ձեզ չպիտի նետեմ. այլ պիտի ըսեմ միայն. «Մեզ երկոյունց տիեզերքը, ինձի հոգիները, ձեզի մարմինները»։ Եւ որովհետև առաջ ես պիտի մեռնիմ, դուք իմ ժառանգութիւնս պիտի ստանաք։ Տէր իմ, ինչ կ'ըսէք այս իմ յատակագծիս։

— Կ'ըսեմ թէ մի միայն խորհուրդ ըմբռնելովս հպարտ և երջանիկ կ'ընես զիս, Պ. Հէրպլէյ. կարտինալ պիտի լինիս, կարտինալ, իմ առաջին պաշտօնեայս պիտի լինիս։ Ապա պիտի յայտնես ինձ թէ ինչ ընել պէտք է քեզ Պապ ընտրել տալու համար, և ես ալ պիտի ընեմ։ Երաշխաւորութիւններ խնդրէ իսկ։

— Անօգուտ են։ Պիտի գործեմ միշտ ձեզի շահ մը բերելու համար. վեր չպիտի ելնեմ առանց ձեզ վերնագոյն աստիճանը քաշելու. միշտ բաւական հեռու պիտի մնամ ձեզնէ ձեր նախանձէն ազատ դտնուելու համար. բաւական մօտ պիտի դտնուիմ ձեր շահը պահպանելու և ձեր բարեկամութեան վրայ հսկելու։ Աշխարհիս երեսն ամէն դաշինք կ'խորտակին, վասն զի անոնց պարունակած շահը միշտ մէկ կողմը հակելու կ'միտի. մեր մէջ երբէք այսպէս չպիտի լինի, երաշխաւորութեան պէտք չունիմ։

— Այսպէս . . . իմ եղբայրս . . . ներեւոյթ պիտի լինի . . .։

— Պարզապէս։ Իր անկողնէն զինքը պիտի բառնանք տախտակի մը միջոցաւ որ մատին ձնշման տեղի կ'տայ։ Թաղին ներքև քնանալէն ետև՝ դերութեան ծոցը պիտի արթննայ։ Դուք միտակ մնալով՝ պիտի հրամայէք այնուհետև, և ձեր ամենէն մեծ շահը պիտի լինի զիս ձեր քովը պահելը։

— Սա՛յդ է։ Ասասիկ ձեռքս, Պ. Հէրպլէյ։

— Վեհափառ, ներեցէք ինձ ձեր առջև ծունր կրկնելու յարդանօք։ Զիրար պիտի համբուրենք այն օրն երբ երկուքնիս մեր ձակատը բոլորենք, դուք թագը, ես խոյրը։

— Համբուրէ զիս այսօր իսկ, և քան մեծ, ձարտար, վսեմ հանճար մը, եղիր ինձի համար բարի, եղիր իմ հայրս։

Արամիս քիչ մնաց պիտի կակղէր անոր խօսիլը լսելով։ Իր սրտին մէջ մինչ ցայն կէտ իրեն անծանօթ շարժում մ'զդաց. բայց այս տպաւորութիւնը շուտով անցաւ։

— Իր հայրը — մտածեց նա։ — Այո՛, սո՛ւրբ հայր։

Եւ վերջին կռիւը մտան, որ արդարութեամբ Վ.ո–լը–Վիքոնդի ճամբան բռնեց։

ԺԲ

Վ.Ո–ԼԸ–ՎԻՔՕՆԴԻ ԴՂԵՆԱԿԸ

Մըլէծնէն մէկ մղոն հեռու շինուած Վ.ո–լը–Վիքոնդի դղեակը՝ 1653ին Ֆուքէն կառուցանել տուեր էր։ Այն ատեն Ֆրանսայի մէջ քիչ ստակ կար։ Մազարէն ամէն եղածն առեր և մնացածը Ֆուքէն կ'վատնէր։ Միայն՝ որովհետև կան մարդիկ որ արդիւնաւոր թերութիւններ և օգտակար մոլութիւններ ունին՝ Ֆուքէ՝ այս ապարանին մէջ միլիոններ թափելով, երեք նշանաւոր մարդիկ հնձելու միջոցը դտեր էր. Լը-մէ, շէնքին ճարտարապետը, Լը Նոդր, պարտէզներու նկարիչը, և Լը Պրէօն՝ սենեակներու զարդարիչը։

Եթէ Վ.օի դղեակը յանդիմանութեան արժանի պակասութիւն մը ունէր՝ իր մեծապանծ կերպարանն և շնորհալի փառաւորութիւնն էր։

Երբ մի անգամ Վ.օ-լը-Վիքոնդի լայն վանդակէն անցնի մարդ, որ կիսարձաններով բռնուած է, պատոյ ընդարձակ բակին մէջ կ'տեսնէ շէնքին դլխաւոր թեը, խորունկ փոսերով շրջապատեալ, որու չորս դին քարէ սիւնակներ կան։ Զափազանց ազնիւ է միջավայրի ճակատը՝ որ դրանդին վրայ նստած է իբրև թագաւոր մ'իր գահոյքը վրայ, շուրջանակի չորս տաղաւար ունենալով որ անկիւնները կ'յօրինեն, և որու յոնիական ահագին սիւները շէնքին բարձրութեանը կ'հասնին հիասքանչ։ Քիւերուն ծիրը դտնուած քանդակները, մոյթերը պսակող քիւերն ամէն կողմը պերճութիւն և շնորհ կ'սփռեն։ Գմբէթները՝ որ բոլոր շէնքին վրայ կ'բարձրանան՝ լայնութիւն և վեհափառութիւն կ'ընծայեն։

Այս տունը՝ որ հպատակի մը դործ է, աւելի արքունի տան մը կ'նմանի քան թէ այն արքայական տուները զոր Վ.օլսէյ կարծէր թէ իր տիրոջ ընծայ ընելու պարտաւոր էր առ ահի որ նախանձը չդրդռէ։

Բայց եթէ շքեղութիւնն ու ճաշակն այս պալատին մէկ մասնաւոր վայրն աւելի պայծառ կ'երևին, եթէ կայ բան մ'որ նախադասելի համարուէր ներքին սենեակներուն հոյակապ կարդաղրութեան, ոսկի դրուագներուն պերճութեան, պատկերներուն և արձաններուն առատութեան, այս է ծառաստանը, այս է Վ.օի պարտէզները։ Ջրբուխները՝ որ 1653ին հրաշալի էին, այսօր ալ հրաշալիք են։ Ջրվէժները բոլոր թագաւորներուն և բոլոր իշխաններուն հիացում կ'պատճառէին, իսկ անուանի քարայրը, որ այնքան նշանաւոր քերթուածներու նիւթ եղած էր, այն հռչակաւոր Վ.օի յաւերժհարսին բնակարանը զոր Բէլլիսօն Լա Ֆոնդէնի անուանել առաւ, զանց պիտի առնենք բոլոր դեղեցկութիւններովը նկարագրել։

Դեռ ևս ութ տարեկան այս ծառաստանը մնանք՝ որու կատարներն արդէն փառաւոր՝ աբեռուն առաջին շառաւիղներէն կը

լուսաբերէին։ Լը Նօդր Միսէնի հաճոյքը փութացուցեր էր։ Բոլոր ծաղկոցները մշակութեամբ և ջրեղ պարարտներով կրկնակի ծառեր առեր էին։ Մօտակայ որ և է ծառ որ զարդանալու յոյս կ'տար՝ արմատախիլ եղած և խոզոյն ծառաստանը տնկուած էր։ Փուքէ 'ի հարկէ կրնար ծառեր դնել իր բուրաստանը զարդարելու, քանի որ երեք դիւղ ծախու առեր էր իրենց բոլոր պարուսնակութեամբն որպէս զի զայն ընդարձակէ։

Պ. Աբիւտէրի այս պալատին համար կ'ըսէ թէ, զայն ոսոդելու համար, Պ. Փուքէ հաղար աղբիւրի բաժներ էր դետ մը, և այս հաղար աղբիւրներն իրրև ջրվէժ միացուցեր էր։ Այս Պ. Աբիւտէրին ուրիշ շատ բաներ կ'ըսէ իր Քէլէնի մէջ այս Վալդէրի պալատին վրայ, որու ամէն աղբորութիւնները մանր կ'նկարագրէ։ Աւելի խոհեմութիւն է հետաքրքիր ընթերցողներն 'ի Վ.օ դրկել քան թէ Քէլէնի։ Սակայն Բարիզէն 'ի Վ.օ այնչափ մղոն է, որչափ են Քէլէնի հատորները։

Այս շքեղ տունն աշխարհի ԺԴ.ի թագաւորն ընդունելու պատրաստ էր։ Պ. Փուքէի բարեկամներն անդ բերեր էին՝ ոմանք իրենց դերասաններն ու զարդարանքը, ոմանք իրենց արձանագործութեան և պատկերհանութեան դործիները, այլք ևս իրենց բազմակարած դրիչները։ Հարկ կար անպատրաստի շատ մը բաներ ընել։

Ջրվէժները՝ թէև յաւերժհարսունք՝ հեստ դանուելով՝ բիւրեղէ աւելի պայծառ ջուր մը կ'ժայթքէին։ Պղնձէ Տրիտոններու և Նէրէիդներու վրայ կ'հոսէին փրփրալի կոհակներ որ արևուն ճառագայթներէն ծիածաններ կ'յօրինէին։

Բակերն և նրբապատիները դունդ դունդ սպասաւորներ կ'վազէին, մինչդեռ Փուքէ՝ դեռ ևս առաւօտուն հասնելով, հանդարտ և հեռատես կ'պտըտէր, վերջին հրամանները տալու, իրեն հոդաբարձուներն ամէն բան աչքէ անցընելէն ետև։

Ինչպէս արդէն ըսինք՝ օդոստոսի 5ն էր։ Արևն ուղղակի կ'իջնէր մարմարէ և պղնձէ ցիր ուսերուն վրայ, կոնքերուն ջուրը կը տաքցնէր, և մրգաստաններու մէջ այն փառաւոր դեղձերը հասուն կ'դարձէր, որոց յիսուն տարի ետք թագաւորը պիտի կարող

տէր, մինչեւ 'ի Մարլի, իր պարտէզներուն մէջ ընտիր տեսակները չգտնուելով, պարտէզներ որ Ֆրանսայի կրկնապատիկ սուղ նստեր էին քան թէ Վօն, Ֆէ Նոֆ-ոլը մէկուն կ'ըսէր,

— Դու շատ նորահասակ ես, դու, և անտարակոյս Պ. Ֆուքէի դեղձերը չես կերած։

Ո՛ յիշատակ, ո՛ համբաւի փողերը, ո՛ փառք աշխարհիս։ Այն որ քաջ կ'գնհատէր արժանիքը, այն որ Ֆուքէի ժառանգութեան տիրացեր էր, այն որ Լը Նոշը և Լը Պրէօնն անոր ձեռքէն առեր էր, այն որ ցմահ պետութեան բանտի մը դատապարտեր էր զանի, այն կ'յիշէր միայն այս նկուն, խեղդեալ, մռայլեալ թշնամւոյն դեղձերը։ Ֆուքէ ընդունայն նետեր էր երսուն միլիոն իր առաջաններուն մէջ, իր քանդակագործներուն բոլին մէջ, իր քերթողներուն կաղամարներուն մէջ, իր պատկերհաններուն դրպահներուն մէջ, ընդունայն ճիգ թափեր էր որ յիշատակ մը թողու։ Սարբնայի մը շեղանկիւններու մէջ՝ իր սուր տերևներուն դալարի լեզուակներուն ներքև բուսած կարմրուն և մեռա դեղձ մը, այս դոյնն ինչ բուսական նիւթը զոր առնէա մը կ'լափէր անդադար, բուսական էր մեծ թագաւորին համար Ֆրանսայի վերջին վերատեսչին ոզբալի ստուերին յիշատակը դրդռելու։

Ֆուքէ ստոյգ լինելով որ Արամիս մեծ գործերը կարգադրեր, դռները պահպանել և բնակարանները պատրաստել տալու հոգայեր էր՝ միայն գործին ամբողջութեան կ'զրաղէր։ Այս տեղ Դուրվիլ ցոյց կ'տար անոր հրախաղութեան կարգադրութիւնը, անդին՝ Մոլիէր թատրոնը կ'առաջնորդէր զինքն և 'ի վերջէ մատուռը, սրահիկներն ու թանգարաններն ալ աչքէ անցընելէն ետև՝ վաստակաբեկ վար կ'իջնէր՝ երբ Արամիսը տեսաւ սանդղին վրայ։ Եպիսկոպոսն անոր նշան ըրաւ։

Վերատեսուչն եկաւ իր բարեկամին միացաւ, որ զինքն այն ինչ աւարտած մեծ պատկերի մ'առջև կեցուց։ Լը Պրէօն պատկերհանը՝ այս կտաւին առջև բոլոր ճիգը թափելով քրտնաթոր, դոյներով աղտոտած, յոգնութենէ և ներշնչութենէ դոյնը նետած՝ իր արագ վրձինով այս պատկերին վրայէն կ'անցնէր։ Թագաւորին պատկերն էր այս որու կ'սպասէին, հանդիսական հագուստով, զոր Ռէբսրէն կանխաւ Վանի եպիսկոպոսին ցոյց տալու զիջեր էր։

Ֆուքէ այս պատկերին առջև կեցաւ, որ կարծես թէ բնապիրն իր թարմութեամբն և ջերմութեամբը կ'ներկայացնէր։ Անոր դէմքը նայեցաւ, աշխատութիւնը հաշուեց, զմայլեցաւ, և այս հրաշալեան աշխատութեան արժանի վարձք մը չգտնելով թեերը պատկերհանին վզէն անցուց և զանի համբուրեց։ Պ. վերատեսուչն իր հինգ հարիւր ոսկիի զրեստը խանդաբեր էր, բայց Լը Պրէօնը սփոփեր էր։

Ազնուր ժամ մ'էր այս պատկերհանին հաւանը, Պ. Ռէբսրէնի համար վշտալի ժամ մ'էր, որ ինք ևս Ֆուքէի եռեռն կ'երթար և Լը Պրէօնի պատկերին մէջ Նորին Վեհափառութեան համար ըրած զրեստին վրայ կ'զմայլէր, արհեստի հրաշակերտ մը, որուն նմանը միայն պարոն վերատեսչին զրեստարանը կար, կ'ըսէր նա։

Իր վիշտն ու աղաղակներն ընդհատեցան տան դաղաթէն տրուած նշանէն։ Անոր քան Մըլէօն, մերկ դաշտավայրին մէկ արաէն՝ Վօլ պահնորդները թագաւորին և թագուհիներուն ձիանքն ու կառքերը նշմարեր էին։ Նորին Վեհափառութիւնը Մըլէօն կ'մտնէր կառքերու և ձիաւորներու երկայն շարքովը։

— Ժամէ մը — ըսաւ Արամիս Ֆուքէի։

— Ժամէ մը — պատասխանեց այս վերջինը հառաչելով։

— Եւ այս ժողովուրդն որ կ'հարցնէ իրաւամբ իրաւվի թէ արքայական հանդէսներն ինչի կ'ծառայեն — շարունակեց Վանի եպիսկոպոսն իր սուտ ծիծաղովը ծիծաղելով։

— Ափսոս, ես ինքս որ ժողովուրդ չեմ՝ իրաւվի կ'հարցնեմ։

— Քանու չորս ժամէն պիտի պատասխանեմ, տէր իմ։ Զուարթ դեմքդ ա՛ռ, վասն զի տրախտութեան օր մ'է։

— Լա՛ռ, ստոյգը կ'ուզես, Հէրպլէյ — ըսաւ վերատեսուչը սրտի բղխումով, հորիզոնին վրայ Լուի ԺԳի մարդիկը ցոյց տալով— բնաւ զիս չսիրեր, ես ալ զինքը շատ չեմ սիրեր, բայց Հոգիտեմ ինչպէս կ'լինի որ՝ իմ տանս քանի կ'մօտենայ . . . ։

— Լաւ ուրեմն, ինչ կայ։

— Լաւ, քանի կ'մնամ, ինձ աւելի նուիրական կ'դառնայ, ինձի համար թաղաւոր մ'է, գրեթէ սիրելի է։

— Սիրելի՞, այո՛ — ըսաւ Արամիս այս բառին վրայ խաղալով ինչպէս որ վերջէն Թէրէյ արքան ըրաւ Լուի ԺԵի հետ։

— Մի ծիծաղիր, Հէրպլէյ. կ'զղամ որ, եթէ կամենար, այս պատանին պիտի սիրէի։

— Այդ խօսքն ինձի ըսել պէտք չէ, այլ Պ. Գօլպէրին — վրայ բերաւ Արամիս։

— Պ. Գօլպէրի՞ն — զոչեց Գուքէ — և ինչո՞ւ համար։

— Վասն զի երբ վերատեսուչ դառնայ, թաղաւորին արկղէն քեզի թոշակ մը պիտի կապել տայ։

Այս սլաքն արձակելով Արամիս ողջունեց։

— Բայց ո՞ւր կ'երթաս — վրայ բերաւ Գուքէ տխրելով։

— Սենեակս կ'երթամ, զգեստ փոխելու համար, տէր իմ։

— Ո՞ւր է սենեակդ, Հէրպլէյ։

— Երկրորդ դասակոնին կապոյտ սենեակը։

— Այն որ թաղաւորին սենեկին վրայ կ'դտնուի։

— Ճիշտ այն։

— Այդ ինչ ստրկութիւն յանձն առիր. անշարժ մնալու պիտի դատապարտուիս։

— Բոլոր գիշերը, տէր իմ, կ'քնանամ կամ անկողնիս մէջ կ'կարդամ։

— Հապա սպասաւորներդ։

— Ո՛չ, մնարդ մ'ունիմ միայն իմ հետս։

— Այդչափ քիչ։

— Իմ ընթերցողը կ'բաւէ ինձ։ Մնաս բարեաւ, տէր իմ, շատ մի յոգնիր։ Թաղաւորին դալստեան համար առոյգ և կայտառ լինելու փոյթ տար։

— Նորէն կ'տեսնուինք, Վալլօն բարեկամդ աշ պիտի տեսնենք անշուշտ։

— Իմ սենեկիս մօտ բնակեցուցի զանի։ Կ'հաղուի։

Եւ Գուքէ գլխով և ժպտելով բարեւեց, և իբրև սպարապետ որ յառաջապահներն աչքէ կ'անցընէ երբոր թշնամին իրեն իմաց տան, սահեցաւ դնաց։

ԺԳ

ՄԸԼԷՕՆԻ ԳԻՆԻՆ

Թաղաւորն իրօք Մըլէօն մներ էր միայն քաղքէն անցնելու դիտմամբ։ Նորատի միապետը զուարճութեանց ծարաւի էր։ Բոլոր ուղեորութեան ատեն երկու անգամ միայն տեսեր էր Լա Վալիէրը, և զուշակելով որ գիշերը պիտի կարենայ անոր հետ խօսիլ պարտէզներուն մէջ՝ արարողութենէ ետք, կ'փութար որ Վօ հասնի և այն տեղ օթևանի։ Բայց այսպէս կ'յուսար առանց հրացանակրաց հրամանատարին և նաև Պ. Գօլպէրին հետ բանակցելու։

Կալիպսէի նման՝ որ Ոդիսեսի չուին վրայ անմխիթար էր, մը Կապօնը չէր կարող մխիթարուիլ չզուշակելուն թէ ինչո՞ւ համար Արամիս Բէլսրէնէն խնդրեր էր տեսնել թաղաւորին նոր գզեստները։

— Տարակոյս չկայ — կ'ըսէր իրրովի այս թիւրաթեք գլուխն իր յատուկ արամարանութեամբ — որ Վանի եպիսկոպոսը, իմ բարեկամս, բանի մը համար կ'խնդրէր։

Եւ հրացանակիրն ընդունայն գլուխը կ'պեղէր որ գտնէ գաղտնիքը։

Տ'Արդանեան որ շատ վարժ էր արքունեաց դաւերուն, տ'Արդանեան՝ որ Գուքէի կացութիւնը նոյն իսկ քան Գուքէ լաւ գիտէր, խիստ այլանդակ կասկածներ առաւ այն հանդիսին լուրն իմանալով, որ հարուստ մարդ մը կրնար կործանել, և որ անկարելի, յիմարական գործ մ'էր արդէն կործանեալ մարդու մը համար։ Ասկէ զատ՝ Արամիսի ներկայութիւնը, որ Պէլ-Իսլէն կ'դառնար, և Պ. Գուքէի կողմէ ընդհանուր կարդադրիչ անուանելը, վերատեսչին ամէն գործոց յարատև միջամտութիւնը, Պ. Վանի այցելութիւններն առ Պէլմ, բոլոր այս հանելուկը տ'Ար-

դանեանի մեծ տանջանք պատճառեր էր քանի մը շաբաթէ 'ի վեր։

— Արամիսի բնութեան տէր մարդու մը հետ — կ'ըսէր նա — մարդ զբաւոր կ'լինի միայն սուր 'ի ձեռին։ Որչափ ատեն որ Արամիս պատերազմիկ մարդ էր, զանի յաղթահարելու յոյս կար, իր զբահն ուրարով ծածկելէն 'ի վեր՝ մեր բանը բուսած է։ Բայց ինչ կ'ուզէ Արամիս։

Եւ ա'Արդանեան կ'խորհէր։

— Ի՞նչ փոյթս է, վերջապէս, եթէ միայն Գ. Գօլպէրը տապալել է մեզը . . . Ուրիշ ինչ նպատակ կրնայ ունենալ։

Տ'Արդանեան ճակատը կ'քերէր, այս բերրի հողն ուսկից իր ըղձանդներուն խորը գեղեցիկ և աղոր գաղափարներ դուրս հաներ էր։

Նախ մտադրեց Գ. Գօլպէրի բացուիլ, բայց իր բարեկամութիւնը, իր երբեմնակի երդումը զինքը սերտիւ կ'կապէին Արամիսի հետ։ Ուստի նահանջեց։ Այս ևս կայ որ սոյն գրամագիտը կ'ատէր։

Կ'ուզէր թագաւորին բացուիլ։ Բայց թագաւորը բան մը չպիտի հասկընար իր կասկածներէն, որ ստուգութեան նշոյլն անգամ չունէին։

Մնացը դրաւ ուղղակի Արամիսին գիմել՝ առաջին անգամ զինքը տեսնելուն։

— Երկու կրակի մէջ պիտի դնեմ զանի, ուղղակի, բացարձակ պիտի հարցուփորձ ընեմ — ըսաւ հրացանակիրն իւրովի — ձեռքս անոր սրտին վրայ պիտի դնեմ, և ինձ պիտի ըսէ . . . . Ի՞նչ պիտի ըսէ. Այո՛, բան մը պիտի ըսէ, վասն զի, կենդանի վկայ, ասոր տակը բան մը կայ։

Տ'Արդանեան քիչ մը հանգստանալով՝ իր ուղևորութեան պատրաստութիւններն ըրաւ, և պէտք եղած խնամքը տարաւ որպէս զի թագաւորին գինուորական տունը՝ որ դեռ ընդարձակ չէր՝ լաւ հրամանատարութեան և կարգադրութեան ներքև գտնուի։ Հրամանատարին այս քննութիւններէն սա հետևեցաւ որ թագաւորն իր հրացանակրաց, իր հելվէտացի զօրաց և գունդ մը գաղղիացի

պահակաց դլուխն անցաւ՝ երբ Մըլէօնի առջև հասաւ։ Կարծես թէ պղտիկ բանակ մ'էր։ Գ. Գօլպէր այս պատերազմիկ մարդիկը շատ ուրախութեամբ կ'դիտէր։ Կ'փափաքէր որ վաշտ մը զօրք ևս գտնուէր։

— Ինչո՞ւ համար — կ'ըսէր թագաւորը։

— Գ. Ֆուքէի աւելի պատիւ ընելու համար — կ'պատասխաներ Գօլպէր։

— Աւելի շուտ զանի կործանելու համար — կ'մտածէր ա'Արդանեան։

Բանակը Մըլէօնի առջև երևցաւ, որու առաջանին թագաւորին բերաւ բանալիները, և զինքը հրաւիրեցին քաղաքապետական պաշտօնատունն որպէս զի պատոյ գինին խմէ։

Թագաւորը՝ որ կ'յուսար զանց առնուլ այս արարողութիւնն և անմիջապէս Վ. գիմել՝ սրտմտութենէ կարմրեցաւ։

— Ո՞ր խենդն այս յապաղումը պատճառեց — քրթմնջեց նա քթին տակէն, մինչդեռ քաղաքապետն իր ճառը կ'կարդար։

— Ես չեմ՝ — պատասխանեց ա'Արդանեան — բայց կարծեմ թէ Գ. Գօլպէրն է պատճառ։

Գօլպէր իր անունը լսեց։

— Ի՞նչ հրամից Գ. ա'Արդանեանը — հարցուց նա։

— Կ'փափաքի գիտնալ թէ արդեօք դո՞ւ ես Պրիի գինին խմելու համար թագաւորն այս տեղ բերողը։

— Այո՛, պարոն։

— Ուրեմն քեզի էր թագաւորին տուած անունը։

— Ի՞նչ անուն, պարոն։

— Ճիշտը չգիտեմ . . . կեցիր . . . ապուշ . . . ո՛չ, ո՛չ . . . խենդ, խենդ, ախմար, ահա այս ըսաւ Նորին Վեհափառութիւնը Մըլէօնի գինին իրեն խմցնողին։

Այս յարձակումէն ետք՝ ա'Արդանեան իր ձին փայփայեց հանդարտութեամբ։ Գ. Գօլպէրի խոշոր գլուխը կասկածի պէս ուռեցաւ։

Տ'Արդանեան՝ տեսնելով որ այնքան տղեղեր էր բարկութենէ, ճամբան չկեցաւ։ Ատենապանը միշտ կ'շարունակէր. թագաւորն երթալով կ'կարմրէր։

— Տէր վկայ — ըսաւ անվրդով հրայանակիրը — թագաւորին գլխին պիտի զարնէ արիւնը։ Պ. Գօլպէր, այդ խորհուրդն ուսկից միտքդ ընկաւ։ Ինչ բաղդ չունիս։

— Պարոն — ըսաւ դրամագէտը գլուխն ամբառնալով — թագաւորին ծառայութեան համար ունեցած եռանդս ներշնչեց ինձ։

— Վա՜հ։

— Պարոն, Մըլէօն քաղաք մ՚է, լաւ քաղաք մ՚որ աղէկ կը վճարէ, և պէտք չէ որ դժդոհ ընենք։

— Իրա՞ւ ըսիր։ Ես որ դրամագէտ չեմ, լոկ միտք մը տեսեր էի մտքիդ մէջ։

— Ի՞նչ միտք, պարոն։

— Պ. Ֆուքէի մաղձը փոքր ինչ դրդռել, Ֆուքէ որ վարը՝ իր բերդին մէջ մեղ սպասելն կ՚պայթի։

Այս հարուածը ճիշտ և ծանր էր։ Գօլպէր նկուն մնաց, և ականջը կախ քաշուեցաւ գնաց։ Բարեբաղդօրէն ճառն աւարտեր էր։ Թագաւորը խմեց, ապա ամենքը ճամբայ ելան քաղքին մէջէն։ Թագաւորն իր շրթունքը կ՚կրծէր, վասն զի գիշերը վրայ կ՚հասնէր և Լա Վալիէրի հետ պարտելու յոյսը բոլորովին կը մարէր։

Գոնէ չորս ժամ պէտք էր թագաւորին գերդաստանը Վօի մէջ մտնելու համար, արդէն եղած կարգադրութեանց համեմատ։ Ուստի թագաւորը՝ որ անհամբերութենէ կ՚մրկէր՝ թագուհիները ստիպեց որ գիշեր չեղած հասնին. բայց ճամբայ ելնելու միջոցին՝ զանազան դժուարութիւններ ծագեցան։

— Արդեօք թագաւորն 'ի Մըլէօն չ՚պիտի երթայ օթևանելու — ըսաւ Պ. Գօլպէր յուսած ձայնով տ՚Արդանեանի։

Այն օրը Պ. Գօլպէր շատ ծուռ կ՚դատէր այսպէս հրայանակրայ հրամանատարին գիմելով։ Հրայանակիրը լաւ դուշակեր էր որ թագաւորը տեղ մը չէր կարող նստիլ։ Տ՚Արդանեան կ՚ուզէր որ թագաւորը Վօ մտնէ իր մարդիկներովը շրջապատեալ. ուրեմն կ՚փափաքէր որ նորին Վեհափառութիւնը սպահապան զինուորներովը մտնէ։ Միւս կողմէ կ՚զգար որ այս անհամբեր բնաւորութեան տէր իշխանը յապաղումներէ կ՚դրդուէր։ Այս երկու դժուարութիւններն ինչպէս յարմարել։ Տ՚Արդանեան Պ. Գօլպէրի խօսքը զէնք ընելով թագաւորին վրայ զրկեց զանի։

— Վեհափառ — ըսաւ նա — Պ. Գօլպէր կ՚հարցնէ թէ արդեօք Ձեր Վեհափառութիւնն 'ի Մըլէօն չ՚պիտի օթևանի այս գիշեր։

— Ի Մըլէօն օթևանի՞մ։ Եւ ինչո՞ւ համար — գոչեց Լուի ԺԴ։

— Ի Մըլէօն օթևանի՞մ։ Ո՞ր սատանան մտածեց այդ բանը, մինչդեռ Պ. Ֆուքէ այս իրիկուն մեզի կ՚սպասէ։

— Կ՚վախնայի — ըսաւ Գօլպէր աշխուժիւ — որ Ձեր Վեհափառութիւնը չյապաղեմ, վասն զի՝ ըստ պաշտօնական քաղաքավարութեան՝ Ձեր Վեհափառութիւնն ուրիշ տեղ չկրնար մտնել բայց եթէ իր տունը, մինչև որ հոգաբարձուն բնակարաններն որոշէ և զօրականները պէտք եղած տեղը բնակեցնէ։

Տ՚Արդանեան ականջը տնկած մտիկ կ՚ընէր և պեխերը կ՚կրծէր։

Թագուհիներն ալ մտիկ կ՚ընէին։ Յոգնած էին անոնք. կ՚փափաքէին քնանալ, և մանաւանդ արդիլել որ թագաւորը Սէնդ-Էնյանի և կանանց հետ նոյն իրիկունը չշրջագայի. վասն զի՝ թէև պաշտօնական քաղաքավարութենէ ստիպեալ իշխանուհիներն իրենց սենեակները մտնելու պարտաւոր էին, նամիշտները՝ երբ մի անգամ ծառայութենէ ազատէին, պտըտելու արտօնութիւն ունէին։

Ինչպէս կ՚տեսնուի՝ այս այլ և այլ փափաքները գիրելով, ամէն պեր պիտի յառաջ բերէին, և ամէնքն ալ փոթորիկ մը։ Թագաւորը կրծելու համար պեխ չունէր. իր մտրակին բռնատեղը կ՚ծամէր սաստիկ։ Ի՞նչպէս լուծել խնդիրը։ Տ՚Արդանեան ծանրէն կ՚քաշէր և Գօլպէր երեսը կախեր էր. որոնց վրայ թափէր իր բարկութիւնը թագաւորը։

— Այս մասին թագուհիներն խորհուրդ հարցնել պէտք է — ըսաւ Լուի ԺԴ տիկինները բարևելով։

Եւ այս շնորհալի մարդավարութիւնը Մարի-Թէրէզ թագուհիին սիրան այնքան թափանցեց, որ բարեբարոյ էր և վեհանձն, որ ինքնայօժար պատասխանեց յարդանաք.

— Թագաւորին կամքը պիտի ընեմ միշտ մեծ յօժարութեամբ։

— Ո՞ր ժամանակ պէտք է Վօ գնալու համար — հարցուց

Աննա թագուհին ամէն մէկ վանկը շեշտելով, և իր յատակին կրծքին վրայ ձեռքը դնելով։

— Նորին Վեհափառութեանը կառքերուն համար մէկ ժամ — ըսաւ տ՝Արղանեան — բաւական ալ որ Ճամբաներէ անցնելով։

Թագաւորն անոր նայեցաւ։

— Մէկ քառորդ թագաւորին համար — փութայ յաւելաւ։

— Մութ չեղած կարելի է հասնիլ — ըսաւ Լոի ԺԴ։

— Բայց զօրականները ընակեցնելու ժամանակ պէտք լինելով թագաւորին արտաքսելը չպիտի ծառայէ բանի մը — տաբրկեց Գօլպէր կամայուկ մը։

— Կրկնակի՛ անբան — մռմռաց տ՝Արղանեան — եթէ շահ մը ունենայի քու վարկդ կտրելու, տասն վայրկենի մէջ պիտի կարենայի ընել։ Ես թագաւորին տեղը լինիլի — յարեց նա բարձրաձայն — Պ. Գուքէի տունը գնալով որ մեծանձն մարդ մ՝է, իմ բնակութեանս պատրաստութիւնը փոյթ չէի ըներ և իրրև բարեկամ կ՝երթայի. իմ պահակաց հրամանատարին հետ տունձին ներս կ՝մտնէի և ասով միշտ կ՝բարձրանայի, տեսի նուիրական կ՝դառնայի։

Թագաւորին աչքերն ուրախութեամբ փայլեցան։

— Աւասիկ լաւ խորհուրդ մը — ըսաւ նա. — տիկիններ, երթանք իրրև բարեկամ, բարեկամի մը տունը։ Ծանր ծանր քալեցէք, պարոն ուզեկիցներ. իսկ մենք, պարոնները, ընդ առաջ անցնինք։

Եւ թագաւորն իր ետևէն քաշեց բոլոր ձիաւորները։

Գօլպէր իր գժնեայ խոշոր գլուխը ձիուն վզին ետեւը պահեց։

— Յոգնութիւնս պիտի առնում — ըսաւ տ՝Արղանեան արշաւելով — երբ այս իրիկունն իսկ Արամիսի հետ խօսակցիմ։ Ասկէ զատ՝ Պ. Գուքէ մեծանձն մարդ մ՝է, Տէր վկայ. ըսի, և պէտք է հաւատալ։

Ահա այսպէս, երեկոյեան ժամն եօթին՝ առանց վազի և յառաջընթաց պահակներու, առանց ուահահրդներու և հրացանակիրներու՝ Վօլի վանդակին առջևը ներկայացաւ, ուր Գուքէ՝ արդէն տեղեկութիւն ունենալով, ժամէ մ՝ի վեր գլուխը բաց կ՝ըսպասէր իր անկիններուն և բարեկամներուն մէջ։

ԺԴ

ՆԵՐՏԱՐ ԵՒ ԱՆՄԱՀԱԿԱՆ ԿԵՐԱԿՈՒՐ

Պարոն Գուքէ թագաւորին ասպետանը բռնեց։ Թագաւորն ոտքը գետինը դնելով՝ շնորհալի կերպով կանգնեցաւ և տեսի շնորհալի կերպով մէկ ձեռքը կարկառեց, և Գուքէ՝ թագաւորին թեթև ընդդիմութեան չնայելով՝ զայն իր շրթերուն տարաւ։

Թագաւորը՝ առաջին շրջապատին մէջ կառքերուն դալստեան սպասել ուզեց. և երկայն ատեն չսպասեց։ Վերատեսչին հրամանաւ Ճամբաները հարթեր էին։ Մրլէօնէն մինչև Վօ հակթի չափ խոշոր դայլախաղ մը չէր գտնուեր։ Ուստի կառքերը՝ իրրև գորգի մը վրայ գլորելով՝ առանց տատանումի և յոգնութեան՝ ժամն ութին բոլոր կանայքը Վօ բերին։ Տիկին վերատեսչուհին գանոնք ընդունեց, և երբ անոնք կ՝երևէին՝ արևուն պէս պայծառ լոյս մը բոլոր ծառերէն, բոլոր թաղարներէն, բոլոր մարմարներէն ցայտեցաւ։ Այս հիանալի լոյսը տևեց մինչև որ արքայազուններն ապարանին ներքնակողմն անհետ եղան։

Բոլոր այս հրաշալիքը զոր տարեգիրը կուտակած կամ ստեղծած է իր նկարագիրներուն մէջ, վիսպասանին հետ մրցելու անվեհեր, այս նկուն դիշերուան, կատարելագործեալ՝ բնութեան ամէն զուարճութեանց շքեղութիւնները, այս ամէն պերճութիւններն որ զգայարանաց և մտքի զոհունակութեան համար յարդարուած էին՝ Գուքէ իրօք իր թագաւորին շնորհեց՝ այս հմայական բնակարանին մէջ, որու նմանը Եւրոպայի մէջ վեհապետ մը յոյս չէր կրնար ունենալ ստանալու։

Զպիտի խօսինք ոչ մեծ խնջոյքին վրայ որ վեհափառները միացուց 'ի մի սեղան, ոչ պարերգներու վրայ, ոչ հիասքանչ այլափոխութիւններու վրայ. պիտի շատանանք թագաւորին դէմքը նկարագրել, որ 'ի սկզբան զուարթ, բայց, երանաւէտ էր, բայց քիչ առենէն մթին, բռնաբռօսիկ և ցասկոտ դարձաւ։ Իր յատուկ

տունը կ'յիշէր, և այն ողբերգելի պերճութիւնն որ միայն թագաւորութեան գործիքն էին առանց մարդ թագաւորին ստացուածքը լինելու։ Լուվրի մեծ ամանները, Հանրի Բին, Ֆրանսուա Ա-ին, Լուի ԺԱ-ին հինօրեայ կարասիներն և արծաթեղէնները լոկ պատմական յիշատակարաններ էին։ Լոկ արուեստի վերաբերեալ առարկաներ, արքայական պաշտօնի կահն էին։ Իսկ Գուքէի ատաքանին մէջ՝ արժէքն ոչ միայն արուեստին այլ նիւթին մէջն էր։ Գուքէ այնպիսի ոսկի ամաններու մէջ կերակուր կ'ուտէր զոր իրեն յատուկ արհեստագէտները ձուլեր և զարդարեր էին իրեն համար։ Գուքէ այնպիսի գինիներ կ'խմէր որոց անունն իսկ Ֆրանսայի թագաւորը չգիտէր, և զանոնք կ'խմէր այնպիսի տաշտերով, որոց իւրաքանչիւրն աւելի անգին էր քան թէ բոլոր արքունի մառանը։

Ի՞նչպէս նկարագրենք սրահները, վիմակները, պատկերները, սպասաւորները, և ամէն տեսակ սպասները։ Ի՞նչպէս բացատրենք ներքին մատակարարութիւնը, որով կարգը պաշտօնական քաղաքավարութեան, բարօրութիւնը հրամաններու տեղն անցնելով, կոչնականին հաճոյքն ու զոհունակութիւնը դերադոյն օրէնք կը դառնար այն ամէն բանի մէջ որ տանտիրոջ կ'հնազանդէր։

Այն ժիր այլ անձայն մարդկան խումբը, այն կոչնականներուն բաղմութիւնն որ սպասաւորներէ նուազ էին, այն բիւրաւոր կերակուրները, ոսկի և արծաթ ամանները. այն լուսոյ կոհակները, այն դէզադէզ անծանօթ ծաղիկները, զորս իբրև աւելորդ ջերնոյներէն քաղեր էին, քանի որ ջերնոյները գեղափայլ էին առատութեամբ, ամէն կողմը տիրած ներդաշնակութիւնն որ խոստացեալ հանդիսին նախաբանն էր, բոլոր հանդիսականները յափշտակեց, որք քանիցս իրենց սքանչացումը յայտնեցին, չէ թէ ձայնով կամ շարժմամբ, այլ լռութեամբ և մտադրութեամբ, տիրոջը սանձէն ղերծ պալատականին այս երկու լեզուները։

Իսկ թագաւորին աչքն ուրեցան. չիշնեց այնուհետև թագուհոյն նայելու։ Աննա թագուհին՝ որ գոռոզութեան կողմէ ամէն արարածէ դերադոյն էր, իր կոչնատերը ձղմեց իրեն մեծարուած ամէն բաներուն համար ցոյց տուած արհամարհութեամբը։

Նորատի թագուհին՝ որ բարեսիրա էր և կենաց հետաքրքիր, Գուքէն գովեց, մեծ ախորժակով կերակուր կերաւ, և սեղանին վրայ երևցած շատ մը պտուղներու անունը հարցուց։ Գուքէ պատասխանեց թէ անունները չգիտէ։ Այս պտուղներն իր պտղանոցին արդիւնքն էին, ստէպ ինքն անձամբ մշակեր էր, տարաշխարհիկ պտղաբերութեան մասին դիտուն մը լինելով։ Թագաւորն այս փափկութիւնը զգաց, սակայն աւելի նուաստացաւ։ Թագուհին փոքր ինչ ժողովրդասէր կ'գտնէր, և Աննա թագուհին ալ փոքր ինչ Հերա մը։ Իր բոլոր հոգն եղաւ չափազանց արհամարհանքի կամ պարզ զարմանքի սահմանին մէջ պաղերես երևիլ։

Բայց Գուքէ այս ամենը գուշակեր էր. ամէն բան նախատեսող մարդոց մին էր նա։

Թագաւորը յատկապէս յայտներ էր որ Գուքէի տունն որչափ ատեն որ մնայ չէր կամեր իր կերակուրն առանձին և պաշտօնական ձևով ճաշակել, այլ կ'փափաքէր որ ամենուն հետ միասին ճաշէ. բայց՝ Գուքէի խնամքը, թագաւորին ճաշն առանձին կ'մեծարուէր, ընդհանուր կոչունքի ատենը։ Այս ճաշը՝ որ իր կազմութեամբը հրաշալի էր, կ'պարունակէր թագաւորին սովորաբար սիրած և ընտրած բաները։ Լուի, որ իր թագաւորութեան մէջ երևելի ախորժակ ունեցող մարդ մ'էր, պատճառ մը չէր կրնար գտնել անօթի չմ' ըսելու։

Պ. Գուքէ աւելի լաւ գործեց. թագաւորին հրամանին հնազանդելու համար սեղանը նստեր էր, բայց այն ինչ թանները մեծարեցին, որ սեղանէն ելաւ և սկսաւ ինքն անձամբ թագաւորին սպասաւորել, մինչև վերատեսչուհին մայր թագուհոյն աթոռին եռեռը կ'կենար։ Հերայի արհամարհանքն և Արամազդայ մրմունջներն այս չափազանց շնորհալի վարմունքին դէմ բան մը չգտան։ Մայր թագուհին պաքսիմատ մը կերաւ Սան-Լուքայի գինին մէջ թաթխելով, և թագաւորն ամէն բան ճաշակեց Պ. Գուքէի ըսելով.

— Անկարելի է, պարոն վերատեսուչ, լաւագոյն հայկերոյթ մ'ընել։

Ասոր վրայ պալատականներն այնպէս խանդով սկսան լսիել

որ կարծես թէ Եկիպտոսի բաղմերամ մարախներ գալարի հաճարներու վրայ ընկեր էին։

Բայց դարձեալ Թագաւորը՝ իր անօթութիւնը յագեցնելէն ետև՝ տրտմութեան մէջ ընկաւ, այնչափ տրտմութեան որ կ՚չափաւորէր պէտք եղած խնդութեամբ մը, տրտմութիւն մ՚որու պատճառը մասնաւորապէս իր պալատականաց առ Ֆուքէ ցոյց տուած կամահաճութիւնն էր։

Տ՚Արդանեան որ շատ կ՚ուտէր և բաւական կ՚խմէր, ամէն կերակուրներու մասնակից եղաւ, բայց միանգամայն շատ օգտակար դիտողութիւններ ըրաւ։

Ընթրիքը լմննալէն ետև՝ Թագաւորը չուզեց որ Ճեմելիքէն ետ մնայ։ Ծառաստանը լուսաւորուած էր։ Իսկ լուսինն ալ՝ որպէս թէ Վօի իշխանին հրամանին հլու էր, իր ադամանդներով և պուսֆորովն արծաթափայլ լուսաւորեց ծառերն ու լիճերը։ Անուշ զովութիւն մը կար։ Ծառուղիները հովանոտ էին և այնպէս կակուղ աւազուտ՝ որ ոտներն անոնց վրայ կ՚սահէին։ Հանդէսը կատարեալ եղաւ. վասն զի Թագաւորն անտառի մը շրջանն ընելուն Լա Վալիէրին հանգիպեցաւ անոր ձեռքը սեղմեց և ըսաւ. «Քեզ կ՚սիրեմ». և ոչ ոք լսեց այս խօսքը, բայց 'ի Պ. տ՚Արդանեան՝ որ ետևէն կ՚երթար, և Պ. Ֆուքէ՝ որ առջևէն կ՚քալէր։

Այս հմայութեանց դիշերն այսպէս կ՚անցնէր։ Թագաւոր իր սենեակը խնդրեց։ Իսկոյն ամենքը շարժման մէջ ընկան։ Թագուհիներն անցան 'ի ձայն տաւիղներու և սրինգներու։ Թագաւորը վեր ելնելու ատեն իր հրացանակիրները դատաւ, զոր Պ. Ֆուքէ Մըլէօնէն բերել տուեր և ընթրելու հրաւիրեր էր։

Տ՚Արդանեանի կասկածները բոլորովին փարատեցան։ Ցողնած էր, լաւ ընթրիք ըրեր, և իր կենաց մէջ մի անգամ կ՚ուզէր վայելել հանդէս մը Ճշմարիտ Թագաւորի մ՚ապարանը։

— Պ. Ֆուքէ — կ՚ըսէր նա — իմ ուղած մարդս է։

Մեծ արարողութեամբ Մորֆէոսի սենեակն առաջնորդեցին Թագաւորը. պարտաւոր ենք մեր ընթերցողաց այս սենեկին մէկ թեթև նկարագիրն ընել։ Պալատին ամենէն գեղեցիկ ու ընդարձակն էր։ Լը Պրէօն դմբեթին ներքնակողմը նկարեր էր, Մորֆէոսին

ինչպէս Թագաւորներու նոյնպէս հասարակ մարդկան ազդած խնդութիւն և տրտմելի երազներ։ Պատկերհանը նկարեր էր Ճոխութեամբ ինչ որ քունը կրնայ ծնիլ շնորհալի, ինչ մեղը, անուշահոտութիւններ, ծաղիկներ և նեկտար, ինչ հեշտութիւններ կամ հանդիսա որ կ՚թափէ զդայարանաց մէջ։ Մէկ մասն որչափ որ գողարիկ էր այս նկարագրութեան նոյնչափ սոսկալի էր միւս մասը։ Բաժակներն որ թոյն կ՚թափեն, ննջողին գլխուն վրայ փայլող սուրը, պժգալի գիմակներով կախարդներ և Ճիւաղներ, կիսախաւարներ՝ որ աւելի ահռելի են քան բոցը կամ խորին գիշերը. ահա իրրև զուգակշիռ այս բաները տուեր էր իր շնորհաղեղ նկարներուն։

Երբ Թագաւորն այս շքեղ սենեակը մտաւ, սարսուռ մ՚զդաց։ Ֆուքէ ասոր պատճառը հարցուց։

— Քուն ունիմ — պատասխանեց Լուի բաւական դունատ։

— Միթէ Ձեր Վեհափառութիւնը կ՚ուզէ՞ անմիջապէս իր սենեկապանները։

— Ո՛չ, մէկ քանի անձերու հետ խօսելիք ունիմ — ըսաւ Թագաւորը։ — Թող Պ. Գօլպէրը կանչեն։

Ֆուքէ ծունկի գուրս ելաւ։

ԺԵ

ՎԱՐՊԵՏ ՄԸ ՎԱՐՊԵՏՈՐԴԻՆ ԱՌՋԵՒ

Տ՚Արդանեան ժամավաճառ չէր եղած. իր սովորութենէ դուրս էր դանդաղել։ Արամիսի վրայ տեղեկութիւն առնելէն ետև՝ մինչև զանելն ետևէն ընկեր էր։ Արդ՝ Արամիս՝ երբ մի անգամ Թագաւորը Վօ մտաւ, իր սենեակը քաշուեր էր, անտարակոյս Նորին Վեհափառութեան զուարճութեանց համար նորանշան բան մը մտածելու համար։

Տ՚Արդանեան իր գալուստն իմացնել տուաւ, և երկրորդ դատի-

կոնը, իր վիժակներուն պատճառաւ, կապոյտ կոչուած սենեկին մէջ դտաւ, ըսինք, Վանի եպիսկոպոսը Բորթոսի և ուրիշ նոր եպիսկուբեանների հետ։

Արամիս ելաւ և իր բարեկամը համբուրեց, լաւագոյն աթոռն անոր ընծայեց, և որովհետև տեսան ընդհանրապէս որ հրացանակիրը լուռ կ'կենար անշուշտ Արամիսի հետ զաղտնի խօսակցելու մտօք, եպիսկուբեանը հրաժեշտ տուին ու ելան դացին։

Բորթոս միայն տեղէն չշարժեցաւ։ Սոյդ է որ շատ կերած լինելուն՝ իր թիկնաթոռին վրայ կ'քնանար։ Այս երրորդ անձին ներկայութեան պատճառաւ խօսակցութեան արդելք մը չպատահեցաւ։ Բորթոս ներդաշնակ կերպով կ'խրկար, և այս տեսակ բամբասին ձայնի վրայ կարող էին խօսիլ իրը հին եղանակի մը վրայ։

Տ'Արդանեան զդաց որ իրեն կ'ընկնէր խօսակցութիւնը բանալու։ Ծանր էր եկած փնտռած վիճաբանութիւնը, ուստի ինքը պարզապէս խնդիրը բացաւ։

— Լաւ ուրեմն, առասիկ 'ի Վ.օ կ'դանուիս — ըսաւ նա։

— Հապա, տ'Արդանեան։ Միթէ կ'սիրեն այս բնակութիւնը։

— Շատ, և Պ. Գուքէն ալ շատ կ'սիրեմ։

— Միթէ չքնաղ մարդ մը չէ։

— Ասկից աւելի հնարին չէ լինիլ։

— Կ'ըսեն թէ 'ի սկզբան թագաւորը պաղ երես ցցուց անոր, բայց ապա կակղցաւ։

— Ուրեմն, չտեսար, քանի որ «Կ'ըսեն» կ'ըսես։

— Ո՛չ, այս գուրս ելնող պարոններուն հետ վաղուան ներկայացման և ֆեպերին (carrousel) վրայ կ'խորհրդակցի։

— Ա՛հ, ուրեմն դու այս տեղ սոյն հանդիսին կարդադրիչն ես։

— Ինչպէս դիտես, երևակայութեան զուարճութեանց բարեկամն եմ. ես միշտ մէկ կերպով բանահիւս եղած եմ։

— Կ'յիշեմ ոտանաւորներդ։ Չքնաղ էին։

— Ես, զանոնք մոռցայ. բայց այժմ ուրիշներունը սորվելով կ'հրճուիմ, երբ այս ուրիշները Մոլիէր, Բէլիսօն, Լա Ֆոնդէն և այլն կ'կոչուին։

— Արամիս, գիտես այս իրիկուն ընթրելու առենս ի՞նչ ընկաւ միտքս։

— Ո՛չ, ըսէ ինձ, թէ ոչ չպիտի զուշակեմ, այնչափ շատ են խորհուրդներդ։

— Սա միտքն եկաւ գլուխս որ Ֆրանսայի Ճշմարիտ թագաւորը Լուի ԺԴ չէ։

— Հէյ — ըրաւ Արամիս՝ իր աչքն ակամայ հրացանակրին աչաց բերելով։

— Ո՛չ, Պ. Գուքէն է։

Արամիս շունչ առաւ և ժպտեցաւ։

— Ահա դու ալ այլոց պէս նախանձոտ ես — ըսաւ նա։ — Դրաւ կ'դնեմ որ այդ խօսքը Պ. Գօլպէրին բերնէն առիր։

Տ'Արդանեան Արամիսը փաղաքշելու համար՝ Մըլէօնի գինիին առթիւ Գօլպէրի ձախող ընթացքը պատմեց։

— Այդ Գօլպէրը վատագրի մ'է — ըսաւ Արամիս։

— Հաւանաս վկայ, իրաւ է։

— Մտածէ մի անդամ որ այն թշուառականը չորս ամսէն քու պաշտօնեայդ պիտի լինի — յարեց եպիսկոպոսը։

— Վա՜հ։

— Եւ դու անոր պիտի ծառայես՝ ինչպէս ծառայեցիր Ռիշլիէօին, Մազարէնին։

— Ինչպէս որ կ'ծառայես Գուքէի — ըսաւ տ'Արդանեան։

— Սա տարբերութեամբ, բարեկամդ իմ, որ Պ. Գուքէն Պ. Գօլպէրը չէ։

— Սոյդ է։

Եւ տ'Արդանեան տրտմութիւն կեղծեց։

— Բայց — յարեց նա պահ մ'ետքը — ինչո՞ւ համար կ'ըսէիր որ Պ. Գօլպէր չորս ամսէն պաշտօնեայ պիտի լինի։

— Վասն զի Պ. Գուքէ պաշտօնէութենէ պիտի դադրի — պատասխանեց Արամիս։

— Պիտի կործանի, այնպէս չէ՞ — ըսաւ տ'Արդանեան։

— Անյարիր։

— Ուրեմն, ինչո՞ւ համար հանդէսներ կ'տայ — ըսաւ հրացան

նակիրն այնպէս բնական բարեսիրութեամբ մ՚որ Եպիսկոպոսը պահ մը խարուեցաւ։ — Ինչո՞ւ համար անոր միտքը չդարձուցիր։

Խօսքին այս վերջին մասը չափազանցութիւն մ՚էր։ Արամիս նորէն կասկածի դնաց։

— Վասն զի պէտք է Թագաւորին հաճելի երևիլ։

— Կործանելո՞վ։

— Այո՛, անոր համար կործանելով։

— Եղակա՞ն հաշիւ։

— Հարկը։

— Ես ալ այդ հարկը չեմ տեսներ, սիրելի Արամիս։

— Ի՞նչպէս չէ, կ՚զլուեմ անշուշտ Պ. Գօլպէրի նորածին հակառակութիւնը։

— Եւ թէ Պ. Գօլպէր Թագաւորը կ՚դրդէ որ վերատեսուչը պաշտօնէն վար ձգէ։

— Այդ ամենուն աչքին կ՚զլնէ։

— Եւ թէ Պ. Փուքէի դէմ դատաճանութիւն կայ։

— Այդ ամենուն յայտնի է։

— Ի՞նչ հաւանականութիւն կայ որ Թագաւորը դատակից ընտրուի այնպիսի մարդու մը դէմ որ ամէն ինչ ծախք ըրաւ անոր հաճելի լինելու համար։

— Ճշմարիտ է — ըսաւ Արամիս ծանրութեամբ, հաղիւ համոզուած և խօսակցութեան տարբեր ձև մը տալու հետաքրքրութեամբ։

— Յիմարութիւն կայ և յիմարութիւն — վրայ բերաւ տ՚Արդանեան։ — Այդ ձեր ըրած բոլոր յիմարութիւնները չեմ սիրեր։

— Որո՞նք։

— Ընթրիքը, պարահանդէսը, համերգը, կատակերգը, ձիապարը, ջրվէժները, ուրախութեան հրախաղութիւնները, լուսաւորութիւններն ու պարդևները, այս ամենը կ՚ընդունիմ, բայց պարապային յարմար այս ծախքերը բաւական չէ՞ին, պէտք էր նաև . . . ։

— Ի՞նչ։

— Պէտք էր բոլոր տունն ու տնեցիքը նորոգ հանդերձել, օրինակի համար։

— Ո՛հ, ճշմարիտ է։ Այդ ըսի Պ. Փուքէի. պատասխան տուաւ ինձ որ՝ եթէ բաւական հարուստ լինէր, թագաւորին պիտի ընծայէր հիմէն ցկատար նորոգ շինուած դղեակ մը, բոլոր կահ կարասիով, և թէ երբ թագաւորը մեկնէր, այս ամենը պիտի այրէր որ ուրիշներուն չծառայէ։

— Այդ արտակերգրան ընթացք մ՚է։

— Ես ալ նոյն դիտողութիւնն ըրի. ինձի սա պատասխանը տուաւ. «Թշնամիս է այն որ ինձ խնայութեան յորդորներ կը կարդայ»։

— Այդ յիմարութիւն է, ըսի քեզի, ինչպէս նաև այդ պատկերը։

— Ի՞նչ պատկեր — հարցուց Արամիս։

— Թագաւորինը, այն խաղը . . . ։

— Խաղը։

— Այո՛, որու համար Պ. Բէրսրէնի քովէն առդիններ առիր։

Տ՚Արդանեան կայ առաւ։ Նեան արձակեր էր. կ՚մնար այժմ անոր ուր զարնելը դիտել։

— Այդ շնորհալի ընծայ մ՚է — պատասխանեց Արամիս։

Տ՚Արդանեան շիտակ բարեկամին եկաւ, անոր երկու ձեռքը բռնեց, և աչացը մէջ նայելով,

— Արամիս — ըսաւ — դեռ ևս դիս փոքր ինչ կ՚սիրե՞ս։

— Ի՞նչպէս չեմ սիրեր։

— Լա՛ւ, ուրեմն ծառայութիւն մը կ՚պահանջեմ։ Ինչո՞ւ համար Պ. Բէրսրէնի կրպակէն Թագաւորին դղեստներուն առդիններն առիր։

— Եկուր ինձի հետ և հարցուր այն խեղճ Լը Պրէօնի որ այն պատկերին համար երկու օր և երկու դիշեր աշխատ եղաւ։

— Արամիս այդ ամենուն համար ճշմարտութիւնն է, բայց ինձի համար . . . ։

— Ճշմարիտը, տ՚Արդանեան, զարմանքս կ՚դրդռես։

— Ինձի հետ բարեսրտութեամբ վարուէ. ճշմարտութիւնն ըսէ ինձ. չես ուզեր անշուշտ որ ինձի տհաճութիւն մը պատճառի, այնպէս չէ։

— Սիրելի բարեկամ, անհասկանալի կ'դառնաս։ Ի՞նչ կասկած մնաս սիրադ։

— Միթէ իմ բնազդումիս կ'հաւատաս։ Երբեմն կ'հաւատայիր։ Լաւ ուրեմն, բնազդում մը կ'ըսէ ինձ որ Թագուն խորհուրդ մը ունիս։

— Ե՞ս, Թագուն խորհուրդ մը։

— Սոսկ չեմ այդ մասին։

— Վկայ ունիս։

— Սոսկ չեմ իրաւ, բայց 'ի հարկին կրնամ երդնուլ։

— Լաւ ուրեմն, ո՛Արդանեան, ինձ սասիկ վիշտ կ'պատճառես։ Արդարև՝ եթէ խորհուրդ մ'ունենայի զոր քեզնէ պահելու պարտաւորէի, պիտի ծածկէի, այնպէս չէ՞. եթէ խորհուրդ մը ունենայի քեզի յայտնելու, արդէն յայտնած պիտի լինէի։

— Ո՛չ, Արամիս, ո՛չ, կան խորհուրդներ որոնք նպաստաւոր ժամուն կ'յայտնուին։

— Ուրեմն, իմ բարի բարեկամ — վրայ բերաւ եպիսկոպոսը ծիծաղելով — իրաւ է որ նպաստաւոր ժամը դեռ չէ հասած։

Տ'Արդանեան մելամաղձութեամբ գլուխն օրեց։

— Բարեկամութի՛ւն, բարեկամութի՛ւն — ըսաւ նա — ունայն անուն։ Ասասիկ մարդ մ'որ, եթէ խնդրէի, կտոր կտոր մարմինը մանրել կ'տար ինձի համար։

— Ճշմարիտ է — ըսաւ Արամիս աղնութեամբ։

— Եւ այս մարդը՝ որ իր երակներուն արիւնն ինձի տալու պատրաստ է, իր սրտին մէկ անկիւնը չպիտի բանայ։ Բարեկամութի՛ւն, վերստին կ'ըսեմ, դու միայն ստուեր մ'ես, խայծ մ'ես, ինչպէս ամէն ինչ որ աշխարհիս մէջ կ'փայլի։

— Մեր բարեկամութեան վրայ այդպէս մի՛ խօսիր — պատասխանեց եպիսկոպոսը հաստատ և համոզակեր ձայնով մը։ — Քու ըսած բարեկամութեանդ տեսակէն չէ այն։

— Մեզի նայէ, Արամիս։ Ասասիկ ենք չորսէն երեք հոգի։ Դու զիս կ'խաբես, քու վրադ կասկած ունիմ և Բորթոս կ'քնայ։ Բարեկամներու աղուոր խմբակ մը, այնպէս չէ՞, աղուոր մնացորդ մը։

— Տ'Արդանեան, քեզի բան մը միայն կրնամ ըսել, և Աստուածանին վրայ կ'հաստատեմ։ Քեզ՝ ինչպէս երբեմն կ'սիրեմ։ Եթէ քեզնէ կասկած ունիմ, ուրիշներու պատճառաւ է, և ոչ քու և իմ պատճառաւ։ Ի՛նչ որ ընեմ և ինչ բանի մէջ որ յաջողիմ, քու բաժինդ պիտի դանես։ Նոյն շնորհը խոստացիր ինձ, խօսէ։

— Ձեմ սխալիր, Արամիս, այդ խօսքերը, այս արտասանած միջոցիդ՝ վեհանձնութեամբ լի են։

— Կարելի է։

— Պ. Գօլպէրի դէմ կ'դաւադրես։ Եթէ այդ է խնդիրը, տէր վկայ, ըսէ ինձ ուրեմն, գործին քովն է, անոր ակռան կրնամ խլել։

Արամիս արհամարհական ժպիտ մը չկրցաւ ծածկել որ իր աղնիւ կերպարանին վրայ սահեցաւ։

— Եւ եթէ Պ. Գօլպէրի դէմ երբէք դաւադրեի, ինչ չարիք կայ ասոր մէջ։

— Քեզի համար խիստ պղտիկ բան մ'է այս, և Գօլպէրը տապալելու համար չէր որ Պ. Բէրսրէնէն առղիններ խնդրեցիր։ Ո՛չ, Արամիս, թշնամի չենք, եղբայր ենք։ Ըսէ ինձ թէ ի՞նչ բանի պիտի ձեռնարկես, և ո՛Արդանեանի խօսքս խօսք, եթէ չեմ կարող քեզի օգնել, կ'երդնում չէզոք մնալու։

— Բանի մը չեմ ձեռնարկեր — ըսաւ Արամիս։

— Արամիս, ձայն մ'ինձ կ'խօսի, զիս կ'լսաւորէ, այդ ձայնն երբէք խաբած չէ զիս։ Թագաւորին դէմ է ոխդ։

— Թագաւորի՞ն — դոչեց եպիսկոպոսը դժգոհութիւն կեղծելով։

— Այդ կերպարանդ զիս չպիտի համոզէ։ Թագաւորին դէմ ես, կ'կրկնեմ քեզի։

— Օգնեմ պիտի ինձ — ըսաւ Արամիս, միշտ հեղնական ծիծաղով մը։

— Արամիս, ոչ միայն քեզի պիտի օգնեմ, ոչ միայն չէզոք պիտի մնամ, այլ աւելի ևս պիտի ընեմ, քեզ պիտի աղատեմ։

— Խենթ ես, ո՛Արդանեան։

— Մեր երկուքէն աւելի խելացին ես եմ։

— Դա՛ւ, դու կասկած ունենաս թէ թագաւորին կենայ կ'դաւաճանեմ։

— Ո՞վ կ'ըսէ թէ կ'դաւաճանես — ըսաւ հրացանակիրը։

— Ուրեմն բացատրենք ինդիրը, չեմ կրնար դուշակել թէ ինչ բան կարելի է ընել մերինին պէս օրինաւոր թագաւորի մը դէմ, եթէ ոչ կեանքը բառնալ։

Տ'Արդանեան պատասխան չտուաւ։

— Բայց չես մոռացեր որ այս տեղ ձեր պահակներն ու հրացանակիրներն ունիք — ըսաւ եպիսկոպոսը։

— Իրաւ է։

— Պ. Գուքէի տունը չէք այլ ձեր տունն էք։

— Իրաւ է։

— Այս միջոցին իսկ Պ. Գօլպէրն ունիք որ Գուքէի դէմ խորհուրդ կ'տայ թագաւորին ինչ որ դու թերևս կամիր տալ եթէ Պ. Գուքէի կուսակիցը չլինէի։

— Արամի՛ս, Արամի՛ս, կ'աղաչեմ, բարեկամի խօսք մ'արտասանէ։

— Բարեկամներու խօսքը Ճշմարտութիւնն է։ Եթէ մատուս Անն թագուհւոյն որդւոյն դպչելու միտք մ'ունիմ, այս Գրանսայի աշխարհին Ճշմարիտ թագաւորին, եթէ անոր աթոռին առջև խոնարհելու հաստատ դիտաւորութիւնը չունիմ, եթէ՝ իմ կարծեօքս՝ վաղուան օրն աստ, 'ի Վ.՝ իմ թագաւորիս ամենէն փառաւոր օրը չպիտի լինի, թոյլ կայծակը ինս տոչորէ, կ'հաւանիմ։

Արամիս այս խօսքն արտասաներ էր իր երեսը սենեկին նիրհեկին կողմը դարձուցած, և տ'Արդանեան՝ նոյն նիրհեկին կրելմնած՝ չէր կրնար կասկածիլ որ այն տեղ մէկը պահուած լինի։ Այս խօսքին քաղցրութիւնը, կամաւոր ծանրութիւնը, երդման հանդիսաւորութիւնը՝ հրացանակրին ամենակատարեալ զոհունակութիւն տուին։ Արամիսի երկու ձեռքը բռնեց և մտերմաբար սեղմեց։

Արամիս առանց դունատելու հանդուրժեր էր յանդիմանութիւններու, բայց կարմրեցաւ երբ դովեստները լսեց։ Տ'Արդանեան պատրեալ իրեն պատիւ մ'էր։ Տ'Արդանեան վստահ իրեն ամթ կ'բերէր։

— Մինթէ կ'մեկնիս — ըսաւ անոր գրկելով զանի որպէս զի իր կարմրութիւնը ծածկէ։

— Այո՛, իմ ծառայութիւնս զիս կ'կոչէ։ Գիշերային կարգախօսն ունիմ առնելու։

— Ո՞ր պիտի պառկիս։

— Ըստ երևոյթին թագաւորին նախատեսնեակը։ Հապա Բորթոս։

— Հետդ տար, կ'աղաչեմ, վասն զի թնդանօթի մը պէս կը խորդայ։

— Ա՛հ . . . տրեմն ք'զի հետ չբնակիր — հարցուց տ'Արդանեան։

— Ամենեին։ Զգիտեմ ո՞ր է իր սենեակը։

— Շատ լաւ — պատասխանեց հրացանակիրն՝ որու յետին կասկածները կ'փարատէին այս երկու ընկերակիցներու բաժանումը տեսնելով։

Եւ Բորթոսի ուսին սաստիկ զարկաւ։ Բորթոս պատասխանեց մունչելով։

— Եկուր — ըսաւ տ'Արդանեան։

— Դէ՛ն, տ'Արդանեան, սիրելիդ իմ բարեկամ, ի՞նչ գիպուածով։ Ո՛հ, ատոյգ է։ Վօի հանդիսական եմ։

— Այդ աղէ՞ զգեստովդ։

— Ի՞նչ ազնուութիւն էր Պ. Գօրլէն Վ.օլնէրի կողմէ, այնպէս չէ՞։

— Սուս — ըսաւ Արամիս — այնպէս կ'քալես որ տախտակները պիտի խորտակես։

— Իրաւ է — ըսաւ հրացանակիրը — այս սենեակը դմբեթին վրայ է։

— Եւ իրրև զինարան չընարեցի այս տեղս — յարեց եպիսկոպոսը։ — Թագաւորին սենեակն իրրև ձեղուն ունի Մ'որթիէսի անուշութիւնները։ Մի՛ մոռնար որ իմ յատակս սոյն ձեղունին աստուն է։ Գիշեր բարի, բարեկամներս, տատն վայրկենէն պիտի քնանամ։

Եւ Արամիս թեթև մը ծիծաղելով զանոնք գուրս տարաւ։ Ապա երբ մեկնեցան, պարոնտակները քաշելով և պատուհանները գոցելով, կոչեց.

— Տէր իմ, տէր իմ։

Փիլիպ ներհակէն դուրս ելաւ, անկողնին եանը դրուած զուռ մը հրելով։

— Պ. տ՚Արդանեան շատ կասկածներ ունի — ըսաւ նա։

— Ա՛հ, Պ. տ՚Արդանեանը ճանչցիք, այնպէս չէ՞։

— Անունը չառաւած իմացայ որ ինքն է։

— Այս է հրայանակիրներուդ հրամանատարը։

— Ինչ շատ անձնուէր է — պատասխանեց Փիլիպ անձնական դերանունին վրայ կոխելով։

— Շան պէս հաւատարիմ, և երբեմն խածան։ Եթէ տ՚Արդանեան ձեզ չճանչէ Ֆ—ան աներևոյթ չեղած, յանիսեան վստահ եղիք տ՚Արդանեանի վրայ. վասն զի՝ այն ատեն եթէ բան մը չտեսնէ, իր հաւատարմութիւնը պիտի պահէ։ Եթէ ուշ հասկընայ գործը, Կասքօն է և երբէք չպիտի խոստովանի որ խաբուեր է։

— Ես ևս այդ կ՚մտածէի։ Ի՞նչ պիտի ընենք հիմակ։

— Երթաք պիտի դիտարանը նստիք և պիտի տեսնէք թէ թաղաւորը պառկելու ատեն՝ ինչպէս կ՚պառկի՝ թեթև արարողութեամբ։

— Շատ աղէկ. ուր պիտի կենամ։

— Սա ծալուկ աթոռին վրայ նստիք։ Հիմակ պապանը պիտի սահեցնել տամ։ Այս բացուածքէն պիտի նայիք, վասն զի այս բացուածքը թաղաւորին դմբեթին մէջ շինուած սուտ պատուհաններուն կ՚նայի։ Կ՚տեսնէք։

— Կ՚տեսնեմ թաղաւորը։

Եւ Փիլիպ դող ելաւ որպէս թէ թշնամի մը կ՚տեսնէր։

— Ի՞նչ կ՚ընէ։

— Իր քովը մարդ մը նստեցնել կ՚ուզէ։

— Պ. Գուքէն։

— Ո՛չ, ո՛չ, սպասէ . . .։

— Ցիշատակագիրնե՛ր, իշխանս, նկարագիրնե՛ր յիշեցէք։

— Այն մարդը զոր թաղաւորն իր մօտ նստեցնել կ՚ուզէ՝ Գօլպէրն է։

— Գօլպէր թաղաւորին առջևը — գոչեց Արամիս։ — Անկարելի բան։

— Նայէ։

Արամիս իր աչքը սուղեց բացուածքէն։

— Այո՛ — ըսաւ — նոյն ինք Գօլպէրն է։ Ո՛հ, տէր իմ, այժմ ինչե՛ր պիտի լսենք, և այս մեերմական խօսակցութենէ ինչ պիտի ծագի արդեօք։

— Անտարակոյս, Պ. Գուքէի համար նպաստաւոր բան մը չպիտի ծագի։

Արքայորդին չէր սխալեր։ Արդէն տեսանք որ Լուի ԺԴ Գօլպէրը կանչել տուեր էր, և Գօլպէր եկեր էր։ Ասոնց մէջ խօսակցութիւնը սկսեր էր թաղաւորին կողմէ մեծ շնորհ տրուելով Գօլպէրին։ Իրաւ է որ թաղաւորը միայնակ էր իր հպատակին հետ։

— Գօլպէր, նստիր։

Տեսուչն ուրախութեան կատարը հասած՝ այն որ կ՚վախնար որ չվնտռուի, այս բարձր պատիւը մերժեց։

— Կ՚ընդունի՞ — ըսաւ Արամիս։

— Ո՛չ, ոտքի վրայ կ՚կենայ։

— Մտիկ ընենք, արքայորդիս։

Եւ ապագայ թաղաւորն, ու ապագայ պապն այս պարզ մահկանայուները մտիկ ըրին զոր իրենց ոտից ներքև ունէին, և զոր եթէ ուզէին կարող էին ճզմել։

— Գօլպէր — ըսաւ թաղաւորը — այսօր դիս շատ նեղացուցիր։

— Վեհափառ . . . դիտէի։

— Շատ աղէկ։ Այդ պատասխանը կ՚սիրեմ։ Այո՛, դիտէիր։ Բաւական քաջութիւն պէտք է այդպէս վարուելու համար։

— Ձեր Վեհափառութեան դժգոհութիւն պատճառելու վտանգին մէջ կ՚ընկնէի, բայց իր ճշմարիտ շահն իրմէ ծածկելով վտանգի մէջ կ՚ձգէի։

— Ի՞նչ, միթէ ինձի համար տեղէ մը վախ ունիս։

— Եթէ անմարտութեան մ՚անցամ հանդիպէիք, Վեհափառ — ըսաւ Գօլպէր — դարձեալ վախնալու տեղի ունէի. վասն զի

թաղաւորի մ՚այսպիսի հայկերոյթներ կ՚արուի միայն շատ մը կեր-բակուրներով զանի խեղդելու համար։

Եւ այս կոշտ կատակն արձակելէն ետեւ՝ Գօլպէր սպասեց յօժարակամ որ անոր ազդեցութիւնը տեսնէ։

Լուի ԺԴ, իր տերութեան մէջ ամենէն ունայնասէրն ու փափկասունը՝ ներեց Գօլպէրին այս ղրաբանութեան։

— Ճշմարիտը — ըսաւ — Պ. Ֆուքէ խիստ աղուոր Ճաշ մը սուաւ ինձ։ Ըսէ ինձ, Գօլպէր, այսչափ դումարներ ուստի կը դտնէ Ֆուքէ այս ահագին ծախսուց հատնելու համար։ Գիտես սրդեօք։

— Այո՛, գիտեմ, Վեհափառ։

— Պա՞ք է որ այս կա՛ս փոքր ինչ բացատրես։

— Շատ գիւրութեամբ, մէկ թանկի տարբերութեամբ։

— Գիտեմ որ դու Ճիշտ կ՚հաշուես։

— Դանձուց տեսչէ մ՚այս առաջին պահանջելի հանդամանքն է։

— Ամենքը չունին այդ հանդամանքը։

— Շնորհապարտ եմ Ձեր Վեհափառութեան որ իր բերնին մէջ այդպիսի գդուելի գովեստ մը կ՚ընծայէ ինձ։

— Ուրեմն Պ. Ֆուքէ հարուստ է, շատ հարուստ, և այս բանս, պարոն, ամէն մարդ գիտէ։

— Ամէն մարդ, կենդանիներն ինչպէս նաև մեռելները։

— Ի՞նչ ըսել է այդ, Պ. Գօլպէր։

— Կենդանիները Պ. Ֆուքէի հարստութիւնը կ՚տեսնեն, արդիւնց վրայ կ՚զմայլին և ծափ կ՚զարնեն. բայց մեռելները՝ մեղնեաւելի հմուտ, պատճառները գիտեն և կ՚ամրաստանեն։

— Լաւ ուրեմն, Պ. Ֆուքէ իր հարստութիւնը քանի մը պատճառներու պարտաւոր է։

— Վերատեսչի պաշտօնը շատ անպամ դայն վարողներուն կը նպաստէ։

— Ուելի մտերմութեամբ պարտաւոր ես ինձ խօսելու. բանէ մը մի վախնար, բոլորովին մինակ ենք։

— Երբէք բանէ մը չեմ վախնար՝ իմ խղճիս ասպարին և թագաւորիս պաշտպանութեան ներքև, Վեհափառ։

Եւ Գօլպէր խոնարհութիւն ըրաւ։

— Լաւ ուրեմն, եթէ մեռելները խօսէին . . .։

— Ներքեւն կ՚խօսին, Վեհափառ։ Ահա կարդացէք։

— Ա՛հ — մրմնաց Արամիս արքայորդւոյն ականջին՝ որ իր մատնատած մտիկ կ՚ընէր առանց բան մը կորուսելու — քանի որ այս տեղ կ՚գտնուիք, տէր իմ, թագաւորի պաշտօնդ սորվելու համար՝ մտիկ ըրէք արքայական կատարեալ վստահութեամբ մը։ Այնպիսի տեսարանի մը ներկայ պիտի գտնուիք զոր Աստուած միայն կամ լաւ ևս սատանան կ՚յաջանայ և՝ ի գործ կ՚դնէ։ Քաջ մտիկ ըրէք, պիտի օգուտ քաղէք։

Արքայորդին իր ուշադրութիւնը կրկնապատկեց, և տեսաւ Լուի ԺԴն որ Գօլպէրի ձեռքէն անոր կարդացած մէկ նամակը կ՚առնուր։

— Հանդուցեալ կարմինալին գ՚ինն է այս — ըսաւ թագաւորը։

— Ձեր Վեհափառութիւնը լաւ յիշողութիւն մ՚ունի — պատասխանեց Գօլպէր ծռելով — և այս սքանչելի ընդունակութիւն մ՚է աշխատութեան սահմանեալ թագաւորի մը համար՝ այսպէս առաջին տեսքով ձեռագիրները ճանչելը։

Թագաւորը Մազարէնի մէկ գիրը կարդաց, որ արդէն ընթերցողին ծանօթ է՝ տիկին Շէվրէօզի և Արամիսի մէջ պատահած կռուէն՝ ի վեր. ուստի նոր բան մը չպիտի իմացնենք եթէ նոյն գիրը վերատին մէջ բերենք։

— Լաւ չեմ հասկընար — ըսաւ թագաւորը սաստիկ հետաքրքրութենէ շարժեալ։

— Ձեր Վեհափառութիւնը տակաւին գանձուց հաշիւներուն սովորութիւն չունի։

— Կ՚նայիմ որ խնդիրը Պ. Ֆուքէի տրուած ստակի վրայ է։

— Տասն երեք միլիօն, ազնիւ դումար մը։

— Այո՛, հասկրցայ . . . լաւ, այս տասն երեք միլիօնը հաշիւներու համապատասխարէն պակաս է։ Ահա այդ կէտը լաւ չեմ հասկընար, ըսի քեզի։ Ինչու համար և ի՞նչպէս այս բացը կարելի պիտի լինի։

— Կարելի չեմ ըսեր, այլ իրական կ՚ըսեմ։

— Կ'ըսես թէ տասն երեք միլիոն հաշիւներէն կ'պակսին։

— Ըսողն ես չեմ, այլ տումարը։

— Եւ Պ. Մաղարէնի այս նամակը սոյն գումարին գործածութիւնն և աւանդապահին անունը կ'ցուցնէ։

— Ինչպէս որ Ձեր Վեհափառութիւնը կրնայ համոզուիլ։

— Այո՛, արդարև, ասկից կ'հետևի որ Պ. Ֆուքէ տակաւին տասն երեք միլիոնը չէ հատուցեր։

— Այս հաշիւները կ'ցուցնեն, այո՛, Վեհափառ։

— Լաւ ուրեմն, այն ատե՞ն . . . ։

— Լաւ ուրեմն, այն ատեն, Վեհափառ, քանի որ Պ. Ֆուքէ տասն երեք միլիոնը չհատոյց, պատճառն այն է որ զանոնք դանձեց, և տասն երեք միլիոնով՝ քառասատիկ աւելի շքեղ հանդէսներ կարելի է տալ, կոտորակով մը հանդերձ, և այն ծախսն ընել և ճոխութիւնը, զոր Ձեր Վեհափառութիւնը չկրցաւ ընել 'ի Ֆոնդէնպլօ՝ ուր միայն երեք միլիոն ծախս ըրինք ընդ ամենը, եթէ լաւ կ'յիշէք։

Անճարակ մարդու մը կողմէ՝ շատ ճարտար անզգամութիւն մ'էր այն հանդիսին յիշատակը զրդուել որու մէջ թագաւորը՝ Ֆուքէի մէկ խօսքին շնորհիւ, առաջին անգամ դիտեր էր անոր փոքրիկութիւնը։ Գօլպէր 'ի Վօ կ'ընդունէր ինչ որ Ֆուքէ ըրեր էր անոր 'ի Ֆոնդէնպլօ, և իբրև դանձային գործերու հմուտ մարդ մը՝ բոլոր տոկոսովը կ'հատուցանէր։ Թագաւորն այս տրամադրութեան մէջ գտնելէն ետև՝ Գօլպէր ուրիշ մեծ գործ մը չունէր ընելու։ Ինքն զգայ այս բանս. թագաւորն սկսեր էր տխրիլ։ Գօլպէր թագաւորին խօսքին սպասեց այնքան անհամբերութեամբ որ Գիլլիպ և Արամիս կ'սպասէին իրենց դիտարանին բարձունքէն։

— Գիտե՞ս արդեօք այս ամէն բանէ ի՞նչ կ'հետևի, Պ. Գօլպէր — ըսաւ թագաւորը սպահ մը խորհրդածելէն ետև։

— Ո՛չ, Վեհափառ, չգիտեմ։

— Այսինքն եթէ տասն երեք միլիոնը՝ իրօք Ֆուքէի իւրայնելը ստուգուեր . . . ։

— Բայց արդէն ստուգուած է։

— Ըսել կ'ուզեմ թէ յայտնուած լինէր, Պ. Գօլպէր։

— Կարծեմ թէ վաղը պիտի յայտնուէր, թէ որ Ձեր Վեհափառութիւնը . . . ։

— Պ. Ֆուքէի տունը չլինէի — պատասխանեց բաւական վեհանձնութեամբ թագաւորը։

— Թագաւորն ուր որ գտնուի իր տունն է, Վեհափառ, և մանաւանդ այն տունները զոր իր ստակովը վճարած է։

— Կ'երևի ինձ — ըսաւ Գիլլիպ մեղմիկ Արամիսին — որ այս դմբէթը շինող ճարտարապետը պարտաւոր էր, տեսնելով թէ ի՞նչ բանի պիտի գործածեն զայն, շարժական ընել որպէս զի Պ. Գօլպէրի սէս սեասիրտ ապիրատներու գլխուն վրայ իջեցնելու դիւրին լինէր։

— Ես ալ այդ կ'մտածէի — ըսաւ Արամիս. — բայց Պ. Գօլպէր այս պահուս թագաւորին շատ մօտ է։

— Իրաւ է, այդ կերպով յաջողութեան խնդիր մը կրնար բացուիլ։

— Որմէ՞ ձեր կրտսեր եղբայրը պիտի քաղէր բոլոր պտուղը, տէր իմ։ Իրաւի, հանգարտ կենանք և մտիկ ընելու շարունակենք։

— Ընդ երկար չպիտի մտիկ ընենք — ըսաւ նորատի արքայորդին։

— Ինչո՞ւ համար, տէր իմ։

— Վասն զի՝ եթէ ես լինէի թագաւորը, այլ ևս չպիտի բան մը պատասխանէի։

— Եւ ի՞նչ պիտի ընէիք։

— Վաղն առաւօտուն կ'սպասէի որ խորհիմ։

Ի վերջէ Լուի ԺԴ աչերը բացաւ, և Գօլպէրն իր առաջին խօսքին մտադիր գտնելով,

— Պ. Գօլպէր — ըսաւ նա յանկարծ խօսակցութիւնը փոխելով — կ'նայիմ որ ժամանակն ուշ է, և պիտի պառկիմ։

— Ա՛հ — ըրաւ Գօլպէր — արդեօք . . . ։

— Վաղը, վաղն առտու, որոշումս պիտի ընեմ։

— Շատ լաւ, Վեհափառ — պատասխանեց Գօլպէր զայրացած, թէև թագաւորին ներկայութեան ինքզինքը զսպեց։

Թագաւորը շարժում մ'ըրաւ, և տեսուչն ետ ետ քաշուելով գէպ 'ի դուռը գնաց։

— Սենեկապանները — գոչեց Թագաւորը։

Թագաւորին սենեկապանները սենեակը մտան։

Գիլիպ իր դիտարանէն հեռանալու կ'պատրաստուէր։

— Պահ մը սպասեցէք — ըսաւ անոր Արամիս իր սովորական անուշութեամբը — այս անցածը մանր պարագայ մ'է միայն, և վաղն այս մասին բնաւ հոգ մը չպիտի ունենանք. բայց դիշերային սպասաւորութիւնը, ննջելու համար 'ի գործ դրուած ձևերը, ոչ, տէր իմ, ահա ասոնք կարևոր են։ Սորվեցէք, սորվեցէք թէ ինչպէս անկողին կ'մտնէք, Վեհափառ։ Նայեցէք, նայեցէք։

ԺԷ

ԳՕԼՊԷՐ

Պատմութիւնը պիտի ըսէ կամ ըսած է հետևեալ օրուան դէպքը, վերատեսչին տուած շքեղ հանդէսներն իր Թագաւորին։ Երկու մեծ մատենագիր հասատատեցին Ջրվէժի և Ջրբուղիի մէջ եղած վիճաբանութիւնը, Լա Փոնդէնը նաքին և կենդանեաց մէջ ծադած պայքարը՝ իմանալու համար թէ որո՞ւ աւելի հաճելի պիտի լինի։ Հետևապէս մեծ զբօսանք և ուրախութիւն տեղի ունեցան միւս օրը. Ճեմելիք, Ճաշ, կատակերգութիւն ըրին, կատակերգութիւն՝ որու մէջ՝ 'ի մեծ զարմացումն Բորթոսի, այս Ճանչեց Պ. Քօքլէն Վօլիէրը, որ Նեղինիերու-ղաւեղին մէջ դեր ունէր։ Այսպէս կ'կոչէր այս զբօսանքը Պ. Պրասիէօ տը Բիէրֆօն։

Անտարակոյս Լա Փոնդէնն այսպէս չէր գատեր, նա որ իր Պ. Մօբրու բարեկամին կ'գրէր.

Մոլիէրի դի գոբծն է այն։
Այս գրագիրս ոճոն համայն
Արտոնիրը կը դիրնիկ արդ։
Հուլային նոյնպէս կը վարէ շուտ,
Որ 'դի հասնի 'ի Հռոմ անշուշտ։
Կը զմայլիմ դի սա է դի մարդ

Ինչպէս որ կ'երևի Լա Փոնդէն Բէլիսօնի խորհրդէն օգուտ քաղելով իր յանդը կոկեր էր։

Սակայն Բորթոս ալ Լա Փոնդէնի կարծիքէն էր. անոր պէս պիտի ըսէր. «Տէր վկայ, այս Մօլիէրն իմ ուզած մարդս է, բայց միայն ղեստներու համար»։ Իսկ թատրոնի նկատմամբ, արդէն ըսինք թէ Պ. Պրասիէօ տը Բիէրֆօնի համար՝ Մօլիէր պարզապէս ղա-էշպաքան էր։

Բայց նախորդ երեկոյեան տեսարանէն յուզեալ, բայց Գօլպէրի թափած թոյնէն յուզեալ՝ Թագաւորը՝ այսչափ փայլուն, բազմատեսիլ, սնակնկալ օրուան մէջ, ուր Հաղար ու Մէկ Գիշերներու հրաշալիքը կարծես թէ իր ոտից ներքև կ'ծնէին, Թագաւորը պաղ, դողշ, անխօս երևցաւ։ Բան մը չկրցաւ անոր տրտմութիւնը փարատել. զգալի էր որ հեռուէն եկած խորին ոխակալութիւն մը՝ փոքր առ փոքր մեծնալով դեռ դարձող աղբիւրին պէս, հաղար տեսակ ջրի ակներու շնորհիւ որ անոր մէջ կ'թափին, Թագաւորն իր հոգւոյն խորէն կ'դողար։ Միայն կէսօրին, սկսաւ քիչ մը զուարթանալ։ Անտարակոյս իր որոշումն ըրեր էր։

Արամիս՝ որ անոր կ'հետևէր քայլ առ քայլ՝ ինչպէս անոր խորհրդածութեանց նոյնպէս քալուածքին, Արամիս եզրակացուց որ անոր սպասած դէպքը չպիտի ուշանայ։

Այս անգամ՝ կարծես թէ Գօլպէր Վանի եպիսկոպոսին հետ համամիտ կ'քալէր, և Թագաւորին սիրտը կծած մէն մի ասեղին համար եթէ Արամիսէն հրահանգ իսկ ստանար, աւելի լաւ չպիտի գործէր։

Բոլոր այն օրն՝ Թագաւորը՝ որ անտարակոյս պէտք ունէր մթին խորհուրդ մը վտարելու, Թագաւորն այնչափ ժրութեամբ Լա Վալիէրի ընկերութիւնը փնտռելու ելաւ, որչափ որ մեծ փոյթ կ'ցուցնէր Գօլպէրի կամ Ֆուքէի ընկերութենէ հեռանալու։

Երկունը հասաւ։ Թագաւորը փափաք յայտներ էր որ խաղէն ետք շրջապայիլ կ'ուզէ։ Ուստի ընթրիքէն ետք խաղացին։ Թագաւորը հինգ հարիւր ոսկի շահեցաւ, և շահելէն ետև՝ գրպանը դրաւ, և ոտք ելաւ ըսելով.

— Օ՜ն, պարոնայք, ծառաստանն երթանք։

Անդ գտաւ տիկինները։ Թագաւորը հինգ հարիւր ոսկի շահեր և գրպաներ էր, ըսինք։ Բայց Պ. Գուքէ հինգ հազար ոսկի կորուսելու հնարը գտաւ, այնպէս որ պալատականներուն մէջ հարիւր ինսուն ֆրանք վաստակ մնայ, և այս պարագայէն թագաւորին տան պալատականներն և սպասները շատ խնդալին դէմք մը ունէին։

Բայց նոյնպէս խնդալին չէր թագաւորին դէմքը, որու վրայ՝ թէև վաստակ ըրեր և այս վաստակին անզգայ չէր, միշտ ամպ մը կ՚երևէր։ Ծառուղիի մը ծայրը՝ Գօլպէր անոր կ՚սպասէր։ Անտարակոյս՝ Գօլպէր անդ կ՚գտնուէր արդէն տրուած ժամադրութեան մը համեմատ, վասն զի Լուի ԺԴ՝ որ անորմէ խորշեր էր, անոր նշմայր մ՚ըրաւ և հետը ծառաստանին խորը թափանցեց։

Բայց Լա Վալիէրն ալ տեսեր էր թագաւորին տխուր Ճակատն ու կայծակնացայտ ակնարկը, այս տեսեր էր, և որովհետև այս սրտին մէջ ամէն ծածուկ խորհուրդ անթափանցելի չէր իր սիրոյն՝ հասկրցեր էր որ այս բոնաղբօսեալ բարկութիւնը մէկու մը կ՚սպառնար։ Նա վրէժխնդրութեան Ճամբուն վրայ կ՚կենար իրրև դթասիրութեան հրեշտակը։

Լա Վալիէր լռելին տխուր, վրդովեալ, կէս մը խենթի պէս իր սիրողէն այնչափ երկար ատեն բաժնուած մնալուն վրայ իր ներքին այլայլութենէ զոր զգուշակեր էր՝ մտայոյզ, թագաւորին երեսյաւ 'ի սկզբան շփոթ դէմքով մը զոր, իր մտոց դէշ արտադրութեան մէջ, թագաւորը շատ ծաւռ մեկնեց։

Այն ատեն՝ որովհետև առանձին էին կամ գրեթէ առանձին, քանի որ Գօլպէր՝ օրիորդը տեսնելով հեռուէն՝ յարգանաք կայառեր և տան քայլ հեռու կեցեր էր, թագաւորը Լա Վալիէրին մօտեցաւ և անոր ձեռքը բռնեց։

— Օրիորդ — ըսաւ անոր — կարող եմ առանց անխոհեմութեան հարցնել քեզի թէ ինչ ունիս։ Սիրտդ ելած կ՚երևի, աչերդ տամուկ են։

— Ո՛հ, Վեհափառ, եթէ իմ սիրտս ելած է, եթէ աչերս տամուկ են, վերջապէս, եթէ տխուր եմ, Վեհափառութենդ տրտմութենէ է։

— Իմ տրտմութիւնս։ Ո՛հ, օրիորդ, ծաւռ կ՚տեսնես։ Ո՛չ, ոչ ոչ ոչ տրտմութիւն չէ բնաւ։

— Ուրեմն ինչ կ՚զգաս, Վեհափառ։

— Նուաստութիւն։

— Նուաստութիւն։ Ո՛հ, ինչ կ՚ըսես ինձ։

— Օրիորդ, կ՚ըսեմ թէ իմ գտնուած տեղս ուրիշ մէկը չպիտի կարենար տիրապետ լինիլ։ Լաւ ուրեմն, նայէ, միթէ չեմ նսեմանար, ես, Ֆրանսայի թագաւորս, այս կալուածիս թագաւորին առջև։ Ո՛հ — շարունակեց նա ակռաներն ու բռունները սեղմելով — ո՛հ . . . և երբ կ՚խորհիմ որ այս թագաւորը . . . ։

— Ապա — ըսաւ Լա Վալիէր ահաբեկ։

— Թէ այս թագաւորն անհաստատամիտ ծառայ մ՚է որ իրենէ ոդոզուած ստացուածքովը կ՚զուարճանայ։ Ուստի՝ ես ալ հիմակ այս ժպիրհ պաշտօնեին հանդէսը սուրի պիտի դարձնեմ որու յիշատակը Վօի յաւերժհարսը, ինչպէս որ քերթողները կ՚ըսեն, ընդ երկար միտքը պիտի պահէ։

— Ո՛հ, Վեհափառութիւնդ . . . ։

— Նայինք, օրիորդ, միթէ Պ. Գուքէի կոչմը պիտի բռնէիր — ըսաւ Լուի ԺԴ անհամբերութեամբ։

— Ո՛չ, Վեհափառ, պիտի հարցնեմ քեզի միայն թէ ստոյգ տեղեկութիւններ առած ես։ Վեհափառութիւնդ քանիցս փորձով հասկրցաւ թէ ինչ արժէք ունին արքունի մարդոց ամբաստանութիւնները։

Լուի ԺԴ նշան ըրաւ Գօլպէրին որ մօտենայ։

— Խօսէ, Պ. Գօլպէր — ըսաւ նորատի արքայն — վասն զի, արդարև՝ կարծեմ թէ օրիորդ Լա Վալիէր խօսքիդ կարօտ է թագաւորին խօսքին հաստատուն համար։ Ըսէ օրիորդին թէ ինչ ըրաւ Պ. Գուքէ։ Եւ դու, օրիորդ, ո՛հ, երկար չպիտի տևէ, շնորհ ըրէ, կ՚աղաչեմ, մտիկ ընելու։

Ինչո՞ւ համար Լուի ԺԴ այսպէս կ՚պնդէր։ Շատ պարզ էր խնդիրը. իր սիրտը հանդարտ չէր, իր միտքը լիովին համոզուած չէր. կ՚կասկածէր որ դաղտնի, մթին, օձուտ դաւադրութիւն մը կայ այս տան երեք միլիոնի պատմութեան ներքև, և կ՚փափաքէր

որ Լա Վալիէրի մաքուր սիրտը՝ գողութեան մը գաղափարին վրայ սոսկալով մէկ բառով հատանէր՝ արդէն ըրած որոշումը, զոր՝ սակայն, 'ի գործ դնելու կ'վարանէր։

— Խօսէ, պարոն — ըսաւ Լա Վալիէր Գօլպերին, որ աւելի մօտ եկեր էր — խօսէ, քանի որ Թագաւորը կ'ուզէ որ քեզ մտիկ ընեմ։ Ըսէ նայինք, ի՞նչ է Պ. Ֆուքէի յանցանքը։

— Ո՛հ, շատ ծանր բան մը չէ, օրիորդ — ըսաւ սեւասիրտ մարդը — պարզապէս խարէութիւն մը . . .։

— Խօսէ, խօսէ, Գօլպէր, և երբ լմնցնես, մեզ առանձին ձգէ, և գնա իմացնելու Պ. տ'Արդանեանի որ իրեն հրամաններ ունիմ տալու։

— Պ. տ'Արդանեա՞ն — գոչեց Լա Վալիէր — և ինչո՞ւ համար Պ. տ'Արդանեանը կ'կոչուի, Վեհափառ։ Կ'պաղատիմ որ ըսէիր ինձ։

— Տէր վկայ, այն ամբարտաւան տիտանը ձերբակալ ընել տալու համար, տիտան մ'որ իր նշանաբանին հաւատարիմ, երկինքն 'ի վեր ելնելու կ'սպառնայ։

— Պ. Ֆուքէն ձերբակալ ընելու համար, ըսիր։

— Ա՛հ, մթէ այդ բանը քեզի զարմանք կ'ազդէ։

— Իր տա՞ն մէջ։

— Ինչո՞ւ չէ։ Եթէ յանցաւոր է, իր տան մէջ ևս յանցաւոր է ինչպէս այլուր։

— Պ. Ֆուքէ՞ն, որ այս պահուս կ'կործանի իր Թագաւորին պատիւ ընելու համար։

— Օրիորդ, կարծեմ թէ այս դատմանը կ'պաշտպանես։

Գօլպէր սկսաւ մեղմիկ ծիծաղիլ։ Թագաւորը դլուխը դարձուց այս ծիծաղին սուլելը լսելով։

— Վեհափառ — ըսաւ Լա Վալիէր — պաշտպանածս Պ. Ֆուքէն չէ, այլ քեզ։

— Զի՞ս . . . դու զիս կ'պաշտպանե՞ս։

— Վեհափառ, ինքզինքդ պիտի անպատուես այդպիսի հրաման մը տալով։

— Ինքզինքս կ'անպատուեմ — մրմնաց Թագաւորը բարկութեան դունատելով։ — Ճշմարիտը, օրիորդ, շատ մեծ եռանդով կը խօսիս։

— Վեհափառ, ես իմ խօսքիս մէջ եռանդ չեմ դներ, այլ Վեհափառութեանդ ծառայելու համար կ'բորբոքիմ — պատասխանեց աղնիւ օրիորդը։ — Եթէ պէտք լինի իմ կեանքս ալ պիտի դնեմ, և այս ալ նոյն եռանդով։

Գօլպէր քրթմնջել ուզեց։ Այն ատեն Լա Վալիէր, այս ասնուշ զառնուկը, անոր դէմ կանգնեցաւ, և հրաբորբոք աչքով մը լուութեան բռնադատեց։

— Պարոն — ըսաւ օրիորդը — երբ Թագաւորը լաւ կ'գործէ, երբ Թագաւորն ինձի և իմիններուս անիրաւութիւն մ'ընէ, լուռ կ'կենամ, բայց Թագաւորը՝ եթէ նպաստէ ինձի կամ իմիններուս, դարձեալ պիտի խօսիմ, երբ ծուռ ընթացքի մէջ տեսնեմ զինքը։

— Բայց կ'երեսի ինձ, օրիորդ — ըսաւ երկչոտութեամբ Գօլպէր — որ ես ալ կ'սիրեմ Թագաւորը։

— Այո՛, պարոն, երկուքնիս ալ կսիրենք՝ իւրաքանչիւրն իր կերպովը — պատասխանեց Լա Վալիէր այնպիսի ձայնով մը՝ որ նորատի Թագաւորին սիրտը շարժեցաւ։ — Մինայն ես՝ այնչափ ստոյգ կ'սիրեմ զանի, որ ամէն մարդ գիտէ. այնչափ անարատ սրտով, որ նոյն ինք Թագաւորը չկասկածիր իմ սիրոյս վրայ։ Դա իմ Թագաւորս և տէրս է, ես իր խոնարհ սպասուհին եմ, սակայն ո՛վ որ անոր պատոյն դպի իմ կենացս կ'դպի։ Արդ՝ կը կրկնեմ որ Թագաւորն անոնք կ'անպատուեն որ իրեն կ'յորդորեն Պ. Ֆուքէն իր տանը մէջ ձերբակալ ընելու։

Գօլպէր դլուխը ծռեց, վասն զի զգաց որ Թագաւորը զինքը կ'լքանէր։ Սակայն՝ դլուխը ծռելով հանդերձ՝ մրմնաց նա.

— Օրիորդ, խօսք մը միայն ունիմ ըսելու։

— Մի՛ ըսեր այդ խօսքը, պարոն, վասն զի այդ խօսքդ չպիտի մտիկ ընեմ։ Սակայն ի՞նչ պիտի ըսես ինձ. պիտի ըսես որ Պ. Ֆուքէ յանցանք գործած է։ Գիտեմ այդ, վասն զի Թագաւորն ըսաւ, և երբ Թագաւորն ըսէ. «Կ'հաստատեմ», պէտք չունիմ որ ուրիշ բերան մ'ըսէ. «Կ'հաստատեմ»։ Բայց եթէ Պ. Ֆուքէ յեսին մարդն իսկ լիներ, բացէ՛ 'ի բաց կ'ըսեմ, Պ. Ֆու-

քէ Թաղաւորին նուիրական է, վասն զի Թաղաւորն իր հիւրն է։ Եթէ իր տունն որջ մը լինէր, եթէ Վօն դրամանենդներու կամ աւազակներու քարայր մ'իսկ լինէր, իր տունը նուիրական է, իր դղեակն անբռնաբարելի է, քանի որ իր կինն այն տեղ կ'բնակի, և ապաստանարան մ'է զոր դահիճներն անդամ չպիտի բռնաբարէին։

Լա Վալիէր լուռ կեցաւ։ Թաղաւորն ակամայ անոր վրայ կ'զմայլէր, այս ջերմագին ձայնէն, այս ազնիւ դատէն ընկճեցաւ։ Գօլպէր՝ այս պայքարին անհաւասարութենէ ձղմուեր էր և կ'խոնարհէր։ Վերջապէս՝ Թաղաւորը շունչ առաւ, գլուխը ցնցեց և ձեռքը Լա Վալիէրի երկնցուց։

— Օրիորդ — ըսաւ նա քաղցրութեամբ — ինչո՞ւ համար ինձի գէմ կ'խօսիս։ Գիտէս ինչ պիտի ընէ այն թշուառն եթէ կենդանի թողում զինքը։

— Է՛հ, Աստուած իմ, միթէ ձեռքիդ տակ պատրաստ ոստ մը չպիտի լինի։

— Հապա թէ որ փախչի, թէ որ խոյս տայ — գոչեց Գօլպէր։

— Լաւ, պարոն, Թաղաւորին յաւիտենական պարծանքը պիտի լինի Պ. Գուքէն Թողլուն որ փախչի, և որչափ աւելի յանցաւոր եղած լինի, այնքան մեծ պիտի լինի Թաղաւորին փառքը, այս փոքրոգութեան, այս նախատինքին հետ բաղդատելով։

Լուի Լա Վալիէրի ձեռքը համբուրեց՝ անոր ծնկաց առջև սահելով։

— Կորսուեցայ — մտածեց Գօլպէր։

Ապա յանկարծ իր դէմքը պարզեցաւ։

— Ո՛հ, ո՛չ, ո՛չ, ո՛չ տակաւին — ըսաւ իրովին։

Եւ մինչդեռ Թաղաւորն ահագին թմբիր մը Թանձր տերևներէն պահպանուած՝ անպատում սիրոյ եռանդով Լա Վալիէրին կ'փարէր, Գօլպէր հանդարտիկ խառնեց դրպանը, ուսկից նամակաձև Թուղթ մը հանեց, փոքր ինչ դեղին Թուղթ մ'իրաւ, բայց Թանկագին պարտ էր լինիլ, վասն զի Գօլպէր անոր վրայ նայելով ժպտեցաւ։ Յետոյ իր քինախնդիր ակնարկը ստուերին մէջ օրիորդին և Թաղաւորին յօրինած չքնաղ խմբին դարձուց, խումբ մը զոր մնտեցող ջահերն սկսեր էին լուսաւորել։

Լուի տեսաւ այս ջահերուն նշոյլն որ Լա Վալիէրի սպիտակ շրջազգեստին վրայ կ'բեկբեկէր։

— Գնա՛, Լուիզ — ըսաւ անոր — վասն զի ահա մարդիկ կը մօտենան։

— Օրիորդ, օրիորդ, կ'մօտենան — յարեց Գօլպէր որպէս զի օրիորդին ձայն փութացնէ։

Լուիզ շուտ մը ծառերուն մէջ անհետ եղաւ։ Յետոյ, երբ Թաղաւորը, որ նորատի օրիորդին ծնկաց առջև ընկեր էր, ոտք կ'ելնէր,

— Վա՛յ, օրիորդ Լա Վալիէր իր վրայէն բան մը ձգեց — ըսաւ Գօլպէր։

— Ի՞նչ բան — հարցուց Թաղաւորը։

— Թուղթ մը, նամակ մը, սպիտակ բան մը ձգեց, աւասիկ, տեսէք, Վերհատաւ։

Թաղաւորն իսկոյն ծռեցաւ և ձմրդելով նամակն առաւ։

Նոյն պահուն ջահերը հասան, այս մութ տեսարանիս պայծառ լոյս մը սփռելով։

ԺԷ

ՆԱԽԱՆՁ

Այս ձմարիտ լոյսը, ամենուն այս եռանդը, Գուքէին կողմէ Թաղաւորին տրուած այս նոր պատիւը, դպաղար տուին որոշման մը գործադրութեան զոր արդէն Լա Վալիէր Լուի ԺԴի սրտին մէջ դրդրեր էր։

Գուքէի նայեցաւ կերպ մ'երախտագիտութեամբ՝ վասն զի ամեներ էր Լա Վալիէրի այնքան վեհանձն, այնքան զօրեղ երևելու իր սրտին վրայ։

Վերջին սքանչելեաց միջոցն էր։ Հաղիւ թէ Գուքէ դէպ 'ի դղեակն առաջնորդեց Թաղաւորը՝ որ կրակի կոյս մը՝ Վօի դմբէ-

թէն ահագոչ որոտմամբ ելնելով, արշալուսոյ պէս շլացուցիչ ածուներուն ամենէն մանր մասերը լուսաւորեց։

Հրախաղութիւնը կ'սկսէր։ Գօլպէր՝ քսան քայլ թագաւորէն հեռու կեցած, կ'ջանայ գժնդակ մտածութեան յամառութեամբը թագաւորին ուշը բերել այն գաղափարներուն վրայ որ տեսարանին շքեղութենէ արդէն շատ վտարեր էին։

Յանկարծ թագաւորն իր ձեռքը Փուքէի կարկառելու միջոցին՝ նոյն թուղթը ղղայ՝ զոր ըստ երևոյթին, Լա Վալիէր խոյս տալու առեն՝ գեղինը ձղած պիտի լինէր։

Սիրոյ մտածութեան ամենէն զօրեղ մագնիսը նորատի արքայն կ'մղէր դէպ իր սիրուհոյն յիշատակին։

Այս կրակին նշոյլներէն՝ որ երթալով կ'պայծառանար, և որ շրջակայ գիւղացւոյ սքանչացման աղաղակներ արձակել կ'տար, թագաւորը կարդաց առմնակը, երբ ինք կարծէր թէ Լա Վալիէրի կողմէ իրեն սահմանուած սիրային գիր մ'էր։

Քանի կ'կարդար, երեսը կ'գունատէր, և այն ներքին բարկութիւնը, բիւրաւոր գոյն կրակներով վառելով՝ սոսկալի տեսարան մը կ'յօրինէր, որմէ ամէն մարդ պիտի դողդողար, եթէ ամէն ոք կարող լինէր կարդալ այս չարագուշակ կրիւք ալէկոծեալ սիրաը։ Թագաւորին համար նախանձու և կատղութեանը դուլ չկար։ Մթին ճշմարտութիւնն երևան հանելէն 'ի վեր՝ ամէն ինչ անհետ եղաւ, բարեկամութիւն, քաղցրութիւն, ասպնջականութեան սրբութիւն։

Քիչ մնայ որ իր սիրաը դալարող կծու վշտէն՝ սիրտ մ'որ դեռ նոր էր իր տառապանքը սքօղելու, քիչ մնայ որ վատնդի աղաղակ մը պիտի արձակէր և իր բոլորտիքը պիտի կոչէր պահակները։

Այս նամակը զոր Գօլպէր թագաւորին ոտից տակ նետեր էր, ինչպէս որ ընթերցողը դուշակեց՝ 'ի Գոնդէնպլօ Տոբի սպասաւորին հետ աներևոյթ եղածն էր՝ Փուքէի կողմէ Լա Վալիէրի սրտին վրայ եղած փորձէն ետքը։

Փուքէ թագաւորին դունատութիւնը կ'տեսնէր բայց չարիքը չէր դուշակեր. Գօլպէր կ'տեսնէր թագաւորին բարկութիւնն ու կը ցնծար մօտալուտ փոթորիկը տեսնելով։

Փուքէի ձայնը նորատի թագաւորը սթափեց իր վայրագ մտախոհութենէ։

— Ի՞նչ ունիք, Վեհափառ — հարցուց վերատեսուչը շնորհալի կերպով։

Լուի ինքն իր վրայ ձիգ մ'ըրաւ, բուռն ձիգ մը։

— Ո՛չ ինչ — ըսաւ նա։

— Կ'վախնամ որ Ձեր Վեհափառութիւնը ցաւ մը չունենայ։

— Արդարև՝ ցաւ մ'ունիմ, արդէն ըսի քեզի, պարոն, բայց բան մը չէ։

Եւ թագաւորը՝ հրախաղութեան աւարտին չսպասելով՝ դէպ 'ի դղեակը քաշեց։

Փուքէ թագաւորին ուղեկից եղաւ։ Ամէն մարդ անոր ետևէն դնաց։

Վերջին փամփուշտները մինակ իրենց համար տխրութեամբ բռնկեցան։

Վերատեսուչը վերջին փորձ փորձեց Լուի ԺԴ-ին հարցուփորձ ընելու, բայց պատասխան մը չստացաւ։ Կարծեց թէ բուրաստանին մէջ թագաւորին և Լա Վալիէրի մէջ վէճ մը ծագած է, որու վրայ իրարու հետ աւրուած պիտի լինէին, թէ թագաւորը՝ որ 'ի բնէ այնչափ խոժոռադէմ չէր, այլ բոլորովին իր կատաղի սիրոյն անձնուէր, բոլոր մարդիկն ատելու սկսեր էր քանի որ իր սիրուհին զինքը կ'յանդիմանէր։ Այս դաղափարը բաւական եղաւ զինքն ապահովելու, մինչև անգամ բարեկամական և մեխիթարական ժպիտ մ'ունեցաւ նորատի թագաւորին համար, երբ այս անոր դիշեր բարի մաղթեց։

Այսչափս բաւական չէր թագաւորին համար։ Պէտք էր ընդունելութեան տարողութիւնը կրել։ Երեկոյեան այս ընդունելութիւնը հանդիսաւոր պիտի լինէր։ Հետևեալ օրը մեկնելու օրն էր։ Պէտք էր անշուշտ որ հիւրերը շնորհակալ լինէին տան տիրոջ և անոր քաղաքավարական խօսքեր ընէին իր տասն երկու միլիոնին համար։

Լուի միայն սա սիրալիր խօսքը դտաւ ըսելու Պ. Փուքէին երբ ղանի ձամբեց.

— Պ. Գուքէ, քիչ առնէն իմ կամքս քեզի պիտի յայտնեմ. կ'աղաչեմ Պ. տ'Արգանեանի ձայն տուր որ գայ ղիս գտնէ։

Եւ Լուի ԺԴԻՆ արիւնը, այն ատեն սկսաւ եռալ իր երակներուն մէջ՝ երկայն ատեն համբերելէն ետև, և պատրաստ էր Գուքէն խողխողել տալու, ինչպէս որ իր նախորդը մարէշալ տ'Անքրը սպաննել տուեր էր։ Ուստի իր սոսկալի դիտաւորութիւնը ծածկեց արքայական ժպտի մը ներքև որ պետական հարուածներու կայծակներն են։

Գուքէ թագաւորին ձեռքը բռնեց և համբուրեց։ Լուի բոլոր մարմնովը դող եկաւ, բայց թոյլ տուաւ որ Գուքէ իր շուրթը ձեռքին դպցնէ։

Հինգ վայրկեան ետք՝ տ'Արգանեան՝ որու խնայ տրուեր էր արքայական հրամանը, Լուի ԺԴԻ սենեակը մտաւ։

Արամիս ու Փիլիպ իրենց սենեակն էին, միշտ մտատիր, միշտ մտիկ ընելով։

Թագաւորը չհամբերեց որ հրայանակիրայ հրամանատարը մինչև իր թիկնաթոռը մօտենայ։ Այլ անոր վազեց։

— Հոգ տար — գոչեց նա — որ ոչ ոք ներս մտնէ։

— Շատ լաւ, Վեհափառ — պատասխանեց զինուորը, որու ակնարկն արդէն վերլուծեր էր անոր կերպարանին տարբերութիւնները։

Ուստի դուռը բացաւ և Թագաւորին հրամանը յայտնելէն ետև՝ անոր մօտ դարձաւ.

— Նոր լուր մը պիտի ունենաք, Վեհափառ տէր — ըսաւ նա։

— Ո՞րչափ մարդիկ ունիս այս տեղ — հարցուց Թագաւորն առանց իրեն եղած հարցին պատասխան տալու։

— Ի՞նչ բանի համար, Վեհափառ։

— Ո՞րչափ մարդ ունիս — կրկնեց Թագաւորն ոտքով գետինը զարնելով։

— Հրայանակիրներն ունիմ։

— Ուրիշ։

— Քսան պահակ և տասն երեք հելվետիացի զօրականներ ունիմ։

— Քանի՞ հոգի պէտք է որպէս զի . . .։

— Որպէս զի՞ . . . — ըսաւ հրայանակիրն իր խոշոր հանդարտաչքը։

— Պ. Գուքէն ձերբակալ ընելու համար։

Տ'Արգանեան քայլ մ'ետ քաշուեցաւ։

— Պ. Գուքէն ձերբակալե՞մ — ըսաւ նա բարձրաձայն։

— Մի թէ վերստին պիտի ըսես թէ անկարելի է — գոչեց Թագաւորը պաղ և քինախնդիր կատղութեամբ մը։

— Ես երբէք չեմ ըսեր որ բան մ'անկարելի լինի — պատասխանեց տ'Արգանեան սաստիկ վիրաւորուած։

— Լաւ ուրեմն, ըսածս կատարէ։

Տ'Արգանեան իր կրունկին վրայ դարձաւ անվրդով և դէպ 'ի դուռը դիմեց։

Նոյն միջոցը հարկ էր. վեց քայլ առնելով դուռը հասաւ և այն տեղ կայ առնելով,

— Ներեցէք, Վեհափառ — ըսաւ նա։

— Ի՞նչ կայ — ըսաւ Թագաւորը։

— Այս ձերբակալութիւնն ընելու համար գրաւոր հրամանի մը պէտք ունիմ։

— Ի՞նչ առթիւ. և քանի՞ առնէ 'ի վեր Թագաւորին խօսքը քեզի անբաւական կ'թուի։

— Վասն զի Թագաւորին խօսքը՝ զոր բարկութեան ժամանակը կ'արտաբերէ, կրնայ փոխուիլ՝ երբ բարկութիւնն անցնի։

— Խօսք պէտք չէն, պարոն, գու ուրիշ միտք մ'ունիս։

— Ո՛հ, ես միշտ միտքեր ունիմ, ես, և այնպէս միտքեր զոր դժբաղդօրէն ուրիշները չունին — պատասխանեց տ'Արգանեան յանդգնութեամբ։

Թագաւորն իր բուռն ցասման ժամանակ՝ այս մարդուն առջև խոնարհեցաւ՝ ինչպէս որ ձին կորովի ձիավարին ներքև իր ծնկերը կ'ծռէ։

— Ի՞նչ է միտքդ — գոչեց նա։

— Ասասիկ, տէր իմ — պատասխանեց տ'Արգանեան։ — Դուք ձերբակալել կ'տաք մարդ մ'երբ տակաւին անոր տունն էք. այս բարկութեան արդիւնք է։ Երբ ձեր բարկութիւնը դադրի, պիտի

զղջաք։ Այն ատեն, կ'ուզեմ որ ձեր ստորադրութիւնը ձեզի ցուցնելու կարող լինիմ։ Եթէ այդ չարիքը չդարմաներ, գէթ պիտի ցուցնէ մեզի որ Թագաւորն իրաւունք չունի բարկանալու։

— Իրաւունք չունի՞ բարկանալու — ոռնաց Թագաւորը մոլեգնութեամբ։ — Միթէ իմ հայրս Թագաւորը, միթէ իմ պապս չէ՞ր բարկանար, Քրիստոս վկայ։

— Ձեր Թագաւոր հայրը, ձեր Թագաւոր պապը միևնակ իրենց տան մէջ բարկութեան կ'բրդէին։

Թագաւորն ինչպէս իր տան մէջ նոյնպէս ամենուրեք դերիշխան տէր է։

— Ողորմութի խօսք մ'է այդ, որ անշուշտ Պ. Գօլպէրին կողմէն կ'գայ, բայց ճշմարտութիւն մը չէ։ Թագաւորն իր տունն է այն տեղն, ուսկից տան տէրը վռնտած է։

Լուսի շրթերը խածաւ։

— Ի՞նչպէս — ըսաւ տ'Արդանեան — տասիկ մարդ մ'որ ձեզ հաճելի լինելու համար կ'կործանի, և կ'ուզէք այդ մարդը ձերբակալել։ Տէ՛ր վկայ, Վեհափառ, եթէ իմ անունս Ֆուքէ լինէր և այդպիսի բան մ'ինձ ընէին, իսկոյն տան հատ հրալիր փամփուշտ կ'կլլէի, և առնս կրակ կ'ձգէի որպէս զի ինքզինքս և ամէն հիւրերս միասին այրեմ։ Բայց փոյթ չէ, քանի որ կ'պահանջէք, ահա կ'երթամ։

— Գնա՝ — ըսաւ Թագաւորը։ — Բայց միթէ բաւական զինուոր ունիս։

— Միթէ կարծէք, Վեհափառ, որ ինձի հետ վաշտ մը զօրք պիտի տանիմ։ Պ. Ֆուքէն ձերբակալելը, այնչափ դիւրին գործ է որչափ տղայ մը կրնայ ընել։ Պ. Ֆուքէն ձերբակալելը, գաւառի մը ապօնոթ խմել է. միայն երես կ'ծռմռէք մարդ, և այլ ոչ ինչ։

— Եթէ ինքզինքը պաշտպանէ . . .։

— Նա՝, ամենևին մի մտածէք. նա միթէ կ'պաշտպանէ՞ ինքզինքն երբ այդպիսի խստութիւն մը զինքը Թագաւոր ու մարտիրոս կ'կայուցանէ։ Ա՛հա, եթէ իրեն միլիոն մը մնացած է, և այս ևս ինձի կասկածելի է, դրաւ կ'դնեմ որ այդ վախճանն ունենալու

համար նոյն դումարը կ'տար։ Շատ լաւ, Վեհափառ, ահա կ'երթամ։

— Սպասէ՝ — ըսաւ Թագաւորը։

— Ա՛հ, ի՞նչ կայ։

— Անոր ձերբակալութիւնը մի՞ հրատարակեր։

— Այդ աւելի դժուարին բան է։

— Ինչո՞ւ համար։

— Վասն զի շատ պարզ բան է երթալ Պ. Ֆուքէի ըսել, մինչդեռ հազարաւոր խանդագին մարդիկ զինքը կ'շրջապատեն. «Պարոն, յանուն Թագաւորին քեզ կ'ձերբակալեմ»։ Բայց անոր երթալ, դարձնել, նորէն դարձնել զանի, պաշտօնատան մէկ անկիւնը փակել այնպէս որ չկարենայ խոյս տալ, իր հիւրերէն զինքը խլել և կերի պահելը, առանց իր աչքերէն մին լսելի ըքը խլել և նորէն ունելու, ահա այս այնպիսի մեծ դժուարութիւն ունի, ճշմարիտ, չափազանց դժուարութիւն մ'որ հարիւրին մէկ դրաւ կ'դնեմ եթէ ամենէն ճարպիկ մարդը կարենայ յաջողիլ։

— Նորէն «անկարելի է» ըսէ, և աւելի շուտ կ'լմննայ խօսքդ։ Ա՛հ, Աստուած իմ, Աստուած իմ, միթէ իմ չորս կողմս պիտի շրջապատե՞ն այնպիսի մարդիկ որ ուզածս ընելու կ'արգիլեն։

— Ես չեմ արգիլեր որ ձեր կամքը կատարէք։

— Պ. Ֆուքէն պահպանէ մինչև որ վաղն իմ որոշումս ընեմ։

— Այդ պիտի կատարեմ, Վեհափառ։

— Եւ առտու արթննալուս եկուր իմ նոր հրամաններս առնելու։

— Պիտի գամ։

— Հիմակ գնա՝ միևնակ թողէք։

— Եւ ոչ իսկ Պ. Գօլպէրէն պէտք չունիք — ըսաւ անոր հրացանակիրն իր վերջին սլաքը նետելով մեկնելու ատենը։

Թագաւորը դող եկաւ։ Բոլորովին վրէժխնդրութիւնը մոռացեալ մոլեգեր էր ամբաստանութեան խնդիրը։

— Ո՛չ, մէկը չեմ ուզեր, և ոչ մէկը — ըսաւ — թոյլ տուէք զիս։

Տ'Արդանեան մեկնեցաւ։ Թագաւորն ինքնին դուռը գոցեց, և սկսաւ կատաղօրէն արշաւել իր սենեկին մէջ՝ իբրև վիրաւոր ցուլ

մ՚որ իր ետևէն կ՚քարշէ իր դրօշներն ու երկաթէ կարթերը։ Վերջապէս սփոփելու համար սկսաւ աղաղակել։

— Ա՛հ, թշուառական, ոչ միայն իմ դանձս կ՚կողոպտէ նա, այլ և այս ոսկիով գրպանիներս կ՚որսայ, կ՚որսայ բարեկամներս, զօրապետներս, արուեստագէտներս, մինչև անդամ սիրուհիս ձեռքէս կ՚առնու։ Ա՛հ, այս է պատճառն որ այն նենդաւոր աղջիկը զանի պաշտպանեց արիաբար . . . երախտագիտութի՛ւն էր . . . ո՞վ գիտէ . . . կարելի է մինչև անդամ սէր էր։

Պահ մ՚այս վշտալի խորհրդածութեանց մէջ ընկղմեցաւ։

— Այծեմարդ մ՚է նա — մտածեց Թագաւորը խորին ատելութեամբ մը զոր առոյգ երիտասարդութիւնը դեռ սիրոյ մտածող արբուն մարդոյ կ՚ազդէ — շահապետ մ՚է որ կանանց ետևէն կը վազէ և երբէք իրեն դէմ ըմբոստ մը դտած չէ, իգամոլ մարդ մ՚որ ոսկի և ադամանդեայ ծաղիկներ կ՚ընծայէ, և որ պատկերահաններ ունի իր սիրուհիներուն պատկերները գիշերային զգեստով նկարելու համար։

Թագաւորը յուսահատութենէ դող եկաւ։

— Ամէն ինչ կ՚պղծէ նա — շարունակեց Լուի։ — Ամէն ինչս կ՚սպառէ, զիս պիտի սպաննէ։ Այս մարդը շատ է ինձի համար։ Իմ անհաշտ թշնամիս է։ Այս մարդը պիտի ընկնի, կ՚ատեմ զանի . . . կ՚ատեմ . . . կ՚ատեմ . . . ։

Եւ այս խօսքն ըսելով՝ ուժգին կ՚զարնէր թիկնաթոռին թևերուն, մինչդեռ անոր վրայ կ՚նստէր և կ՚ելնէր լուսնոտի մը պէս։

— Վա՜ղը, վա՜ղը . . . ո՛հ, դեղեցի՛կ օրը — մրմնաց նա — երբ արևը պիտի ծագի, զիս ունելով միայն իբրև ոսոխ, այս մարդն այնքան վար պիտի իջնէ, որ իմ բարկութեանս ըրած աւերակները տեսնելով՝ ամէն մարդ պիտի խոստովանի վերջապէս որ իրմէ աւելի մեծ եմ։

Թագաւորն ինքզինքը զսպելու անկարող լինելով՝ իր անկողնին մօտ դրուած սեղան մը վար նետեց բռնցի, և զգացած վշտով՝ դրեթէ լալով հեղձամղձուկ, դնաց վերմակներուն վրայ ընկաւ հագուած՝ որպէս զի զանոնք խածնէ և անոնց վրայ հանգիստ գտնէ։

Մահճակալն իր մարմնոյն բեռին ներքև հեծեծեց, և Թագաւորին շնչասպառ ծոյլն եկած քանի մը հառաչներէն զատ՝ Մորֆէոսի սենեկին մէջ այլ ևս բան մը չլսուեցաւ։

ԺԸ

ՈՃԻՐ ԸՆԴԴԻՄ ԹԱԳԱՒՈՐԻ

Այն բուռն կատղութիւնն որով վառուեր էր Թագաւորը Գուքէի առ Լա Վալիէր գրած նամակին տեսքէն և ընթերցումէն՝ քիչ քիչ մարեցաւ և վշտալի յոգնութիւն մը դարձաւ։

Քաջառողջ և կենսաւէտ երիտասարդութիւնը՝ սէտք ունենալով իսկոյն նորոգել կորուսածը՝ երիտասարդութիւնը չճանչեր բնաւ այն անվերջ քնհատութիւններն որ դժբաղդին համար կ՚ի՛բայնէ Պրոմեթէի միշտ նորածին լեարդին առակը։ Այն տեղ ուր արբուն հասակի ուժեղ մարդը՝ ուր վաստակաբեկ ծերունին՝ վշտերու մէջ անընդհատ ճարակ կ՚գտնեն, ընդ հակառակն երիտասարդը՝ աղէտից յանկարծահաս յայտնութենէ բռնուելով, կ՚ջլատի՝ աղաղակներ և ուղղակի պայքարներ արձակելով, և աւելի շուտով թոյլ կ՚տայ որ ընդդիմացած անողոքելի թշնամին զինքը տապալէ։ Երբ մի անդամ տապալէ, այլ ևս չտառապիր։

Լուի մէկ քառորդի մէջ ընկճեցաւ, ապա իր բուռները կարկամելէն և իր ատելութեան անզսպելի առարկաները նայուածքովն այրելէն դադրեցաւ. դադրեցաւ բուռն խօսքերով Պ. Գուքէն և Լա Վալիէրն ամբաստանելէն. կատղութենէ յուսահատութեան և յուսահատութենէ մեղկութեան անցաւ։

Իր անկողնին մէջ քիչ մ՚ատեն ձկտելէն և գալարելէն ետև՝ իր անշարժ թևերը քովընտի ինկան։ Իր գլուխը տանթելէ մնաց վրայ ընկաւ, իր նկուն անդամները սարսուռ զգացին՝ ջլային թեթև կարկամութեամբ շարժելով, իր կուրծքէն միայն ատեն ատեն հառաչներ կ՚ելնէին։

Մորֆէոս աստուածը՝ որ իբրև վերհասպետ կ'տիրէր այն սենեկին մէջ որու իր անունը տուեր էր, և որու կողմը բարկութենէ ծանրացած ու արտասուքէ կարմրցած աչերը կ'դարձնէր Լուի, Մորֆէոս աստուածն անոր վրայ լեռաձեւն քուն կ'թափէր, այնպէս որ թագաւորը մեղմիկ իր աչերը գոցեց և քնացաւ։

Այն ատեն իրեն այնպէս երևցաւ, ինչպէս որ կ'պատահի առաջին անուշ և թեթև քունի մէջ, որ մարմինն անկողնէն վեր, հոգին երկրէն վեր կ'բառնայ, իրեն այնպէս երևցաւ որ ձեղունին վրայ նկարուած Մորֆէոս աստուածը՝ մարդասիրական աչք իրեն կ'նայէր, թէ գմբէթին մէջ բան մը կ'շարժէր և կ'փայլէր, թէ չարագուշակ երազներու երամներ՝ պահ մը տեղ փոխելով, երևան կ'հանէին մարդու մը դէմքը, ձեռքը բերնին վրայ կպած և մտածողական դիրքով մը կեցած։ Եւ՝ որ տարօրինակ էր, այս մարդն այնչափ թագաւորին կ'նմանէր՝ որ Լուի կարծէր թէ իր յատուկ դէմքը կ'բեկբեկի հայելի մը մէջ։ Միայն այս դէմքը խորին արդահատութեան զգացումով մը վշտացած էր։

Յետոյ իրեն զրեթէ այնպէս երևցաւ որ գմբէթը կ'խուսէր իր տեսքէն հեռանալով, և թէ Լը Պրէօնի ձեռքը նկարուած պատկերներն ու խորհրդաւոր նշանակները՝ հետզհետէ հեռանալով կը մթանային։ Անուշ, միօրինակ, կանոնաւոր շարժում մը՝ կոհակին մէջ սուզող նաւին նման, անկողնին անշարժութեան յաջորդեր էր։ Անտարակոյս թագաւորն երազ մը կ'տեսնէր, և այս երազին մէջ, ոսկի պսակն որով վարագոյրները կապուած էին գմբէթին պէս կ'հեռանար որու կախուած կ'մնար, այնպէս որ թեւաւոր ոգին՝ որ այս պսակն երկու ձեռքք կ'բռնէր՝ կարծես թէ ընդունայն կ'կոչէր թագաւորը՝ որ իրմէ հեռու կ'անհետէր։

Անկողնին միշտ կ'խորասուզէր։ Լուի՝ աչերը բացած՝ այս անագորոյն պառանցանքք կ'խաբուէր ակամայ։ Վերջապէս արքայական սենեկին լոյսն երթալով կ'մթանար, պաղ, մթին, անմեկնելի բան մ'օդին մէջ կ'սփռուէր։ Անհետ կ'լինէին պատկերները, ոսկին, թաւշէ վարագոյրները, և կ'երևէին միայն մթագոյն պատեր՝ որոց ստուերը տակաւ առ տակաւ կ'մթագնէր։ Եւ սակայն անկողնին միշտ վար կ'իջնէր, և վայրկեան մ'ետք՝ որ թագաւորին դար մ'երևցաւ, սև և սառուցեալ օդի մը խաւն իջաւ։ Այն տեղ կայ առաւ։

Թագաւորն իր սենեկին լոյսը կ'տեսնէր ինչպէս ջրհորի մը խորքէն՝ կ'տեսնուի օրուան լոյսը։

— Սոսկալի երազ մը կ'տեսնեմ — մտածեց նա։ — Ժամ է արդ որ արթննամ։ Օ՛ն, արթննանք։

Ամէն մարդ այս մեր ըսածն զգացած է. չկայ մարդ մ'որ հեղձուկ մղձաւանջի մը մէջ ըսած չլինի իւրովի՝ այն կանթեղին շնորհիւ որ ըղեղին մէջ կ'փայլի՝ երբ ամէն մարդկային լոյս մարած է, չկայ մարդ մ'որ ըսած չլինի. «Այս բան մը չէ, կ'երազեմ»։

Ահա այս էր Լուի ԺԴի ըսածը, բայց երբ սա խօսքն արտասանեց. «Զարթնո՛ւնք». տեսաւ որ ոչ միայն արթուն էր, այլև իր աչերը բաց էին։ Այն ատեն զանոնք իր բոլորտիքն ածեց։

Իր աջ ու ձախ դին երկու ղինեալ մարդիկ կեցած էին՝ լայն վերարկուով մը փաթթուած, և դիմակ դրած։

Այս մարդոց մին ձեռքը բռներ էր փոքրիկ կանթեղ մը որու կարմրուն նշոյլն ամենատխուր տեսարան մը կ'լուսաւորէր ղոր երբէք թագաւոր մը տեսած լինէր։

Լուի ըսաւ իւրովի որ իր երազը կ'շարունակուէր, և թէ զայն փարատելու համար բաւական էր թեւերը շարժել և ձայնը լսելի ընել։ Այն ատեն՝ կանթեղը բռնող մարդուն ուղղելով խօսքը,

— Ի՞նչ է այս, պարոն — ըսաւ — և ինչ կ'նշանակէ այս կատակը։

— Այս կատակ չէ — պատասխանեց խուլ ձայնով մ'երկու մարդոց մին որ կանթեղը բռնած էր։

— Միթէ Պ. Փուքէի մարդիկն էք — հարցուց թագաւորը փոքր ինչ շփոթած։

— Փոյթ չէ թէ որու մարդիկն ենք — ըսաւ Ճիւաղը։ — Մենք քու տէրերդ ենք, և այլ ոչ ինչ։

Թագաւորն աւելի անհամբեր քան ահաբեկ՝ երկրորդ դիմակին կողմը դարձաւ։

— Եթէ այդ կատակերդ մ'է — ըսաւ — ըսէք Պ. Փուքէի որ շատ անպատեհ կ'գտնեմ, և կ'հրամայեմ որ դադրի։

Այս երկրորդ մարդն որու կ'խօսէր Թագաւորը՝ խիստ բարձր հասակով և ստուար մարմնով մարդ մ'էր։ Մարմարի կոյտի մը պէս շնտակ ու անշարժ կ'կենար։

— Լաւ ուրեմն — յարեց Թագաւորն իր ոտքը զարնելով — ինչո՞ւ պատասխան չես տար։

— Քեզի պատասխան չենք տար, իմ փոքրիկ պարոնս — ըսաւ հսկայն սգենտորեան ձայնով մը — վասն զի պատասխանելու բան մը չկայ, եթէ ոչ առաջին Նէրէն ես, և թէ Պ. Քօքլէն Վօլիէր իրենեներուն կարդին մէջ քեզ մոռցաւ։

— Բայց վերջապէս, ինչ կ'ուզէք իզնէ — դոչեց Լուի իր թևերը ծալլելով բարկութեամբ։

— Վերջէն պիտի խմնաս — պատասխանեց կանթեղակիրը։

— Այլ սակայն ո՞ւր եմ այժմ։

— Նայէ։

Լուի իրօք նայեցաւ. բայց դիմակաւոր մարդուն ամբառցած կանթեղին նշոյլովը խոնաւ պատեր տեսաւ, որոց վրայ լերկ խղճունջներու արծաթագոյն հետքը կ'փայլէր։

— Հօ, հօ, զնդանն մը — ըսաւ Թագաւորը։

— Ո՛չ, ստորերկրեայ քարայր մը։

— Որ կ'տանի. . . ։

— Շնորհ ըրէ մեզի հետևելու։

— Ասկից չպիտի շարժիմ — դոչեց Թագաւորը։

— Եթէ դիմադրես, իմ փոքր բարեկամս — պատասխանեց երկու մարդոց ամենէն կորովին — քեզ պիտի վերցնեմ, վերարկուի մը մէջ պիտի փաթթեմ, և եթէ անոր մէջ խղդուիս, Ճշմարիտը, յանցանքը քուկդ պիտի լինի։

Եւ այս խօսքն ըսելով՝ այն վերարկուին տակէն՝ որով Թագաւորին կ'սպառնար՝ ձեռք մը հանեց զոր Կրոտոնցի Միլօնն անշուշտ կ'ուզէր ունենալ այն օրն երբ իր վերջին կաղնին Ճեղքելու աղէտաբեր խորհուրդն յղացաւ։

Թագաւորը սոսկաց որ իր վրայ բռնութիւն մը չընեն, վասն զի կ'հասկընար որ այս երկու մարդիկ՝ որոց իշխանութեան ներքև կ'գտնուէր, այնչափ յանդգնելէն ետև՝ չպիտի ընկրկէին, և հետևապէս դործը յետին ծայրը պիտի քշէին։ Ուստի դլուխը յնցեց։

— Կ'երևի թէ երկու մարդասպաններու ձեռքն ընկած եմ — ըսաւ նա։ — Քալէնք։

Այս երկու մարդոց և ոչ մին պատասխան չտուաւ այս խօսքին։ Կանթեղը բռնողն առջևէն դնաց, Թագաւորն անոր հետևեցաւ, երկրորդ դիմակն ետևէն կ'դար։ Այսպէս երկայն և ոլորուտ բակէ մ'անցան, որ այնչափ բազմաթիւ սանդուղներ կ'պարունակէր որչափ որ Անն Ռատքլիֆի խորհրդաւոր և մթին պալատներուն մէջ կ'գտնուէին։ Բոլոր այս պատ 'ի պատ պտոյտներն ընելու ատեն Թագաւորը ստէպ ջրի ձայներ լսեց իր դլխուն վրայ, և վերջապէս հոսան երկայն նրբաղաւթի մ'երկաթէ դռնով դոցուած։ Կանթեղակիր մարդն այս դուռը բացաւ իր մէջքէն կախած բանալիով, որոց հնչիւնը լսեր էր Թագաւորն այս ստորերկրեայ ուղևորութեան ատեն։

Երբ այս դուռը բացուեցաւ և օդը մուտք դտաւ, Լուի Ճանչեց այն հոտաւէտ բուրմունքն որ ամառուան տաք օրերէ ետք՝ ծառերէ կ'սփռին։ Պահ մը կայ առաւ վարանելով, բայց իրեն հետևող պահնորդը դետնափոր վայրէն դանի դուրս հրեց։

— Վերստին կ'հարցնեմ — ըսաւ Թագաւորը դլուխը դարձնելով այսպէս յանդգնութեամբ իր վեհապետին դպող մարդուն — ինչ պիտի ընէք Ֆրանսայի Թագաւորը։

— Ջանա այդ բառը մոռնալու — պատասխանեց կանթեղակիր մարդն այնպիսի ձայնով որ Մինոսի երևելի վՃիռներուն պէս պատասխան չէին կրնար տանիլ։

— Այդ արտասանած բառիդ համար կախուելու արժանի էիր — յարեց հսկայն իր ընկերին տուած լոյսը մարելով — բայց Թագաւորը շատ մարդասէր է։

Այս սպառնալեաց վրայ՝ Լուի այնպէս ուժդին շարժում մ'ըրաւ որ կարծես թէ խոյս տալ կ'ուզէր. բայց հսկայն ձեռքն անոր ուսին վրայ ծանրանալով դտնուած տեղն անշարժ պահեց։

— Բայց վերջապէս ո՞ւր կ'երթանք — ըսաւ Թագաւորը։

— Եկուր — ըսաւ երկրորդ մարդոց առաջինը տեսակ մը յար-

դանօք, և իր կալանաւորն առաջնորդեց կառքի մը կողմն որ կարծես թէ կ'սպասէր։

Այս կառքը բոլորովին ծածկուած էր տերևներուն մէջ։ Երկու ձիեր՝ որոց ոտքը կապեր կային, սպասուցքով մը մեծ կապնիի մը ցած ճիւղերէն կապուած էին։

— Վեր ելէք — ըսաւ նոյն մարդը կառքին դռնակը բանալով և քայլարկն իջեցնելով։

Թագաւորը հնազանդեցաւ, կառքին խորը նստաւ՝ որու պատուհանը և նիզով դռնակն իսկոյն իր և զինքն առաջնորդողին վրայ դոցուեցաւ։ Իսկ հսկայն ձիերուն կապերը կարեց, ինք ձեռօքը կառքին լծեց և նստարանին վրայ ելաւ, որ պարապ էր։ Անմիջապէս կառքը մեծարշաւ ճամբայ ելաւ, Բարիզի արահետը բռնեց և Սէնարի անտառին մէջ՝ ծառերուն կապուած ձիեր գտաւ առաջիններուն պէս։ Նստարանին մարդը ձիերը փոխեց և իր ճամբան շարունակեց դէպ 'ի Բարիզ, ուր առաւօտեան ժամն երեքին մօտ մտաւ։ Կառքը Սէնդ-Անդուանի փողոցը շարունակեց ընթացքն և պահնորդին «Թագաւորին հրամանը» պոռալէն ետև՝ կառապանը ձիերն առաջնորդեց Պասդիլլի բոլորաձև շրջապատին մէջ՝ որ կառավարչին ապարանը կ'տանէր։ Անդ կեցան ձիերը փրփրալով՝ դրանդին աստիճաններուն առջև։ Պահակներու յիսնապետ մը վազեց եկաւ։

— Պարոն կառավարիչն արթնցուցէք — ըսաւ կառապանն որոտալիր ձայնով մը։

Այս ձայնէն զատ՝ ձայն մ'որ Սէնդ-Անդուանի արուարձանին մուտքէն կարելի էր լսել, ամէն ինչ թէ կառքին և թէ դղեկին մէջ լռութեան մէջ մնաց։ Տասն վայրկեան ետք՝ Պ. Պէզմօ երևցաւ տնային դղեստովը դրան սեմին վրայ։

— Դարձեալ ի՞նչ կայ — հարցուց նա — և ովքե՞ր կ'բերես ինձ։

Դանթեղակիր մարդը դռնակը բացաւ և կառապանին քանի մը խօսք ըսաւ։ Այս վերջինն անմիջապէս տեղէն ելաւ, հրացան մը՝ զոր ոսից ներքև դրած էր, առաւ, և անոր փողը կալանաւորին կուրծքին կոթնցուց։

— Եւ հրացանդ պարպէ, եթէ խօսի — յաւելուց կառքէն իջնող մարդը։

— Լաւ — պատասխանեց մեսն առանց ուրիշ դիտողութիւն մ'ընելու։

Այս պատուէրը տրուելէն ետև՝ թագաւորին առաջնորդող մարդն աստիճաններէն վեր ելաւ, որոց գլուխը կ'սպասէր կառավարիչը։

— Պ. Հէրպլէյ — գոչեց կառավարիչը։

— Սուս — ըսաւ Արամիս։ — Սենեակդ մտնենք։

— Ո՛հ, Աստուած իմ։ Եւ ի՞նչ պատճառաւ այս ժամուս եկար։

— Պատճառը սխալմունք մ'է, սիրելի իմ Պ. Պէզմօ — պատասխանեց Արամիս հանդարտութեամբ։ — Կ'երևի թէ՝ անցեալն օր՝ իրաւունք ունէիր։

— Ի՞նչ առթիւ — հարցուց կառավարիչը։

— Բայց չե՞ս յիշեր, այն արձակման հրամանագրի մասին, սիրելի բարեկամ։

— Բացատրէ ինձ այդ բանը, պարոն . . . ո՛չ, տէր իմ — ըսաւ կառավարիչը զարմանքէն ու միանգամայն սարսափէն հեղձամղձուկ լինելով։

— Այդ շատ պարզ է. կ'յիշես, սիրելի իմ Պ. Պէզմօ, որ քեզի մէկն արձակելու համար հրամանագիր մը զրկեցին։

— Այո՛, Մարքիալիի համար։

— Լաւ, ամենքնիս ալ այնպէս կարծեցինք որ Մարքիալիի համար էր, այնպէս չէ՞։

— Անտարակոյս։ Սակայն կ'յիշե՞ս որ ես կ'տարակուսէի, թէ ես չէի կամեր, և թէ դու ստիպեցիր զիս։

— Ո՛հ, ինչ բան կ'գործածես այդ տեղ, սիրելի Պէզմօ . . . Ես քեզ յորդորեցի միայն։

— Այո՛, յորդորեցիր, յորդորեցիր որ քեզի յանձնեմ զանի և դու ալ զանի կառքովդ տարիր։

— Լաւ, սիրելի իմ Պ. Պէզմօ, այս սխալմունք մ'է եղեր։ Պաշտօնատունը գործը սուղեցին, այնպէս որ թագաւորին կողմէ հրաման մը կ'բերեմ քեզի որ արձակ ձգես . . . Սէլտօնը, այն Իրլանդայի խեղճ երիտասարդը գիտես։

— Սէլտօն. միթէ այս անգամ ստոյգ ես։

— Սատյդ, դու անձամբ կարդա — յարեց Արամիս հրամանագիրն անոր տալով։

— Բայց — ըսաւ Պէղմօ — այդ հրամանագիրն արդէն իմ ձեռքէս անցածն է։

— Իրաւ։

— Ճիշտ այն հրամանագիրն է որու համար կ'ըսէի թէ անցած իրիկուն տեսայ. Տէր վկայ, մելանի բիծէն կ'ճանչեմ։

— Ես չեմ պիտեր թէ նոյնն է, բայց այս իրաւ է որ զայն կ'բերեմ քեզի։

— Բայց այն ատեն, միւսն ինչ ընենք։

— Ո՞րն է միւսը։

— Մարքիալին։

— Աւասիկ այդ Մարքիալին քեզի կ'բերեմ։

— Բայց այդ բաւ չէ։ Պէտք է, զայն առնլու համար, ուրիշ հրամանագիր մ'ընդունիմ։

— Այդպիսի բաներ մի ըներ, սիրելիդ իմ Պէղմօ. տղեկի մը պէս կ'խօսիս։ Մարքիալիի նկատմամբ ընդունած հրամանագիրդ ուր է։

Պէղմօ իր արկղին մօտեցաւ և զայն հանեց։ Արամիս զայն ձեռք ձգեց, պաղութեամբ զայն չորս կտոր պատռեց, կտորները կանթեղին մօտեցուց և այրեց։

— Բայց ինչ կ'ընես — գոչեց Պէղմօ անհնարին զարհուրանք։

— Անգամ մը լաւ նկատէ մեր վիճակը, սիրելիդ իմ կառավարիչ — ըսաւ Արամիս անդրդուելի հանդարտութեամբ մը — և պիտի տեսնես թէ որչափ պարզ է։ Այլ ևս հրամանագիր մը չունիս որով Մարքիալիի ելուստն արդարանայ։

— Է՛հ, Աստուած իմ, ոչ, չունիմ, կորսուած մարդ մ'եմ։

— Բայց ամենեին, քանի որ Մարքիալին քեզի կ'բերեմ։ Քանի որ կ'բերեմ, բունէ թէ ընաւ դուրս ելած չէ։

— Ա՛հ — ըսաւ կառավարիչը բոլորովին շուարած։

— Անտարակոյս։ Հիմակ անմիջապէս զանի պիտի բանտարկես։

— Անպատճառ։

— Եւ ինձի պիտի տաս այն Սէլաոնն որ նոր հրամանագրով պիտի ազատ ձգուի։ Այս կերպով արձանագրութեանդ տումարը կարգին է. կ'հասկընամ։

— Կը . . . կը . . . ։

— Կ'հասկընաս — ըսաւ Արամիս։ — Շատ աղէկ։

Պէղմօ ձեռները կցեց։

— Բայց, վերջապէս, Մարքիալին ձեռքէս առնլէն ետև՝ ինչո՞ւ համար ետ կ'բերես — գոչեց ողորմելի կառավարիչը ծայրագոյն վիշտ և ապշութիւն զգալով։

— Քեզի պէս բարեկամի մը համար, քեզի պէս սպասաւորի մը համար, դաղտնիք չունիմ — ըսաւ Արամիս։

Եւ Արամիս իր բերանը Պէղմօի ականջին մօտեցուց։

— Դիտես անշուշտ — շարունակեց Արամիս ցած ձայնով մը — թէ ինչ մեծ նմանութիւն կայ այս խեղճ երիտասարդին և . . . ։

— Եւ թագաւորին մէջ, այո։

— Լաւ ուրեմն, Մարքիալի ամենէն առաջ իր ազատութիւնը գործածել ուզեց պնդելու համար, գտիր թէ ինչ։

— Ի՞նչպէս կ'ուզես որ գիտնամ։

— Պնդելու համար որ Ֆրանսայի թագաւոր է։

— Ո՛հ, ողորմելի՛ն — գոչեց Պէղմօ։

— Թագաւորին զգեստուց նման զգեստներ հագնիլ և իրրև յափշտակիչ առաջ նետուիլ էր։

— Գթած Աստուած։

— Աւասիկ այս պատճառաւ քեզի կ'բերեմ այդ մարդը, սիրելի բարեկամ։ Խենթ է, և իր խենթութիւնն ամենուն կ'ըսէ։

— Հիմակ ինչ ընել պէտք է։

— Շատ պարզ է. մի թողուր որ ուրիշի հետ տեսնուի։ Կը հասկընաս որ՝ երբ իր խենթութիւնը թագաւորին ականջին հասաւ, որ անոր թշուառութեան գթաց, և որ իր բարութեան փոխարէն սոսկալի ապերախտութիւն մը տեսեր էր, թագաւորը սաստիկ կատղեցաւ։ Այնպէս որ հիմակ, լաւ ըմբռնէ սա կէտը, սիրելի իմ Պ. Պէղմօ, վասն զի քեզի կ'վերաբերի, այնպէս որ հիմակ՝ մահուան պատիժ պիտի ընդունին անոնք որ իրենէ՝ կամ

նոյն ինք թագաւորէն զատ՝ ուրիշն հետ տեսակցելու թողուն զանի։ Ի՛նչպէս, Պէղմ, մահու պատիժ։

— Ի՞նչպէս չէ, Տէր վկայ։

— Ուրեմն հիմակ վար իջիր, և այս ողորմելին իր ընդանը տար, միայն թէ այս տեղ վեր հանելու մտադիր չլինիս։

— Ի՞նչ պէտք կայ։

— Այո՛, լաւ էս է անմիջապէս բանտարկել զանի, այնպէս չէ։

— Տէ՛ր վկայ։

— Լաւ ուրեմն, երթանք։

Պէղմ թմբուկ զարնել, զանգակը հնչել տուաւ որով ամենուն իմաց կ՚տար ներս մտնելու, որպէս զի խորհրդաւոր կալանաւորի մ՚երեսը չտեսնեն։ Ապա՝ երբ բոլոր անցքերն անմարդ մնացին, դնաց կալանաւորը բանտէն առնելու, այն միջոցին որ Բորթոս իրեն տրուած հրամանին հաւատարիմ, իր հրացանն անոր կոկորդին ուղղեալ կ՚սպասէր։

— Ա՛հ, աւասիկ ես, գժբաղդ — գոչեց Պէղմ թագաւորը տեսնելով։ — Լաւ է, լաւ է։

Եւ անմիջապէս՝ թագաւորը կառքէն իջեցնելով՝ զանի առաջնորդեց միշտ Բորթոսի ուղեկցութեամբը, որ իր դիմակը չէր հանած, և Արամիս որ իրենը գրեր էր վերստին, երկրորդ Պէրդոսիէրի մէջ, և բացաւ անոր այն սենեակն ուր Գիլիպ տասն տարի հեծեծեր էր։

Թագաւորը զնդանը մտաւ առանց բառ մ՚արտասանելու։ Գունատ էր և դաժան։

Պէղմ անոր վրայ դուռը գոցեց, փականքն երկու անգամ դարձուց, և Արամիսին դառնալով,

— Ճշմարիտ վկայ, իրաւ է որ թագաւորին կ՚նմանի — ըսաւ անոր ցած ձայնով — բայց ոչ թէ ըսածիդ չափ։

— Այնպէս որ — ըսաւ Արամիս — չպիտի խախուտիր երբէք եթէ անոր տեղ թագաւորը բերէին այս տեղ։

— Ա՛հ, մթթէ կարելի՞ էր խաբուիլ։

— Անգին մարդ մ՚ես, սիրելիդ իմ Պէղմ — ըսաւ Արամիս։

— Այժմ Սէլուոնն արձակ ձգէ։

— Իրաւ է, կ՚մտնայի։ ։ ։ հիմակ պիտի հրաման տամ որ հանեն։

— Վա՜հ, վաղն ալ կրնայ լինիլ, ժամանակ ունիս։

— Վա՜ղը, ո՛չ, ո՛չ, անմիջապէս հիմակ։ Աստուած չընէ որ պահ մը սպասեմ։

— Ուրեմն դու քու գործիդ դնա, ես ալ իմ գործիս պիտի դնամ։ Բայց որոշումը լաւ հասկըցար, այնպէս չէ՞։

— Ի՞նչ որոշում։

— Թէ թագաւորին հրամանով մը միայն մէկը պիտի կարենայ կալանաւորին քովն երթալ, հրաման մը զոր ես պիտի բերեմ։

— Այդպէս է։ Գնա՛ բարեաւ, տէր իմ։

Արամիս իր ընկերին քովն եկաւ։

— Օ՜ն, օ՜ն, Բորթոս բարեկամ, 'ի վե՛ռ, և շուտ շա՛տ շուտ։

— Մարդ թեւեր կ՚առնու երբ իր թագաւորին հաւատարմութեամբ կ՚ծառայէ, և անոր ծառայելով իր հայրենիքը կ՚աղատէ — ըսաւ Բորթոս։ — Ձիերը ծանր բեռ չունին. մեկնինք։

Եւ կառքը՝ կալանաւորէ մ՚ազատելով, որ արդարև շատ ծանր կրնար երևիլ Արամիսի, Պասդիլլի շարժական կամուրջէն անցաւ, որ իր ետևէն վերստին վեր ելաւ։

ԺԹ

ԳԻՇԵՐ Մ՚Ի ՊԱՍՊԻՅԼ

Այս կենաց մէջ մարդուս դժին համեմատ են տառապանքը։ Միայն չունինք ըսելու թէ Աստուած արարածին կարողութեանց վրայ կ՚չափէ անոր վրայ դրած անձկութիւնը, այս Ճշմարիտ խօսք մը չէր լինէր՝ վասն զի Աստուած մահ կղրկէ իրրև ապաւէն այն հոգիներու որոց համար նեղ է իրենց մարմինը։ Տառապանքը կարողութեանց համեմատութեամբ է, այսինքն տկարն ատելի կը տառապի, նոյն հատասար չարեաց մէջ, քան թէ զօրեղը։ Այժմ,

մարդկային ոյժն ինչ տարերքէ կ'բաղկանայ. ո՛չ ապաքէն վարժութենէ, սովորութենէ, փորձառութենէ։ Աւասիկ այս բանը հաստատելու համար ծանրութիւնն անդամ չպիտի առնունք. ինչպէս 'ի բարոյականին նոյնպէս նիւթական մասին ակներև ճշմարտութիւն մ'է։

Երբոր նորատի թագաւորն ապուշ կրթած, աղէբեկ՝ Պասդիլլի մէկ սենեակը դատ. ինքզինքը, նախ երևակայեց թէ մահը քունի կ'նմանի, թէ իր երազներն ունի, թէ մահիճը Վօի դեռնին տակը սուղը է, և թէ իր արքայի երազը շարունակելով, Լուի ԺԴ՝ հանդուցեալ՝ դեռ ևս կ'երազէր այնպիսի սոսկալի բան մ'որ անկարելի կ'թուի կենաց մէջ, և որ կ'կոչուի դահընկեցութիւն, բանտարգելութիւն և երբեմն հզօր թագաւորի մ'եղած նախատինքը։

Իբրև շոշափելի ստուեր՝ իր վշտալի խաղին ներկայ դտնուիլ, նմանութեան և իրականութեան մէջ լողալ անիմանալի դաղտնիքով մը, ամէն ինչ տեսնել, լսել, առանց այս օրհասական ժամուն մէկ մանր պարագան շփոթելու, միթէ այս՝ կ'ըսէր թագաւորն իւրովի, այնքան աւելի զարհուրելի տանջանք մը չէ՞ր որչափ որ կրնար յաւիտենական լինիլ։

— Միթէ այս է յաւիտենականութիւն, դժոխք կոչուածը — մրմնաց Լուի ԺԴ այն միջոցին որ դուռն իր վրայ գոցուեցաւ, նոյն ինքն Պէզմոի ձեռօք։

Եւ ոչ իսկ իր բոլորտիքը նայեցաւ, և այս սենեկին մէջ, որ և է պատի մը կրթնած, իր մահուան սոսկալի ենթադրութենէ մլուելով՝ աչքը գոցեց որպէս զի յուսադոյն բան մը չտեսնէ։

— Ի՞նչպէս մեռայ — ըսաւ իւրովի կէս մը խեղդաձայն։ — Արդեօք հնարքով մ'այս մահիճը վա՞ր իջեցուցին։ Բայց ո՛չ, ճմլածքի և ոչ զարնուածքի յիշատակ մ'ունիմ...։ Արդեօք աւելի հաւանական չէ՞ որ զիս ճաշի ատեն թունաւորած լինին, կամ մեզ փամփուշտներով ինչպէս Ժան ա'Ալպէր, իմ հանիլս մայրը։

Յանկարծ նոյն սենեկին դուրը վերաբկուի մը պէս Լուիի ուսերուն վրայ ընկաւ։

— Տեսայ իմ հայրս իր արքայական զգեստով անկողնին վրայ 'ի հանդէս — ըսաւ նա։ — Այն գունատ դէմքը, այնքան հանդարտ և այնքան վատոյժ, այն ճարտար ձեռներն այնքան անզգայ դարձած, այն կարկամ սրունքը, այն ամենն երազներով լի քուն մը չէին յայտներ։ Եւ սակայն Աստուած ի՞նչ երազներ կ'զրկէր արդեօք այն մեռելին... այն մեռելին որու աչքէն շատեր դայեր էին, որու ձեռօք յաւիտենական դիշերը դահավիժե՛ր էին...։ Ո՛չ, այն թագաւորը դեռ ևս թագաւորն էր, դեռ ևս կը դահակալէր այն դամբանական մահճին վրայ՝ իբրև թաւշեայ թիկնաթոռին վրայ։ Իր վեհափառութենէ բան մը չէր կորուսած։ Աստուած, որ զանի չէր պատժած, զիս չկրնար պատժել, ես որ բան մը չըրի։

Այլանդակ ձայն մ'երիտասարդին ուշը գրաւեց։ Նայեցաւ և կրակարանին վրայ՝ կոշտաբար նկարուած Քրիստոսի պատկերի մը ներքև տեսաւ ահագին մուկ մ'որ չոր հացի կտոր մը կրծելու եռանդ էր, բանտին նորեկ հիւրին վրայ մտացի և հետաքրքրական ակնարկ մը ձգելով։

Թագաւորը վախցաւ. զզուանք զգաց. դէպ 'ի դուռն ընկրկեցաւ մեծ աղաղակ մ'արձակելով։ Եւ որպէս թէ այս սրտէն փախած աղաղակը պէտք էր որպէս զի ինքզինքը ճանչէ, Լուի զգաց որ կենդանի է, միտքը զլուխն է և իր բնական դիտակցութեան տէր։

— Բանտաւո՛ր — գոչեց նա — ես, ես, բանտաւո՛ր։

Աչքը հնչակ մը փնտռեց որ զարնէ և մարդ կանչէ։

— Պասդիլլի մէջ հնչակ չկայ — ըսաւ նա — և Պասդիլլի մէջ բանտարկուած եմ։ Այժմ, ի՞նչպէս բանտաւոր եղայ։ Այդ Պ. Փուքէի մէկ դաւն է 'ի հարկէ։ Զիս Վօ հրաւիրեց որ թակարդը նետէ։ Պ. Փուքէ այս գործին մէջ մինակ չէ։ Իր գործակալը... այդ ձայնը... Պ. Հէրպլէյինն է, ես զայն ճանչեցի։ Գօլպէր իրաւունք ունէր։ Բայց Փուքէ ի՞նչ կ'ուզէ իրնէ։ Միթէ իմ տեղս պիտի թագաւորէ։ Անկարելի՛ բան։ Ո՞վ գիտէ — մտածեց թագաւորը տխրելով։ — Օրլէանի դուքսն իմ եղբայրս ինձի դէմ կ'գործէ թերևս ինչ որ կամեցաւ գործել իմ հօրեղբայրս

իր բոլոր կենացը մէջ հօրս դէմ։ Բայց թագուհին, բայց մը՞ն, բայց Լա Վալիէր։ Ո՛հ, Լա Վալիէր, անտարակոյս իշխանուհոյն ձեռքն ընկած պիտի լինի։ Սիրելի՛ աղջիկ, այո՛, այսպէս է, զանի բանտարկած պիտի լինին ինձի պէս։ Յաւիտենապէս բաժնուած ենք։

Եւ այս բաժանման դաղափարին վրայ՝ սիրոյն սկսաւ յանկարծ հառաչել, հեծկլտալ և աղաղակել։

— Այս տեղ կառավարիչ մը կայ — վրայ բերաւ թագաւորը կատղութեամբ — անոր պիտի խօսիմ։ Կանչենք։

Եւ իրօք կանչեց։ Ձայն մ՚իրենին պատասխան չտուաւ։

Ամուն առաւ, կաղնի փայտէ հաստ դրան զարնելու համար, փայտը փայտին վրայ հնչեց, և սանդղին խորութեան մէջ շատ մը սղալն արձագանք տուաւ, բայց մարդկային արարածի մը ձայնն անդամ չլսուեցաւ՝ իբրև պատասխան։

Թագաւորին համար այս նոր ապացոյց մ՚էր որ Պաստիլլի մէջ զինքը չէին յարգեր։ Այն ատեն՝ առաջին բարկութենէ ետև՝ վանդակաւոր պատուհան մը տեսնելով՝ ուսկից ոսկեղօծ շեղանկիւն մը կ՚անցնէր որ լուսաւոր արշալոյսը պիտի լինէր, Լուի սկսաւ պուաալ՝ նախ մեղմիկ՝ ապա սաստկութեամբ։ Ամենեին պատասխան մը չստացաւ։

Քսան անդամ փորձ փորձեց հետզհետէ, բայց բոլոր փորձերն ապարդիւն մնացին։

Իր արիւնն սկսաւ խռովիլ և գլխուն դարնել։ Այս հոգին՝ որ հրամայելու վարժած էր, անհնազանդութեան մ՚առջև կ՚սարսուէր։ Քիչ քիչ բարկութիւնը սաստկացաւ։ Բանտաւորն իր աթոռը՝ որ շատ ծանր էր ձեռքին համար, խորտակեց և իբրև բարան գործածեց դրան դէմ։ Այնքան ուժգին և սոսկալի զարկաւոր քրտինքն սկսաւ իր ճակտէն հոսիլ։ Աղմուկն երթալով ահագին և յարատև դարձաւ։ Քանի մը խեղդուկ աղաղակներ ատ և անդ լսելի եղան։

Թագաւորին վրայ այս աղմուկը տարօրինակ ներդործութիւն մ՚ունեցաւ։ Կանկ առաւ որ մտիկ ընէ։ Բանտաւորներուն ձայնն էր որ երբեմն իր ըսհերն էին, այսօր իր բանտակիցները։ Այս

ձայնները՝ թանձր առաստաղներէ, դիմահար պատերէ շողիներու պէս վեր կ՚ելնէին։ Կ՚ամբաստանէին դարձեալ այս ժխորին հեղինակը՝ ինչպէս որ՝ անշուշտ՝ հառաչներն ու արտասուքն իրենց գերութեան հեղինակը մեղմաձայն կ՚ամբաստանէին։ Այսչափ մարդիկ աղատութենէ զրկելէ ետև՝ թագաւորն անոնց բանտը կ՚դարքունէ զրկելու համար։

Այս դաղափարը քիչ մնաց զինքը պիտի խենթացնէր։ Ասով իր ոյժը կրկնապատկեց, կամ լաւ ևս իր կամքը՝ տեղեկութիւն մը կամ վախճան մը ստանալու չափազանց կարօտելով։ Ամուն փայտն իր պաշտօնը վերստին սկսաւ։ Ժամէ մ՚ետը՝ Լուի նրբապատին մէջ բան մը լսեց՝ իր դրան ետևը, և բուն հարուածմ՚որ նոյն դրան վրայ իբրև պատասխան տրուելով, իր հարուածները դադրեցուց։

— Ինձ նայէ, միթէ խենթ ես — ըսաւ հաստ և կոշտ ձայն մը։ — Այս առտու խելքիդ եկաւ։

— Այս առտո՛ւ — մտածեց թագաւորը զարմանօք։

Ասա, քաղաքավարութեամբ.

— Պարոն — ըսաւ — միթէ Պաստիլլի կառավարիչն ես։

— Քա՛ջդ իմ, գլուխդ տեղը չէ — պատասխանեց ձայնը — բայց այդ պատճառ մը չէ այդչափ վայնասուն հանելու։ Լռէ, նայիմ։

— Միթէ դո՞ւ ես կառավարիչը — հարցուց նորէն թագաւորը։

Դուռ մը դոցուեցաւ։ Փականակիրն էր մեկնողը՝ որ չհաճեցաւ բառ մ՚անդամ պատասխան տալու։

Երբ թագաւորը ստոյգ եղաւ որ մէկը կ՚մեկնի՝ իր կատղութիւնը սահման չունեցաւ։ Վագրի մը պէս թեթևաշարժ՝ սեղանէն պատուհանին վրայ ցատկեց՝ որու վանդակները դղրդեց։ Ապակի մը զարկաւ կոտրեց որու բեկորները դաւիթներուն մէջ ընկան ներդաշնակ հնչիւնով մը։ Իր բոլոր ուժովը պոռաց. «Կառավարի՛չը, կառավարի՛չը»։ Այս մոլեգնութիւնը ժամ մը տևեց, որ հրակէզ տենդի մը շրջանն եղաւ։

Աղերն անկարգ և ճակտին փակած, իր զգեստները պատառած, ճերմկցած, ճերմակեղէն լաթերը ծուէն ծուէն եղած՝ թա-

դաւորը զաղար առաւ երբ իր բոլոր ոյժը սպառեց, և այն ատենն միայն հասկրցաւ այս պատերուն անպարոյն թանձրութիւնը, այս շաղախին անթափանցութիւնը, որ ժամանակէ զատ ամէն որ և է փորձի առջև անընկճելի է, յուսահատութիւնն ունենալով իրեն գործիք։

Իր ղլուխը դրան վրայ կոթնցուց, և փոքր առ փոքր սիրտն անպորրեց. եթէ անգամ մ'ևս բախէր պիտի պայթէր։

— Պիտի գայ վայրկեան մ'որ բանտաւորներու տրուած կերակուրն ինձի ալ պիտի բերեն — ըսաւ նա։ — Այն ատեն մէկը պիտի տեսնեմ, պիտի խօսիմ և ինձ պատասխան պիտի տայ։

Եւ թագաւորը ջանայ յիշելու թէ ո՞ր ժամուն Պասպիյլի բանտաւորներուն առաջին ճաշը կ'տրուի։ Այս պաքաղան իսկ կ'անդիտէր։ Գաղտնի և սուր հարուած մ'էր դաշունի իր սրտին համար այս խայթն որ քսան հինգ տարի թագաւոր և երջանիկ ապրած լինի՝ առանց մտածելու թէ ինչ տառապանք կ'քաշէ աղատութենէ յանիրաւի զրկուող դժբաղդ մարդ մը։ Թագաւորն ամօթէն կարմրեցաւ։ Կ'զգար որ Աստուած, այս սոսկալի նուաստութիւնն իրեն տրուելու ներելով՝ մարդու մը կ'հատուցանէր միայն այն տանջանքը զոր այս մարդը բաղմաթիւ մարդոց տուեր էր։

Չկար աւելի ազդու բան մը կրօնի զգացումի բերելու այս հոգին վշտաց զգացումն ընկճեալ։ Բայց Լուի և ոչ իսկ ծունը դրաւ Աստուծոյ աղօթելու համար, այս փորձանքին վախճանը հայցելու համար։

— Աստուած լաւ կ'ընէ — ըսաւ — Աստուած իրաւունք ունի։ Վատութիւն պիտի լինի իմ կողմէ հայցել ինչ որ իմ նմաններուս ստէպ մերժեցի։

Իր խորհրդածութեանց՝ այսինքն իր տաղնապին այս կիտին մէջն էր, երբ իր դրան ետին նոյն աղմուկը լսուեցաւ, նոյն պահուն բանալիներու կռինչն և պարզունակի աղմուկ մ'ելնելով որոնք փականաց մէջ կ'դառնային։

Թագաւորն ընդ առաջ ոստում մ'ըրաւ որպէս զի ներս մտնող մարդուն մատենայ, բայց յանկարծ մտածելով որ թագաւորի մը անարժան շարժում մ'էր, կայ աւաւ, աղնիւ և հանդարտ դիրքը

մը բռնեց, և այս իրեն դիւրին բան մ'էր, և սպասեց՝ կոնակը պատուհանին դարձուցած՝ որպէս զի նորեկ մարդուն առջև իր այլայլութիւնը քիչ մը ծածկէ։

Եկողը փականակիր մ'էր միայն որու ձեռքն ուտելիքով լի սափոր մը կար։

Թագաւորն այս մարդը մտատանջութեամբ կ'դիտէր, սպասեց որ խօսի։

— Ա՛հ — ըսաւ այս մարդը — աթոռդ կոտրեր ես. ես աղէկ կ'ըսէի. անտարակոյս կատղութիւն եկած է քու վրադ։

— Պարոն — ըսաւ Թագաւորը — ըսած խօսքդ չափէ՛ ծանր յանցանաց մէջ կ'կրնաս։

Փականակիրը սեղանին վրայ դրաւ իր սափորը, և իր խօսակցին նայելով,

— Վա՛հ — ըսաւ զարմանօք։

— Վերը կանչէ՛ կառավարիչը — յարեց Թագաւորն աղնութեամբ։

— Կեցիր նայինք, տղոս — ըսաւ փականակիրը — դու միշտ խելօք էիր. բայց յիմարութիւնը չար կ'ընէ մարդը, և կ'ուզեմ քեզի ազդարարել թէ աթոռդ խորտակելուդ և աղմուկ հանելուդ մեծ յանցանք մը գործած ես որու պատիժն է վերապ։ Խօսք տուր ինձ որ չպիտի վերստին սկսիս, և ես ալ կառավարչին չպիտի ըսեմ։

— Կառավարիչը կ'ուզեմ տեսնել — պատասխանեց Թագաւորն անվրդով։

— Քեզ վերապը պիտի նետէ, զգոյշ եղիր։

— Կ'ուզեմ, կ'ըսեմ։

— Ա՛հ, ահա նորէն աչերդ կ'դառնան. լաւ, դանակ չպիտի տամ քեզի։

Եւ փականակիրն ըսածն ըրաւ, դուռը կոցեց և մեկնեցաւ, Թագաւորն առաջուանէ աւելի շատ զարմացած, աւելի դժբաղդ, աւելի միայնակ թողլով։

Թագաւորն ընդունայն սկսաւ աթոռի փայտին խաղը. ընդունայն պատուհանէն վար նետեց պնակներն ու սկաւառակները. ոչ որ պատասխան տուաւ այնուհետև։

Երկու ժամ եաք՝ այս թագաւոր մը չէր, աղատորդի մը, մարդ մը, գլուխ մը չէր՝ խենթ մ'էր որ ըզունդովը գոնները կ'ճանկըռդէր, սենեկին յատակը քակելու կ'փորձէր, և այնպիսի ահարկու աղաղակներ կ'արձակէր որ Հինօրեայ Պասդիլ կարծես թէ 'ի հիմանց կ'դղրդէր իր վեհապետին դէմ ապստամբելու իշխելուն համար։

Իսկ կառավարիչը տեղէն անդամ չէր շարժած։ Փականակիրն ու պահակներն իրենց տեղեկութիւններն անոր տուեր էին, բայց անօգուտ տեղը։ Մինթ բերդին մէջ յիմարները սովորական բաներ չէին, և մինթ պատերը յիմարներէն աւելի զօրաւոր չէին։

Պ. Պէզմօ՝ Արամիսին բոլոր ըսածները լաւ մը թափանցելով և թագաւորին հրամանագրին համեմատ վարուելը տեսնելով, բան մը միայն կ'խնդրէր, որ Մարքիալի խենթն այնչափ խենթանայ որ 'ի վերջէ իր մահճակալէն կամ պատուհանին ձողերուն մէկէն կախուի։

Արդարև՝ այս բանտաւորն իրեն դրամական օգուտ մը չունէր և պէտք եղածէն աւելի նեղութիւն կ'պատճառէր։ Սէլտոնի և Մարքիալի մէջ եղած շփոթութիւնները, այս արձակման և վերստին բանտարկելութեան շփոթութիւնները, այս նմանութեան շփոթութիւններն այն ատեն աւելի հեշտ վախճան մ'առած կ'լինէին, ըստ Պէզմօի։ Պէզմօ կարծէր թէ այս բանս Պ. Հէրպլէյի անհաճոյ չպիտի լինէր։

— Եւ ապա, արդարև — կ'ըսէր Պէզմօ իր հաղարապետին — դեռհիկ բանտաւոր մ'արդէն բաւական դժբաղդ է բանտաւոր գտնուելուն. բաւական վնաս կ'զդայ արդէն և անոր մահը հայցել ողորմասիրութիւն է։ Նա մանաւանդ երբ այս բանտաւորը խենթացած է և կարելի է խածնէ ու Պասդիլի մէջ աղմուկ հանէ. ճշմարիտ վկայ, այն ատեն անոր մահուան համար աղօթել բաւական ողորմասիրութիւն չէ, այլ բարի դործ մ'ընել է կամայուկ մ'անոր կեանքը զրաւելը։

Եւ բարի կառավարիչն ասոր վրայ իր երկրորդ նախաճաշն ըրաւ։

Ի

Պ. ՖՈՒՔԷԻ ՍՏՈՒԵՐԸ

Տ'Արդանեան՝ թագաւորին հետ ունեցած խօսակցութենէ դեռ ևս բոլորովին մտահոգ՝ կ'հարցնէր թէ արդեօք անոր խելքը գլուխն էր, թէ արդեօք այս տեսարանը Վ.օ կ'անցնէր, թէ արդեօք ինք՝ տ'Արդանեան իրօք հրացանակրաց հրամանատարն էր, և Պ. Ֆուքէ այն դղեկին տէրն ուր Լուի ԺԴ՝ ասպնջականութիւն կ'ընդունէր։ Այս խորհրդաւորութիւնները գինով մարդու խորհրդաւորութիւնները չէին։ Այլ սակայն Վ.օի մէջ լաւ կոչունք ըրեր էին. սակայն վերատեսչին գինին առատութեամբ թափեր էր հանդիսին ժամանակ, սակայն Կասքօնը պաղարիւն մարդ մ'էր, գիտէր՝ իր պողովատիկ սրին դպելու ատեն՝ այս պողովատին ցրտութիւնը բարոյապէս 'ի գործ դնել մեծ պարագաներու մէջ։

— Աղէ — ըսաւ նա արքայական սենեկէն հեռանալու ատեն — աւասիկ պատմապէս թագաւորին և պաշտօնէին բաղդին հետ կապուած կ'դանուիմ. պիտի երբեմն պատմուի որ տ'Արդանեան, Կասքօնի զինուորականը, ձեռքը դրաւ Պ. Նիկոլոս Ֆուքէի՝ Գրանսայի դանձուց վերատեսչին օձիքին վրայ։ Իմ թուռերս՝ եթէ ունիմ, այս ձերբակալութիւնն իրենց պատիւ պիտի սեպեն, ինչպէս որ Լիւնյի պարոններն իրենց պատիւ կ'համարին այն խեղճ մարէշալ տ'Անքրի մեացած ղլեստներովը։ Պէտք է թագաւորին կամքը տեղն 'ի տեղ կատարել։ Ամէն մարդ կարող է Պ. Ֆուքէի ըսել. «Պարոն, սուրդ տուր»։ Բայց ամէն մարդու դործը չէ Պ. Ֆուքէն 'ի դիպաշ պահել առանց աղմուկ հանել տալու։ Ուրեմն ինչպէս պէտք է շարժիլ որպէս զի պարոն վերատեսուչը յետին բարձրութենէ յետին պաշտօնանկութեան իջնէ, որպէս զի Վ.օն զնդանի մը փոխուած տեսնէ, որպէս զի Աստուրոսի խուցին վայելելէ ետև՝ Ամանի կախաղանին մօտենայ, այսինքն Անկէրան տը Մարինյի։

Այս պահուս տ՚Արդանեանի Ճակատը յաւալի կերպով մը մթացաւ։ Հրայանակիրը խղճի խայթ ունէր։ Այսպէս մահուան դատապարտել (վասն զի իրաք Լուի ԺԴ Պ. Փուբէն կ՚ատէր) այսպէս մահուան դատապարտել, ըսինք, այն անձը զոր իրրև վեհանձն մարդ կ՚հոչակուէր, անտարակոյս յանցանքի մը կերպարանք ունէր։

— Կ՚երևի ինձ — ըսաւ խրոմի տ՚Արդանեան — որ եթէ հայցքատակ մը չեմ, Պ. Փուբէի պիտի յայտնեմ թագաւորին միայն իրեն նկատմամբ։ Բայց եթէ սիրոջս գաղտնիքը մատնեմ, նենգաւոր և մատնիչ մ՚եմ, զինուորական օրինաց նախատեսած մէկ յանցանքը, այնպէս որ քսան անգամ տեսայ՝ պատերազմներու մէջ, որ խեղճ մարդիկը ծառերէն կախած են որ գործեր էին թեթևակի ինչ որ իմ խիղճս կ՚յորդորէ զիս աւելի ծանր յանցանք գործելու։ Ո՛չ, կարծեմ թէ խելացի մարդ մ՚այս փափուկ պարագայէն աւելի շատ Ճարտիկութեամբ պրծիլ պէտք է։ Եւ այժմ՝ ենթադրենք թէ խելք ունիմ։ Տարակուսելի է այս, քանի որ քառասուն տարիէ ՚ի վեր այնչափ շատ վատներ եմ իմ խելքս որ եթէ քիչ մը բան մնացած է դարձեալ մեծ երջանկութիւն մ՚է։

Տ՚Արդանեան գլուխը ձեռացը մէջ բռնեց, կամայ ակամայ իր գլխէն քանի մը մազ քաշեց, և յարեց.

— Պ. Փուբէ ի՞նչ պատճառաւ երեսէ ընկած պիտի լինի. երբեք պատճառաւ. նախ՝ Պ. Գօլպերի սիրելի չէ, երկրորդ՝ վասն զի օրիորդ Լա Վալիէրը սիրել ուզեց, երրորդ՝ վասն զի թագաւորը կ՚սիրէ Պ. Գօլպերն և օրիորդ Լա Վալիէրը։ Կորսուած մարդ մ՚է։ Բայց ես, մարդ լինելով՝ ոչքս անոր գլխուն վրայ պիտի դնեմ Ճգմեմ, երբոր կանանց և դրագիրներու դաւերու զոհ կ՚երթայ։ Օ՜ն անդը։ Եթէ վատնդաւոր մարդ մ՚է, զանի պիտի կործանեմ. եթէ միայն հալածանք կ՚կրէ, այն ատեն պիտի մտածեմ։ Այն աստիճանի հասեր եմ որ ո՛չ թագաւոր և ոչ մարդ իմ կարծիքս չպիտի խախտեն։ Եթէ Աթոս ասա լիներ, ինձի պէս պիտի վարուէր։ Այսպէս ուրեմն փոխանակ երթալու Պ. Փուքէն կոշտաբար ձերբակալելու և փակելու, պիտի սկսիմ մարդավարութեամբ հետը վարուելու։ Պիտի խօսին այս մասին, դիտեմ, բայց լաւ պիտի խօսին։

Եւ տ՚Արդանեան յատուկ շարժմամբ մ՚իր կամարը բարձրացընելով ուսին վրայ՝ շտապ Պ. Փուքէի դնաց, որ կանանց հրաժարական բարև տալէն ետև՝ հանդարտ քնանալու կ՚պատրաստուէր նոյն օրուան տարած յաղթանակներուն վրայ։

Օդը տակաւին հոտաւէտ էր կամ լցուած էր, ինչպէս որ կ՚ուզէ այնպէս համարի ընթերցողը, հրախաղութեան հոտով։ Մոմերն իրենց աղօտ լոյսը կ՚արձակէին, շամիրակներէն քակուած ծաղիկները կ՚ընկնէին, խումբ խումբ պարողներ և պալատականներ սրահիներու մէջ կ՚մոլորէին։

Վերատեսուչն իր բարեկամաց մէջ տեղը կեցած՝ որոնք իրեն դովեստ կ՚տային ու կ՚առնուին, իր յոգնած աչքերը կիսովին կ՚զոցէր։ Հանգստութեան կ՚տենչար, այնչափ օրերէ ՚ի վեր կուտակուած դարնիներու դահաւորակին վրայ կ՚ընկնէր։ Կարծես թէ այս հանդիսին համար նոր ՚ի նորոյ ըրած պարտուց ծանրութեան ներքև իր գլուխը կ՚հակէր։

Պ. Փուքէ իր սենեակը նոր քաշուեր էր՝ ժպտելով և գրեթէ կիսամեռ։ Ո՛չ կարող էր մտիկ ընել և ոչ տեսնել, իր անկողնին զինքը կ՚քաշէր, կ՚գիրթէր։ Մորֆէոս աստուածը՝ գմբէթին տիրապետը զոր Լը Պրէօն նկարեր էր, իր իշխանութիւնը մօտակայ սենեակներու վրայ տարածեր էր և տան տիրոջ վրայ իր ամենէն զօրաւոր քունը զրկեր էր։

Պ. Փուքէ՝ գրեթէ առանձին՝ արդէն իր սենեկապանին յանձներ էր ինքզինքն որ հագուստը հանէ, երբ Պ. տ՚Արդանեան իր սենեկին սեմին վրայ երևցաւ։

Տ՚Արդանեան երբէք չէր յաջողած արքունիքն ամենուն ընտել դառնալու. ՚ի զուր ամենուրեք և միշտ կ՚տեսնէին զինքը, իր ներդործութիւնը միշտ ամենուրեք կ՚ընէր։ Ոմանց բնաւորութեան մէկ արտօնութիւնն է այս, որ այս մասին փայլակին և որոտման կը նմանի. ամէն ոք զանոնք կ՚ճանչէ, բայց անոնց երևոյթը կ՚զարմացնէ, և երբ զանոնք դդան, այնպէս կ՚կարծուի թէ վերջին ներդործութիւնն ամենէն զօրաւորն եղած է։

— Վա՛յ, Պ. տ՚Արդանեան — ըսաւ Գուքէ, որու աչք թեղանեքն արդէն մարմնէն դատուեր էր։

— Ձեզ ծառայելու համար — պատասխանեց Հրայանակիրը։

— Ներս մտէք, սիրելի Պ. տ՚Արդանեան։

— Շնորհակալ եմ։

— Միթէ հանդիսին վրայ քննադատութիւն մ՚ընելու համար կ՚գաք, դուք որ հնարագէտ միտք մ՚ունիք։

— Ո՛հ, ո՛չ։

— Միթէ կ՚նեղուիք ձեր զինուորական պաշտաման մէջ։

— Ամենևին։

— Կարելի է որ հանդիսատ բնակարան չունիք։

— Սքանչելի է բնակարանս։

— Լա՛ւ, շնորհակալ եմ որ այդչափ մարդավար է, և ես ինքզինքս ձեզի պարտաւոր կ՚սեպեմ այդ զգուելի խօսքերուդ համար։

Այս հարցումները կ՚նշանակեն անշուշտ. «Սիրելիդ իմ տ՚Արդանեան, դնա տեղդ պառկէ, քանի որ մահիճ մ՚ունիս, և թոյլ տուր որ ես ալ անկողնս մտնեմ»։

Տ՚Արդանեան այս խօսքը չհասկընալու զարկաւ։

— Միթէ արդէն պառկելու կ՚պատրաստուիք — ըսաւ նա վերատեսչին։

— Այո՛։ Միթէ ինձ հաղորդելու բան մ՚ունիք։

— Ո՛չ ինչ, պարոն, ոչ ինչ։ Ուրեմն այս տեղ կ՚պառկիք։

— Ինչպէս որ կ՚տեսնէք։

— Պարոն, թագաւորին շատ ազնիւ հանդէս մը տուիք։

— Այդպէս կարծէք։

— Ո՛հ, փառաւո՛ր։

— Թագաւորը գոհ է։

— Սքանչացած է։

— Միթէ ձեզնէ խնդրեց որ իր զգայումն ինձի յայտնէք։

— Ինձի պէս անարժան պատգամաւոր մը չպիտի ընտրէր, տէր իմ։

— Անիրաւի կ՚խօսիք ինքզինքիդ դէմ, Պ. տ՚Արդանեան։

— Միթէ այս է ձեր անկողինը։

— Այո՛։ Բայց ինչու այդ հարցումը կ՚ընէք. միթէ ձերինէն գոհ չէք։

— Միթէ պէք է որ համարձակ խօսիմ ձեզի։

— Անտարակոյս։

— Լա՛ւ, գոհ չեմ։

Գուքէ զարմացաւ։

— Պ. տ՚Արդանեան — ըսաւ նա — իմ սենեակս տուէք։

— Ձեզ զրկեմ այդ սենեկէդ, տէր իմ, երբէք։

— Ուրեմն ինչ ընենք։

— Թոյլ տուէք որ միասին բնակինք։

Պ. Գուքէ հրայանակրին նայեցաւ անքթիթ։

— Հա՛, հա՛ — ըսաւ նա — թագաւորին քովէ՞ն կ՚գաք։

— Այո՛, տէր իմ։

— Եւ միթէ թագաւորը կ՚ուզէ որ սենեկիս մէջ պառկիք։

— Տէր իմ. . . ։

— Շատ աղէկ, Պ. տ՚Արդանեան, շատ աղէկ։ Դուք ատ տէրն էք։ Գնա՛, պարոն։

— Կ՚հաւատամ ձեզ, տէր իմ, որ չեմ ուզեր երբէք չարաչար գործածել. . . ։

Պ. Գուքէ իր սենեկապանին դառնալով,

— Մեզի մինակ ձգէ — ըսաւ նա։

Սենեկապանը դուրս ելաւ։

— Միթէ ինձ խօսելիք ունիք, պարոն — ըսաւ նա տ՚Արդանեանի։

— Եմ։

— Ձեզի պէս մեծցի մարդ մը՝ ինձի պէս մեծցի մարդու մը հետ չպար խօսելու՝ այս ժամուս՝ առանց ծանր ծանր պատճառներու։

— Հարցուփորձ մի՞ ընէք ինս։

— Ընդ հակառակն։ Ի՞նչ կ՚ուզէք իմանալ։

— Ոչ այլ ինչ բայց եթէ ընկերութիւնդ։

— Երթանք պարտէզը, ծառաստանին մէջ — ըսաւ յանկարծ վերատեսուչը։

— Ո՛չ — պատասխանեց աշխուժիւ Հրայանակիրը — ո՛չ։

— Ինչո՞ւ համար։

— Զովութիւնը . . . ։

— Նայինք, խոստովանեցէք ուրեմն որ դիս կ՚ձերբակալէք — ըսաւ վերատեսուչը հրամանատարին։

— Երբէք — ըսաւ այս վերջինը։

— Ուրեմն իմ վրայ կ՚հսկէք։

— Ի պատիւ, այո՛, տէր իմ։

— Ի պատիւ . . . այդ ուրիշ բան է։ Ա՛հ, դիս իմ տանս մէջ ձերբակալ կ՚ընեն։

— Այդպէս մի՛ ըսէք։

— Ընդ հակառակն, պիտի աղաղակեմ։

— Եթէ աղաղակէք, պիտի բռնադատուիմ ձեզ լռութեան ներելու։

— Լա՛ւ, միթէ իմ տանս մէջ բռնութիւն պիտի բանեցնէք։ Ա՛հ, այդ աղէտ բան է։

— Մենք իրարու միտք չենք հասկընար բնաւին։ Աւասիկ, այս տեղ ճարտարակ մը կայ, տէր իմ, եթէ կ՚հաճիք, խաղանք։

— Պ. տ՚Արդանեան, ուրեմն թաղաւորին երեսէն ընկած եմ։

— Ամենևին, բայց . . . ։ Բայց պատուէր կայ ինձ ձեզ աչքէ չհեռացնել։ Այդ ձեր խօսքէն բան մը չեմ հասկընար, տէր իմ, և եթէ կ՚ուզէք որ քաշուիմ, խնայուցէք ինձ։

— Սիրելի Պ. տ՚Արդանեան, այդ կերպերդ դիս պիտի խենթացընեն։ Քունս կոխեր էր և վար կ՚ընկնէի ու դուք դիս արթնցուցիք։

— Այդ բանը չպիտի ներեմ ինքզինքիս երբէք, և եթէ կ՚ուզէք ինձի հետ հաշտուիլ . . . ։

— Լաւ ուրեմն։

— Լաւ ուրեմն, քնացէք սա տեղ, իմ առջևս, չափազանց զոհ պիտի լինիմ։

— Հսկողութիւն . . . ։

— Ուրեմն կ՚երթամ։

— Խօսքդ չեմ հասկընար։

— Բարի գիշեր, տէր իմ։

Եւ տ՚Արդանեան այնպէս ձևացուց որ պիտի մեկնի։

Այն ատեն Պ. Գուքէ անոր ետևէն վազեց։

— Զպիտի պառկիմ — ըսաւ նա։ — Ճշմարիտը, և որովհետև ինձի հետ իրրև մարդու հետ վարուելու կ՚մերժէք, և խաղ կը խաղաք հետս, ձեզ պիտի նեղը ձգեմ ինչպէս կ՚ձգեն վարազը։

— Վա՛հ — գոչեց տ՚Արդանեան ժպիտ կեղծելով։

— Զիերս պատրաստելու կ՚հրամայեմ և Բարիզ երթալու կը մեկնիմ — ըսաւ Պ. Գուքէ հրայանակրայ հրամանատարին սրտին խորը թափանցելով։

— Ա՛հ, եթէ այդպէս է, տէր իմ, խնդիրը կ՚փոխուի։

— Միթէ դիս պիտի ձերբակալէք։

— Ո՛չ, բայց ես ալ ձեզի հետ պիտի մեկնիմ։

— Այդչափ բաւական է, Պ. տ՚Արդանեան — վրայ բերաւ Գուքէ պաղ ձայնով մը։ — Ի զուր չէ որ ուշիմ և հնարագէտ մարդու հռչակ ունիք, բայց այդ բաներն ինձի դէմ գործածել աւելորդ է։ Շիտակ նպատակին գիմենք. ծառայութիւն մը պիտի խնդրեմ։ Ինչո՞ւ համար դիս ձերբակալ կ՚ընէք, ինչ ըրի։

— Ո՛հ, չգիտեմ թէ ինչ ըրած էք, բայց ես ձեզ չեմ ձերբակալեր . . . այս իրիկուն։

— Այս իրիկո՞ւն — գոչեց Գուքէ դեղնելով — բայց վաղը։

— Ո՛հ, դեռ վաղը չէ, տէր իմ։ Ո՞վ կարող է վաղուանն ապահովել։

— Շուտ, շուտ, հրամանատար, թողէք որ Պ. Հերպլէյի հետ խօսիմ։

— Ափսոս, այդ անկարելի բան է, տէր իմ։ Հրաման կայ ինձ որ թոյլ չտամ ձեզ որ և է մէկու հետ խօսակցելու։

— Պ. Հերպլէյի՞ հետ, հրամանատար, ձեր բարեկամին հետ։

— Տէր իմ, միթէ գիտցուածով իմ բարեկամս, Պ. Հերպլէյն է միայն որու հետ տեսակցելու համար կ՚արգիլեմ ձեզ։

Գուքէ կարմրեցաւ, և՝ համբերատար կերպարան մ՚առնլով,

— Պարոն — ըսաւ — իրաւունք ունիք։ Դաս մը կ՚ընդունիմ, դաս մ՚որու պէտք էր ինձ առիթ չտալ։ Ընկած մարդ մ՚իրաւունք

չունի բանի մը, և ոչ իսկ այն անձանց կողմէ որոց բաղդը շինած է, առաւել ևս անոնց կողմէ որոց երբէք ծառայութիւն մը ընելու երջանկութիւնը չէ ունեցած։

— Տէ՛ր իմ։

— Իրաւ է, Պ. ա՛Արդանեան, զուք իմ առջևս միշտ լաւ դրութեան մէջ գտնուած էք, զիս ձերբակալելու սահմանուած մարդու մը դրութեան մէջ։ Դուք, զուք երբէք իսկէ բան մը չէք խնդրած։

— Տէր իմ — պատասխանեց Կասքօնն այս Ճարտասան և ազնիւ վշտակրութենէ շարժելով — կ՚ուզէք, կ՚աղաչեմ, ձեր պատուոյ խօսքը տալ որ այս սենեկէն դուրս չպիտի ելնէք։

— Ի՞նչ օգուտ ունի, սիրելիդ իմ Պ. ա՛Արդանեան, քանի որ զիս այս սենեկիս մէջ կ՚պահէք։ Միթէ կ՚վախնաք որ տէրութեան ամենէն քաջամարտիկ զինուորիդ դէմ չմաքառիմ։

— Այդ չէ իմ ըսածս, տէր իմ. իմ միտքս երթալ Պ. Հէրպլէյը փնտռել է ձեզի համար, և հետևապէս ձեզ մինակ թողուլ։

Գուքէ ուրախութեան և զարմացման աղաղակ մ՚արձակեց։

— Պ. Հէրպլէյը պիտի փնտռէք, զիս մինակ պիտի թողուք — գոչեց նա իր ձեռներն իրարու կցելով։

— Պ. Հէրպլէյ ուր կ՚բնակի, միթէ կապոյտ սենեակը։

— Այո՛, բարեկամդ իմ, այո՛։

— Ձեր բարեկամը, շնորհակալ եմ այդ բառին համար, տէր իմ, այսօր ինձի պիտի տաք եթէ երբեմն չտուիք։

— Ա՛հ, կ՚ազատէք զիս։

— Երթալ ու գտնալու համար տասն վայրկեան չմտեր — վրայ բերաւ ա՛Արդանեան։

— Գրեթէ այդչափ։

— Եւ Արամիսն արթնցնելու համար, Արամիս որ լաւ քուն կը քաշէ, երբ կ՚բնանայ, անոր ձայն տալու համար, հինգ վայրկեան ևս պէտք է. ընդ ամենը քառորդ մը բացակայութիւն։ Այժմ, տէր իմ, ձեր պատուոյն վրայ խօսք տուէք որ բնաւ ասկից դուրս ելնելու չպիտի աշխատիք և թէ երբ գտնամ ձեզ այս տեղ պիտի գտնեմ։

— Խօսք կ՚տամ, պարոն — պատասխանեց Գուքէ հրացանակրին ձեռքը սիրալիր երախտագիտութեամբ մը սեղմելով։

Տ՚Արդանեան անհերևոյթ եղաւ։

Գուքէ անոր հեռանալը դիտեց, յայտնի անհամբերութեամբ սպասեց որ դուռն անոր վրայ գոցուի, և երբ դուռը գոցուեցաւ, իր բանալիներն արտօրնօք առաւ, կարասիներու մէջ պահուած քանի մը ծածուկ զզրոյներ քաշեց, ընդունայն քանի մը թղթեր փնտռեց, որ անտարակոյս Սէն—Մանտէ մնացած էին և զոր չգտնելուն վրայ յաւեցաւ, ասպա շտապաւ նամակներ, պայմանագրեր, գիրեր ժողվելով կոյտ մ՚ըրաւ և կրակարանին մարմարէ սախտակին վրայ այրեց, հաղիւ ժամանակ գտնելով անոր մէջ լեցուած ծաղկի ամանները դուրս հանելու։

Այս գործողութիւնն աւարտելէն ետև՝ ահագին վտանգէ մը նոր ազատող մարդու մը պէս՝ որ ուժաթափ կ՚մնայ երբ սոյն վտանգը կ՚անցնի, թիկնաթոռի մը վրայ նկուն ընկաւ։

Տ՚Արդանեան ներս մտաւ և Գուքէն նոյն կայութեան մէջ գտաւ։ Արժանի հրացանակիրը չէր կասկածած բնաւ որ Գուքէ իր խօսքը տալէն ետև՝ զայն դրժելու պիտի մտածէ, բայց խորհեր էր որ իր ներկայութենէ օգուտ պիտի քաղէր իր բոլոր թղթերը, իր բոլոր յիշատակագիրները, իր բոլոր պայմանագրերը ջնջելու որ իր արդէն ծանրակշիռ վիճակը կրնային աւելի ևս վտանգի մէջ դնել։ Ուստի հոտ առնող շան մը պէս իր գլուխն ամբառնալով հոտուռտայ այն մուխի կոյտը զոր օդին մէջ գտնելու կ՚յուսար, և զայն գտնելով, զոհունակութեան 'ի նշան գլխի շարժում մը ըրաւ։

Երբ ա՛Արդանեան ներս մտաւ, Գուքէ ևս իր կողմէ գլուխը վերցուցեր էր, և ա՛Արդանեանի բոլոր շարժումները դիտեր էր։

Ասպա այս երկու մարդոց նայուածքն իրարու հանդիպեցան. երկուքնին ալ տեսան որ իրարու միտք հասկըցեր էին առանց բառ մ՚արտասանելու։

— Լաւ ուրեմն — հարցուց Գուքէ ամենէն առաջ — ուր է Պ. Հէրպլէյ։

— Ճշմարիտ վկայ, տէր իմ — պատասխանեց ա՛Արդանեան —

կարծեմ թէ Պ. Հէրպլէյ զիշերային պատմանները կ'սիրէ, և Վօր ծառաստանին մէջ՝ լուսնկայնին՝ ոտանաւորներ կ'յօրինէ ձեր մէկ քանի քերթողներուն հետ. վասն զի իր սենեակը չէր։

— Ի՞նչպէս, իր սենեակը չէ՞ր — դոչեց Գուքէ, որմէ կ'թուէր իր յետին յոյսը. վասն զի առանց ըմբռնելու թէ ինչ կերպով Վանի եպիսկոպոսը պիտի կարենար իրեն օգնել, կ'ցաւար սակայն որ անորմէ միայն կրնար օգնութիւն մը սպասել։

— Թէ ոչ, եթէ իր սենեակն է — շարունակեց տ'Արգանեան — կ'երևի թէ պատճառներ ունէր պատասխան չտալու։

— Բայց միթէ այնպէս չկոչեցիք որ ձեր ձայնը լսէ, պարոն։

— Տէր իմ, անտարակոյս չէք կարծեր որ, ինձ արուած հրամանին հակառակ՝ որ կ'արգիլէր զիս ձեր քովէն վայրկեան մը հեռանալու, չէք կարծեր որ այնչափ խենթ լինէի որ բոլոր անեցիքն արթնցնէի և Վանի եպիսկոպոսին նրբաղաւթին մէջ ինքզինքս ուրիշներուն ցուցնէի, որպէս զի Պ. Գօլդէր լիովին համոզուէր որ ձեզի ժամանակ կ'տայի թղթերդ այրելու։

— Իմ թղթե՞րս։

— Անտարակոյս. կամ դէթ ես ձեր տեղն այդպէս պիտի ընէի։ Երբ ինձ դուռ մը կ'բանան, անկիւ օդուտ կ'քաղեմ։

— Լաւ ուրեմն, այո՛, շնորհակալ եմ, օդուտ քաղեցի։

— Եւ իրաւի, շատ լաւ ըրիք։ Ամէն ոք իր մանր մունր գաղտնիքն ունի որ այլոց չեն վերաբերիր։ Բայց, տէր իմ, Արամիսն դառնանք։

— Լա՛ւ, ըսի ձեզի որ Արամիսը շատ ցած ձայնով կանչած պիտի լինիք որ ձեզ չէ լսեր։

— Որչափ մեղմիկ Արամիսը կանչուի, տէր իմ, Արամիս միշտ կ'լսէ երբ լսելու շահ մ'ունի։ Ուստի իմ խօսքս կ'կրկնեմ։ Արամիս իր սենեակը չէր, տէր իմ, կամ Արամիս՝ իմ ձայնս չճանչնալու համար պատճառներ ունէր, զոր կ'անգիտեմ և թերևս դուք ալ կ'անգիտէք՝ թէև Նորին Գերապատուութիւնը ձեր հպատակը լինի։

Գուքէ հառաչ մ'արձակեց, ոտք ելաւ, սենեկին մէջ երեք չորս պտոյտ ըրաւ, և 'ի վերջէ դնաց մեծ վհատութեամբ փառաւոր թատշեայ և շքեղ տանթէլներով զարդարուն անկողնի մը վրայ նստաւ։

Տ'Արգանեան Գուքէի նայեցաւ խորին արդահատութեամբ մը։

— Իմ կենաց մէջ շատ մարդոց ձերբակալութիւնը տեսեր եմ — ըսաւ հրացանակիրը մելամաղձութեամբ — տեսայ Պ. Սէն-Մարսի ձերբակալ լինելը, տեսայ Պ. Շալէի ձերբակալ լինելը։ Այն ատեն նորահասակ էի։ Տեսայ Պ. Գոնտէի հետ իշխաններուն ձերբակալ լինիլը, տեսայ Պ. Ռէյի, տեսայ Պ. Պրուսէլի ձերբակալ լինելը։ Ճշմարիտը, տէր իմ, թէև ցաւալի է ըսելը՝, սակայն այն անձն որու ամենէն շատ կ'նմանիք այս պահուն, միամիտ Պրուսէլն է։ Քիչ մ'ևս, դուք ալ անոր պէս ձեր անձեռոցը թղթակալեզ մէջ պիտի դնէք և ձեր թղթերով բերանը պիտի սրբէք։ Տէր կենդանի, Պ. Գուքէ, ձեզի պէս մարդ մը պէտք չէ որ այդչափ վհատի։ Եթէ ձեր բարեկամները ձեզ տեսնէին . . .։

— Պ. տ'Արգանեան — վրայ բերաւ Գուքէ տրամալի ժպիտով մը — բնաւ չէք հասկընար իմ վիճակս. իմ բարեկամներս զիս չտեսնելնուն համար է որ զիս այսպէս կ'տեսնէք դուք։ Ե՛ս, ես միայնակ չեմ ապրիր, ես միայնակ ոչ ինչ եմ։ Քաջ գիտեցէք որ իմ կեանքս անցուցի բարեկամներ ստանալու զանոնք նեցուկներ ընելու յուսով։ Բարօրութեան ատեն՝ բոլոր այն երջանիկ ձայնները, որ իրմով երջանիկ էին, միաբերան գովեստ և շնորհակալիք կ'շռայլէին ինձ։ Ամենաթեթև ձախորդութեան մէջ՝ այս հեզգոյն ձայներն իմ հոգւոյս մրմունջներուն ներդաշնակութեամբ կ'ձայնակցէին։ Միայնութիւն, երբէք չեմ ճանչցած։ Աղքատութիւն, ուրուական մը զոր երբեմն ընդնշմարեցի իմ ճամբուս վրայ իր ցնցոտիներով, աղքատութիւնը, այն ճիւաղն է որով իմ բարեկամներուս շատերը բազմաթիւ տարիներէ 'ի վեր կ'խաղան, կ'բանահիւսեն, կ'զզուեն զայն և ինձ սիրելի կ'ընեն։ Աղքատութիւն, բայց կ'ընդունիմ զայն, կ'ճանչեմ, կ'հիւրընկալեմ իբրև ժառանգաղուրկ քոյր մը, վասն զի աղքատութիւնն առանձնութիւն չէ, ագահ չէ, բանտ չէ։ Միթէ ես երբէք աղքատ պիտի լինիմ, ես, Բէլլիսսնի, Լա Գոնդէնի, Մօլիէրի պէս անձերու հետ

սիրուհոյ մը հետ որպէս . . . : Ո՛Հ, թէ որ գիտնայիք թէ որչափ մենակ եմ այս պահուս, և դուք, որ իմ ամէն սիրած բաներէս զիս կ'զատէք, դուք ինչպէս միայնութեան, անէութեան և մահուան նկարը կ'երևիք իմ աչքիս :

— Բայց ես արդէն ձեզի ըսի, Պ. Գուքէ — պատասխանեց տ'Արդանեան որ մինչև սրտին խորը յուզուեր էր — ես արդէն ձեզի ըսի որ ամէն բան չափաղանցօրէն կ'զատէք : Թաղաւորը ձեզ կ'սիրէ :

— Ո՛չ — ըսաւ Գուքէ գլուխը ցնցելով — ո՛չ :

— Պ. Գօլպէր ձեզ կ'ատէ :

— Պ. Գօլպէր : Ի՞նչ փոյթս է :

— Ձեզ պիտի կործանէ :

— Ո՛Հ, եթէ կարող է թող ընէ, արդէն կործանած եմ :

Պ. Գուքէի այս տարօրէն խոստովանութեան վրայ՝ տ'Արդանեան իր բոլորտիքը նշանակական աչք մը շրջեց : Թէև բերանը չբացաւ, Գուքէ այնպէս լաւ հասկրցաւ անոր միտքն որ յարեց.

— Ի՞նչ ընեմ այս շքեղութիւններն, երբ չեմ այսուհետև շքեղասպանծ : Գիտէք մեզի պէս հարուստներուն համար ինչի կ'ծառայեն մեր ստացուածոյ մեծ մասը, ուրիշ օգուտ չունին բայց եթէ զզուեցնել մեզ՝ նոյն իսկ իրենց շքեղութեամբ, այն ամէն բաներէն որ նոյն շքեղութեան չեն հաւասարիր : Վօ՛, պիտի ըսէք ինձ, Վօի սքանչելիքը, այնպէս չէ՞ : Լաւ, ինչ ընեմ այդ սքանչելիքը : Եթէ մոխրի վրայ նստած եմ, ի՞նչ բանով պիտի ջուր թափեմ իմ նայազներու սափորին մէջ, ինչով կրակ պիտի թափեմ իմ սալամանտրներուս խորերը, ինչով պիտի հով շնչեմ իմ տրիտոններուս կուրծքին մէջ : Բաւական հարուստ լինելու համար, Պ. տ'Արդանեան, պէտք է չափէն աւելի հարուստ լինիլ :

Տ'Արդանեան գլուխը շարժեց :

— Ո՛Հ, գիտեմ թէ ինչ կ'մտածէք — պատասխանեց Գուքէ աշխուժիւ : — Եթէ Վօն ունենայիք, դուք ջրոյ պիտի ծախէիք և հող մը պիտի դնէիք գաւառի մը մէջ : Այս հողն անտառներ, բուրաստաններ ու դաշտեր պիտի ունենար, այս հողն իր աէրը

պիտի մնայանէր : Քառասուն միլիոնէն պիտի կարենայիք դէթ ձեռք ձգել . . . :

— Տասն միլիոն — ընդմիջեց տ'Արդանեան :

— Եւ ոչ իսկ միլիոն մը, սիրելիդ իմ հրամանատար : Փրանսայի մէջ չկայ մէկն որ բաւական հարուստ լինի Վօն երկու միլիոնի դնելու և այս վիճակին մէջ պահելու, ոչ ոք կարող է, ոչ ոք կրնայ այս բանս ընելու :

— Իրաւ — ըսաւ տ'Արդանեան — բայց վերջապէս մէկ միլիոն . . . :

— Լաւ :

— Թշուառութիւն չէ :

— Շատ մեծ է, սիրելիդ իմ պարոն :

— Ի՞նչպէս :

— Ո՛Հ, դուք չէք հասկրնար : Ո՛չ, չեմ ուզեր իմ Վօի տունս ծախել : Եթէ կ'ուզէք զայն ձեզի կ'տամ :

Եւ Գուքէ այս խօսքին հետ իր ուսերն անբացատրելի շարժումով մը թօթուեց :

— Թաղաւորին տուէք, աւելի շահաւէտ սակարկութիւն մը ըրած պիտի լինիք :

— Թաղաւորը պէտք չունի որ զայն իրեն տամ — ըսաւ Գուքէ — շատ աղէկ կրնայ զայն ձեռքէս առնուլ եթէ իրեն հաճելի թուի . ահա ասոր համար նախադաս ունիմ որ կորսուի այն : Իրաւի՝ տ'Արդանեան՝ եթէ թաղաւորն իմ յարկիս ներքև չլինէր, այս մոմը պիտի առնուի և զմբէթին տակն երթալով պահունի կեցած երկու սնտուկ հրալիր փամփուշտներու կրակ պիտի տայի և այս ապարանս մոխիր պիտի դարձնէի :

— Վա՜հ — ըրաւ հրայանատ'իրը դանդաղօրէն : — Բայց վերջապէս պարտէզները չպիտի այրուիք : Այս տան մէջ ամենէն պատուական բաներն այդ պարտէզներն են :

— Եւ սակայն — վրայ բերաւ Գուքէ մեղմիկ — ես ի՞նչ ըսի հիմակ, Տէր Աստուած : Վօն այրե՛մ, պալատս կործանե՛մ . . . բայց Վօն իմն չէ, բայց այս ճոխութիւնները, այս հրաշալիքը՝ իրրև վայելք զանոնք վճարողին կալուածքն են, բայց իրրև տեսա-

կանութիւն՝ զանոնք հնարողներուն են։ Վօն Լը Պրէօնին, Վօն Լը Նօդրինն է, Վօն Բէլլիսօնին, Լըվօին, Լա Ֆօնդէնինն է, Վօն Մօլիէրինն է, ուր իր Նեղէլ թատերերգը ներկայացընել տուաւ, վերջապէս Վօն ասպագայ սերունդինն է։ Կ'նայիք, Պ. տ'Արգանեան, որ նոյն իսկ իմ տունս իմն չէ։

— Քա՛ջ է — ըսաւ տ'Արգանեան — աւասիկ իմ սիրած մէկ դաղափարս, որով Պ. Ֆուքէն կ'ճանչեմ։ Այս դաղափարը զիս բարեմիտ Պրուսէլէն կ'հեռացնէ, և անոր մէջ չեմ տեսներ վաղեմի սարսաւորին ողբն ու լացը։ Եթէ կործանած էք, տէր իմ, գործն եղածին պէս դատեցէք, դուք ևս, կենդանի է Տէր, ասպագայ սերունդին կ'պատկանիք և պղտիկնալու իրաւունք չունիք։ Աւասիկ՝ նայեցէք ինձ, ես որ ձեր վրայ դլխաւորութիւն մը բանեցնելու երես մ'ունիմ, վասն զի ձեզ ձերբակալ կ'ընեմ, բաղդը՝ որ այս աշխարհիս կատակերդուներուն իրենց դերերը կ'բաշխէ ինձի ձերինէն նուազ դեղեցիկ նուազ հաճելի դեր մը տուաւ. ես այն մարդոյ կարդէն եմ որ կ'մտածեն թէ թագաւորներու և զօրաւորներու դերերն աւելի կ'արժեն քան թէ մուրացկաններու և ծառաներու։ Նոյն իսկ տեսարանի վրայ, աշխարհիս թատրոնէն տարբեր մէկ թատրոնի վրայ նախադաս կ'սեպեմ աղբոր հագուստ կրել և աղբոր լեղու խօսիլ քան թէ տախտակը շփել հին մուճակով մը կամ խծուծով լցուած դաւազաններով կրուկը փայփայել տալ։ Մէկ խօսքով ոսկին անխնայ վատնեցէք, հրամայեցէք, վայելեցէք։ Իսկ ես իմ անձս քարշեցի, ես հնազանդեցայ, ես՝ տառապեցայ։ Լա՛ւ, որչափ որ մեծ բան մը չեմ արժեր ձեր քովը, տէր իմ, աւասիկ կ'յայտարարեմ ձեզ. իմ ըրածներուս յիշատակը խթանի տեղ կ'ծառայէ ինձ որ իմ ալևոր դլուխս շատ շուտով խոնարհեցնելու կ'արդիլէ զիս։ Ես մինչև վերջը վաշտակի մը լաւ երիվար մը պիտի մնամ, և կարկամ, միակտուր, կենդանի պիտի ընկնիմ իմ ընտրած տեղս։ Դուք ևս ինձի պէս ըրէք, Պ. Ֆուքէ. ասով աւելի հանդիստ կ'լինիք։ Ձեզի պէս մարդոյ այսպիսի բան մը մի անդամ կ'պատահի։ Կարևոր կէտն է լաւ շարժիլ երբ կ'պատահի այն։ Լատիներէն առած մը կայ որու բառերը մոռցայ, բայց իմաստը կ'յիշեմ, վասն

զի շատ անդամ անոր վրայ խորհեր եմ. այս առածը կ'ըսէ. «Վախճանը կ'պսակէ դործը»։

Ֆուքէ ոտք ելաւ, և իր թևը տ'Արդանեանի վզէն անցուց, զոր իր կուրծքին վրայ սեղմեց, մինչդեռ միւս ձեռնով՝ անոր ձեռքը կ'սեղմէր։

— Աւասիկ աղբոր քարոզ մը — ըսաւ պահ մը կայ առնլէն ետև։

— Հրացանակրի քարոզ, տէր իմ։

— Դուք որ այդ բաները կ'ըսէք ինձ, կ'սիրէք զիս։

— Կարելի է։

Ֆուքէ նորէն սկսաւ խորհիլ, ապա՝ վայրկեան մը լռութիւն պահելէն ետև,

— Բայց Պ. Հէրպլէյը — հարցուց նա — ո՞ւր կրնայ լինիլ։

— Ա՛հ, աւասիկ։

— Ձեմ իշխեր ձեզ աղաչելու որ զանի փնտռելու երթաք։

— Եթէ աղաչէք իսկ չպիտի երթամ փնտռելու, Պ. Ֆուքէ։ Անխոհեմութիւն է։ Պիտի իմանան. և Արամիս որ այս բաներուս մէջ մատ չունի, կրնայ վտանդի մէջ ընկնիլ և ձեզի հետ դժբաղդութեան վիճակիլ։

— Լուսնալու պիտի սպասեմ — ըսաւ Ֆուքէ։

— Ի՞նչ պիտի ընենք օրը ծաղելուն։

— Տէր իմ, ես ալ չդիտեմ։

— Շնորհ մ'ընէք ինձ, Պ. տ'Արդանեան։

— Յօժարակամ։

— Զիս կ'պահէք, և ես կ'մնամ, դուք ձեր առած հրամանները ճշդութեամբ կ'կատարէք, այնպէս չէ՞։

— Անտարակոյս։

— Լա՛ւ, իմ ստուերս եղիք, թող այդպէս լինի։ Լաւ ևս ունիմ այդ ստուերը քան թէ ուրիշ մը։

Եւ տ'Արդանեան խոնարհութիւն ըրաւ։

— Բայց մոռցիք որ դուք Պ. տ'Արդանեանն էք, հրացանակրաց հրամանատարը. մոռցիք որ ես Պ. Ֆուքէն եմ, դանձուց վերատեսուչը, և իմ դործերուս վրայ խօսինք։

— Կրո՞ղ, այդ փշալից խնդիր մ՚է։

— Իրաւ։

— Այո՛, բայց ձեզի համար, Պ. Գուքէ, անկարելին պիտի ընեմ։

— Շնորհակալ եմ։ Ի՞նչ ըրաւ ձեզի թագաւորը։

— Ո՛չ ինչ։

— Ա՛հ, ուրեմն դուք այդպէս կ՚խօսակցիք ինձի հետ։

— Ի հարկէ։

— Ի՞նչ կ՚մտածէք իմ կացութեան վրայ։

— Ո՛չ ինչ։

— Սակայն եթէ դժկամակութիւն չունենաք . . . ։

— Ձեր վիճակը դժուարին է։

— Ի՞նչ բանի մէջ։

— Սա պատճառաւ որ ձեր տունն էք։

— Որչափ դժուարին լինի՝ դարձեալ կ՚ըմբռնեմ։

— Տէր վիկայ, միթէ կ՚երևակայէք որ ուրիշի մը հետ այնչափ անկեղծութեամբ պիտի վարուէի որչափ ձեզի հետ։

— Ի՞նչպէս, այդչափ անկեղծութիւն։ Դո՞ւք ինձի հետ անկեղծ եղա՞ք, դուք որ ամենաչնչին բան մ՚ըսելու իսկ կ՚մերժէք ինձ։

— Ուրեմն ի՞նչ պէտք են այդչափ կերպեր։

— Հիմակ ճիշտն ըսիք։

— Աւասիկ, տէր իմ, ըսեմ ձեզ թէ ուրիշի հետ ինչպէս պիտի վարուէի. ձեր դուռը կ՚դայի, երբ սպասաւորները մեկնէին, կամ եթէ չմեկնէին, իրենց ելնելուն կ՚սպասէի, և մի առ մի կ՚բռնէի նապաստակներու պէս, առանց շշուկ հանելու զանոնք կ՚փակէի, նրբագաւթիդ զորդին վրայ կ՚երկնայի, և մէկ ձեռքս ձեր վրայ դնելով՝ առանց դիտութեան, դլխաւորին նախաճաշին համար ձեզ կ՚պահէի։ Այս կերպով ո՛չ փախուստ, ո՛չ ընդդիմութիւն, ոչ աղմուկ կ՚պատահէր. բայց նոյնպէս Պ. Գուքէի ազդարարութիւն մը չէր տրուեր և ոչ այն փափուկ զիջումները կ՚տեսնուէին որ վճռական միջոցներու մէջ մարդավար մարդիկ իրարու կ՚ցուցնեն։ Միթէ դո՞հ էք այս յատակագծէն։

— Ջիս դող կ՚հանէ։

— Այնպէս չէ՞, շատ տխուր բան մը պիտի լինէր՝ եթէ, առանց պատրաստութեան՝ վաղն երևելով ձեր սուրը յանձնէիք։

— Ո՛հ, պարոն, ամենէս և ցաւէս պիտի մեռնէի։

— Ձեր երախտագիտութիւնը չափազանց ճարտասանութեամբ կ՚յայտնէք, բաւական չէր ըրածս։

— Պարոն, անտարակոյս այս բանս ինձ խոստովանել չպիտի տաք։

— Լաւ ուրեմն, տէր իմ, այժմ եթէ իզնէ զոհ էք, եթէ ձեր դողը դադրեցաւ, և կարելի եղածին չափ զայն մեղմելու ջանայի, թողունք որ ժամանակը թոի երթայ. շատ յոգնած էք, խորհրդածութիւններ ընելու պէտք ունիք. կ՚պաղատիմ ձեզ, քնացէք, կամ սուտ քուն եղիք, անկողնիդ վրայ կամ անկողնիդ մէջ։ Ես սա թիկնաթոռին վրայ կ՚քնանամ, և երբ կ՚քնանամ, իմ քունս այնքան ծանր է որ թնդանօթն անդամ անկարող է զիս արթնցընել։

Գուքէ ժպտեցաւ։

— Սակայն՝ ի բաց կ՚թողում այն պարագան երբ դուռ մը բանան, թէ դաղանի, թէ տեսանելի, թէ ելուստի և թէ մուտքի — շարունակեց տ՚Արդանեան։ — Կոնչիւն մը զիս դող կ՚հանէ։ Այս բնական հակակրութեան խնդիր մ՚է։ Ուրեմն դացէք, ուրեմն եկէք, սենեկին մէջ պտրտեցէք. դրեցէք, տարեցէք, պատռեցէք, այրեցէք, բայց նիզին բանալին մի՛ դպիք, բայց դրան ճարմանդին մի՛ դպիք, վասն զի այն ատեն ընդոստ պիտի արթնցընէք զիս, և այս բանս իմ ջիլերուս սաստիկ դրդիռ պիտի տայ։

— Ճշմարիտը, Պ. տ՚Արդանեան — ըսաւ Գուքէ — իմ ճանչցած մարդոց մէջ ամենէն մարդավար և ուշիմ անձն էք, և միայն ցաւ մը պիտի պատճառէք ինձ, այսինքն շատ ուշ ծանօթութիւն ըրի ձեզի հետ։

Տ՚Արդանեան հառաչ մը հանեց որով ըսել կ՚ուզէր.

— Աւա՜ղ, թերևս շատ կանուխ ըրիք այդ ծանօթութիւնը։

Ապա իր թիկնաթոռին խորը լարուեցաւ, մինչդեռ Գուքէ իր անկողնին մէջ կէս մը պառկած և արմկին վրայ յենած՝ ըստ զիպուածի կ՚երաղէր։

Եւ երկուքնին ալ թողլով որ մոմերը վառին, այսպէս առաւօտեան առաջին նշոյլներուն սպասեցին, և երբ Գուքէ շատ բարձր կ'հառաչէր, տ'Արգանեան աւելի սաստիկ կ'խրկար։

Այցելութիւն մը չվրդովեց բնաւ իրենց անդորրութիւնը. շշուկ մ'անգամ լսելի չեղաւ այն ընդարձակ տան մէջ։

Դուրսը պատուոյ դիշերապահներն և հրայանակրաց վաշտերն իրենց քայլերուն ներքև աւազը կ'աղմկէին. այս ևս հանդարտութիւն մ'էր քնացողներուն համար։ Միայնենք այս հանդարտութեան՝ հովին և աղբիւրներուն աղմուկն որ իրենց յաւիտենական պաշտօնը կ'վարեն, առանց փոյթ ընելու թեթև շշուկներն ու թեթև բաներն որով բաղկացած են մարդուս կեանքն ու մահը։

ՎԵՐՋ

ՏԱՍՆԵՐՈՐԴ ՀԱՏՈՐԻ

ՅԱՆԿ ՆԻՒԹՈՑ

Երես

Ա. Պ. Պէզմոի ընկերութիւնը 3
Բ. Բանտաւորը 12
Գ. Մուսդօն ի՞նչպէս դիրցեր էր առանց իր տիրոջ իմաց տալու, և թէ ի՞նչ անպատեհութիւններ ծագած էին այս արժանի աղատորդւոյն համար 46
Դ. Ով էր Պ. Ժան Բէրսրէնը 56
Ե. Առղինք 64
Զ. Ի՞նչպէս Մօլիէր իր քաղաքաւոր աղատորդի թատերգութեան դաղափարը թերևս յղացաւ 76
Է. Փեթակ, մեղուներ և մեղր 83
Ը. Դարձեալ ընթրիք մ'ի Պասդիյլ 95
Թ. Ուխտին զօրապետը 104
Ժ. Փորձիչ 115
ԺԱ. Թագ և խոյր 124
ԺԲ. Վ.օ-լը-Վիքօնդի դղեակը 133
ԺԳ. Մըլէօնի դինին 139
ԺԴ. Նեկտար և անմահական կերակուր 145
ԺԵ. Վարպետ մը վարպետորդիին առջև 164
ԺԶ. Գօլպէր 171
ԺԷ. Նախանձ. 179
ԺԸ. Ոճիր ընդդէմ թագաւորի 189
ԺԹ. Գիշեր մ'ի Պասդիյլ 197
Ի. Պ. Գուքէի ստուերը 197

1913
1914
1915
1916

2013